ԳՏՆԵԼ
ՀՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՐԾԻՔՆԵՐԻ
ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԱՆԿՈՏՐՈՒՄ՝ ԻՆՉՊԵՍ ԱԴԱՄԱՆԴԸ

ԼԻԶԱ ԲԻՎԵՐ

ՀԱՆՐԱՃԱՆԱՉ ՀԵՂԻՆԱԿ՝ ԸՍՏ «ՆՅՈՒ ՅՈՐՔ ԹԱՅՄՍ» ԱՄՍԱԳՐԻ

Թանկագիննե՛րս,

Ես ցանկանում եմ տանել ձեզ ճանապարհորդության դեպի «Աստծո սարը»՝ այն վայրը, որտեղ ոչ միայն կսովորեք բնակվել Աստծո անսասան ճշմարտության և սիրո մեջ, այլև որոշում կկայացնեք դառնալ անկոտրում մարդ՝ այնպիսին, ով հաստատակամ է, աներեր և նպատակաուղղված:

Այսօր, ավելի քան երբևէ, մենք պետք է անկոտրում կերպով պահպանենք սերը և ճշմարտությունը: Աստված Սեր է: Աստված Ճշմարտություն է: Ե՛վ սերը, և՛ ճշմարտությունը անժամանակյա են և վեր են մերօրյա միտումներից ու կարծիքներից:

Աստծո ծրագիրն ի հայտ է գալիս, երբ մենք բնակվում ենք Նրանում: Նրանում է, որ կերտվում և ձևավորվում ենք: Թանկագի՛ն ընկեր, ես աղոթում եմ ձեզ համար, որ բնակվելով Քրիստոսի մեջ, Ով ձեր Անկյունաքարն է, դառնաք անկոտրում անձնավորություն:

Հավատարի՛մ եղեք: Ճշմարտացի՛ եղեք: Ուժե՛ղ եղեք:

Լիզա

LisaBevere@ymail.com

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

Թանկագիններ՛ս,

Աղոթում եմ, որ փնտրելով
ճշմարտությունը՝ դուք սեր գտնեք:
Այս խստասիրտ դարձած աշխարհում
պետք է խիզախություն ունենաք, որպեսզի
լինեք նուրբ՝ ծաղկի պես, և ամուր՝
ադամանդի պես:
Եղե՛ք հավատարիմ: Եղե՛ք ճշմարտացի:
Եղե՛ք ուժեղ:
Խոսքով և գործով լուսավորե՛ք
ճանապարհը դեպի այն ժայռը, որտեղ
յուրաքանչյուրը կարող է ապաստան գտնել:
Վստա՛հ եղեք: Դուք չեք կարող
ձախողվել, քանի որ կտրված եք
անպարտելի վեմից (տե՛ս Եսայի 51.1):

«Չկա ավելի ամուր հիմք, քան այն ժայռը, որի վրա մենք կանչված ենք կառուցել մեր կյանքը, ամուսնությունը և երազանքները: Լիզայի նոր գիրքը, որը կոչվում է *«Անկոտրում՝ ինչպես ադամանդը»,* կխրախուսի ձեզ, որ ավելի լավ ճանաչեք Աստծուն և, որպես արդյունք, բացահայտե՛ք ավելին այն մասին, թե ով եք դուք»:

Սթիվեն Ֆարտիկ, հովիվ, «Էլեվեյշն Չրչ»
Հանրաճանաչ հեղինակ՝ ըստ *«Նյու Յորք Թայմս»* ամսագրի

Այսօր աշխարհում այնքա՛ն անորոշություն կա: Դժվար է իմանալ, թե ինչին և ում հավատալ: Այս պատճառով, Լիզայի նոր գիրքը, որը կոչվում է *«Անկոտրում՝ ինչպես ադամանդը»,* ազդեցիկ և արդիական է: Լիզան վստահ, կշռադատված և փայլուն կերպով ցույց է տալիս ձեզ անսասան ճշմարտությունը: Այն անժամանակյա և այժմեական ճշմարտությունները, որոնց մասին նա խոսում է, կոչ են անում մեզ վերադառնալ դեպի սրբությունը, կայունությունը և ճշմարտությունը Քրիստոսի մեջ»:

Քրեյգ և Էմի Գրոյշել, «Լայֆ.Չրչ» եկեղեցու հովիներ
«Այսօրվանից ի վեր» գրքի հեղինակներ

Կարևոր: Ծանրակշիռ: Համոզիչ: Լիզա Բիվերն անսասան սատարում է Ճշմարտությունը: Նա ձայն է բարձրացնում՝ հիշեցնելու համար, որ Ճշմարտությունն Անուն ունի, և մենք կարող ենք ճանաչել այդ Անունը: Եթե փնտրում եք անսասան վայր՝ ձեր կյանքը խարսխելու համար (և բոլորս ենք փնտրում դա), *«Անկոտրում՝ ինչպես ադամանդը»* գիրքը կօգնի ձեզ մոտենալ միակ անսասան ժայռին՝ Հիսուսին: Պահե՛ք այս գիրքը ձեռքի տակ, և թող այս համոզվածությամբ լի էջերն ավելի հաճախակի բացվեն ձեր ձեռքերում»:

Լուի և Շելի Գիգլիո, «Փեշն» համաժողովների հիմնադիրներ

«Զարմանալի՜ է: Իմ ընկերուհի Լիզա Բիվերը հարվածեց նշանակետին՝ ասելով. «Երբ ճշմարտությունը ջրիկանում է, մենք այլևս չունենք պատասխաններ այն հարցերին, որոնք ավելի մեծ են, քան մենք: Իրական ճշմարտությունը ժայռ է՝ անկոտրում, անբաժանելի, անշարժ,

անպարտելի»: Այն սուրբգրային ճշմարտությունները, որոնցով Լիզան կիսվում է գրքում, այնքա՜ն անհրաժեշտ են այս սերնդին, որում ճշմարտությունը ձևավորվում է հասարակական միտումների թելադրանքով»:

Քրիսթին Քեյն, հանրաճանաչ հեղինակ և «A21» և
«Առաջ մղել կանանց» ծառայությունների հիմնադիր

«Ինչպես ամենաընտիր թելերից պատրաստված գեղեցիկ նկարազարդ գործվածքը՝ «*Անկոտրում՝ ինչպես ադամանդը»* գիրքը համատեղում է Լիզայի անժխտելի ավյունը, խոցելիությունը և աստվածային պարգևը և քամու պես ազատություն է տալիս ամեն մի ընթերցողի: Սիրով և ըմբռնումով, Լիզա Բիվերն առաջնորդում է ձեզ դեպի մի ընթացք, որը փոխելու է ձեր միտքը, բժշկելու է ձեր սիրտը և տալու է հայտնություն այն կատարյալ ծրագրի մասին, որն Աստված ունի ձեզ համար»:

Սառա Ձեյքս Ռոբերտս,
«Մի՛ բավարարվիր ապահով կյանքով» գրքի հեղինակ

«Այս գիրքը լի է իմաստությամբ և, միևնույն ժամանակ, խորը անձնական է: Լիզան, ով տաղանդավոր հեղինակ և վստահելի ընկեր է, կօգնի հասկանալ ձեր ճշմարիտ ինքնությունը Քրիստոսում»:

Շեյլա Ուոլշ, *«Խառնաշփոթի մեջ»* գրքի հեղինակ

«Այս նոր, համարձակ գրքի առաջին էջերն ընթերցելիս հանդիպեցի երկու պնդման, որոնցում Քրիստոսի և Նրա Թագավորության մեջ ունեցած իմ փորձառությունը համոզել է նաև ինձ: «Զրկվելով երկյուղից՝ մենք պարուրվել ենք շփոթմունքով և համեմատություններով», և «Երբ ճշմարտությունը ջրիկանում է, մենք այլևս չունենք պատասխաններ այն հարցերին, որոնք ավելի մեծ են, քան մենք»: Այս երկու ճշմարտություններն ակնհայտորեն դրսևորվում են մարդկանց կյանքերում: Ես ոգեշնչված եմ այն ամենի պատճառով, ինչ այս գիրքը կզարթեցնի, կհաստատի և կբոցավառի ձեր մեջ: Ցանկանում եմ, որ այս աշխարհում, որը ձգտում է բացահայտել իրականությունը, դուք գտնեք իմաստություն՝ ձեր ընթացքի համար, վստահություն՝ ձեր համոզմունքների մեջ, շնորհք՝ ապրելու

որպես ճշմարիտ Աստծո զավակ, ինչպիսին դուք եք, և խիզախություն, որ լինեք լույս խավարի մեջ՝ այլ մարդկանց համար»:

Բոբբի Հյուսթոն, «Հիլսոնգ» եկեղեցու
ՀԱՄԱՀԻՄՆԱԴԻՐ և գլխավոր հովիվ

«Բազմաթիվ քարոզիչներ և հեղինակներ խոսում են Հիսուսի համար «անկոտրում կերպով» ապրելու մասին. Լիզա Բիվերը նկարագրում է այս կյանքը: *«Անկոտրում՝ ինչպես ադամանդը»* գիրքը ոգեշնչված է Սուրբ Հոգով և հստակ ցույց է տալիս այն օծությունը, որը կա Լիզայի կյանքում»:

Հիթեր Լինդսի, ՀԵՂԻՆԱԿ և ՔԱՐՈԶԻՉ

«Երբեք չեմ մոռանա այն պահը, երբ Լիզան պատմեց ինձ, որ ծրագրում է գրել իր նոր՝ *«Անկոտրում՝ ինչպես ադամանդը»* գիրքը: Ես մեքենայիս մեջ էի, և արցունքները սկսեցին հոսել աչքերիցս. ես տպավորված էի այս հուզիչ և արդիական թեմայով: Այս աշխարհում, որը հարաբերական է համարում ճշմարտությունը, Լիզան վարպետորեն խոսում է բարդ թեմաների մասին, պատասխանում է կարևորագույն հարցերի և կառուցում է այնպիսի աստվածաշնչյան հիմք, որին մենք կարող ենք ապավինել տարիներ շարունակ: Լիզայի մոտ կրկի՛ն ստացվեց: Նա գրում է այնպիսի գրքեր, որոնք միաժամանակ և՛ հաճելի են, և՛ անհրաժեշտ է ընթերցել»:

Հեվիլա Քաննինգտոն, «Թրուս թու թեյբլ»
ծառայության համահիմնադիր

«Այնքա՜ն ոգեշնչված եմ՝ տեսնելով Լիզայի նոր գիրքը: Նա մեր սիրելի ընկերն է և ունի հատուկ խոսք այս օրերի համար: Նա և Զոնը մեզ համար եղել են հրաշալի ընկերներ և առաջնորդներ, և մենք սիրում ենք այն ամենը, ինչ Աստված անում է նրանցում և նրանց միջոցով»:

Բրայան և Զեն Զոնսոն, «Բեթել Մյուզիք»
ծառայության հիմնադիրներ

ԱՆԿՈՏՐՈՒՄ՝
ԻՆՉՊԵՍ ԱԴԱՄԱՆԴԸ

Լիզա Բիվերի այլ գրքեր

«Կյանք՝ առանց մրցակցության»
«Թրեր կրող կանայք»
«Երբ արթնանում են կին առյուծները»
«Պայքարի՛ր կնոջ նման»
«Համբույրներ, որոնք հետո կթողնեն քեզ արցունքների մեջ»

ԱՆԿՈՏՐՈՒՄ՝ ԻՆՉՊԵՍ ԱԴԱՄԱՆԴԸ

ԳՏՆԵԼ
ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԾԻՔՆԵՐԻ
ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԼԻԶԱ ԲԻՎԵՐ

Adamant by Lisa Bevere, Armenian
© 2019 Messenger International
www.MessengerInternational.org
Originally published in English as Adamant
Additional resources in Armenian by Lisa Bevere are available for free download at: www.CloudLibrary.org
To contact the author: LisaBevere@ymail.com

«Անկոտրում՝ ինչպես ադամանդը», Լիզա Բիվեր, հայերենով
© 2019 Messenger International
www.MessengerInternational.org
Սկզբնապես հրատարակվել է անգլերենով, «Adamant» վերնագրով:
Լիզա Բիվերի այլ հեղինակային նյութեր հայերենով կարող եք անվճար ներբեռնել հետևյալ կայքէջում. www.CloudLibrary.org
Հեղինակի հետ կապ հաստատելու համար. LisaBevere@ymail.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտագիտության խոսք 11

1. Անկոտրում՝ ինչպես ադամանդը 13
2. Անկոտրում՝ մտերմության մեջ 33
3. Անկոտրում՝ հաստատակամության մեջ 53
4. Անկոտրում՝ սիրո մեջ 65
5. Անկոտրում սեր 85
6. Անկոտրում՝ ատելության մեջ 119
7. Անկոտրում՝ ճշմարտության համար 151
8. Անկոտրում՝ խոսքի մեջ 165
9. Անկոտրում վերափոխում 195
10. Անկոտրում՝ սրբության մեջ 227
11. Ես անկոտրում եմ 247

Հավելված 1. Հավելյալ աստվածաշնչյան հատվածներ Գլուխ 6-ի համար 263

Հավելված 2. Դասեր Առակաց և ժողովող գրքերից 267

Նշումներ 273

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Ռաբբի Բրայան Բիլեչիին. շնորհակալություն ձեր ռաբբիական և մարգարեական իմաստության համար:

Սքոթ Լինդսիին՝ «Ֆեյթլայֆ» ընկերությունից. դուք միշտ օգնում եք ինձ խելացի լինել:

Անդրեա Դուրինգին. ձեզ հետ աշխատելը երազանք է:

«Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության թիմին. ես ոչինչ չէի կարող անել՝ առանց ձեզ:

1

ԱՆԿՈՏՐՈՒՄ՝ ԻՆՉՊԵՍ ԱԴԱՄԱՆԴԸ

«Նայե՛ք այն վեմին, որից դուք կտրված եք, և այն հորի գուբին, որից դուք փորված եք»:

Եսայի 51.1

Ավելի քան մեկ տարի մտորել եմ այս խոսքի շուրջ. ինձ գերել է գաղափարն այս վեմի, այս քարի, այս ... *ադամանդի* մասին:

«Ադամանդ» բառի «ադամանդե» ածականը մի շարք լեզուներում օգտագործվում է «անկոտրում» իմաստով և նշանակում է ամուր, անթափանցելի և անզիջում՝ կարծիքի կամ դիրքորոշման մեջ. անկոտրում՝ ադամանդի պես: Այս բառը ստացել է նաև «համառ» իմաստը: Սակայն պետք է հիշել, որ բոլոր այս բառերը հեռացել են ադամանդի նախնական իմաստից, քանի որ «ադամանդ» բառն ի սկզբանե կրել է առարկայի իմաստ և, շատ առումներով, սոսկ երազանք է եղել:

«Ադամանդ» բառն ունի հին առասպելական պատմություն: Ադամանդը հայտնի էր որպես քար: Թույլ տվեք շտկում անել՝ որպես անհայտ քար: Այն խորհրդանշում էր անհայտ հանքանյութ, որի գոյությունը ենթադրում էին հին հույները: Մաթեմա-

տիկոսները, փիլիսոփաները և միստիկները ենթադրում էին, որ գոյություն ուներ այնպիսի քար, որի նմանը չկա, որն այնքա՛ն ամուր էր, որ դրա մեջ անկարելի էր թափանցել, և որն անկարելի էր կոտրել: Առանց ճաքերի և բեկորների՝ այն անասելիորեն պինդ էր, բայց և՝ անդիմադրելի գեղեցիկ:

Այն կունենար առարկաներ ձգելու և վանելու եզակի կարողություն: Այն կձգեր այլ առարկաներ, սակայն չէր ենթարկվի որևէ ձգողության. այն մագնիսական ուժ կունենար, սակայն ոչինչ չէր կարողանա տեղաշարժել այն: Այդ քարը կունենար եզակի հարաբերություն լույսի հետ. այն ընդունակ կլիներ հավաքել լույսի ճառագայթները և փոխել դրանց ուղղությունը: Կրակը չէր կարողանա թափանցել դրա մեջ, և կրակի բոցերից դուրս հանելուն պես այդ քարն այնքան սառը կլիներ, որ մարդը կկարողանար հեշտորեն հպվել դրան:

Ահա այդ անզուգական քարի ենթադրյալ հատկանիշներից ընդամենը մի քանիսը: Խնդիրը՝ այն հայտնաբերելն էր: Արդյո՞ք այն գտնվում էր երկրի սրտում՝ խավար ընդերքում: Իսկ միգուցե այդ հրաշք քարերը ծնվում էին կրակի՞ց և արտանետվում որևէ հրաբխի խառնարանի՞ց: Թե՞ այն ծածկված էր ծովի խորքում: Իսկ միգուցե աստվածնե՞րն էին շնորհում այն՝ որպես պարգև որոշակի արժանիքների համար:

Հույներն անվանեցին այդ անհայտ քարն *«ադամաս»,* որի լավագույն թարգմանությունն է «անպարտելի»: Ու թեև չկար նույնիսկ աննշան ապացույց այն մասին, որ ադամասը գոյություն ուներ, նրանք երազում էին այն մասին, թե ինչպես կարելի էր գործածել այդ անպարտելի քարը:

Այս հանքանյութից հնարավոր կլիներ զենքեր պատրաստել: Ադամասից կպատրաստվեին թրեր, կացիններ և դանակներ, որոնք չէին կոտրվի մարտի ժամանակ, և վահաններ, որոնք անխոցելի կլինեին: Նետերի նրբագեղ գլխիկները՝ պատրաստված ադամասից, հեշտորեն կթափանցեին ամենից ամուր թիրախների մեջ: Իսկ զրահնե՞րը: Ադամասից պատրաստված

անթափանցելի զրահներ հագած զինվորներն անպարտելի կհամարվեին: Խավարը չէր կանգնեցնի նրանց, քանի որ ադամասի կողմից կլանված ճառագայթները կկուրացնեին նրանց թշնամիներին, և այն կլուսավորեր հաղթանակի ճանապարհը:

Գաղափարն այդ քարի մասին այնքա՜ն անդիմադրելի էր, որ տեսությունը դրա գոյության մասին տարածվեց դեպի հյուսիս՝ Եվրոպայով մեկ, մինչև որ հասավ Մեծ Բրիտանիայի ափերին: Հենց այդտեղ «ադամաս» բառը վերածվեց մեզ հայտնի «ադամանդ»-ի: Եվ հենց այդտեղ էր այն սպասում իր երևան գալուն:

Մ.թ. 400 թվականին, երբ ալմաստը հայտնաբերվեց Հնդկաստանում, մարդիկ մտածեցին, որ երկար ժամանակ փնտրվող ադամանդը վերջապես գտնվեց: Ոչ մի քար չէր կարող համեմատվել դրա հետ իր ամրությամբ: Ցանկացած այլ քար մասնատվում էր ալմաստ-ադամանդի ազդեցության ներքո: Այդ ակներն առաջացել էին այնպիսի ուժգին կրակի և ճնշման ներքո, որ բոլոր ավելի թույլ բաղադրիչները կլանվել էին, և մնացել էր միայն մեկը՝ ածխածինը, որից էլ բաղկացած է ալմաստի բյուրեղային կառուցվածքը:

Դարեր շարունակ *«ալմաստ»* և *«ադամանդ»* բառերը փոխանակաբար գործածվել են՝ նկարագրելու համար այն ամենը, ինչն անպարտելի, անսասան և անխորտակելի է: Ե՛վ քարոզիչների արքա Չարլզ Սփերջենը, և՛ Մաքրակրոն լեգենդ Զոն Բունյանն անդրադարձել են Զաքարիա մարգարեի խոսքերին, որը ողբում էր, քանի որ մարդկանց սրտերն ադամանդի պես կարծրացել էին և անթափանցելի էին Աստծո Խոսքի համար.

> «Եվ իրենց սիրտն ադամանդի պես շինեցին, որ չլսեն օրենքը և այն խոսքերը, որ Զորաց Տերը Իր Հոգով առաջին մարգարեների ձեռքով ուղարկեց, և մեծ բարկություն եղավ Զորաց Տիրոջ կողմից» (Զաքարիա 7.12):

Այս բառը պահպանվել է նաև ավելի ժամանակակից թարգմանությունների մեջ.

«Նրանք ադամանդի պես ամուր դարձրին իրենց սրտերը, որ չլսեն օրենքը և Զորքերի Տիրոջ խոսքերը, որոնք Նա ուղարկեց Իր Հոգով՝ առաջվա մարգարեների միջոցով: Այդ պատճառով մեծ բարկություն եկավ Զորքերի Տիրոջից» (ESV):

Գրեթե 18-րդ դարի ավարտին ֆրանսիացի գիտնական Անտուան Լավուազիեն բացահայտեց, որ բավականաչափ ջերմության և թթվածնի առկայության դեպքում ալմաստը գոլորշիանում է: Այս բացահայտումից հետո «ադամանդ» բառն առնչվեց միայն «ալմաստ» բառի հետ, և անխորտակելի, անսասան ու անպարտելի ադամանդի որոնումը մոռացվեց: Այն դարձավ անիրական մի բան: Բայց մարդիկ շարունակում էին երազել: Ակնածալի Արկենսթոունը, որը հիշատակվում է Ձ. Ռ. Ռ. Թոլքինի աշխատությունների մեջ, կարծես շարունակում է առասպելական ադամանդի գաղափարը: Ավելի քան երկու հազարամյակ մարդիկ որոնում էին, սակայն չէին կարողանում գտնել բաղձալի ադամանդը:

Սակայն ինձ մոտ հարց է ծագում...

Ո՞րն է այդ որոնման հիմքը: Հնարավո՞ր է, որ Աստված է ոգեշնչել գաղափարն ադամանդի մասին: Հակառակ դեպքում, ինչո՞ւ երազել մի բանի մասին, ինչը ոչ ոք դեռ չի տեսել, և ինչո՞ւ խոսել անհայտի մասին: Իսկ ի՞նչ, եթե այս քարը մեր միջև է, սակայն ճանաչված չէ: Միգուցե ադամանդը երբեք էլ չպետք է լիներ պատերազմի և կործանման միջոց, այլ՝ ապաստանի և մատակարարման: Մի՞թե այն քարը, որը մենք որոնում ենք, չպետք է հասանելի լինի բոլորին: Հնարավո՞ր է, որ ադամանդի նպատակն է՝ բացահայտել այն, ինչը գտնվում է մեր սրտի խորքում: Այս աշխարհում, որտեղ ճշմարտությունը սայթաքում և սահում է նորագույն հասարակական

Հնարավո՞ր է, որ ադամանդի նպատակն է՝ բացահայտել այն, ինչը գտնվում է մեր սրտի խորքում:

և մշակութային միտումների թելադրանքով, մի՞թե հաճելի չէր լինի ունենալ այն, ինչը հաստատուն է,

անշարժ է,

անպարտելի է,

անփոփոխ է:

Միգուցե այս մտորումներն ընդամենը անմիտ հարցեր են գոյություն չունեցող քարի մասին: Չէ՞ որ մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ այլևս ոչ ոք չի որոնում քարեր, որոնցում ուժ կա: Մենք իրատես ենք. մենք իմացել ենք, որ աստղերն ընդամենը լուսատու գոլորշի են: Մենք քայլել ենք լուսնի մակերեսի վրայով և զննածողեր ենք իջեցրել դեպի օվկիանոսի հատակի խորը խավար խոռոչները: Մենք մեծ մասամբ փարատել ենք այն առասպելական պատկերացումները, որոնք մի ժամանակ երկյուղածություն էին առաջացնում:

Սակայն, զրկվելով երկյուղից, մենք պարուրվել ենք շփոթմունքով և համեմատություններով:

Մարդիկ, որոնք ստացել են լավագույն կրթությունը, հաճախ զուրկ են թե՛ կյանքի նպատակից, թե՛ հնարավորություններից:

Մենք ստրկացրել ենք մեզ վարկային համակարգին, որի նպատակը գնորդներին ծուղակը գցելն է:

Մեր նախահայրերի կողմից ստեղծված քաղաքական համակարգը, որի նպատակը մեզ միաբանելն էր, այժմ պառակտում է մեզ:

Մեր կապերը լայն են, սակայն մեր հարաբերությունները մակերեսային են և զուրկ են ճշմարիտ մտերմությունից:

Մենք որոշում ենք մեր ինքնությունը ըստ մեր զբաղվածության և, չնայած դրան, բավականություն չենք ստանում կյանքից:

Մենք օգտագործում ենք տեխնիկական միջոցները, որպեսզի քարկոծենք այն մարդկանց, որոնց երբեք երես առ երես չենք հանդիպի:

Երբ ճշմարտությունը ջրիկանում է, մենք այլևս չունենք պա-

տասխաններ այն հարցերին, որոնք ավելի մեծ են, քան մենք:

Իրական ճշմարտությունը ժայռ է՝ անկոտրում, անբաժանելի, անշարժ, անպարտելի:

Հիսուսն է ճշմարտությունը: Եվ ես ենթադրում եմ, որ Հիսուսն է Ադամանդը:

Հիսուսը՝ Ադամանդ

Ոչ մի քար այս երկրից չի կարող հավասարվել Կենդանի Քարին: Այն ամենը, ինչ փնտրում էին հույն միստիկները, իրական է Քրիստոսում: Նա մեր Ժայռն է, մեր Անկյունաքարը, և մեր երկար սպասված Ադամանդը: Միայն Քրիստոսն է այն անփոփոխ Քարը, որն ի զորու է փոխել ամեն ինչ: Եվ Դարերի Ժայռը մշտապես եղել է մեր միջև: Իսրայելի զավակների աննպատակ թվացող անապատային դեգերումների ժամանակ Մովսեսը հռչակում էր այդ Ժայռի ներկայությունը.

> «Ժայռը՝ Նրա գործը կատարյալ է. որովհետև Նրա բոլոր ուղիներն արդարություն են:
>
> Աստված՝ հավատարիմ և առանց անիրավության,
>
> Արդար և ուղիղ է Նա» (Երկր. Օր. 32.4, KJV):

Դավիթն աղաղակեց Աստծուն իր փրկության օրը, երբ ավարտվեց իր անապատային շրջանը.

> «Սրտանց սիրում եմ Քեզ, ո՛վ Տեր, իմ զորություն: Տե՛ր, իմ Վեմ և իմ Բերդ և իմ Ազատիչ, իմ Աստված, իմ ամրություն, որին ես հուսացած եմ:
>
> Ո՛վ իմ ասպար և իմ փրկության եղջյուր, Նա իմ բարձր աշտարակն է» (Սաղմ. 18.1,2):

Եբրայերեն «ժայռ» բառն այս հինկտակարանյան հատվածներում նշանակում է «անմատչելի ապաստան»: Նա մեր

զորության Ժայռն է և մեր հաստատուն Հենարանը՝ մանրախ-ճով պատված այս աշխարհում: Հիսուսը մեր Բերդն է այն ժամանակ, երբ մեր թշնամիները ցանկանում են մահացու աքցանի մեջ վերցնել մեզ: Ժայռը մեր փրկությունն է, ապահովությունը և պաշտպանական զրահը: Քրիստոսն օծում է մեզ Իր Հոգու յուղով և ազդարարում է մեր փրկությունը մեր չարախոսներին:

Շատ առումներով բոլորս էլ փախստականներ ենք այս աշխարհում, և բոլորս էլ փնտրում ենք այդ բարձր, ապահով և սուրբ վայրը: Մենք ձգտում ենք ապահով կյանքի այնպիսի թագավորության մեջ, որը կառավարվում է անթերի արդարադատությամբ: Նման Իսրայելցիներին՝ մենք ետևում ենք թողել մեր եգիպտացի ստրկատերերին, սակայն դեռ չենք հաղթահարել այն ստրկացնող ձայները, որոնք տպավորվել են մեր ներսում՝ նրանց դաժանության պատճառով: Նույնիսկ այդ դեպքում Ժայռն ուղեկցում էր մեզ անապատային դեգերումների մեջ, որոնցում մենք պատրաստվում էինք Նրա նպատակների համար, սակայն չգիտեինք այդ մասին: Ժամանակն է ընդունել, որ մենք կոտրված ենք, և կրկին ընկնել այդ Ժայռի վրա՝ նորոգվելու համար:

> «Եվ այս քարի վրա ընկնողը կփշրվի, և ում վրա, որ այն ընկնի, կջարդի նրան» (Մատթ. 21.44):

Այս խոսքը Հիսուսի մասին է, որը և՛ Քարն է, և՛ Որդին: Երկուսն էլ ուղարկվել էին Աստծուց, և երկուսն էլ մերժվեցին մարդկանց կողմից: Որդին այն Քարն է, որը եկավ՝ փշրելու մարդկանց կեղեքող թագավորությունները և դառնալու Աստծո թագավորությունը հաստատող Անկյունաքարը: Ն. Թ. Ռայթը շեշտադրում է խորը կապը Որդու և Քարի միջև.

> «Զուգադիպություն է, որ անգլերենում «որդի» («սոն») բառի տառերը կրկնվում են «քար» («սթոուն») բառի մեջ (որում երկու տառ է ավելանում), իսկ եբրայերենում *«բեն»* («որ-

դի») բառի տառերը կրկնվում են *«էբեն»* («քար») բառի մեջ, (որում մեկ տառ է ավելանում)»[1]:

Ես այնքա՛ն շնորհակալ եմ, որ Քրիստոսում մենք միանում ենք թե՛ Քարին, թե՛ Որդուն: Մեկուսացված մարդիկ ընտանիք են գտնում, և շատերը մեկ են դառնում Քրիստոսում: Քրիստոսն այն Քարն է, որը կտրված է Աստծո սարից, և որին չի հպվել ոչ մի մարդկային ձեռք: Նա այն Ժայռն է, որին չի կարողանա դիմակայել ոչ մի երկրային թագավորություն: Դանիելը մարգարեացավ այս առճակատման մասին, որը տեղի է ունենալու Քրիստոսի՝ մեր Ադամանդի հետ, երբ պատմեց Նաբուգոդոնոսոր թագավորին նրա ծածուկ երազը և այդ երազի մեկնությունը.

Մեկուսացված մարդիկ ընտանիք են գտնում, և շատերը մեկ են դառնում Քրիստոսում:

«Դու, ո՛վ թագավոր, տեսնում էիր, և ահա մի մեծ արձան: Այդ արձանը մեծ էր, և նրա պայծառությունը գերազանց՝ կանգնած քո առջև: Եվ նրա երևույթն ահավոր էր: Այս արձանի գլուխը մաքուր ոսկուց էր, նրա կուրծքը և բազուկները՝ արծաթից, նրա մեջքն ու ազդրերը՝ պղնձից, սրունքները՝ երկաթից, նրա ոտքերի մեկ մասը՝ երկաթից, մեկ մասը՝ կավից: Դու տեսնում էիր, մինչև որ մի քար կտրվեց՝ առանց ձեռքի, և զարկվեց արձանի ոտքերին, որ երկաթից ու կավից էին, և նրանց փշրեց: Այն ժամանակ փշրվեցին միասին երկաթը, կավը, պղինձը, արծաթը և ոսկին և ամառվա կալերի մղեղի պես եղան, և քամին տարավ նրանց, և բնավ տեղ չգտնվեց նրանց համար: *Բայց այն քարը, որ զարկեց արձանին, մեծ սար եղավ և լցրեց ամբողջ երկիրը»* (Դանիել 2.31-35):

Քրիստոսում սերմը քար դարձավ, իսկ քարը սար եղավ: Այն սարը, որը լցրեց ամբողջ երկիրը, Սիոնն է, իսկ այդ սարի սերմը և քարը Քրիստոսն է: Եթե մենք անմտորեն փորձենք

կառուցել մեր կյանքն այն նյութերի վրա, որոնք չեն կարող դիմանալ այդ Քարի հարվածին, մեր նպատակները կփշրվեն, իսկ հետո կցրվեն ու կքշվեն ժամանակների քամուց: Հիսուսը ցնցում է այն ամենը, ինչը կարող է ցնցվել, որպեսզի մնա միայն անշարժը և ճշմարիտը: Ընդունե՛ք այդ ցնցումը, իմ ընկե՛ր: Թող ձեր սիրտը ցնցվի, քանի որ Նա չափազանց շատ է սիրում ձեզ, որ թույլ տա կրկին ընկնել կես ճշմարտությունների և անկայուն թագավորությունների ծուղակը: Դուք ստեղծված չեք, որ կառուցվեք երկրային երկաթով ու կավով: Դուք ստեղծված եք, որ կենդանի քար լինեք:

Թող ձեր սիրտը ցնցվի, քանի որ Նա չափազանց շատ է սիրում ձեզ, որ թույլ տա կրկին ընկնել կես ճշմարտությունների ծուղակը:

Կենդանի քարեր

> «Որին մոտեցել եք՝ այն կենդանի Վեմին, որ թեև մարդկանցից անարգված, բայց Աստծո մոտ ընտրված և պատվական է, դուք էլ, կենդանի քարերի պես, շինվեք հոգևոր տաճար, սուրբ քահանայություն, որ հոգևոր պատարագներ մատուցեք՝ Աստծուն ընդունելի, Հիսուս Քրիստոսի ձեռքով» (Ա Պետր. 2.4,5):

«Մեսիջ» թարգմանության մեջ այս հատվածը սկսվում է հետևյալ կերպով. «Բարի գալուստ դեպի կենդանի Քարը՝ կյանքի աղբյուրը»: Քրիստոսում մեր սրտերը կենդանանում են, և մենք նույնպես դառնում ենք կենդանի քարեր՝ դրված Նրա մարմնում, որպեսզի իրականացնենք մեզ համար որոշված նպատակները: Մենք պետք է ներկայացնենք մեր կյանքը հոգևոր տան կամ սրբարանի կառուցման համար: Մե՛նք չենք կառուցողը: Մենք այն հումքն ենք, որը Քրիստոսն օգտագործում է՝ Իր եկեղեցին կառուցելու համար:

Ինձ դուր է գալիս «սրբարան» բառը: Այն պատսպարան և օթևան է, որում կա ապահովություն, պաշտպանություն և անձեռնմխելիություն: Մեր կյանքը նման է ապահովության փարոսի: Այն անկյանք շինություն չէ: Այն կյանքով լեցուն ապաստան է, որտեղ մենք զոհաբերում ենք մեր կյանքը մեր Հորը, ինչպես որ քահանաները զոհեր էին մատուցում տաճարում: Պետրոսը շարունակում է այս օրինակը Ա Պետրոս 2.6-8-ում.

> «Որովհետև գրքում էլ կա, թե՝ «ահա Սիոնում անկյան գլուխ՝ ընտիր պատվական քար եմ դնում, և նրան հավատացողը չի ամաչի»: Արդ, ձեզ՝ հավատացյալներիդ, պատվականությունն է, բայց անհավատներին՝ «այն քարը որ շինողներն անարգեցին, նա անկյան գլուխ եղավ», և «գլորման քար և գայթակղվելու վեմ», որ գայթակղվում են՝ Խոսքին չհավատալով, որ նրա համար էլ գրված են»:

Ես գիտեմ՝ երբեմն մեր խոսքերը և գործերը դրդում են մեզ լռել այն փաստի մասին, որ մենք եկեղեցի հաճախող քրիստոնյաներ ենք, սակայն երբեք, նույնիսկ մեկ րոպե չպետք է ամաչենք մեր Անկյունաքարից: Հիսուսն անթերի է: Մենք թերություններ ունեցող ադամանդներ ենք և հաճախ խամրեցնում ենք Նրա պայծառայությունը, բայց մեր Ճարտարապետն այնպես է միավորում մեզ, որ յուրաքանչյուրիս մեջ արտացոլվի լավագույնը, իսկ թերությունները շտկվեն:

Մարդիկ կհիասթափեցնեն մեզ:

Մարդիկ չեն նկատի մեզ:

Մենք կհիասթափեցնենք մարդկանց և չենք տեսնի մեկս մյուսին այնպես, ինչպես Հիսուսն է տեսնում մեզ:

Սակայն մենք պետք է պատվենք Հիսուսին մեր կյանքի բոլոր օրերում, քանի որ Նա երբեք չի հիասթափեցնում մեզ: Նա փորձվեց, սակայն չթուլացավ և չձախողվեց: Հիսուսը նվիրված է Իր թերություններ ունեցող հարսնացուին, և Իր սիրո մի-

ջոցով Նա լուսավորում և պատրաստում է նրան: Մի՞թե մենք չպետք է անենք նույնը:

Մենք կարդում ենք Եսայու գրքում.

> «Որովհետև այսպես է ասում Տեր Աստված. «Ահա Ես եմ, որ Սիոնում դրել եմ վեմը՝ ընտիր վեմ, պատվական անկյուն, հաստատահիմն հիմունք. ով հավատա Նրան, չի փախչի»» (28.16):
>
> «Փախչել» բառը եբրայերենում ավելի լայն իմաստ ունի. այն նշանակում է նաև «անհանգստանալ և շփոթվել»: Սա խոստում է մեզ՝ ձեզ և ինձ. մենք՝ հավատացողներս, չենք անհանգստանա և չենք շփոթվի: Մենք կմնանք կատարյալ խաղաղության մեջ, քանի որ մեր միտքը կենտրոնացած է մեր անկոտրում Անկյունաքարի վրա (տե՛ս Եսայի 26.3):

Հիսուսը նվիրված է Իր թերություններ ունեցող հարսնացուին, և Իր սիրո միջոցով Նա լուսավորում և պատրաստում է նրան:

Երբ եկավ Հիսուսը, ամեն բան փոխվեց, և Նա (Հիսուսը), Ում մերժեցին, դարձավ ապաստան մերժվածների համար:

> «Բայց դուք ընտիր ազգ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ, որ քարոզեք Նրա առաքինությունները, որ ձեզ խավարից կանչեց Իր զարմանալի լույսի մեջ: Որ դուք ժամանակով ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստծո ժողովուրդ եք, որ ողորմված չէիք, բայց հիմա՝ ողորմվածներ» (Ա Պետր. 2.9,10):

Մի ժամանակ մենք այսպիսին չէինք, իսկ այժմ այսպիսին ենք: Մի ժամանակ մենք մերժված էինք, իսկ այժմ ընդունված ենք: Մի ժամանակ մենք պառակտված էինք. այժմ Քրիստոսում մենք մեկ ենք:

Բայց դուք... բայց ես... բայց մենք՝ բազմաթիվ վտարան-

դիներս, ընտրվեցինք Աստծուց և կանչվեցինք սուրբ ժողովրդի քահանայական գործի մեջ: Մենք վկայում ենք այն մասին, թե ինչ արեց Նա մեր կյանքում: Նրա նորը փոխարինվեց մեր հնով, և մեր մահը փոխարինվեց Նրա կյանքով: Մենք ընդունում ենք այս Քարին և աղաղակում ենք մեր ավերակներից՝ խնդրելով մեր Անկյունաքարին լիարժեք դարձնել մեզ: Մենք՝ մերժվածներս, Քրիստոսում ընդունված ենք դարձել: Նրանում մենք, որ մի ժամանակ *ոչինչ* էինք, *լիարժեք* մասնակիցներ ենք դարձել:

Մեր Անկյունաքարը անցյալի թաղված մնացորդ չէ: Հիսուսը մահացած քար չէ, որը դուրս է բերվել երկրի խորքերից: Քրիստոսը Կենդանի Քարն է, և այդ դերում Նա նույնպես մեր նոր սկզբի Ճարտարապետն է: Նա այն անփոփոխ Քարն է, որն ի զորու է փոխել մեզ:

Քարեր և սերմեր

Հին աշխարհի ճարտարապետության մեջ անկյունաքարը համարվում էր այն *սերմը,* որից գոյանում էր ամբողջ շենքը: Անկյունաքարը սկիզբ էր դնում այն հաջորդականությանը, որին հետևելու էր իրենից հետո դրված ամեն մի քար: Անկյունաքարի ճիշտ դիրքն այնքան կարևոր էր, որ շինարարները հավասարեցնում էին այն կողմնացույցի չորս կողմերին՝ օգտվելով աստղազարդ երկնքից: Որքա՜ն խորհրդանշական է, որ աստղերն ազդարարեցին մեր Անկյունաքարի գալուստը:

> Նրանում մենք, որ մի ժամանակ ոչինչ էինք, լիարժեք մասնակիցներ ենք դարձել:

Մեր ժամանակակից ճարտարապետությունն այլևս չի օգտագործում անկյունաքարը՝ որպես շինության սերմ: Այսօր անկյունաքարը պարզապես շենքի այն մասն է, որի վրա կառուցման ամսաթիվը հիշատակող գեղազարդային հուշա-

տախտակ է դրվում շինարարության ավարտից հետո: Այն չի ծառայում ոչ մի շինարարական նպատակի, այլ պարզապես դրվում է հիշեցման համար: Ի հակադրություն դրան՝ Հիսուսը պարզապես գեղազարդային հավելում չէ մեր կյանքում: Նա մեր օրինակն է և այն սերմը, որից աճում է մեր ամբողջ կյանքը:

Նա ոչ միայն մեր ապաստանը և մեր հիմքի սերմն է, այլև՝ մեր թարմությունը:

Պողոսը բացատրում էր Կորնթոսի եկեղեցուն, որ Ելից գրքի Վեմը Հիսուս Քրիստոսն էր. «Որովհետև այն հոգևոր վեմից էին խմում, որ գնում էր նրանց հետ, և այն վեմն էր Քրիստոսը» (Ա Կորնթ. 10.4): Հետևելով Մովսեսին անապատում՝ Իսրայելցիները թարմություն էին ստանում վեմից բխող ջրից՝ այն վեմից, որը հետևում էր նրանց: Այդ Վեմը Քրիստոսն էր: Նույնիսկ այդ ժամանակ Աստծո սերը և մատակարարումը նրանց հետ էին, և Հիսուսը նրանց պահապանն էր:

Որքա՜ն հետաքրքիր է...

Այս Քարը ոչ միայն ջուր էր մատակարարում միլիոնավոր մարդկանց, այլև գնում էր նրանց հետ: Աստված հայտնվում էր որպես ամպի սյուն՝ ցերեկը, և կրակե սյուն՝ գիշերը, իսկ այս Վեմը հետևում էր նրանց թե՛ ցերեկ, թե՛ գիշեր: Սա հիասքանչ պատկերում է Աստծո հարատև հոգատարությունը Իսրայելի զավակների մասին նրանց անապատային դեգերումների ժամանակ: Ըստ որոշ ռաբբիական ավանդությունների՝ գոյություն ուներ իրական ժայռ՝ սալաքարի նմանությամբ, որը պտտվում էր նրանց հետ և կանգնում էր Ժողովքի խորանի մոտ Իսրայելի կանգառների ժամանակ[2]:

Անկախ այն բանից՝ այդ վեմը հետևում էր նրանց բառացիորե՞ն, թե՞ փոխաբերական իմաստով, Պողոսը գրում է, որ այն խորհրդանշում է նախագո Քրիստոսին՝ նրանց հավերժ ներկա պահապանին: Այդ ժայռը էմանուելի՝ մեր մշտապես ներկա Տիրոջ խորհրդապատկերն է: Նույնիսկ հիմա Քրիստոսը այն ժայռն է, որն ուղեկցում է մեզ կյանքի անապատում և

թարմություն է տալիս՝ կենդանի ջրով:

«Նա բացեց վեմը, և ջուրը բխեց,
Այն հոսեց անապատով՝ գետի պես»
(Սաղմ. 105.41, ESV):

Մեր կյանքի ընթացքում հաճախակի կարող են անապատային փուլեր լինել, որոնք բացահայտում են մեր կյանքի աղբյուրը: Որոշ անջրդի փուլեր տևում են շաբաթներ, մյուսները՝ ամիսներ, և կան այնպիսիք, որոնք տարածում են իրենց ցամաքած ձեռքերը տարիների վրա: Սակայն անկախ այն բանից, թե որքան ամայացած է թվում ձեր ներկա միջավայրը, և թե որքան ժամանակ է դա տևում, ձեր անապատում թաքնված գետ կա: Եթե դուք ծարավ եք, եթե ձեր կյանքն ամայի է, աղաղակե՛ք Ժայռին:

Խաչի վրա Ժայռը՝ Հիսուսը, բացվեց ևս մեկ անգամ, և այս անգամ Նրա կողից հոսեցին արյուն և ջուր... ջուրը՝ լվանալու, և արյունը՝ փրկագնելու համար:

Մեր սարսափելի թերացումները չեն ազդում մեր Ժայռի բարության վրա: Երբ մեր Ադամանդը Իր կատարելությամբ բախվում է մեր արատներին, դրանք փոշիանում են: Այնպես չէ, որ Նա չգիտի մեր հանցանքների մասին: Նա տեսնում է այն ցավը և ամոթը, որոնք մեր արարքները բերում են մեր և այլ մարդկանց կյանքերում: Պարզապես Նա չի կարող բարի և ողորմած չլինել, քանի որ դա Նրա էությունն է: Նա բոլորի Տերն ու Փրկիչն է, և ով իր կոտրված կյանքը զցի Նրա անկոտրում ողորմության վրա, կվերափոխվի:

Նա չի կարող բարի և ողորմած չլինել, քանի որ դա Նրա էությունն է:

Նոր անուն

«Եվ Հիսուսը պատասխան տվեց և ասաց նրան. «Երանի՛ քեզ, Սիմո՛ն՝ Հովնանի որդի, որովհետև մարմինը և արյունը չհայտնեցին քեզ, բայց Իմ Հայրը, որ Երկնքում է: Ես էլ ասում եմ քեզ, որ դու ես, Պետրո՛ս, և այդ վեմի վրա կշինեմ Իմ եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթի նրան»» (Մատթ. 16.17,18):

«Դու ես, Պետրո՛ս»:

Նոր կյանքի համար անհրաժեշտ է նորոգված բնություն: Եվ որպեսզի մարդը նոր բնություն ստանա, անհրաժեշտ է նոր անուն պարգևել նրան:

Այս հայտարարությունը պետք է որ խորը ազդեցություն թողներ Սիմոնի սրտում: Հետաքրքիր է, ինչպիսի՞ զգացողություն նա ուներ, երբ առանձնացվեց և վեմ կոչվեց, թեև իր ամբողջ կյանքում նրան ճանաչել էին բոլորովին այլ անունով:

Սիմոն: Այնպես չէր, որ այդ անունը վատն էր: Պարզապես այն բավականին մեծ չէր: Այն ցույց էր տալիս, թե ինչպիսին էր նա եղել, ոչ թե՝ ինչպիսին էր նա դառնում: Երբ մենք այլ կերպ ենք խոսում, սկսում ենք այլ կերպ նայել ամեն ինչին: Պետրոսը այն նոր անունն էր, որը համապատասխանում էր նրա աստվածային կոչմանը:

«Սիմոն» անունը նշանակում է «լսել»: Այն նույնպես կարող է նշանակել «եղեգնանման և դյուրաթեք բնույթ ունեցող»: Ի մի բերելով այս երկու սահմանումները՝ այս անունը նկարագրում է այնպիսի մարդու, որը թեքվում է իր լսածի ուղղությամբ: Այդ իմաստով, բոլորս էլ Սիմոններ ենք, որոնք սպասում են նոր անուն ստանալուն՝ ըստ մեր կոչման, քանի որ, ինչպես և նա, մենք սովորաբար հետևում ենք մեր լսածին:

Սիմոնի հետ այս զրույցում անվան փոփոխությունը խորհրդապատկերում է մեր դիրքը Քրիստոսում, քանի որ Նա փոխում է յուրաքանչյուրիս՝ տատանվող եղեգից անկոտրում պատվար դարձնելով:

Սիմոնը պետք է անցում կատարեր՝ սովորական ձկնորսից մարդկանց ձկնորս դառնալով: Սիմոնի վերանվանումը փակեց հին գրքի էջերը, և այժմ Աստված կարող էր թուղթ ու գրիչ վերցնել՝ նոր գիրք գրելու համար:

Հետաքրքիր է՝ Պետրոս անունը սկզբում տարօրինա՞կ էր թվում, թե՞ դա այնպիսի անուն էր, որը նա ամբողջ կյանքում ցանկանում էր ունենալ: Արդյո՞ք դա վերաբերում է նաև մեզ: Դուք գիտե՞ք, որ Երկնքում բոլորս կստանանք մի քար, որի վրա գրված է մեր իրական անունը: Հիսուսը խոստացավ.

> «Ով որ հաղթում է, այն թաքցրած մանանայից ուտել կտամ նրան, և *սպիտակ խիճ (կամ՝ քար) կտամ նրան, և այն խճի (կամ՝ քարի) վրա՝ մի նոր անուն գրված, որ ոչ ոք չգիտի՝ բացի նրանից, ով առնում է»* (Հայտն. 2.17):

Այս նոր անունը հաղթանակներ է ազդարարում: Այն ցույց է տալիս, թե ինչպես հաղթեցինք մեր վախերը և դարձանք այնպիսին, ինչպիսին Աստված ստեղծել է մեզ: Ինձ համար ուշագրավ է, որ մեր նոր անունը գրվում է քարի վրա: Կարծում եմ՝ դա նշանակում է, որ այն, թե ինչպիսին էինք մենք, անցողիկ է, իսկ այն, թե ինչպիսին ենք մենք դառնում, հավիտենական է: Ինչո՞ւ ես պետք է ուզեմ ապրել այն անվան սահմանափակումներով, որը համապատասխանում է իմ ներկային, եթե իմ Ժայռը պատրաստել է այնպիսի անուն, որը հավիտյան համապատասխանելու է ինձ: Ես ապրում եմ՝ ձգտելով է՛լ ավելի նմանվել իմ նոր անվանը:

Ես ապրում եմ՝ ձգտելով է՛լ ավելի նմանվել իմ նոր անվանը:

Ինչ-որ բան փոխվում է, երբ այն, ինչ Հիսուսն ասում է մեր մասին, դառնում է մեր մասը: Այդ պահերին մենք մի աննշան չափով հասկանում ենք, թե ինչ է նշանակում իմանալ այնպես, ինչպես որ մենք ենք իմացված: Ահա թե ինչու է ինձ դուր գա-

լիս, որ հենց ժայռ Պետրոսն է կոչ անում մեզ մոտենալ մեր Անկյունաքարին (տե՛ս Ա Պետր. 2.4):

Սա առաջին դեպքը չէր, երբ Հիսուսը գործ ուներ քարի հետ: Հյուսն ասելով՝ մենք պատկերացնում ենք փայտի հետ աշխատող մարդու, բայց Հիսուսի օրերում հյուսները նաև «մշակում էին քար, երկաթ և պղինձ՝ փայտի հետ մեկտեղ»[3]: Մեր Անկյունաքարը ծանոթ էր քարին:

Երկրի վրա մենք հայտնի ենք մեր ծնողներից ստացած անուններով: Հավիտենության մեջ մենք կունենանք նոր անուն, որը կիմանանք միայն մենք: Մինչև այն պահը, երբ անհայտը հայտնվի մեզ, մենք արտոնված ենք ապրելու Հիսուսի անվան սքանչելիքներով:

Քրիստոսում քարերը միանում են իրար՝ սուրբ սար կազմելով:

Քրիստոսում փոքրիկ սերմերն աճում են՝ մեծ ծառեր դառնալով:

Քրիստոսում քարե սրտերը կենդանի քարեր են դառնում:

Քրիստոսում շատերը մեկ են դառնում:

Ապահով՝ Նրանում

Մեր դիրքը Քրիստոսում հիմնված չէ ամուր կառչելու կարողության վրա: Այն պահին, երբ թաքնվում ենք Նրանում, մենք ապահով ենք, քանի որ Նա կարող է պահպանել մեզ: Մենք ապահով ենք Քրիստոսում՝ մեր Ժայռի, Ադամանդի և Անկյունաքարի մեջ:

Վերջերս մեկնել էի Չիկագո, և օդանավակայանից մինչև հյուրանոց մեկ ժամվա ընթացքում իմ մուսուլման վարորդը փորձում էր դավանափոխ անել ինձ: Նա հավաստիացնում էր, որ եթե ես ամեն օր աղոթեի և ապրեի ըստ իսլամի դրույթների, միգուցե դրախտ հասնեի: Իհարկե, դա հաստատ չէր: Չկար ոչ մի երաշխիք, բայց միգուցե ինձ հաջողվեր դա: Նա առաջարկեց ինձ կանգնել մի ժայռի վրա, որը ոչինչ չէր խոստանում: Ես հասկացա, որ, ամենայն հավանականությամբ, ես սայթաքելու էի և

վայր էի ընկնելու: Այնպես որ, որոշեցի մնալ Քրիստոսում, քանի որ նույնիսկ եթե ընկնեմ Նրանում, երբեք դուրս չեմ մնա Նրանից:

Մենք ընկնում ենք Նրանում, ոչ թե՝ Նրանից դուրս:

Աստված հավատքի չափ է դնում *մեր մեջ՝ Իրենում* բնակվելու համար: Մենք սայթաքում ենք, երբ հավատում ենք մարդկանց: Սակայն երբեք չենք ձախողվի, եթե հավատանք Աստծուն: Թույլ տվեք, որ Աստծո հավատքը մուտք գործի ձեր կյանք: Հրավիրե՛ք այն ձեր սրտի մեջ: Դուք փորձել եք ձեր ուժերով և ձախողվել եք: Դուք տեսել եք, թե ինչպես են ձախողվել այլ մարդիկ, որոնք իրենց ուժերով փորձել են մագլցել հավատքի քարքարոտ ժայռի վրա: Այն, որ հավատքն անտեսանելի է, չի նշանակում, որ այն գոյություն չունի և չի կատարվում: Հավատքն անտեսանելի կերպով կենդանացնում է հույսը, որը բարձրանում է մեր մեջ և վստահություն է ներշնչում, որ կարող է լինել ավելին: Հավատքը խիզախություն է տալիս մեզ, որ խնդրենք ավելին և համարձակվենք երազել, որ Քրիստոսում մենք նույնպես կարող ենք լինել անկոտրում, անսասան և անպարտելի:

Սարեր

Աստծո Խոսքը կոչ է անում մագլցել մեր կյանքի սարերը՝ Աստծո զորությամբ և Նրա հետքերով: Վերջերս ես գրեցի հետևյալը իմ օրագրում.

> «Նրանք կանչում են ինձ՝ այս սարերի բարձունքները. «Ե՛կ և եղի՛ր իմ բերկրանքը»: Նրանք հրապուրում են ինձ անզուգական առեղծվածներով, որոնք հայտնի են միայն համարձակներին: Բայց ես տարեց եմ և այդքան ուժեղ չեմ: «Ինչո՞ւ էր Քո կանչն այդքան երկար սպասում»: Նա պատասխանեց. «Այո՛, սարը կտրուկ է, բայց Ես ուժեղ եմ: Քո երիտասարդությունը նորոգվում է, երբ դու հետևում ես այն շավղին, որը Ես որոշել եմ քեզ համար»»:

Ես ապրում եմ Կոլորադոյում, որը շրջապատված է սարերով: Այնպես որ, ես հասկանում եմ, երբ Աստված շշնջում է՝ կանչելով ինձ, որ հետևեմ Իրեն և բարձրանամ սարը: Ես չգիտեմ, թե ինչպիսի վայրում եք ապրում, բայց գիտեմ հետևյալը. դուք նույնպես բարձրանալու հրավեր եք ստացել: Ոչ թե դեպի քարքարոտ Սինա սարը, որի ստորոտին նույնիսկ դիպչելը արգելված էր: Դուք հրավեր եք ստացել դեպի Սիոնը՝ սքանչելիքների կենդանի սարը:

> «Այլ մոտեցել եք Սիոն սարին և կենդանի Աստծո քաղաքին, երկնավոր Երուսաղեմին, և բյուրավոր հրեշտակներին, և Երկնքում գրված անդրանիկների հանդեսին և եկեղեցուն, և ամենի դատավոր Աստծուն, և կատարյալ արդարների հոգիներին, և Նոր կտակարանի միջնորդ Հիսուսին, և այն արյան սրսկմանը, որ ավելի լավ է խոսում, քան թե Հաբելի արյունը» (Եբր. 12.22-24):

Ինչ-որ բան է կատարվում, երբ մենք քայլ ենք անում՝ ընդունելով այս զարմանալի հրավերը:

Ջոն Մյուրը, որը հարգված բնագետ էր և առաջին մարդկանցից էր, որոնք պայքարում էին վայրի բնության պահպանման համար, գրում է. «Հիմա մենք գտնվում ենք սարերում, և դրանք մեր մեջ են՝ բոցավառելով մեր խանդավառությունը, թրթռացնելով մեր յուրաքանչյուր նյարդը և լցնելով մեր ամեն մի ծակոտին ու բջիջը»[4]: Նա գրել էր այս խոսքերը՝ նկարագրելով Սիեռա Նևադա լեռնաշղթայի սքանչելի սարերը, որոնք ծածկված են վայրի բնությամբ և բնակեցված են վայրի կենդանիներով: Որքա՜ն ավելի այս խոսքերը կարելի է ասել կենդանի սարի մասին, որի մեջ մենք գտնվում ենք, և որը գտնվում է մեր սրտում: Քանի որ մենք ոչ միայն Քրիստոսում ենք, այլև Քրիստոսը մեր ներսում գտնվող հույսն է: Մեր հույսը գալիս է Սիոն սարից, երբ մենք ընդունում ենք Նրա իշխանությունը մեր սրտերում:

Թող որ այս էջերը ծառայեն որպես հրավեր՝ նրանց համար, ովքեր երբևէ մերժված են զգացել իրենց, և ապաստան՝ նրանց համար, ովքեր վախից ցնցվում են: Ընթերցելով այս գիրքը՝ ճանաչե՛ք ճշմարտության խորհուրդները և միասնությունը և խուսափե՛ք շփոթմունքի և երկրային կարծիքների որոգայթից. մեր Ադամանդը չի սասանվել: Նա միշտ եղել է մեզ հետ:

Սիրելի երկնային Հա՛յր,

Ես որոշում եմ կայացնում ընդունել այն ամենը, ինչը նշանակում է լինել կենդանի քար և թագավորական քահանա: Եղի՛ր իմ ապաստանը և զորությունը, իմ թարմությունը և հույսը: Այն անունը, որը Դու տվել ես ինձ, փորագրի՛ր իմ սրտի վրա: Քրիստո՛ս, իմ Անկյունաքա՛ր և Ադամա՛նդ, կյանքի անսասան և անպարտելի Աղբյո՛ւր, ես ընկնում եմ Քեզ վրա: Թող Քո կամքը կատարվի իմ կյանքում:

2

ԱՆԿՈՏՐՈՒՄ՝ ՄՏԵՐՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Մենք մարդկային էակներ չենք, որոնք ունեն հոգևոր փորձառություն: Մենք հոգևոր էակներ ենք, որոնք ունեն մարդկային փորձառություն»:

Պիեռ Տեյար դը Շարդեն

Ես հանգիստ երեխա չէի: Ես կամային և համառ էի: Սակայն կարող էի նաև մելամաղձոտ, մեկուսացված և անուշադիր լինել: Ինձ կարող էին պատվիրել հավաքել իմ սենյակը, բայց սենյակ մտնելուց մի քանի րոպե անց կարող էի մոռանալ, թե ինչու էի եկել այդտեղ: Երբ դուռն իմ ետևից փակվում էր, ես երաժշտություն էի միացնում և տարվում էի իմ մտքերով: Սենյակս կարգի բերելու փոխարեն սկսում էի տեղափոխել կահույքը: Այլ դեպքերում ես կարող էի արևային գլխարկ դնել և պատկերացնել, որ Լորա Ինգալս-Ուայլդերն էի[1]: Իմ դարակներից մեկի մեջ կար կապույտ կավի մի փոքրիկ կտոր, որը կարծես խնդրում էր ինձ ձի պատրաստել իրենից, իսկ տիկնիկներին, որոնք տատիկս բերում էր հեռավոր երկրներից, անհրաժեշտ էր վերադասավորել: Եվ միշտ գտնվում էին գրքեր, որոնք պահանջում էին իմ ուշադ-

րությունը: Իմ սենյակում ես լիովին կորցնում էի ժամանակի զգացողությունը: Մեկ ժամը թռչում էր տասնհինգ րոպեի պես:

Միայն երբ մայրս ձայն էր տալիս, ես հիշում էի, որ ուղարկվել էի ինչ-որ պատճառով, սակայն ոչ մի կերպ չէի կարողանում մտաբերել, թե ինչ պետք է անեի: Եվ երբ մայրս գալիս էր ստուգելու իմ աշխատանքը, ոչինչ դեռ արված չէր: Ընդհակառակը՝ սենյակն է՛լ ավելի մեծ խառնաշփոթի մեջ էր:

Այնպես չէր, որ ես դիտավորյալ ցանկանում էի անհնազանդ լինել, սակայն միշտ այդպես էր ստացվում: Հասկանալի է, որ նման վարքը խիստ վրդովեցնում էր մորս: Ես փորձում էի զսպել նրա բարկությունը՝ ներքաշելով նրան իմ երևակայական աշխարհը, բայց մայրս ապրում էր շատ իրական մղձավանջի մեջ, որից փախուստ չկար: Նա այնպիսի քաոսային շրջանում էր, որը կարող է հասկանալ միայն շնացող և հարբեցող տղամարդու հետ ամուսնացած կինը:

Քանի որ ես առաջին երեխան էի և միակ աղջիկը, նրա բարկությունը թափվում էր ինձ վրա: Ես նման էի հորս շատ առումներով՝ իմ արտաքինով և վարքով: Նա ասում էր շատ բաներ, որոնք, հավանաբար, չէր էլ կամենում ասել, և անում էր այնպիսի բաներ, որոնք մեծ ուրախությամբ չէր անի, բաներ, որոնք այնքան վաղուց են ներվել, որ չարժե նույնիսկ հիշատակել: Սակայն այդ ամենի արդյունքում ես բոլորովին չէի ցանկանում դուստր լինել: Ես պատմում եմ սա, միայն՝ որ հասկանաք, թե որքան հրաշալի հանդիպում եմ ունեցել Հիսուսի հետ:

Իմ չորրորդ հղիության ժամանակ շատերը ենթադրում էին, որ աղջիկ էինք ունենալու, քանի որ՝ ո՞վ է հաջորդաբար չորս տղա ունենում, ճի՞շտ է: Իմ հղիության սկզբում ես պայքարում էի այն վախի դեմ, որ դստեր ծնունդն անխուսափելի էր:

Մայրս հաճախ նախատում էր ինձ. «Հուսով եմ՝ քո աղջիկը ճիշտ քեզ նման կլինի»: Ես ընդդիմանում էի՝ պատասխանելով. «Ես՝ նույնպես»:

Միգուցե ինչ-որ պահի նրա խոսքերը ճիշտ էին, բայց ժա-

մանակի ընթացքում դրանք վերածվել էին ստի: Ես չէի ցանկանում աղջիկ ունենալ, նույնիսկ՝ մի փոքր: Ես արդեն կուշտ էի իմ շարունակ ճանապարհորդող ամուսնուց և երեք փոքրիկ տղաներից: Ի՞նչ կլիներ, եթե մեր խելահեղ խառնաշփոթին նաև աղջիկ ավելանար: Ես չգիտեի՝ ինչպես դաստիարակել նրան:

Աղոթքի ժամանակ լիովին անկեղծացա Աստծո հետ:

Ես շշուկով ներկայացրի ամեն մի վախ, որը մոլեգնում էր իմ մտքում: Հայտնեցի Աստծուն, որ ինձ աղջիկ տալը մեծ սխալ կլիներ: Ես չէի կամենում ցավ պատճառել նրան այնպես, ինչպես որ իմ մայրն էր ցավ պատճառել ինձ, իսկ նրա մայրն էլ՝ նրան: Ես վախենում էի, որ մտերիմ չէի լինի նրա հետ: Իմ կամակոր երիտասարդ տարիներին այնպիսի բաներ էի ասել, որոնք նկատի էլ չեմ ունեցել. ես չէի ուզում ինձ պես աղջիկ ունենալ:

Որոշ ժամանակ անց իմ բառերի հոսքը դադարեց, և ինձ վրա հանդարտության զգացում եկավ: Աչքերս փակվեցին, և ես խորը շունչ քաշեցի:

Իմ մտքում տեսա, որ լայնարձակ մարգագետնի եզրին եմ, որտեղ ծաղիկները և զմրուխտե խոտը ճոճվում էին արևի ոսկեգույն շողերի ներքո: Նման բացատ տեսնելիս՝ դրա միջով վազելու ցանկություն է առաջանում: Հեռվում միայնակ աշտարակ էր երևում: Ես զգացի, որ պետք է գնամ այնտեղ: Այդ աշտարակն ուներ մեկ դուռ և բարձր, նեղ պատուհաններ, որոնք պարուրաձև հաջորդում էին մեկը մյուսին (գիտեի, որ դրանք նախատեսված էին նետաձիգների համար): Ես բացեցի դուռը: Ներսում աղոտ լույս էր՝ ի տարբերություն դրսի պայծառ արևին, բայց և խավար չէր, և մթնոլորտը վատ կանխազգացում չէր առաջացնում: Պատուհաններից թափանցող լույսը ցույց էր տալիս ոլորաձև վեր բարձրացող աստիճաններ: Ես բարձրացա աստիճաններով՝ կանգ առնելով ամեն մի պատուհանի մոտ: Տեսադաշտում չկային ո՛չ մարդիկ, ո՛չ տներ: Ամեն մի պատուհանից երևում էին այդ մարգագետնի

նորանոր հատվածներ:

Բարձրանալով մինչև վերջ՝ գտա մի շրջանաձև սենյակ, որի պատուհանները տանիքի կղմինդրների տակ էին: Դռան դիմացի պատի տակ մեծ սնդուկ էր դրված: Ցանկացա տեսնել, թե ինչ կար դրանում: Ես սպասում էի, որ այդտեղ կլինեին զենքեր, պարենամթերք, նույնիսկ ինչ-որ գանձեր: Ծնկի եկա հատակին և բարձրացրի կափարիչը: Այն, ինչ գտա, ապշեցրեց ինձ. սնդուկը լցված էր իմ մանկական լուսանկարներով:

Ես տեսա լուսանկարներ, որոնցում իմ ատամներից մի քանիսն ընկել էին: Լուսանկարներ՝ իմ աչքը հեռացնելուց առաջ և հետո: Լուսանկարներ՝ ամառային արձակուրդներից, Սուրբ ծննդյան տոներից, իմ ծննդյան օրերից, նաև՝ իմ ժպտացող ծնողների հետ: Ես նայում էի այդ լուսանկարները, որոնք վնասվել էին տասնամյակներ առաջ, երբ մեր նկուղն ամբողջովին ջրով էր լցվել: Դրանք այդ դիտակետում էին՝ ապահով պահված գանձերի սնդուկի մեջ: Համակված դրանք վերգտնելու ուրախությամբ՝ ես սկսեցի ավելի ուշադիր նայել: Երևի հինգ տարեկանից մեծ չէի, և իմ երեսը ողողված էր արևի լույսով: Ես կկոցում էի աչքերս Նավաստի Պոպեյի պես և ժպտում էի հորս, ով որսում էր այդ պահը ֆոտոխցիկով: Մինչև հիմա ասես տեսնում եմ դա:

Իմ անուրջն ընդհատվեց, երբ մի տղամարդու ձայն լսեցի. «Ես միշտ մտածում էի, որ դու զվարճալի ես»:

Աստծո սերը սավառնում էր ինձ վրա, մինչ ես լաց էի լինում մանկան պես:

Ես շրջվեցի, սակայն չտեսա Հիսուսին: Ես գիտեի, որ Նա էր խոսողը, քանի որ զգում էի Նրա շոշափելի ներկայության ջերմությունը: Աստծո սերը սավառնում էր ինձ վրա, մինչ ես լաց էի լինում մանկան պես:

Այդ պահին երբևէ ասված ամեն մի բառ, որի պատճառով ես սարսափելի երեխա էի համարում ինձ, հեռացավ

թևավոր թռչնի պես: Որքան դիպուկ էր այն, որ այդ պատկերները պահվում էին զինանոցում, քանի որ դրանք բժշկության զենքեր էին:

Մտերմություն

Մեր Աստված անկոտրում է մտերմության մեջ: Նա գիտեր իմ վախերը և խոսեց անմիջապես իմ հոգու հետ: Նա ցանկանում է խոսել ձեզ հետ նույն կերպով: Նա հիշում է այն պահերը, որոնք ժպիտ են պարգևել Իրեն, այն պահերը, որոնք դուք մոռացել եք: Նա մոռացել է մեր մեղքը և ամոթը և թաղել է մեր անօրինությունները մոռացության ծովում: Նա մոտեցնում է մեզ Իրեն՝ բժշկելու և նորոգելու համար:

Մենք մոռանում ենք մեր իրական ինքնությունը, երբ սխալ պատկերացումներ ենք կազմում դրա մասին: Մենք կորցնում ենք մեր կարողությունները, երբ թույլ ենք տալիս, որ վախը և նույնիսկ այլ մարդկանց ցավերը թաղեն մեր պարգևները: Բայց մենք կարող ենք վազել Նրա մոտ և թաքնվել Նրանում, և Նա կխոսի ճշմարտությունը մեր սրտի ծածուկում: Նա ցանկանում է օրորել մերժվածներին Իր գրկում և հաստատել մեզ Իր ճշմարտության մեջ:

Հուսով եմ՝ արդեն գիտեք, որ՝

Դուք շատ ավելին եք, քան այն, ինչ կարող եք տեսնել դուք և այլ մարդիկ, կամ՝ ինչին կարող եք հպվել:

Դուք շատ ավելին եք, քան այն, ինչ դուք իմացել կամ արել եք:

Դուք շատ ավելին եք, քան այն, ինչ մարդիկ մտածում են ձեր մասին, և նույնիսկ այն, թե ինչպիսի պատկերացում ունեք ձեր մասին:

Ձեր կյանքը երբեք չի կարող ճշգրտորեն չափվել այն բանով, թե ինչ ունեք կամ ինչ չունեք:

Դուք ավելին եք, քան ձեր տարիները, և այդ պատճառով էլ չեք կարող սահմանափակվել ձեր տարիքով՝ լինեք երիտա-

սա՞րդ, թե՞ տարեց:

Դուք հավիտենական թագավորության զավակ եք:

Դուք ավելին եք, քան ամուրի, ամուսնալուծված, այրի կամ ամուսնացած կինը:

Դուք շատ ավելին եք, քան ձեր սեռը:

Այս հատկանիշները՝ ձեր հարաբերությունները մարդկանց հետ և ձեր ունեցվածքը այն պատյանն են, որտեղ բնակվում է ձեր ներսի իրական կյանքը: Դրանք նման են հագուստի, որը ծածկում է մեզ, և մեր մարմնին, որում մենք բնակվում ենք: Դրանք արտաքին տպավորություն են ստեղծում մեր կյանքի մասին, սակայն մեր կյանքի աղբյուրը չեն:

Եթե իմ տունը հրդեհվեր, և կրակը լափեր ամեն ինչ, բայց ես փախչեի կրակի լեզուներից, իմ կյանքը ոչ մի վնաս չէր կրի:

Հոգի

Ես կենդանի հոգի եմ:

Դուք կենդանի հոգի եք:

Մենք ստեղծված ենք Աստծո պատկերով, իսկ Աստված Հոգի է: Թեև հոգին անտեսանելի է, այն նույնքան իրական և մոտ է, որքան մեր շնչառությունը: Սակայն հոգին շատ ավելի խորն է, քան օդի հոսքը մեր թոքերով: Այն Աստծո կյանքն է, որը բնակվում է մեր մեջ: Կրակի և սիրո Աստված կլանում է այն ամենը, ինչը թույլ չի տալիս, որ Իր սերն արտահայտվի և ընդունվի:

> «Աստված Հոգի է, և Նրան երկրպագողները պետք է հոգով և ճշմարտությամբ երկրպագեն» (Հովհաննես 4.24):

Աստված Հոգի է: Աստված ճշմարտություն է: Այդ իսկ պատճառով, մենք երկրպագում ենք Նրան և՛ հոգով, և՛ ճշմարտությամբ:

Մեր թերի մարդկային բնության սահմանափակումները խիստ անհարմարավետ են մեր հոգու համար: Գոյություն ունի

լարվածություն մեր ազատության ձգտման և այս աշխարհի սահմանափակումների միջև, և հաճախ հենց դա է ցանկություն արթնացնում ձգտելու ավելիին:

Երբ մենք մեծանում էինք, այս հուսահատությունը դրդում էր մեզ աճ ունենալ: Այն, ինչն անհասանելի էր մեզ համար, դրդում էր մեզ պտտվել կամ սողալ: Որոշ ժամանակ անց այդպես տեղաշարժվելն արդեն բավական չէր. ինչո՞ւ անցկացնել մեր օրերը՝ հատակին նայելով: Այնպես որ, մենք թողեցինք սողալու ապահովությունը և արագությունը՝ փորձելով կանգնել: Կանգնելն ընդլայնեց մեր տեսադաշտը, և կարճ ժամանակվա ընթացքում մենք պատրաստ էինք կրկին հատակին ընկնել՝ տեղաշարժվելու համար: Սակայն եկավ այն օրը, երբ երկու ոտքերի վրա կանգնելուց հետո չորս վերջույթներին վերադառնալն արդեն բավական չէր: Մենք բարձրացրինք մեր գլուխը՝ ուղիղ քայլելու համար:

Թե՛ երիտասարդ, թե՛ տարեց հասակում սահմանափակումները հիասթափեցնում և դավաճանում են մեզ: Այդ դեպքում, ինչո՞ւ ենք կարծում, որ մարդու նյութական կյանքը կարող է բժշկել նրա հոգին: Մեր զգացմունքներին կարելի է հպվել և մեր մարմնին կարելի է հաճեցնել, բայց մարմնական պատյանը չի կարող հպվել հոգուն:

Աստծո Հոգու շունչն է, որ կենդանացնում է այն, ինչին մենք կարող ենք հպվել, և զգալու կարողություն է տալիս:

Եվ հոգին է, որ կյանք է տալիս մարմնին, ինչպես գրում է Հակոբոսը.

> «Մարմինն առանց հոգու մեռած է» (Հակոբ. 2.26):

Այնուամենայնիվ, հենց որ հոգին բաժանվում է մարմնից, մարմինը վերադառնում է դեպի երկրային տիրույթը, որից էլ կազմված է: Հոգին էր այն, ինչը կյանք և նպատակ էր հաղորդում մարմնին, և երբ այն հեռանում է, մարմինը մատնվում է փտության: Այնուամենայնիվ, կա մեկ այլ տեսակի մահ՝ մահա-

ցած հավատքը, որի մասին խոսում են Հակոբոսը և Պողոսը.

«Հավատքն առանց գործերի մեռած է» (Հակոբ. 2.26):

«Գիրը սպանում է, բայց Հոգին կենդանացնում է» (Բ Կորնթ. 3.6):

Մի՛ բավարարվեք կրոնով, որը զուրկ է Աստծո ներկայությունից, կամ Աստվածաշնչի էջերը թերթելով՝ առանց Նրա Հոգու քամու: Նրա ձայնը կյանք է տալիս: Օրենքի գրի սահմանափակումները միայն կրոնական դրույթները չեն, որոնք մարդիկ անկարող են պահել: Օրենքը նաև ընդգրկում է մեր մշակույթի հետքը մեր կյանքի վրա, այսինքն՝ այն պիտակները, որոնք այն խրախուսում է մեզ կրել:

Նրա ձայնը կյանք է տալիս:

Մինչև չհասկանանք, որ պիտակներով և գրով ապրելը մահ է, մենք կշարունակենք որոնել ճշմարտությունը սխալ աղբյուրի մոտ: Մեզ անհրաժեշտ է, որ ինչ-որ մեկը խոսի մեզ հետ հոգուց հոգի՝ դիմելով մեր խորը ձգտումներին և պարզություն բերելով բոլոր հարցերում, որոնք շփոթեցնում են մեզ: Մեր մշակույթում կան չափազանց շատ ծխով և հայելիներով խաղեր: Մարդիկ տարվում են ցուցադրվող պատկերներով, մինչ վարագույրի ետևում գտնվող խաղավարը վերահսկում է այն, ինչ մենք տեսնում և լսում ենք: Միգուցե դուք եք թաքնվում այդ վարագույրի ետևում և ցույց եք տալիս ամեն ինչ ձեր ուզած կերպով, այնինչ, իրականում, դուք հուսահատորեն ցանկանում եք, որ ձեզ տեսնեն: Տեսնեն այնպիսին, ինչպիսին որ կաք. մեր Աստված տեսնում է:

Սավառնող Աստված

«Սկզբում Աստված ստեղծեց երկինքը և երկիրը: Եվ երկիրն անձև ու դատարկ էր, և խավար կար անդունդի վրա, և

Աստծո Հոգին շրջում (կամ՝ սավառնում) էր ջրերի վրայով» (Ծննդ. 1.1,2):

Ամենասկզբից մեր Աստված Արարիչ էր: Երբ երկիրը գերված ու ծածկված էր ջրերից կազմված անձև դատարկությամբ, և խավարը քողարկում էր անդունդը... Աստված մոտեցավ: Աստծո Հոգին հիասթափությամբ չշրջվեց և չհեռացավ խավար ջրերի անձև, անպտուղ անդունդից: Փոխարենը՝ սկսեց սավառնել անդունդի վրայով:

Ես ուզում եմ մի պահ կանգ առնել և խոսել *«սավառնել»* բառի մասին:

Եբրայերեն «ռախաֆ» բառը, որը թարգմանված է «շրջել» կամ «սավառնել» բառով, լավագույնս թարգմանվում է որպես «մնալ կամ պտտվել՝ մեղմորեն և գուրգուրանքով»: Ռաբբիներն ավելացնում են «սավառնել» բառին «աղավնու պես» նշումը[2]:

«Ռախաֆ»-ը նույնպես նշանակում է «ճախրել»: Այս խոսքն օգտագործվում է նաև հետևյալ հատվածում.

«Նրան ամայի երկրի մեջ գտավ,
Վայրի ոռնացող անապատում.
Նրան շրջապատեց, նրան խրատեց,
Նրան պահպանեց՝ Իր աչքի բիբի պես:
Ինչպես որ արծիվը քրքրում է իր բույնը,
Շուռ է գալիս (կամ՝ ճախրում է) իր ձագերի վրա,
Տարածում է թևերը, վեր առնում նրանց,
Տանում նրանց իր թևերի վրա» (Երկր. Օր. 32.10,11):

Այս հատվածում, Աստծո պաշտպանությունը և հոգատարությունը Իսրայելի զավակների հանդեպ, համեմատվում է այն բանի հետ, թե ինչպես է արծիվը վարվում իր ձագերի հետ: Աստծո Հոգին սավառնում էր նրանց վերևում և պաշտպանում էր՝ առաջնորդելով ամայի վայրից դեպի խոստման երկիրը:

Ես համեմատում եմ սա մայրական քնքշության հետ, երբ

մայրը մի պահ կանգ է առնում իր քնած փոքրիկի մահճակալի մոտ, որը վախեցած շուռումուռ է գալիս՝ վատ երազ տեսնելով: Արդյո՞ք մենք ուզում ենք արթնանալ:

Եվ մինչ Աստծո Հոգին սավառնում ու ծածկում էր, Նա խոսեց: Նրա խոսքերը զգուշորեն ընտրված էին: Նա չարձագանքեց անձև ու դատարկ խավարի իրողությանը, այլ ասաց այն, ինչը ձևավորելու էր երկիրը՝ դարձնելով այնպիսին, ինչպիսին որ այն պետք է դառնար: Հանդիպելով քաոսի և խավարի՝ Աստված արթնություն հռչակեց: Երես առ երես բախվելով խավար ջրերին՝ Աստված ազդարարեց արևածագ, նոր սկիզբ, նոր օր: Աստված խոսեց՝ հռչակելով լույս:

> «Եվ Աստված ասաց. «Լո՛ւյս լինի», և լույս եղավ: Եվ Աստված տեսավ լույսը, որ բարի է: Եվ Աստված բաժանեց լույսը խավարից» (Ծննդ. 1.3,4):

Հայտնվեց լույսը, և այն բարի էր: Այս լույսը սկիզբ առավ Աստծուց, ինչը զարմանալի չէ, քանի որ Աստված լույս է՝ առանց որևէ ստվերի: Խոսքն արևի ստեղծման մասին չէ, դա տեղի ունեցավ ավելի ուշ: Այս լույսը բխում էր Աստծուց և լուսավորում էր երկրի խավար խորությունները: Այլ բան է ջահ պահել ձեռքում, և այլ բան է լինել լույսի աղբյուրը: Մենք լույսը կրողներ ենք, բայց Աստված լույսն է: Նրա շունչն իսկ կենդանացնող լույս է:

> Աստված լույս է՝ առանց որևէ ստվերի:

Նա խոսեց՝ հռչակելով Իր իսկ էությունը մեր երկրի վրա, և այն բարի էր, քանի որ *Աստված է բարի:*

Այն եբրայերեն բառը Ծննդոց 1-ին գլխում, որը թարգմանվել է «բարի» բառով, ունի մի շարք իմաստներ՝ ցանկալի, արդյունավետ, լավ, բարոյական, արժեքավոր և շատ ավելին: Երբ հայտնվեց լույսը, երկիրը լցվեց բոլոր այս հատկանիշներով, և նույնիսկ ավելիով: Լույսի շնորհիվ՝ երկիրը վերածվեց

գրավիչ, պտղաբեր միջավայրի, որը բարյացակամորեն և բարոյապես էր տրամադրված իր բնակիչների հանդեպ, և տարեցտարի ավելի ու ավելի արժեքավոր էր դառնալու: Աստծո բարությունը սկսեց գործել երկրի վրա:

Մենք չենք կարող իմանալ՝ արդյո՞ք երկրային լույսի ծնունդը տեղի ունեցավ պայթյունի պես, թե՞ այն ծագեց աստիճանաբար՝ նոր օրվա արշալույսի պես: Սակայն մենք հաստատ գիտենք, որ Աստված էր այդ լույսի աղբյուրը, որ այն բարի էր, և որ այն լիովին բաժանվեց խավարից:

> «Աստված լույսը կոչեց Ցերեկ և խավարը կոչեց Գիշեր, և իրիկուն, և առավոտ եղավ առաջին օրը» (Ծննդ. 1.5):

Հենց որ հայտնվեց լույսը, իրադարձությունները սկսեցին ծավալվել: Աստված բաժանեց ջրերն ընդարձակ տարածությամբ՝ ստեղծելով երկիր մոլորակի մթնոլորտը և այն շրջապատող պաշտպանիչ ծածկույթը: Հենց որ ստեղծվեց ապահով միջավայր, այն ամենը, ինչը երկար ժամանակ ընկղմված և թաքնված էր խավար անդունդի մեջ, բարձրացավ դեպի լույսը և հայտնվեց ջրի մակերեսին:

> «Եվ Աստված ասաց. «Երկնքի տակի ջրերը մեկտեղ ժողովվեն, և ցամաքը երևա»: Եվ այդպես եղավ: Եվ Աստված ցամաքը կոչեց Երկիր և ջրերի ժողովը կոչեց Ծով: Եվ Աստված տեսավ, որ բարի է» (Ծննդ. 1.9,10):

Այն, ինչը թաքնված էր, ի հայտ եկավ: Երկիրը կամ ցամաքը միշտ կար, բայց այն ծածկված էր խավար ջրերի խորությունների տակ և սպասում էր իր ազատությանը: Ես պատկերացնում եմ, որ երկիրը, շունչը պահած, հույսով հետևում էր տատանվող ջրերի վերևում լույսի հայտնվելուն: Երկիրը սպասում էր, որ Աստծո Խոսքը կանչեր իրեն: Եվ երբ դա տեղի ունեցավ, այն պոռթկաց կյանքով:

> «Եվ Աստված ասաց. «Երկիրը կանաչ խոտ բուսցնի՝ սերմ տվող խոտ և պտղաբեր ծառ, որ պտուղ տա իր տեսակի պես, որի սերմն իրենում լինի՝ երկրի վրա»: Եվ այդպես եղավ» (Ծնն. 1.11):

Հաջորդ օրը նշանակվեցին ցերեկվա և գիշերվա վերակացուները՝ արևը, լուսինը և աստղերը: Սա նշանակում է, որ սկզբում կենդանությունն ամբողջությամբ աճում էր Աստծո լույսի ջերմության և ոսկե փայլի ներքո: Նա էր լույսի աղբյուրը, և կգա այն օրը, երբ կրկին այդպես կլինի:

> «Եվ գիշեր չի լինի այնտեղ, և ճրագի և արեգակի լույս պետք չէր նրանց, որովհետև Տեր Աստված լուսավորում է նրանց, և կթագավորեն հավիտյանս հավիտենից» (Հայտն. 22.5):

Հենց որ հաստատվեցին արևի և լուսնի իշխանական տիրույթները, Աստված խոսեց ջրին և երկնքին՝ ստեղծելով ձկներին և օդում թռչող արարածներին: Օվկիանոսների խորությունը և երկնքի լայնությունը լցվեցին լողացող և ճախրող արարածներով: Այնտեղ, որտեղ մի ժամանակ սավառնում էր Աստծո Հոգին, այժմ թռչում էին նոր արարածներ: Հաջորդ օրը հատկացվեց երկիրը բնակեցնող արարածներին:

> «Եվ Աստված ասաց. «Երկիրը շնչավոր կենդանի հանի՝ իր տեսակի պես, անասուններ և սողուններ և երկրի գազաններ՝ իրենց տեսակի պես»: Եվ այդպես եղավ» (Ծնն. 1.24):

Ծովը, օդը և ցամաքը ծնունդ տվեցին՝ ըստ իրենց տեսակի և բնության: Եկավ ժամանակը, որ Արարիչը նույնպես ծնունդ տար՝ ըստ Իր տեսակի և բնության:

> «Եվ Աստված ստեղծեց մարդուն Իր պատկերով՝ Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց» (Ծնն. 1.27):

Մարդկությունը ստեղծվեց Նրա պատկերով: Հետաքրքիր է՝ մենք հասկանո՞ւմ ենք, թե ինչպիսի արտոնություն է լինել մեր անզուգական Արարչի արտացոլանքը:

Մենք կարող ենք միայն պատկերացնել, թե որքան վեհ էր յուրաքանչյուր արարած, մինչև որ մեղքը մուտք գործեց այս աշխարհ: Այնուամենայնիվ, նրանք նույնիսկ մոտ չէին Աստծո պատկերին, որը ներհյուսված է ծեզանում: Ես հենց այնպես չեմ ասում սա: Ես գիտեմ, որ սա ճիշտ է: Դուք կասկածում եք, քանի որ չեք կարող պատկերացնել, թե իրականում ինչպիսին եք: Տղամարդը և կինը ստեղծվեցին փառահեղ կերպով.

> «Եվ Տեր Աստված հողի փոշուց շինեց մարդուն և նրա ռունգերի մեջ կենդանության շունչ փչեց, և մարդը կենդանի հոգի եղավ» (Ծննդ. 2.7):

Նախ՝ Աստված շինեց կամ կազմեց, իսկ հետո՝ Աստված փչեց: Օգտագործելով այս լույսով կենդանացած տիրույթի փոշին՝ Արարիչն Իր իսկ շունչը կրելու կարողություն շնորհեց մարդուն: Ես Եմ Որ Եմ-ը փչեց Իր կյանքը մարդու մեջ, և այն, ինչը կաղապար էր, կենդանացավ: Սկզբում, երբ Ադամը ստեղծվեց, ամբողջական էր: Նա կատարյալ մարմին ուներ, և մարդու հոգին և անձը միաբան էին: Ադամն ու Եվան կատարյալ էին:

Ադամի ու Եվայի օրինազանցության պատճառով մենք այնպիսի անկում ապրեցինք, որից անկարող էինք վերականգնվել մեր ուժերով:

Մի՛ վախեցեք այն խոսքերից, որոնք ասացի, և թույլ մի՛ տվեք, որ դրանք ամբարտավան դարձնեն ձեզ: Թույլ տվեք, որ Նրա սկզբնական արքայական մտադրությունը, որը մեզ Բարձրյալ Աստծո պատկերը կրողները դարձնելն է, իր կշիռը դնի ձեր ուսերին: Ադամի ու Եվայի օրինազանցության պատճառով մենք այնպիսի անկում ապ-

րեցինք, որից անկարող էինք վերականգնվել մեր ուժերով: Այժմ, ծածկված մեր անպարտելի ապաստանի և Անկյունաքարի՝ Քրիստոսի մեջ, մենք աղոտ արտացոլում ենք այն, թե ինչպիսին ենք եղել, և սպասում ենք այն փառավոր հույսին, թե ինչպիսին ենք մեկ օր լինելու: Ինչպես որ դիպուկ կերպով նշեց.Կ. Ս. Լյուիսը.

> «Դու Տեր Ադամի և Տիկին Եվայի ժառանգն ես, - ասաց Ասլանը, - և դա այնպիսի պատիվ է, որը կարող է բարձրացնել ամենաաղքատ մուրացիկի գլուխը, և այնպիսի ամոթ, որը կարող է խոնարհեցնել երկրի մեծագույն կայսեր ուսերը: Գո՛հ եղիր»[3]:

Դուք ստեղծվել եք, որ մտերիմ և հոգով լեցուն շփում ունենաք Հոր հետ:

Մենք այս երկրի զավակներն ենք, որոնք կազմվել են հողի փոշուց շատ ավելի ուշ, քան մեղքը մուտք գործեց մեր աշխարհ: Մեր հոգին կենդանացավ, երբ վերստին ծնվեցինք, բայց մեր միտքը և մարմինը սրբացման և նորոգման կարիք ունեն:

> «Նա է խորը և ծածուկ բաները հայտնողը, որ գիտի մթի մեջ եղածը, և լույսը Նրա հետ է բնակվում» (Դանիել 2.22):

Մեղքի պատճառով անձի և հոգու ներդաշնակությունը խաթարվեց: Դա ավելի լավ հասկանալու համար, պատկերացրեք մի անոթ, որը դրված է, բայց այլևս լիքը չէ: Թեև Նրա շունչն է պահպանում մեր գոյությունը, մենք գիտակցում ենք, որ մեր ներսում դատարկություն կա: Մենք շնչում ենք Նրա շնորհիվ, սակայն ամեն անգամ շունչ քաշելիս հասկանում ենք, որ կա ավելին, քանի որ դա չի հագեցնում մեզ: Առանց *Աստծո* Հոգու՝ մենք ասես ապրում ենք վերակենդանացման բաժանմունքում:

Այժմ պետք է կիսվեմ ձեզ հետ, թե ինչու օգտագործեցի այսքան ժամանակ և էջեր, որպեսզի այս կերպով բացատրեի արարչագործության պատմությունը: Ես զգում եմ, որ Աստծո

Հոգին կամենում է սավառնել ձեր կյանքի որոշ բնագավառների վրայով: Նա կամենում է փոփոխություններ կատարել՝ ըստ Ծննդոց գրքի նմուշի: Նա կամենում է.

Կենդանացնել ձեզ Իր լույսով (տե՛ս Բ Կորնթ. 4.6):

Բաժանել լույսը խավարից (տե՛ս Բ Կորնթ. 6.14):

Ստեղծել պաշտպանիչ ծածկույթ ձեր կյանքի շուրջ (տե՛ս Հռոմ. 4.7,8):

Հեռացնել ջրի խավար ծածկոցը և նոր հող դուրս բերել (տե՛ս Եբր. 11.29):

Աճեցնել ձեր ներսում ցանված սերմերը, որպեսզի ծիլ տան և պտուղ բերեն (տե՛ս Մարկ. 4.20):

Հռչակել կյանք և սքանչելիքներ ձեր խորը ջրերում (տե՛ս Հովհ. 7.38):

Ազատել ձեր սիրտը վախից, որպեսզի այն կարողանա հավատքով սավառնել (տե՛ս Մատթ. 6.22, Մարկ. 6.50):

Զարմացնել ձեզ Իր անսահման արարչագործության ստեղծարար բնույթով (տե՛ս Սաղմ. 19.1-6):

Փչել կյանք՝ Իր կյանքը, մեղքի կողմից ստեղծված դատարկության մեջ, կրկին միավորել ձեր հոգին և անձը և բժշկել այն ամենը, ինչը պառակտված և պատռված է (տե՛ս Հովհ. 20.21,22, Կողոս. 2.2):

Նույնիսկ այս պահին մեր Արարիչը փափագում է մոտենալ և երես առ երես բախվել ցանկացած բնագավառի, որը քողարկված է խավարի կամ մշուշոտ շփոթմունքի մեջ, և սփռել Իր լույսը: Նրա Հոգին սավառնում է մեր կյանքի անձև ու դատարկ բնագավառների վրայով: Նա անտեղյակ չէ մեր ցավին, և մեր վիճակը չի վանում Նրան: Նա տեսնում է մեր պայքարը շփոթմունքի հետ: Նա չի հեռանում մեզնից՝ տեսնելով մեր դժվարությունը: Նրա Հոգին մոտենում է մեզ և մնում է մեզ հետ՝ նման այն մորը, ով իր վախեցած և շուռումուռ եկող ման-

կան կողքին է, կամ արծվի, որը ճախրում է իր բնի վերևում, որում իր ձագերը դուրս են գալիս իրենց ձվերից, և սպասումով հետևում է, թե ինչպես են նրանք ազատվում իրենց բարակ կաղապարներից: Ավելի ուշ, արծիվը կրկին սավառնում է, երբ իր ձագերը սովորում են թռչել: Սա մեր Արարչի անկոտրում մտերմության բնույթն է, Ով միաժամանակ և՛ մեր շուրջն է, և՛ մեր մեջ է: Մտերմությունը տեղ չի թողնում ստվերի համար. այնպես որ, մի՛ թաքնվեք: Ձեր Հայրը տեսնում է և սիրում է ձեզ այնպիսին, ինչպիսին դուք կաք: Հավատացե՛ք, որ Նա, Ով կազմել է ձեզ, նույնպես կփչի Իր կյանքը ձեր մեջ:

Մտերմությունը տեղ չի թողնում ստվերի համար:

Մտերմությունը լիարժեք է դարձնում

Կա մեկ բան, որ Աստված չի կարող անել. Նա չի կարող ստել:

Նա չի կրկնի այն ստերը, որոնք մարդիկ խոսել են ձեր կյանքում:

Նա թույլ չի տա, որ այն սուտը, որը դուք խոսել եք ձեր մասին, ճշմարտություն կոչվի:

Նա թույլ չի տա, որ ինչ-որ պիտակ սահմանափակի ձեզ: Նրա ներկայության մեջ ամեն պիտակ վայր է ընկնում, նույնիսկ այն պիտակները, որոնք դուք եք ամրացրել ձեզ վրա:

Նա կանչում է ձեզ ձեր անունով, ոչ թե այն անուններով, որոնցով մարդիկ պիտակել են ձեզ:

Նա կանչում է ձեզ այն անունով, որը Հոգին տեսնում է, երբ սավառնում է ձեզ վրա:

Նա տեսել է ձեր խորը փափագները և ամենախավար վախերը:

Նա տեսնում է ձեր կյանքի չձևավորված բնագավառները:

Նա տեսնում է հուսալքված հույսը:

Նա տեսնում է շփոթմունքի մշուշոտ ամպերը:

Նա տեսնում է ճգնաժամի մեջ գտնվող մարդկությանը՝ ծանր խռովության մեջ:

Նա լսում է վախեցած և միայնակ մարդկանց աղաղակները:

Նա զգում է այն մարդկանց ցավը, որոնցից խորշում են, և որոնց մեկուսացնում են:

Նա տեսնում է մեղքի և ամոթի որոգայթը:

Նա տեսնում է բազում ջրերը, որոնք սպառնում են ճնշել ձեզ:

Նա տեսնում է այն խավար խորությունները և ստվերները, որոնք գորշ են դարձրել ձեր իրականությունը:

Նա տեսնում է այս ամենը և խոսում է՝ հռչակելով լույս:

Միգուցե մարդիկ անվանում են ձեզ «այն աղջիկը». Նա անվանում է ձեզ դուստր:

Միգուցե մարդիկ անհաջողակ են անվանում ձեզ. Նա անվանում է ձեզ դուստր:

Միգուցե դուք անվանում եք ձեզ հետերոսեքսուալ, տրանսգենդեր, ասեքսուալ, լեսբուհի կամ փակցնում եք ձեզ վրա անթիվ այլ պիտակներից մեկը. Նա համարում է ձեզ Իրենը:

Դուստրն ավելի բարձր և խորը կոչում է, քան սեռը:

Դուստրն ավելի բարձր և խորը կոչում է, քան ձեր սեռական կողմնորոշումը:

Դուստրն այն է, թե ով եք դուք ձեր Արարչի համար:

Աստված չի անվանում մեզ աղջիկներ և տղաներ:

Նա կոչում է մեզ դուստրեր և որդիներ:

Մեզնից ամեն մեկի ներսում կան ծածուկ տեղեր, որոնց միայն Նա կարող է հպվել: Կան տեղեր, որոնք ստեղծված են՝ Աստծո Հոգուն արձագանքելու համար: Մենք խնդրում ենք Նրա հպումն ամեն անգամ, երբ շշնջում ենք Հիսուսի անունը:

Չգիտեմ՝ արդյո՞ք մեր մոլորակն աղաղակում էր, երբ

ծածկված էր ջրային գերեզմանի խորքերում: Չգիտեմ, թե ինչու Աստծո Հոգին որոշեց սավառնել: Սակայն գիտեմ, որ հիմա Աստծո Հոգին այնքան մոտ է մեզ, որքան մեր շշնջոցը, և սպասում է, որ առնի մեզ Իր գիրկը և մոտեցնի Իրեն:

Նոր կտակարանում Արարչի սիրտն արտացոլվեց Հիսուսի խոսքերում.

> «Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ, մարգարեներին կոտորող և քեզ մոտ ուղարկվածներին քարկոծող. քանի՛ անգամ կամեցա քո երեխաներին ժողովել, ինչպես հավը ժողովում է իր ձագերին թևերի տակ, և դուք չկամեցաք» (Մատթ. 23.37):

Որքա՛ն ողբերգական են «դուք չկամեցաք» բառերը:

Նույնիսկ այս պահին Աստծո Հոգին սավառնում է՝ սպասելով, որ խաղաղություն ազդարարի մեր կյանքի փոթորիկներին և խաղաղեցնի մեր անապատային աղաղակները: Նա սպասում է՝ փափագելով առնել մեզ Իր թևերի պաշտպանության և ջերմության տակ: Արդյո՞ք մենք կամենում ենք: Մենք կխնդրե՞նք սավառնող Սուրբ Հոգուն մոտենալ մեզ: Մենք թույլ կտա՞նք Նրան ծածկել մեզ, թե՞ կհամառենք և կփորձենք ինքներս անել դա՝ նույնիսկ ուրիշներին մերկացնելու և անպաշտպան թողնելու հաշվին: Արդյո՞ք մենք կլսենք մեր Արարչին:

Մտերմությունը պարզապես պատկանելություն ունենալու խորը և հուսահատ մարդկային ցանկության մի մասն է:

Մենք ձգտում ենք պատկանելություն ունենալ, քանի որ ստեղծված ենք պատկանելության համար:

Մենք սաստիկ ցանկանում ենք մտերիմ լինել, քանի որ ստեղծված ենք մտերմության համար:

Մենք սիրելու և սիրվելու կարիք ունենք, քանի որ ստեղծված ենք սիրո համար:

Եվ սերն է ստեղծել մեզ:

Ճշմարտությունն այն է, որ մենք հակված ենք անտեղի պարզեցնել որոշ բաներ և անտեղի բարդացնել այլ բաներ:

Երբ խոսքը սեռի մասին է, մենք անում ենք երկուսն էլ: Ես ապրում եմ կնոջ մարմնում, բայց, ի վերջո, ես հոգի եմ: Բոլորս էլ հոգևոր էակներ ենք, և բոլորս ենք բախվում մարդկային կյանքի խիստ պայմաններին: Այս երկիրը մեր տունը չէ. այնպես որ, չպետք է զարմանանք, որ երբեմն մեր մարմնիններն անհարմարություն են պատճառում և սահմանափակում են մեզ: Այդպես էլ լինելու է, քանի դեռ չենք հագել անմահ մարմին՝ այս մահկանացու և ապականացու անոթի փոխարեն: Մենք սերմեր ենք, որոնք սպասում են ազատություն ստանալուն: Այդ ժամանակ և միայն այդ ժամանակ մենք կբացահայտենք, թե իրականում ով ենք, և ինչպիսին ենք:

Բոլորս էլ կոտրված ենք: Այլ կոտրված մարդկանց միանալը չի բուժի մեր կոտրվածությունը նույն կերպով, ինչպես որ սեռական հարաբերությունները չեն բավարարի մեր մտերմության ձգտումը: Եթե այդպես լիներ, մարմնավաճառները և սեռամոլներն աշխարհի ամենաերջանիկ մարդիկ կլինեին (կարծում եմ՝ բոլորն են համաձայն, որ այդպես չէ): Բայց կա Մեկը, Ում մենք պատկանում ենք՝ Նա, Ով կարող է բժշկել մեր կոտրված վիճակը և լրացնել մեր մտերմության ձգտումը: Խոսքն Աստծո Հոգու մասին է, Ով սավառնում է և կրկին լիարժեք է դարձնում մեզ:

Հիշո՞ւմ եք այն խոսքը Դանիելի 2-րդ գլխում, որ այն քարը, որին մարդու ձեռք չէր դիպչել, սար է դառնում: Այս գաղափարը կրկնվում է Եսայի մարգարեի գրքում.

> «Գալիս է մի օր, երբ Աստծո Տան սարը կլինի այն հաստատ Սարը՝ վեր խոյացող բոլոր սարերի վրա: Բոլոր ազգերը կհոսեն դեպի այն, ժողովուրդները բոլոր տեղերից կգնան դեպի այն: Նրանք կասեն. «Եկե՛ք բարձրանանք Աստծո սարը, գնա՛նք Հակոբի Աստծո տունը: Նա ցույց կտա մեզ, թե ինչպես է Ինքը գործում, որպեսզի մենք ապրենք այնպես, ինչպես որ ստեղծված ենք»: Սիոնը այս հայտնության աղբյուրն է: Աստծո Ուղերձը գալիս է Երուսաղեմից» (2.2,3, MSG):

Աստված ցույց կտա մեզ, թե ինչպես է գործում, որպեսզի մենք ապրենք այնպես, ինչպես որ ստեղծված ենք: Մենք ստեղծված ենք անսասան և անպարտելի մտերմության համար. մեր խորին ձգտումները չեն մերժի այս մտերմությունը, և մեր արմատական վախերը չեն վանի այն: Եթե մենք խնդրենք, Նա ցույց կտա մեզ Իր բարության լույսը: Կա՛նգ առեք, մտորե՛ք և թո՛ւյլ տվեք, որ Նրա լույսը կենդանացնի ձեզ:

Սիրելի երկնային Հա՛յր,

Ես համարձակվում եմ հավատալ, որ Դու հեռու չես և դժգոհ չես, այլ՝ որ Դու մոտ ես: Կան բաներ՝ ընկղմված իմ կյանքի խորը ջրերում, որոնք այլևս չեմ տեսնում: Ես թույլ եմ տալիս Քեզ խոսել իմ կյանքում: Ուղարկի՛ր Քո լույսը և բաժանի՛ր այն ցանկացած խավարից ու շփոթմունքից իմ կյանքում: Ես ընդունում եմ այն, որ Դու դուստր ես անվանում ինձ: Ցույց տուր, թե ինչպես ես գործում իմ կյանքում, որպեսզի ես ապրեմ այնպես, ինչպես որ ստեղծված եմ... Քո փառքի համար: Հիսուսի անունով, ամե՛ն:

ԱՆԿՈՏՐՈՒՄ՝ ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ և այսօր և հավիտյան»:

Եբրայեցիների 13.8

Ամ կյանքում ազատ շաբաթավերջը հազվագյուտ բան է: Իսկ միայնակ անցկացրած շաբաթավերջն ուղղակի հրաշք է:

Նույնիսկ այդ դեպքում խոստովանում եմ, որ ես թաքնվում էի: Միգուցե հարցնեք. «Ինչի՞ց»:

Իրականում, այս գրքից:

Հետաձգելու սովորությունը չէ, որ փակուղու առջև էր կանգնեցրել ինձ, թեև խոստովանում եմ, որ հետաձգելը այն հմտությունն է, որում ես գերազանցության եմ հասել: Ո՛չ, ինձ վիատեցնում էր շատ ավելի վախեցնող մի հանգամանք, քան վերջնաժամկետները:

Համոզված չեմ, որ երբևէ զգացել եմ նման անհրաժեշտություն և կշիռ իմ ուղերձներից որևէ մեկի վերաբերյալ: Ես խիստ հրատապություն եմ զգում, որ ոչ միայն ճիշտ խոսքեր գտնեմ, այլև

ճիշտ կերպով շարադրեմ դրանք: Ես ի սրտե աղոթում եմ, որ երբ գտնվեն ճիշտ խոսքերը և սուրբգրային հատվածները, դրանք ի մի բերվեն այնպես, որ մարդիկ ոչ միայն ընթերցեն, այլև ընդունեն որպես ընկերոջ և մոր խոսքեր, որը ցանկանում է, որ իմանաք՝ դուք աներևակայելիորեն և անսահմանորեն սիրված եք:

Այսօր ես կրկին խոսելու եմ այն բանի մասին, ինչին հաճախ եմ անդրադարձել և ինչից հաճախ եմ հեռու մնացել: Ես մենակ եմ՝ իմ համակարգչի հետ. չկա ոչ մի հավաքույթ և ոչ մի միջոցառում, որի ետևում կարելի է թաքնվել: Այսօր շաբաթ է, իմ գրասենյակը փակ է, և ես տանը չեմ, որ կարողանամ գրել: Այսօր վաղ առավոտյան ես գյուղական շուկա էի գնացել իմ մոտոցիկլետով, որպեսզի թարմ մթերք գնեի հաջորդ մի քանի օրերի համար: Ձեռքիս տակ ուրցով հացի թարմ, խրթխրթան բոքոն է դրված: Ես կսկսեմ նրանից, ինչ լսում էի իմ հոգում առավոտյան. «Ես եմ Տերը՝ քո Աստվածը. Ես չեմ փոխվում»:

Աստված չի փոխվում. Նա փոխվելու կարիք չունի:

Ես արթնացա այս խոսքերով: Ամբողջ առավոտյան այս նախադասությունն արձագանքում էր իմ մտքում: Ի վերջո, ես գրեցի այն իմ օրագրի մեջ: Սովորաբար, երբ ինչ-որ բան եմ գրի առնում և մտորում եմ դրա կարևորության շուրջ, այդ միտքը լռում է: Բայց այսօր այս խոսքերը չլռեցին գրի առնվելուց հետո: Ես փնտրեցի դրանք Աստվածաշնչում և գտա ամենամոտ հատվածը Մաղաքիայի գրքում. «Որովհետև Ես՝ Տերս, չեմ փոփոխվի, և դուք, ո՛վ Հակոբի որդիներ, չեք սպառվի» (3.6):

Բաժանեցի այս նախադասությունը մի քանի մասերի, մինչ նստած էի դրսում և ագահաբար ուտում էի իմ հացը:

Առաջին մասը, որն ուսումնասիրեցի, իմ լսած վերջին բառերն էին. «Ես չեմ փոխվում»:

Աստված չի փոխվում. Նա փոխվելու կարիք չունի: Նա նվիրված է: Նրա նվիրումն անմնացորդ է: Նրա արձագանքը

մեզ՝ հիմնված է այն բանի վրա, թե ով է Ինքը, ոչ թե այն բանի վրա, թե ինչպիսին ենք մենք, կամ ինչպիսին չենք: Գոհությո՛ւն Աստծուն, քանի որ, եթե Աստված փոխվեր, բոլորս խնդիրներ կունենայինք:

Մխիթարական է իմանալը, որ Աստված չի փոխվում, և խիստ մտահոգիչ է գիտակցելը, որ եթե Նա փոխվեր... դա կնշանակեր մեր բացարձակ կործանումը:

Մաղաքիայի գիրքը վերջինն է Հին կտակարանում: Այս խոսքը հաջորդում է 3-րդ գլխի առաջին հինգ խոսքերին, որոնք հայտնում են մեզ, որ Աստված կուղարկի ավետաբերի՝ պատրաստելու համար Իր ճանապարհը, և որ Ինքը գալու է հալեցնողի կրակի պես և թափիչների օճառի պես: Կրակը և մոխրաջրով պատրաստված օճառը ակտիվ միջոցներ են. այս պատկերավոր արտահայտությունը փորձելու և մաքրելու իմաստ ունի: Թեև մեր Տերը չի փոխվում, Նա վճռել է վերափոխել մեզ՝ դարձնելով այնպիսին, ինչպիսին մենք ստեղծված ենք եղել:

Այն փաստը, որ Աստված չի փոխվում, պետք է խիզախություն հաղորդի մեզ՝ հավատալու համար, որ մենք կարող ենք փոխվել:

Այն փաստը, որ Աստված չի փոխվում, պետք է խիզախություն հաղորդի մեզ՝ հավատալու համար, որ մենք կարող ենք փոխվել: Նա մշտապես բարի և հավատարիմ է:

Երբ իմ որդիները փոքր էին, բնականորեն փորձում էին պարտադրել իրենց սահմանները: Այնպես չէ, որ նրանք միշտ ուզում էին վարվել իրենց ուզածով: Երբեմն նրանք ուզում էին իմանալ իրենց իրական սահմանները: Արդյո՞ք ես մշտապես նկատի ունեի այն, ինչ ասում էի: Երբ նրանք խաղում էին, մինչև նրանց գնդակը վերցնելը՝ անընդմեջ ասում էի. «Եթե կրկին գնդակ խաղաք տանը, ես կվերցնեմ այն»: Ես հետևողակա՞ն էի, թե՞ իմ խոսքերը պարզապես դատարկ սպառնալիքներ էին:

*Երբ ես անհետևողական էի, բոլորը շփոթմունքի մեջ էին հայտնվում: Ուրախ ժամանակ ես այլ բան էի ասում, հոգնած ժամանակ՝ մեկ այլ բան, և անկարելի էր իմանալ, թե ինչ կասեի, եթե այլ տրամադրություն ունենայի: Եթե ուրիշների ներկայությամբ ես նրանց ասում էի այլ բան, իսկ երբ մենակ էինք՝ մեկ այլ բան, բնականաբար նրանք չգիտեին, թե ինչ սպասեին ինձնից: Քանի դեռ հետևողական չէի, նրանք անվճռական էին, և նույնիսկ՝ անհնազանդ:

Վերջերս հեռախոսով խոսում էի մի անձնավորության հետ, ում հրավիրել էինք որպես խորհրդատու՝ օգնելու մեզ ավելի հարմարավետ դարձնել մարդկանց աշխատանքը մեր ծառայության մեջ: Նա հարցրեց ինձ, թե ինչո՞ւ եմ ես անվստահ մեր ծառայության բնագավառներից մեկում, թեև լիովին վստահ էի մյուս բնագավառներում: Մենք հասկացանք, որ պատճառն այն էր, որ չկար հստակություն: Ի՞նչ ես պետք է անեմ: Ես չգիտեի, թե որ հարցում իշխանություն ունեի, և որ հարցում՝ ոչ: Երբ չգիտեք՝ ինչի սպասել, դուք չգիտեք, թե ինչպես վարվել:

Մենք ստեղծված ենք պարզության և հստակության համար: Աստված գիտի այդ մասին: Իր բնությամբ Նա հաստատուն և հետևողական է: Աստված բարի է: Նա բարեգործ է: Նա բարի պարգևներ է տալիս մեզ: Կարիք չկա, որ թույլ տանք, որ կասկածը մթագնեցնի մեր միտքը:

> «Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերևից է իջնում՝ լույսի Հորից, որի մեջ բնավ փոփոխում կամ դարձվածքի շուք չկա» (Հակոբոս 1.17):

«Մեսիջ» թարգմանությունը շրջասության է ենթարկում Հակոբոսի 1.17-ի երկրորդ մասը հետևյալ կերպով. «...Աստծո մեջ չկա ոչ մի խաբուսիկ բան, ոչ մի կեղծիք և անկայունություն»: Մեր Հայրը չի փորձում շփոթեցնել մեզ կամ հանկարծակիի բերել՝ այլ բան ասելով և այլ բան նկատի ունենալով: Նա չի ասի այլ բան մեր երեսին և այլ բան՝ մեր թիկունքից: Մեր Աստ-

ված հուսալի է. Նա բացահայտ փոխանցում է Իր հետևողական ուղերձը բոլորին:

Թվոց 23.19-ը ևս մեկ աստվածաշնչյան խոսք է, որը ցույց է տալիս Նրա անփոփոխ հետևողականությունը.

> «Աստված մարդ չէ, որ սուտ խոսի, ո՛չ էլ մարդու որդի, որ զղջա: Մի՞թե կասի և չի անի, կամ՝ կխոսի և չի կանգնեցնի (կամ՝ կատարի)»:

Աստված չի ստում: Նա չի մտափոխվում: Նա կանի այն, ինչ ասել է: Այն, ինչ Նա ասում է, ամբողջապես կիրականանա: Որոշ բաներ այլ տեսք կունենան կամ կկատարվեն ավելի ուշ, քան մենք սպասում էինք, բայց դրանք կկատարվեն:

Աստված մեր անկոտրում և անսասան Վեմն է, այն հաստատուն Ժայռը, որը բարձր է ամենից: Բարձրացնելով մեր աչքերը՝ մենք կիմանանք, որ այն միշտ իր տեղում է: Քանի որ Նա հաստատուն է, Նրա Խոսքը և Նրա գործերը մշտապես համապատասխանում են: Նա չի կարող այլ բան ասել և այլ կերպ գործել: Նա միասնական է Իր բոլոր դրսևորումներում:

Հին ուխտի խոսքերի *գիրը* կարող է այլ կիրառություն ունենալ Նոր ուխտում, սակայն *հոգին* նույնն է: Աբրահամի ուխտի ներքո ամեն տղամարդ պետք է թլփատվեր, սակայն երբ Ավետարանը տարածվեց հեթանոսների մեջ, այդ պահանջն այլևս չկար: Պողոսն այսպես է բացատրում սա.

> «Արդ թլփատությունը շահավոր է, թե որ օրենքը պահող ես, ապա եթե օրենքի դեմ հանցավոր ես, քո թլփատությունն անթլփատություն եղավ: Բայց թե որ անթլփատությունն օրենքի իրավունքները պահի, չէ՞ որ նրա անթլփատությունը թլփատություն կհամարվի: Եվ ի բնե անթլփատությունը, օրենքը կատարելով, կդատապարտի քեզ, որ գրով և թլփատությամբ օրենքի դեմ հանցավոր ես, որովհետև նա չէ հրեա, որ դրսի երևույթով է, և այն չէ թլփատությունը, որ մարմ-

> նով՝ դրսի երևույթով է: Այլ նա, որ ծածուկ հրեա է, և *սրտի թլփատությունը՝ հոգով, և ոչ թե գրով,* որի գովասանքը ոչ թե մարդկանցից է, այլ՝ Աստծուց» (Հռոմ. 2.25-29):

Ի՞նչ օգուտ արտաքին նշաններից, եթե դրանք չեն ուղեկցվում ներքին փոփոխությամբ: Սակայն ներքին փոփոխության համար անհրաժեշտ չէ կատարել օրենքի արտաքին պահանջները: Իրականում, Աստված մշտապես ցանկանում էր թլփատված սրտեր: Թլփատված սիրտն է, որ հնազանդ է դարձնում մարդուն՝ կատարելով Հոր սրտի ցանկությունը և հետևելով օրենքի հոգուն: Օրենքի հոգին մշտապես գերազանցելու է մարմնական պահանջները: Հոգին զորացնում է մեզ այնպես, ինչպես օրենքը ոչ մի դեպքում չի կարողանա: Աստված չփոխեց Իր կարծիքը... Նա փոխեց մեր սրտերը: Կարդացեք, թե ինչ Նա ասաց Մովսեսին.

> «Եվ ողորմություն կանեմ (կամ՝ անսպառ սեր կշռայլեմ) նրանց մինչև հազար ազգ, որ սիրում են Ինձ և պահում են Իմ պատվիրանները» (Երկր. Օր. 5.10):

Եվ կրկին.

> «Երանի՜ թե նրանց սիրտն էլ այնպես լիներ, որ Ինձնից վախենալով՝ Իմ բոլոր պատվիրանները պահեին ամեն ժամանակ, որպեսզի իրենց համար բարի լիներ և իրենց որդիներին էլ՝ հավիտյան» (Երկր. Օր. 5.29):

Աստծո և մարդկության հարաբերությունների ամբողջ ընթացքում հաղթական բանաձևը մշտապես եղել է սերը և հնազանդությունը: Սերը զորություն է տալիս՝ հնազանդվելու համար: Աստված փափագում էր շռայլել Իր անսպառ սերը մեր կյանքում, ոչ թե ծանրացնել մեզ այնպիսի օրենքներով, որոնք անհնար է կատարել: Եթե Աստված կարողանար մտնել մեր սրտերը և փոխել դրանք դարեր առաջ՝ Սինա սարի ստորո-

տում, կաներ դա: Բայց փոխարենը, Նա ուղարկեց Հիսուսին, որպեսզի ցույց տար մեզ Իր սիրտը: Հենց որ Նրա սերը մեր հանդեպ հայտնվում է, միակ օրենքները, որոնք անհրաժեշտ են, սիրո օրենքներն են: Կրկին, գրված է.

Նա ուղարկեց Հիսուսին, որպեսզի ցույց տար մեզ Իր սիրտը:

> «Հիսուսն էլ նրան պատասխանեց, թե՝ բոլոր պատվիրաններից առաջինը սա է. «Լսի՛ր, Իսրայե՛լ, մեր Տեր Աստված մեկ Տեր է: Եվ սիրի՛ր քո Տեր Աստծուն ամբողջ սրտով և ամբողջ անձով և ամբողջ մտքով և ամբողջ զորությունով»: Սա է առաջին պատվիրանը: Եվ երկրորդը՝ սրա նման. «Սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պես»: Սրանցից ավելի մեծ ուրիշ պատվիրան չկա» (Մարկ. 12.29-31):

Հին կտակարանի Տասը Պատվիրանները վերածվել էին անթիվ բարոյական, ծիսական և քաղաքացիական օրենքների, սակայն Հիսուսն ասաց. «Այս երկու պատվիրանից կախված են ամբողջ օրենքը և մարգարեները» (Մատթ. 22.40):

Ես Եմ

Այս նախադասության հաջորդ մասը, որն ուսումնասիրեցի, «Ես Եմ» արտահայտությունն էր, որն ինքնին առանձին նախադասություն է: Եվ այս արտահայտությունը պատասխանում է բազմաթիվ հարցերի, որոնք առաջանում են մարդկանց մոտ.

«Աստվա՛ծ, Դու այստե՞ղ ես»:

Նա պատասխանում է. «Այո՛, *Ես* այստեղ *եմ»:*

«Դու կհոգա՞ս այս հարցի մասին»:

Նա կրկին պատասխանում է. «*Ես* հոգում *եմ»:*

Նա «Ես Եմ»-ն է՝ միաժամանակ մեր անցյալում, ներկայում և ապագայում:

Նա հավատարիմ էր, քանի որ Նա հավատարիմ է: Նա հավատարիմ կլինի, քանի որ Նա հավատարիմ է եղել: Քանի որ Նա... «Ես Եմ»-ն է:

Երբ գրում էի իմ *«Կյանք՝ առանց մոցակցության»* գիրքը, ես տպավորված էի Բարձրյալ Աստծո՝ մեծ Ես Եմ-ի մասին գաղափարով: Մի ժամանակաշրջանում, որում շատերը ձգտում են բացահայտել, թե ով են իրենք, բոլորս պետք է թեթևություն զգանք՝ գիտակցելով, որ մեր ինքնությունը գտնվում է Նրանում, Ով կար և կա և գալիս է: Մեր ինքնությունը նման է մեծ գանձի, որը թաքնված է Նրա էության խորքերում: Մենք բացահայտում ենք, թե ով ենք, երբ գիտակցում ենք, թե ում ենք պատկանում:

Ես Ես Եմ-ի զավակն եմ:

Դուք Ես Եմ-ի զավակն եք:

Աստված ներկայացավ Մովսեսին որպես «Ես եմ, որ Եմ» (Ելից 3.14), ինչը կարելի է ձևակերպել այսպես. «Ես Իմ ամբողջական ինքնության լիարժեք մարմնավորումն եմ. ոչինչ Ինձանում մասնակի և թերի չէ»:

Մեկ այլ թարգմանության մեջ գրված է. «Ես եմ Նա, որ Եմ» (Ելից 3.14, KJV): Աստված գոյություն ունի, քանի որ Նա գոյություն ունի: Ես գոյություն ունեմ, քանի որ Նա գոյություն ունի: Քանի որ Նա գոյություն ունի, Նա անտեղյակ չէ: Աստված հայտնվեց Մովսեսին, քանի որ Նա լսեց Եգիպտոսի դաժան ստրկության մեջ գտնվող սերնդի աղաղակը: Եվ քանի որ Նա տեղյակ էր, Նա միջամտեց:

> «Եգիպտոսի մեջ ձեր քաշածը տեսա և ասացի՝ հանեմ ձեզ Եգիպտոսի չարչարանքից» (Ելից 3.16,17):

Կարդալով և մտածելով մեր «Ես Եմ» Աստծո մասին՝ տեսնում եմ երեք ճշմարտություն. Աստված տեսնում է, Աստված գիտի, Աստված պատասխանում է: Այս երեք կետերն ասում են. «Ես տեղյակ եմ»: Չգիտեմ, թե որտեղ եք դուք, բայց հենց այս պահին Ես Եմ-ը տեսնում է ձեզ, գիտի, թե ինչ է տեղի

ունեցել, և խոստանում է ազատել ձեզ թե՛ ձեր նեղություններից, թե՛ ձեր ստրկությունից:

Նա ամեն ինչն է: Նա սկիզբը և վերջն է, սակայն չունի սկիզբ և վերջ: Նա ընդգրկում է ամեն մի տառը՝ ալֆայից մինչև օմեգա, սակայն Նրան անկարելի է նկարագրել այն բառերի բազմությամբ, որոնք կարելի է կազմել այդ տառերից: Նա Ես Եմ-ն է: Նա է պատճառը և նպատակը:

Ամբողջ արարչագործությունը կյանք է ստանում Արարչից: Քանի որ Նա կա... ես կամ: Քանի որ Նա կա... դուք կաք: Մեր Արարիչը մեր ինքնության սկզբնաղբյուրը և հեղինակն է: Նշանակում է՝ ոչ ոք երբեք չի կարող գողանալ այն ինքնությունը, որը ծածկված է Նրանում: Մենք գտնվում ենք Քրիստոսում՝ մեր Ադամանդի մեջ, և պատկանում ենք Նրան՝ ոչ թե բնական ծննդյան իրավունքով, այլ՝ վերստին ծննդյան շնորհալի պարգևով և իրավունքով:

Այս նախադասության հաջորդ մասը, որը գրավեց իմ ուշադրությունը, «Տերը» բառն էր:

Այս բառը ցույց է տալիս Ես Եմ-ի գերիշխանությունը, ինչպես, օրինակ, «Բարձրյալ Տեր» արտահայտության մեջ Սաղմոս 7.17-ում (ESV): Այս բառը նույնպես օգտագործվում է, երբ մենք նկատի ունենք Աստծո «Յահվեհ» անունը, որը հրեաներն այնքան սուրբ են համարում, որ նույնիսկ չեն արտասանում: Այս սուրբ և բարձր անունը ներկայացնում է Աստծուն՝ Իր գթասրտությամբ և ողորմածությամբ:

Ես շնորհակալ եմ, որ ամեն բարձրության և սրբության Տերը նաև գթասիրտ և ողորմած է: Ի՞նչ կլիներ, եթե գերագույն իշխանություն ունեցող Անձը խիստ և դաժան բռնապետ լիներ: Ճշմարտությունն այն է, որ քանի որ Նա ամենի Տերն է, Նա արժանի է իմ ունեցած ամեն ինչին: Քանի որ Նա գթասիրտ և ողորմած է, Նա հասկանում է, որ յուրաքանչյուրիս համար կյանքն ընթացք է:

Երբ մենք լիովին անձնատուր ենք լինում Նրան, մեր կյանքն

ընդլայնվում է Նրա իշխանությամբ: Նրանում մենք չենք կորցնում մեր անհատականությունը, ընդհակառակը՝ ազատություն ենք ստանում, որ դառնանք այնպիսին, ինչպիսին Նա ստեղծել է մեզ: Մեզ համար դժվար է պատկերացնել *«տեր»* բառի գործածությունը՝ մարդկային աստիճանակարգության մասին մեր ունեցած պատկերացումից դուրս: Մենք ճանաչել ենք երկրային տերերի, որոնք օգտագործել են իրենց իշխանական դիրքն իրենց իսկ շահի համար: Մարդկության ամբողջ պատմության ընթացքում անօրեն տերերը շահագործել են իրենց իշխանության ներքո գտնվող մարդկանց: Հիսուսը զգուշացրեց Իր աշակերտներին այս մասին Մատթեոս 20.25-28-ում.

Նրանում մենք չենք կորցնում մեր անհատականությունը, ընդհակառակը՝ ազատություն ենք ստանում, որ դառնանք այնպիսին, ինչպիսին Նա ստեղծել է մեզ:

«Հիսուսն էլ նրանց Իր մոտ կանչելով՝ ասաց. «Գիտեք, որ ազգերի իշխանները տիրում են նրանց վրա, և մեծամեծներն իշխում են նրանց վրա: Բայց այնպես չլինի ձեր մեջ, այլ ձեզնից ով որ կամենա մեծ լինել, թող ձեզ ծառա լինի: Եվ ձեզնից ով որ կամենա առաջին լինել, թող ձեզ ծառա լինի: Ինչպես մարդու Որդին չեկավ, որ Իրեն ծառայեն, այլ՝ որ Ինքը ծառայի, և շատերի փոխարեն Իր անձը փրկանք տա»»:

Հիսուսի իշխանությունը բարձրացնում է մեզ, ոչ թե պահում է հպատակության մեջ:

Հիսուսի կյանքի ամեն մի բնագավառը ծառայում և փրկագնում էր:

Մեր Տերը մերկացվեց, որպեսզի մենք ծածկվենք:

Հիսուսը պատիժ կրեց, որպեսզի մենք ստանանք խոստումները:

Մեր Տիրոջը դավաճանեցին, որպեսզի մենք պաշտպանված լինենք:

Հիսուսը հարություն առավ մահից դեպի կյանք, որպեսզի մենք նույնպես հարություն առնենք:

Այդ նախադասության հաջորդ մասը, որն ուսումնասիրեցի, «քո Աստվածը» արտահայտությունն է: Ես լսեցի այն իմ հոգում հին անգլերենով, հավանաբար այն պատճառով, որ ես բազում անգամներ կրկնել եմ Տերունական աղոթքը: Միգուցե սա ակնարկ էր այն մասին, որ «քո Աստվածը» արտահայտությունն անժամանակյա բնույթ է կրում:

«Աստված» բառն Աստվածաշնչում *«Էլոհիմ»*-ն է: Այն նշանակում է Արարիչ, Դատավոր և Պատերազմող: Ճշմարտությունն այն է, որ Նա չդարձավ Աստված այն պահին, երբ ես ընդունեցի Նրան: Նա մշտապես իմ Արարիչ Աստվածն էր: Նա չուներ իմ ճանաչման կարիքը՝ ինձ ճանաչելու համար: Նա գիտեր ինձ անցյալում և գիտի ինձ այժմ՝ շատ ավելի լավ, քան ես գիտեմ ինքս ինձ: Նա կազմել է ինձ ծածուկում և հայտնում է ինձ Իր սերը ծածուկ վայրում: Որպես իմ Դատավոր՝ Նա արդարացրել է իմ մեղքերը և հեռացրել է իմ անօրինությունները: Սաղմոս 103.10-12-ում գրված է.

> «Նա չի անում մեզ մեր մեղքերի համեմատ և չի հատուցում մեզ մեր անօրինությունների համեմատ: Այլ՝ որքան որ բարձր է երկինքը երկրից, այնքան զորավոր է Նրա գութն Իրենից վախեցողների համար: Որքան որ արևելքը հեռու է արևմուտքից, այնքան Նա հեռացրեց մեզնից մեր հանցանքները»:

Աստծո սերն անըմբռնելի և անսասան է, անթափանցելի և անխոցելի է, ինչը վերադարձնում է մեզ դեպի վերջին բառերը, որոնք ես լսեցի. «Ես չեմ փոխվում»:

Աստված անկոտրում է սիրո մեջ նույնքան, որքան՝ ողորմության մեջ: Նա երդվում է Իր անփոփոխ բնությամբ, ոչ թե

մեր փոփոխական բնույթով: Սաղմոս 103.17-ում գրված է, որ Նա խոստանում է Իր սերն Իրենից վախեցողներին: Աստված չի փնտրում կատարելություն, քանի որ մեր անկոտրում Անկյունաքար Քրիստոսից բացի՝ չկան անմեղ մարդիկ: Բայց Նա *միանշանակ* փնտրում է այնպիսի մարդկանց, որոնք վախենում են Իրենից: Ինչո՞ւ: Ի՞նչ է նշանակում վախենալ Աստծուց մեր անհարգալից և աներկյուղ ժամանակներում:

Տիրոջ երկյուղն ունենալու ձևերից մեկը չարից հեռանալն է: Առակաց 3.7-ում գրված է. «Դու քո աչքի առջև իմաստուն մի՛ եղիր, վախեցի՛ր Տիրոջից և հեռացի՛ր չարից»: «Ավյուն» թարգմանությունը ներկայացնում է այս խոսքը հետևյալ կերպով. «Քանի որ իմաստությունը գալիս է, երբ դու պաշտում ես Նրան անմնացորդ նվիրմամբ և խուսափում ես այն ամենից, ինչը սխալ է»:

Ի մի բերելով նույն խոսքի այս երկու տարբերակները՝ եզրակացնում ենք, որ երբ մենք նայում ենք Նրան ակնածանքով և զմայլանքով, մենք երես ենք թեքում այն ամենից, ինչը չար և սխալ է: Անփոփոխ Աստծո զարմանալի էությունը փոխում է մեզ:

Քանի որ Նա սիրում է, Նա հոգում է: Քանի որ Նա հոգում է, Նա անփոփոխ է:

Սիրելի երկնային Հա՛յր,
Դու հավատարիմ և սիրող ես, նույնիսկ երբ վախենում եմ և անհավատարիմ եմ: Ես աղոթում եմ, որ այս մշտապես փոփոխվող աշխարհում ճանաչեմ Քո անփոփոխ և հաստատուն բնավորությունը: Փոխի՛ր ինձ, որպեսզի արտացոլեմ Քո կայունությունը և հարատևող սերը: Այս անհաստատ աշխարհում ես ուզում եմ հաստատուն լինել:

4

ԱՆԿՈՏՐՈՒՄ՝ ՍԻՐՈ ՄԵՋ

«Մեծագույն երջանկությունը կյանքում այն համոզմունքն է, որ մենք սիրված ենք. սիրված՝ այն պատճառով, թե ով ենք մենք, կամ՝ չնայած այն բանին, թե ով ենք մենք»:

Վիկտոր Հյուգո

Ավելի քան 35 տարի առաջ Զոնը նվիրեց ինձ իմ նշանադրության ադամանդե մատանին: Նա ուզում էր պաշտոնապես հայտնի դարձնել, որ ես իրենն էի, իսկ նա իմն էր (թեև նա վաղուց էր ասում բոլորին, որ ես իրենն էի): Այդ մատանին գնելու համար Զոնն ամիսներ շարունակ միայն կարտոֆիլ էր ուտում և ժլատի պես փող էր խնայում: 1982 թվականի հունիսի 6-ին՝ իմ քսաներկուերորդ տարեդարձին, երբ նստած էինք Դալլասի շատրվաններից մեկի մոտ, Զոնը նվիրեց այն՝ թավշյա տուփով: Երբ բացում էի, ձեռքերս և սիրտս թրթռում էին: Այդ սև խորանարդե տուփի մեջ ես հայտնաբերեցի արցունքաձև ադամանդ՝ տեղադրված հասարակ ոսկե մատանու վրա: Որքան գիտեի, ավելի գեղեցիկ ադամանդ երբևէ գոյություն չէր ունեցել: Արցունքները հոսեցին աչքերիցս, երբ ես «այո» ասացի և արագորեն մատիս դրեցի այդ մատանին:

Հիշում եմ, որ այն շատ մեծ էր, բայց ես չէի պատրաստվում հանել իմ մատից: Այդ գիշեր ես քնեցի՝ ժպիտը դեմքիս և մատանին մատիս. մենք նշանվա՛ծ էինք:

Հաջորդ առավոտյան ես արթնացա և առաջինը, ինչին նայեցի, իմ նշանադրության մատանին էր: Ադամանդը, որը պսպղում էր առավոտյան արևի ճառագայթների ներքո և ծիածանի բծեր էր արձակում իմ տաղտկալի բնակարանի պատին, հավաստիացրեց ինձ, որ նախորդ երեկոն երազ չէր: Մեր նշանադրությանը նախորդող տարվա ընթացքում մեր հարաբերություններում տատանումներ էին եղել: Ամենասկզբում տեղի ունեցած մի քանի բաժանումներից հետո հուսադրող էր գիտակցելը, որ մենք առաջ էինք շարժվում՝ միմյանց սիրելու որոշմամբ: Այդ առավոտ, երբ Զոնը և ես եկեղեցի գնացինք, բազմաթիվ մարդիկ շնորհավորեցին մեզ: Ես մեծ ուրախությամբ պարզում էի ձեռքս՝ ցույց տալով իմ մատանին, սակայն իրականում ցույց էի տալիս մեր սերը:

Թեև ես աջլիկ եմ, բայց ավելի շատ օգտագործում էի իմ ձախ ձեռքը, երբ մենակ չէի: Մենք ապրում էինք Դալլասում, ինչը նշանակում էր, որ մշտապես տեսնելու էինք ավելի մեծ և պսպղուն ադամանդներ, քան իմն էր, սակայն այդ ադամանդներն իմը չէին: Իմ ադամանդը խորհրդանշում էր միմյանց սիրելու մեր անկոտրում որոշումը: Մենք երդվել էինք լինել իրար կողքի և՛ բարի, և՛ չար ժամանակներին, և՛ պակասության, և՛ առատության տարիներին, և՛ զորության, և՛ տկարության մեջ, մինչև որ մահը չբաժաներ մեզ: Ասում են, որ սկսվեց նոր սիրո պատմություն: Աստված արել է նույնը յուրաքանչյուրիս համար:

Աստված սեր է:

Սերը մեր Հոր բնությունն է: Նա չի սիրում մեզ, քանի որ ստիպված է. Նա սիրում է, քանի որ չի կարող *չսիրել* մեզ: Այնպես չէր, որ Աստված հանդուրժում էր մեզ Հին կտակարանում և որոշեց սիրել Նոր կտակարանում: Նա չորոշեց սիրել մեզ, քանի որ Հիսուսը խնդրեց Նրան: Նրա սերը մեր հանդեպ դար-

ձավ փրկության մեծ ծրագիրն իրագործելու պատճառը: Նա տվեց Իր Որդուն՝ ցույց տալով մեր հանդեպ ունեցած Իր սերը: Մեր հանդեպ ունեցած Նրա սերը չի կարող հաղթվել մերժվածությամբ և ատելությամբ՝ սեփական անձի հանդեպ: Մենք երբեք չենք կարողանա համոզել Նրան, որ դադարի սիրել մեզ, քանի որ շատ ավելի վաղ, քան մենք կարող էինք որևէ բան ասել, Նա հաստատեց Իր սերը մեզ վրա՝ դրոշի պես, և ընդունեց մեզ Իր սեղանի շուրջ:

Աստված *չունի սեր*՝ մեզ համար: Աստված *սեր է,* որն ուղղված է մեզ: Աստծո սերը մեր հանդեպ անկոտրում է, անպարտելի և հաստատուն, և ավելի ուժգին է, քան մահը:

> «Ո՞վ է աստվածների մեջ Քեզ պես, ո՛վ Տեր, ո՞վ է Քեզ պես՝ սրբության մեջ փառավորված, օրհնություններով սքանչելի, հրաշքներ անող: Մեկնեցիր Քո աջ ձեռքը՝ երկիրը կլանեց նրանց: Քո ողորմությամբ (կամ՝ *անսասան սիրով)* առաջնորդեցիր այս ժողովրդին, որին Դու փրկեցիր: Քո զորությամբ տարար նրանց Քո սուրբ բնակարանը» (Ելից 15.11-13):

Աստված առաջնորդում է սիրով:

Նրա սերը մեր ճշմարիտ հյուսիսն է, միակ հաստատուն չափանիշը, որով մենք կարող ենք ուղղորդել մեր կյանքը: Եթե չհաստատվենք այս սիրո մեջ, կարող ենք հեշտորեն շեղվել մեր ընթացքից: Ըստ էության, Նրա սերն է, որ տուն է առաջնորդում մեզ:

Ելից 15-րդ գլխի Մովսեսի սաղմոսը գրվեց այն բանից հետո, երբ Աստված փառավոր կերպով փրկեց Իր ժողովրդին հարյուրամյակներ տևող եգիպտական ստրկությունից: Մենք գիտենք այս պատմությունը, սակայն ես ուզում եմ ընդգծել այն բառը, որը նկարագրում է Աստծո սերն այս սաղմոսում՝ *«անսասան»* ածականը: Սա ևս մեկ հավաստիացում է այն մասին, որ Նրա սերը մեր հանդեպ աներեր է: Նրա սիրո կրակը չի տատանվում մեր կամակորության քամուց: Նրա սերը

մնում է մեզ հետ, երբ մենք անպատասխանատու ենք, պատրաստակամ չենք և ապստամբ ենք: Նա չի կարող օրհնել այդ արարքները, բայց նույնիսկ այդ ժամանակ Նրա բարությունն ապաշխարության է առաջնորդում մեզ, և Նրա սերը չի թուլանում:

Նրա սերը մեր հանդեպ կախված է մեզնից:

Նրա սերը մեր *հանդեպ* կախված չէ մեզնից: Նրա զգացմունքները մեր հանդեպ չեն փոփոխվում՝ մեր վարքի պատճառով: Նա մշտապես սիրել է մեզ: Նա մշտապես սիրելու է մեզ: Մենք չենք կարող վաստակել այն, ինչին երբեք արժանի չենք եղել, ինչպես որ չենք կարող վճարել այն բանի համար, ինչը շնորհվել է մեզ:

> «Որովհետև սարերը կքաշվեն, և բլուրները կսասանեն, բայց Իմ ողորմությունը (կամ՝ *անսասան սերը) քեզնից չի քաշվի*, և Իմ խաղաղության ուխտը չի սասանվի,- ասում է քեզ ողորմող Տերը» (Եսայի 54.10):

Նրա սերը չի թողնի մեզ: Մարդիկ կգան և կգնան, բայց Նրա հաստատուն և անկոտրում սերը կմնա: Քանի որ Նրա սերն անսասան է, մենք գտնվում ենք խաղաղության ուխտի մեջ: Հիսուսը՝ մեր անկոտրում Անկյունաքարը, Խաղաղության Իշխանն է: Իր բարձրագույն իշխանության դիրքից Նա խաղաղություն է շշնջում՝ հանդարտեցնելով ամեն մի փոթորիկ մեր մարմնում, և ամեն մի մրրիկ, որը հարձակվում է մեր մտքի վրա: Նրա գթասրտությունը մեր հանդեպ՝ անսահման է: Մենք կարող ենք խաղաղ լինել, քանի որ Նա չի զրկի մեզ Իր սիրուց: Եթե Աստված զրկեր մեզ Իր սիրուց, Նա պետք է վարվեր նույն կերպով Իր Որդու հետ:

Նրա անկոտրում սիրո շնորհիվ, մենք փրկագնվել ենք Քրիստոսում՝ մեր անկոտրում Ադամանդի մեջ: Միգուցե հարցնեք. «Ինչպե՞ս կարող եմ համոզված լինել, որ սա ճիշտ է»:

Մենք կարող ենք տեսնել Նրա սերը. «Բայց Աստված հայտնեց Իր սերը դեպի մեզ, որ երբ որ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մահացավ» (Հռոմ. 5.8):

Սերը՝ որոշում է

Ադամանդները ոչ միայն խորհրդանշում են ապագա ամուսնական սերը, այլև արտահայտում են հենց սիրո հատկանիշները: Ինչպես ադամանդները՝ սերը ծնվում է կրակի և ճնշման հնոցում: Կարող են լինել ժամանակահատվածներ՝ տարիներ և նույնիսկ՝ տասնամյակներ, երբ սերը թաղված է խորքերում՝ նման թաքնված գարնան: Դուք գիտեք, որ այն կա: Տարիներ առաջ այն տնկվել է ձեր կյանքի հողում, սակայն դուք չեք տեսնում դրա գեղեցկությունը և չեք զգում դրա կրակը... դուք ընդամենը զգում եք ստորգետնյա շշնջոցը:

Սերը, իրականում, զգացմունք չէ: Այն՝ որոշում է: Սիրո պատճառով է, որ հոգնած մայրն արթնանում է քնից՝ լսելով երեխայի վախեցած լացը: Սիրո պատճառով է, որ հայրն աշխատում է ժամեր շարունակ՝ իր երեխաներին ապահովելու համար (այո՛, սիրո պատճառով է, որ երբեմն այս դերերը փոխվում են): Սերը տալիս է, նույնիսկ երբ ոչինչ չի ստանում ի պատասխան:

Որոշում կայացնելուց հետո սերն այլևս չի մտափոխվում:

Մենք սիրում ենք, քանի որ Սերն ընտրել է մեզ: Դուք սիրում եք, քանի որ Աստված ընտրել է ձեզ (տե՛ս Ա Հովհ. 4.19): Եվ մեր Հայրը սիրում է, նույնիսկ երբ մենք չենք սիրում:

Առաջին սերը

Աստված մեր առաջին սերն է, և Նա միշտ կլինի մեր առաջին սերը: Նա առաջինը սիրեց մեզ, և այս առաջին սերը ոչ հասուն չէ. այն անկոտրում է: Նա չի սիրում մեզ՝ հուսալով, որ մենք կնմանվենք ինչ-որ մեկին: Նա երբեք չի համեմատել ձեզ

ոչ ոքի հետ... Նա միշտ սիրել է հենց ձեզ: Եվ Նա միշտ սիրել է բոլորիս: Թեև մենք սկզբում սիրում էինք ուրիշներին, Նա սիրեց մեզ ամենասկզբից: Բայց, ի վերջո, յուրաքանչյուրս բացահայտեց մեր անկոտրում առաջին սերը՝ Նրա հաստատուն և անպարտելի սերը:

Կա՞ն արդյոք այնպիսի բնագավառներ, որոնցում, ձեր կարծիքով, ձեր գործերը փոխել են Աստծո զգացմունքները ձեր հանդեպ: Միգուցե պատճառն այն է, որ որոշ հարցերում դուք անհնազանդ և անհետևողական լինելու սովորությո՞ւն եք ձեռք բերել:

Ես հասկանում եմ: Տարիներ շարունակ ես փախչում էի Նրա սիրուց: Չէի հասկանում, թե ինչպիսին էր այն: Ես պնդում էի, որ եթե Նա ճշմարտապես սիրեր ինձ, կտար այն, ինչ ուզում էի: Ես պատկերացնում էի, որ Նրա որդիներից մեկի սերը երջանիկ կդարձներ ինձ այստեղ և հիմա: Անկեղծ ասած, ես սարսափելի ճաշակ ունեի, երբ խոսքը տղամարդկանց մասին էր: Ես ընտրում էի նրանց, որոնց դժվար էր գոհացնել, իսկ որոշ ժամանակ անց նաև դժվար էր պահել: Աստված տեսավ ավելին, քան իմ ցանկությունները, և պատասխանեց իմ մեծագույն կարիքին, որն Իր սերն էր:

Նա տվեց ինձ ավելի մեծ սեր, քան այն, ինչը հնարավոր է ստանալ և կորցնել:

Դեռևս հիշում եմ այն բյուրեղի պես ջինջ պահը, երբ Նրա սերը գրավեց իմ ուշադրությունը: Ես տեսա այն իմ առջև: Ես ճանաչեցի դրա ճառագայթները՝ նման ադամանդի բազմաթիվ երեսակներից թափանցող լույսերի, որոնցից յուրաքանչյուրը մատնացույց էր անում այն պահը, երբ ես վերստին ծնվեցի և նշանվեցի իմ Փեսայի՝ Հիսուս Քրիստոսի հետ:

Աստծո սերը ձեր հանդեպ ավելի ամուր է, քան ադամանդը: Այն չի գոլորշիանա անօդ տարածության մեջ՝ ուժգին ճառագայթների ազդեցության ներքո: Նրա նշանադրությունը ձեզ հետ շատ ավելին է, քան մատանին: Նա երբեք չէր վստահի

նման թանկ խոստումն այնպիսի առարկայի, որը կարող է կորսվել կամ գողացվել: Նրա հավակնությունը, որպես կնիք, ծածկված և ծրարված է Նրա ամենասիրելի տեղում՝ ձեր սրտում:

Երգ երգոցի այս խոսքերում մենք ասես գաղտնալսում ենք մի մտերմիկ զրույց, որտեղ հռչակվում են սիրո անվերջ կապեր սիրեցյալների միջև.

> «Ինձ կնիքի պես դի՛ր սրտիդ վրա, կնիքի պես՝ քո բազուկի վրա, որովհետև մահվան պես զորավոր է սերը, դժոխքի պես ամուր է նախանձը (կամ՝ խանդը):
>
> Նրա կայծերը բոցավառ կրակի կայծերի պես են: Շատ ջրերը չեն կարող հանգցնել սերը, և գետերը նրան չեն ընկղմի: Եթե մի մարդ իր տան ամբողջ կայքը տա սիրո տեղ, անարգելով կանարգեն նրան» (8.6,7):

Միգուցե անհարմարավետ եք զգում ձեզ այս սիրո պատճառով: Միգուցե ձեզ արժանի չեք համարում, որ ինչ-որ մեկն այսքան ուժգնորեն սիրի ձեզ: Եվ միգուցե դուք կասկածում եք, որ կարող եք պատասխանել այս սիրուն: Այս խոսքերը գրված չեն, որ դուք կասկածեք այն սիրո մեջ, որը վերապրել եք, կամ վիճարկեք ձեր սիրելու կարողությունը: Այս մտերմիկ հատվածի նպատակն է՝ ցույց տալ այն ջերմեռանդ սերը, որի համար դուք ստեղծված եք:

Մեր հանդեպ ունեցած Աստծո սերն անկարելի է չափել մարդկային փորձառությամբ: Այս անկում ապրած ժամանակի մեջ չկա որևէ կողմնորոշիչ՝ այն ճանաչելու համար: Այն մարդիկ, որոնց հաջողվել է սեր ճաշակել այս աշխարհում, ճանաչել են ընդամենը կայծեր, որոնք պարզապես ջերմացրել են նրանց: Մյուսները ճանաչել են կայծեր, որոնք, ի վերջո, դավաճանել են նրանց՝ տարիներ շարունակ անտեսելով նրանց կրակը, և նրանց սերը մոխրացել է:

Հազվագյուտ է այն մարդկային սերը, որը կարելի է նկարագրել որպես մնայուն կրակ: Եվ չնայած դրան՝ մենք փափագում

ենք այն: Եթե անկեղծ լինենք, մենք կլսենք մեր սրտի շշնջոցը և կխոստովանենք, որ ցանկանում ենք այդպիսի մակարդակի մտերիմ հարաբերություններ ունենալ ինչ-որ մեկի հետ:

Երբեմն այն սերը, որը նկարագրված է Երգ երգոցում, գրեթե ամաչեցնում է ինձ: Այդ ժամանակ ես հիշում եմ, որ իմ գործը պարզապես արձագանքելն է, ոչ թե իմ կարծիքը հայտնելը: Երբ մի կողմ եմ դնում իմ հարցերը, գիտակցում եմ Աստծո խանդոտ, ուժգին և կատաղի սերը, իսկ հետո ընդունում եմ այն, և իմ սիրո կրակն Աստծո հանդեպ սկսում է բորբոքվել:

Ըստ էության, այս հատվածը Քրիստոսի և Նրա հարսնացուի մասին է: Այս երկրային դժգույն իրականության մեջ մենք միայն մասնակիորեն ենք հասկանում այս ամենը: Հավիտենության մեջ, երբ կճանաչենք այնպես, ինչպես որ ճանաչված ենք, սերը կբացահայտվի՝ իր ամբողջ կրակե շուքով:

Այն սիրո կրակը, որն Աստված զգում է մեր հանդեպ, անկարելի է մարել: Կյանքի հեղեղները կարող են սպառնալ մեզ, բայց չեն կարող խորտակել այն սերը, որն Աստված զգում է մեր հանդեպ:

Աստծո սերը չի վաճառվում. չկա այնպիսի բան, ինչի հետ Նա երբևէ կփոխանակի մեզ:

Ու թեև այս հատվածը վերաբերում է Աստծո սիրուն Քրիստոսի հարսնացուի հանդեպ, որը ամբողջ եկեղեցին է՝ հավաքական առումով, այս սերը պաշտպանիչ և անձնական է՝ մայրական սիրո պես, և մտերիմ է՝ սիրեցյալի սիրո պես: Մեր Հայրը չէր կարող սիրել ամբողջը՝ չսիրելով դրա մասերը:

Կնիք և գրավ

Մենք երբեք չէինք կարողանա արժանանալ նման աներևակայելի սիրո. այնպես որ, Աստված արեց դա մեր փոխարեն:

> «Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսում հաստատողը և մեզ օծողը Աստված է, որ մեզ կնքեց էլ և Հոգու գրավը մեր սրտերի մեջ տվեց» (Բ Կորնթ. 1.21,22):

Ես չեմ կարող հաստատել ինքս ինձ: Դուք չեք կարող հաստատել ինքներդ ձեզ: Եկեղեցական անդամությունը չի հաստատի մեզ միաբանության մեջ. Նրա Հոգին է մեկ դարձնում մեզ:

Ահա թե ինչպես են այս խոսքերը գրված «Ավյուն» թարգմանության մեջ.

> «Աստված է, որ օծել է մեզ: Եվ Նա մշտապես զորացնում է թե՛ ձեզ, թե՛ մեզ՝ Քրիստոսի հետ միության մեջ: Նա գիտի, որ մենք Իրենն ենք, քանի որ Նա դրեց Իր սիրո կնիքը մեր սրտերի վրա և տվեց մեզ Սուրբ Հոգուն՝ նման հարսնացուին տրվող նշանադրության մատանու, գրավ՝ գալիք օրհնությունների համար» (ՏՊՏ):

Դուք հասկանո՞ւմ եք: Նույնիսկ եթե չգիտեիք այդ մասին, դուք նշանադրված եք:

Ժամանակակից կնիքները փաթեթավորման մաս են կազմում և հեշտորեն կոտրվող են: Սովորաբար դրանք դրվում են վիտամինների և մթերքների վրա: Դրանց նպատակն է՝ ցույց տալ, որ փաթեթավորումը բացված չի եղել, սակայն, միևնույն ժամանակ, դրանք պատրաստված են հեշտորեն բացվելու համար: Այս կնիքները տարբերվում են այն կնիքից, որի մասին գրված է Բ Կորնթացիների թղթում: Դրանում նշված «կնիք» բառը հունարեն «սֆրագիզո» բառն է, նշանակում է յոթնապատիկ կնիք, որն ընդգրկում է հետևյալը.

1. ապահովության կնիք (մենք ամուր պահված ենք Աստծո սիրո մեջ),
2. վավերացման կնիք (մենք կնքված ենք՝ որպես Աստծունը),
3. իսկության կնիք,
4. սեփականության կնիք,
5. հաստատման կնիք,
6. արդարության կնիք,
7. խոստման կնիք[1]:

Դրանք զգուշացնում են խավարի ուժերին, որ մեզ չի կարելի դիպչել:

Այս կնիքները պարզապես ցույց չեն տալիս, թե արդյո՞ք ինչ-որ մեկը դիպչել է մեզ: Դրանք զգուշացնում են խավարի ուժերին, որ մեզ չի կարելի դիպչել: Մենք չենք կարող կոտրել այս կնիքներից որևէ մեկը, քանի որ դրանք կապված են Քրիստոսի հնազանդության հետ, ոչ թե՝ մեր: Բացի իրենց նախազգուշական գործառույթից՝ այս կնիքներից ամեն մեկն Աստծո նշանադրության գերբնական հաստատումն է: Մենք չենք կարող ինքներս դնել այս կնիքները մեր սրտերին: Սերը թափանցեց մեր սրտի խորքը և կնքեց մեզ մինչև այն օրը, երբ այն կբացահայտի մեզ:

Սիրո հավիտենական պարգևները

Մենք ծնվել ենք Հոգուց: Մենք կրում ենք Հոգու կնիքը, ներբնակված ենք Հոգու կողմից և մկրտված ենք Հոգով: Մենք միասնական ենք դարձել Հոգու մեջ և ստացել ենք Հոգուց պարգևներ և ծառայություն: Այն ամենը, ինչի կարիքը ունենք, տրվել է մեզ մեր Աստծո կողմից, Ով անսահմանորեն սիրում է մեզ:

Ահա թե ինչու է Եփեսացիների թուղթը հավաստիացնում մեզ.

> «Ես գրում եմ այս նամակը բոլոր նվիրյալ հավատացյալներին, որոնք սրբացվել են Հիսուսի՝ Օծյալի հետ մեկ լինելու միջոցով: Թող Ինքը՝ Աստված, մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկնային Հայրը, տա ձեզ շնորհք և ամբողջական բարեկեցություն» (1.2, TPT):

Դուք տեսնո՞ւմ եք մեր երկնային Հոր անմիջական մասնակցությունն այս գործընթացին: Մենք համաձայնում ենք ապրել հավատքով և նվիրմամբ՝ ընծայելով մեր սրտերը: Ի պատասխան, Աստված շնորհք է տալիս մեզ, որպեսզի ընդունենք Նրա

աստվածային լիությունը: Եփեսացիների թուղթը շարունակում է.

> «Այն, ինչ երկինքը պարունակում է, շռայլվել է մեզ՝ որպես սիրո պարգև մեր հրաշալի երկնային Հորից՝ մեր Տեր Հիսուսի Հորից, քանի որ Նա տեսնում է մեզ՝ ծրարված Քրիստոսի մեջ: Ահա թե ինչու ենք մենք ամբողջ սրտով ուրախանում Նրանով» (1.3, ՊՊՏ):

Մենք ցնծում ենք *այսօր՝ վաղվա* հույսով: Ճշմարիտ կյանքը սկսվում է հավիտենության մեջ: Երկնքի ամբողջ բովանդակությունը սպասում է Նրա հարսնացուին՝ որպես հավերժական հարսանեկան պարգև: Եթե մտածեք, որ այս խոսքը չափազանցնում է սիրո պարգևները, որոնք սպասում են ձեզ, կարդանք այն մեկ այլ թարգմանությամբ.

> «Օրհնյա՛լ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ մեզ օրհնեց *ամեն հոգևոր օրհնությամբ երկնավոր բաներում* Քրիստոսով»:

Երկնքում գոյություն ունեցող օրհնություններից ոչ մեկը դուրս չի թողնվել և չի պահվել մեզնից: Այս շռայլ պատրաստությունը Նրա հարսնացուի համար ցույց է տալիս Աստծո շռայլ սերը նրա հանդեպ: Եվ դուք Նրա հարսնացուի մասն եք:

Որպես Նրա հարսնացու՝ մենք ծրարված ենք Քրիստոսի՝ Օծյալի մեջ: Նրա զոհը քավեց այն ամենը, ինչ մենք *արել էինք*, իսկ Նրա մահը և հարությունը զորացրին մեզ այն ամենի համար, ինչ *անելու ենք* Նրանում: Նրա հնազանդությունը ջնջեց մեր անհնազանդության պատիժը և հնազանդվելու կարողություն տվեց: Եթե դուք համոզված եք սրանում, նշանակում է՝ Պողոսի այս նամակը գրված է ձեզ համար և ձեր մասին:

Որպես Քրիստոսին հավատացողներ՝ մենք, որ շատ ենք, մեկ ենք դարձել Սուրբ Աստծո անպարտելի Անկյունաքարի մեջ: Մենք ոչ միայն ծրարված ենք Քրիստոսում, այլև շնորհք

ենք ստացել՝ լիարժեք բարեկեցության տեսքով:

Շատ առումներով շնորհքն այն ժապավենն է, որը զարդարում է Աստծո խոստումները: Աստված կնքեց մեզ Իր սրտում և կնքեց մեր սրտերն Իր սիրո անկոտրում անկյունաքարի մեջ:

Սիրելի՛ քույր, լսե՛ք ինձ. Քրիստոսում դուք չեք բնակվում ինչ-որ փորված անձավում, որը մի կերպ հղկված է պարզապես ձեզ տեղավորելու համար: Քրիստոսում՝ անկոտրում Անկյունաքարի մեջ, ձեզ հասանելի է ամեն ինչ: Դուք զավթիչ չեք: Դուք հյուր չեք, դուք ընտանիքի անդամ եք: Իրականում, նույնիսկ ընտանիքի անդամ լինելը չի նկարագրում մեր սերտ մտերմությունը: Մենք Քրիստոսի մեջ ենք, ինչպես որ Նա Հոր մեջ է: Մենք Նրա մասն ենք, Ով ամենն է՝ ամենի մեջ:

Մեզ համար պատրաստված է և՛ մատակարարում, և՛ բնակության վայր: Այս առատությունն ընդգրկում է Հոգու ամբողջական պտուղը, մեր պարգևները Հոգու մեջ, նաև՝ խաղաղություն, արդարություն և ուրախություն: Եկեք պահենք մեր սիրտը և գանձերը ճիշտ տեղում: Եկեք հաստատենք դրանք Երկնքում, որտեղ դրանք չեն ապականվի և չեն գողացվի մեզնից:

Օդի իշխանության իշխանը չի սիրում մեզ:

Ճանաչելով այս սերը՝ ինչո՞ւ մեզնից որևէ մեկը պետք է աչք գցի այս աշխարհի փեսացուների վրա: Օդի իշխանության իշխանը չի սիրում մեզ:

Նա ատում է մեզ անկոտրում կերպով:

Ցանկացած խոստում, որը խավարի իշխանը տալիս է, սուտ է: Ցանկացած իշխանություն, որը նա լիազորում է, կցված է այս փխրուն և անկում ապրած աշխարհին, որը ենթակա է քայքայման: Ցանկացած պարգև կամ տաղանդ, որը սատանան շնորհում է, խաբեություն է: Նա չի կարող տալ. նա միայն կարող է խլել: Եվ նա չի կարող չխեղաթյուրել այն ամենը, ինչին դիպչում է:

Բայց մենք այլևս նրա թագավորության ենթակաները չենք, և մենք գիտենք, որ ամեն բարի և կատարյալ պարգև մեր Հորից է: Մենք նույնպես գիտենք, որ ոչինչ չի կարող բաժանել մեզ Քրիստոսի սիրուց:

Ապահով՝ Քրիստոսի սիրո մեջ

> «Ապա ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նք, թե՞ նեղություն, թե՞ հալածանք, թե՞ սով, թե՞ մերկություն, թե՞ վտանգ, թե՞ սուր: Ինչպես գրված է, թե՝ Քեզ համար մեռցվում ենք ամբողջ օրը և մորթվելու ոչխարի պես համարվեցինք: Բայց այս բոլոր բաներում առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց: Որովհետև հաստատ գիտեմ, որ ո՛չ մահ, ո՛չ կյանք, ո՛չ հրեշտակներ, ո՛չ իշխանություններ, ո՛չ զորություններ, ո՛չ ներկա բաներ, ո՛չ գալու բաներ, և ո՛չ բարձրություն, ո՛չ խորություն, և ո՛չ մեկ ուրիշ ստեղծված բան կարող է մեզ բաժանել Աստծո սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսում է» (Հռոմ. 8.35-39):

Ոչինչ չի կարող բաժանել մեզ Քրիստոսի անկոտրում սիրուց: Ոչ ոք և ոչինչ: Նրա սերն անկարելի է խլել մեզնից, քանի որ մենք Քրիստոսի մեջ ենք: Դաժան հակամարտությունները և պատերազմի վտանգները ոչ մի դեպքում չեն կարող տրամադրել Նրան մեր դեմ: Չկա այնպիսի արհավիրք, որը կարող է հեռացնել մեր Խաղաղության Իշխանի սերը: Նրա սերն ավելի հաստատ է, քան մահը, և ավելի իրական, քան կյանքը: Նրա սերը մեր հանդեպ գերազանցում է թե՛ հրեշտակային, թե՛ դիվային տիրույթները: Չկա այնպիսի բան, ինչը եղել է, կա և կլինի ամբողջ արարչագործության մեջ, ինչը կարող է բաժանել մեզ Աստծո սիրուց մեր Տեր Հիսուս Քրիստոսում: Նրա սերը մեր հանդեպ նույնքան անսասան է, որքան Նրա սերը Հիսուսի հանդեպ: Աստված պետք է մերժեր Իր Որդուն՝ մեզ մերժելու համար:

Սիրված՝ աշխարհի արարումից առաջ

> «Եվ Նա ընտրեց մեզ Իրենը լինելու համար՝ միացնելով մեզ Իրեն, նույնիսկ մինչև տիեզերքի հիմքը դնելը: Իր մեծ սիրո շնորհիվ Նա սահմանեց մեզ ամենասկզբից՝ որպես մեկ՝ Քրիստոսի հետ, որպեսզի մենք սուրբ համարվեինք Նրա առջև՝ անբիծ անմեղությամբ» (Եփես. 1.4, ՏՊՏ):

Ես մշտապես ոգեշնչումով եմ ցույց տալիս մարդկանց իմ որդիների, հարսների և թոռների լուսանկարները: Կարդալով այս խոսքերը՝ ինձ մոտ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Աստված նույնիսկ ավելի է ոգեշնչված ձեզնով, քան ես՝ իմ ընտանիքով: Նա նայում է ձեզ և հպարտությամբ ազդարարում. «Նա Ի՛մն է»: Նա նշանադրեց ձեզ Իր հետ և ստեղծեց տիեզերք, որպեսզի դուք հավիտյան ապրեք Նրա հետ:

Դուք չէիք ընտրվել այն օրը, երբ ընդունեցիք Քրիստոսին, այսինքն՝ այն օրը, երբ դուք ընտրեցիք Նրան: Ո՛չ, իմ ընկե՛ր. դուք ընտրված եք եղել Քրիստոսում շատ ավելի վաղ, քան կազմվել էին անդունդի հիմքերը: Դուք կազմված էիք Քրիստոսում, որպեսզի Նա ձևավորվեր ձեզանում՝ ձեր անձի վերափոխման զորության միջոցով: Դուք կենդանացաք այս ճշմարտության համար այն օրը, երբ վերստին ծնվեցիք: Աստծո Որդու մահվան միջոցով սերը ոչ միայն ազատեց ձեզ, այլև վերադարձրեց այն հույսը, որը տվել էր ձեզ ամենասկզբից:

Դուք ոչ միայն նշանադրված եք, այլև նախասահմանված եք կամ ստեղծված եք, որ մեկ լինեք Քրիստոսի հետ: Ոչ ոք չի կարող լուռ մնալ՝ նման սեր վերապրելով:

Իր անսասան սիրո շնորհիվ Աստված ծրարեց մեզ Քրիստոսի անբիծ անմեղությամբ շատ ավելի վաղ, քան Ադամն ու Եվան զրկեցին իրենց լույսից ու ճշմարտությունից և հագան օձի կողմից տրված մեղքի և մահվան պատանքները:

Ճանաչելով ինձ՝ ես կառաջարկեի, որ Աստված տար ինձ սև զգեստներ, ոչ թե պայծառ սպիտակ հանդերձներ: Կոկո

Շանելի հայտնի խոսքերից մեկը կատարելապես նկարագրում է իմ զգեստապահարանի ընտրությունը. «Երբ գտնեմ սևից ավելի մուգ գույն, ես կկրեմ այն: Բայց մինչ այդ, սև եմ կրելու»:

Սև հագուստ կրելիս կարիք չկա մտածել բծերի և լաքաների մասին: Նույնիսկ եթե դրանք կան հագուստի վրա, միևնույն է, չեն երևում: Սա է պատճառը, որ ես ճանապարհորդում եմ հիմնականում սև հագուստով: Սև հագուստով կարող եմ վստահաբար գնալ մի օդանավակայանից մյուսը ամեն շաբաթ և կիրակի: Սև վերնահագուստով կարող եմ աննկատ քրտնել, կարող եմ մարկերներ օգտագործել՝ առանց վախենալու, և գրկել լաց լինող կանանց՝ առանց մտահոգվելու շպարի հետքերի մասին: Մշտապես սև հագնելը հեշտ է: Մշտապես սպիտակ հագնելը այնքան էլ հեշտ չէ:

Վերջերս ես մոռացել էի, թե ինչու չեմ ճանապարհորդում սպիտակ հագուստով: Կոլորադոյում երկարատև ծմեռ էր, և երբ վերջապես եկավ գարունը, ես սպիտակ ջինս հագա՝ շաբաթավերջի հավաքույթների համար: Ես նստեցի ինձ սպասող մեքենան՝ թարմություն զգալով: Իմ սիրալիր կազմակերպիչը հյուրասիրեց ինձ իմ սիրելի ըմպելիքը՝ կոկոսի կաթով և դարչինով եռաշերտ սուրճ: Ես ուրախությամբ դուրս հանեցի խառնիչը, որը նաև կափարիչի դեր էր կատարում, և... իմ ջինսը պատվեց լաքաներով: Ես խմեցի ըմպելիքի մնացած մասը՝ պահելով բաժակը մեր վարձույթով վերցրած մեքենայի առջևի վահանակի վերևում: Եկեղեցի հասնելուն պես մենք փորձեցինք ծածկել այդ լաքան «Թայդ» սպիտակեցնող գրիչով: Թունավոր քիմիական նյութերը թափանցեցին իմ ջինիսի կտորի մեջ՝ ազդրիս վերևի մասում, և իմ սպիտակ ջինսը կապույտ դարձավ: Հուսալով, որ քիմիական ռեակցիայի արդյունքում լաքաները հեռացել էին, ես զգալի քանակությամբ ջուր օգտագործեցի այդ հատվածի վրա: Սուրճի հինգսանտիմետրանոց լաքան վերածվեց մոտավորապես քսանսանտիմետրանոց շրջանակի, որը ծածկեց իմ ազդրի մեծ մասը: Թվում էր՝ լաքան անհայտացել էր, սակայն չէր կարելի վստահ լինել, քանի

դեռ հագուստը չէր չորացել: Բացի այդ՝ ազդրիս վերին մասը ծածկող ջինսի հատվածը դարձել էր թափանցիկ: Եվ այդ տեսքով ես բեմ բարձրացա:

Քրիստոսում կա ուժ և պայծառություն:

Աստված գիտի, որ մենք չենք կարող անթերի կյանք վարել. այնպես որ, Քրիստոսում Նա լվացել ու մաքրել է մեր կյանքը՝ մեր փոխարեն: Քրիստոսում չկան թաքնված լաքաներ, Քրիստոսում չկան սպիտակեցնող գրիչներ, Քրիստոսում չկան թափանցող տաբատներ, որոնք ցույց են տալիս գեր ազդրերը. Քրիստոսում կա ուժ և պայծառություն:

> «Քանի որ Նրա կատարյալ ծրագրի մեջ *մշտապես* կար մեզ որդեգրելը՝ որպես Իր բերկրալի զավակների, որ Նրա անասելի շնորհքը, որը հորդում է մեզ վրա, փառք բերեր Իրեն, քանի որ նույն սերը, որը Նա տածում է Իր Սիրելիի՝ Հիսուսի հանդեպ, Նա տածում է նաև մեր հանդեպ» (Եփես. 1.5,6, ՏՊՏ):

Ձեզ երբևէ հրավիրե՞լ են ինչ-որ տեղ՝ հանկարծակի ձեր մասին հիշելով: Ինձ հետ պատահել է: Իսկ պատահե՞լ է, որ ձեզ հրավիրեն, քանի որ միջոցառման կազմակերպիչն իմացել է, որ դուք գիտեիք, որ նա չէր պատրաստվում հրավիրել ձեզ: Կրկին, ինձ հետ նման բան տեղի է ունեցել: Սա այդ դեպքը չէ: Դուք ավելորդ չեք, հանկարծակի հիշված անձնավորություն չեք, և այնպիսի մարդ չեք, որին ընդգրկել են վերջին պահին. դուք *մշտապես* ընդունված եք եղել:

Մեր որդեգրությունն Աստծո ընտանիքի մեջ ծրագրված էր ամենասկզբից: Նա չմոտեցրեց մեզ Իրեն, որովհետև խղճաց, կամ՝ որովհետև այլևս ոչ ոք չէր ցանկանում ընդունել մեզ: Նա բերկրանք է զգում մեր պատճառով, քանի որ Քրիստոսում Նա տեսնում է, թե ինչպիսին մենք կլինենք, ոչ թե ինչպիսին ենք մենք եղել:

Ինձ դուր է գալիս այստեղ օգտագործված «հորդալ» բառը: Ես անմիջապես ջրվեժ եմ պատկերացնում: Դուք երբևէ կանգնե՞լ եք ջրվեժի տակ: Ձուրը հորդում է ձեզ վրա անզուսպ թափով և անհաշիվ չափով: Եթե ջրվեժը գալիս է առատ աղբյուրից, և եթե ջրի անկման տարածությունը մեծ է, այն պատված է լինում թեթև մշուշով: Աստծո անասելի շնորհքի մշուշն օծում է նրանց, ովքեր մոտենում են Իրեն՝ Իր սիրո միջոցով: Եվ եթե մենք գայթակղություն զգանք մտածելու, որ այդ ամենը պարզապես պատրանք է, հաջորդ խոսքը լռեցնում է ցանկացած այդպիսի միտք.

> «Քանի որ այժմ մենք միացած ենք Քրիստոսին, մեզ շնորհվել են փրկության գանձերը՝ Նրա արյունով, մեր մեղքերի լիակատար ներումը՝ Նրա հորդացող շնորհքի առատության շնորհիվ» (Եփես. 1.7, ՏՊՏ):

Հորդացող շնորհք: Առանց Քրիստոսի՝ արժանի չէի լինի շնորհքի և ողորմության նույնիսկ մեկ կաթիլի: Ես միայն արժանի կլինեի անթիվ մեղքերի ծանրությանը և բծերին, որոնց շատության պատճառով նույնիսկ չէի կարողանա հիշել բոլորը՝ խոստովանելու համար: Ահա թե ով եմ ես՝ առանց Նրա:

Եվ չնայած այդ ամենին...

Նրա սերը մոտ է մեզ, ինչպես մեր շնչառությունը, և առաջնորդում է մեզ՝ երկրագնդով մեկ պտտվող քամու պես:

Նրա սերը մեր հանդեպ բացառիկ և եզակի է:

Նրա սերը մեր հանդեպ համընդգրկուն է. ոչինչ մեզանում դուրս չի մնում այդ սիրուց: Նա սիրում է մեզ՝ առանց բացառության:

Սերը մեր կապն է Աստծո հավիտենական թագավորության հետ: Ես անկոտրում եմ անվանում Աստծո սերը, որպեսզի հավաստիացնեմ ձեզ, որ այն և՛ անսասան է, և՛ հաստատուն: Աստծո սերը հետապնդում է մեզ և համառորեն պահանջում է մեր ուշադրությունը: Աստծո սերը հաստատուն է մնում իր

դիրքորոշման և նպատակների մեջ: Նրան անկարելի է հեռացնել Իր դիրքորոշումից: Նա մեր կողմից է: Անկախ այն բանից, թե որքան կործանարար է մեր վարքը՝ Նրա սերը մեր հանդեպ անխախտ է: Մենք կարող ենք պատերազմել Աստծո սիրո դեմ, սակայն Նրա սերը, ըստ էության, անպարտելի է:

Սերը հաղթեց

Այսօր շատերն են օգտագործում «#սերըհաղթումէ» հեշթեգը:

Սերը *չի կարող չհաղթել,* քանի որ Աստված սեր է: Եվ քանի որ այս հավիտենական հաղթանակն արդեն իսկ տեղի է ունեցել, ավելի ճիշտ է գրել «#սերըհաղթեց»: «Սերը հաղթում է» արտահայտությունը վերաբերում է ներկա կամ ապագա հաղթանակներին: Միգուցե հարցնեք, թե ինչու է, իմ կարծիքով, ժամանակաձևը կարևոր: Երբ ուսումնասիրում եմ այն, ինչ կատարվում է աշխարհով մեկ, թվում է՝ ավելի ճիշտ հեշթեգն է՝ «#ատելությունըհաղթումէ»: Այսօր դժվար է տեսնել ավելին, քան սիրո ակնթարթային առկայծումներ: Բայց ատելությունը, ըստ էության, չի կարող հաղթել, քանի որ այն հավիտենական չէ, իսկ սերը հավիտենական է: «Սերը հաղթում է» արտահայտությունն ընթացք է նկարագրում, այնինչ, իրականում, սիրո հաղթանակը հաստատվել է հօգուտ մեզ աշխարհի արարումից առաջ: «Սերը հաղթեց» արտահայտությունն ազդարարում է մի հաղթանակ, որը տեղի է ունեցել մեր գոյությունից ավելի առաջ, և այդ պատճառով լիովին զերծ է մեր մասնակցությունից: Մեր գործողությունները չեն կարող չեղյալ դարձնել «սերը հաղթեց» կոչվող իրողությունը: Այն պետք է միայն հաստատվի մեր երկրպագությամբ:

Սերը շահեց մեզ, մինչև որ մենք սիրեցինք:

«Անխոհեմ սեր» երգի բառերը խոսում են Աստծո անկոտրում սիրո մասին.

Մինչև նույնիսկ մեկ բառ ասելը
Դու երգում էիր ինձ համար,

Դու այնքա՜ն, այնքա՜ն
Բարի ես եղել իմ հանդեպ:
Մինչև իմ շունչ առնելը
Դու փչեցիր Քո կյանքն իմ մեջ,
Դու այնքա՜ն, այնքա՜ն
Քաղցր ես եղել իմ հանդեպ:

Աստծո սերը՝ անհաղթահարելի, անվերջանալի, անխոհեմ,
Այն ինձ հասնում է, այն ինձ գտնում է՝ թողնելով
    իննսունիններին,
Ես չէի կարող վաստակել այն,
Ես արժանի չեմ դրան,
Բայց Դու, միևնույն է, զոհեցիր Քեզ.
Աստծո սերը՝ անհաղթահարելի, անվերջանալի, անխոհեմ:
Երբ ես Քո թշնամին էի, Քո սերը, միևնույն է, պայքարում էր
    ինձ համար,
Դու այնքա՜ն, այնքա՜ն
Բարի ես եղել իմ հանդեպ,
Երբ ես անարժան էի զգում ինձ,
Դու լիովին վճարեցիր ինձ համար,
Դու այնքա՜ն, այնքա՜ն
Քաղցր ես եղել իմ հանդեպ:

Չկա խավար, որը Դու չես լուսավորի,
Եվ սար, որը չես բարձրանա
Ինձ հասնելու համար:
Չկա պարիսպ, որը Դու չես քանդի,
Չկա սուտ, որը չես բացահայտի
Ինձ հասնելու համար[2]:

Սիրելի երկնային Հա՛յր,

Քո սերը շռայլ է: Շնորհակալ եմ, որ կնքել ես ինձ Քո սիրո մեջ, որ որոշել ես սիրել ինձ, որ ծրագրել ես իմ կյանքն իմ առաջին իսկ շնչից: Օգնի՛ր ինձ, որ սիրեմ, ինչպես որ Դու սիրեցիր ինձ: Շնորհակալ եմ, որ այնքան սիրեցիր ինձ, որ աննահանջ կերպով հեռացրիր ցանկացած խոչընդոտ մեր միջև: Քանդի՛ր ամեն պարիսպ և սուտ, որը դեռ կանգնած է մեր միջև, ամե՛ն:

5

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՍԵՐ

«Սերը միակ ուժն է, որը կարող է թշնամուն ընկեր դարձնել»:
Մարտին Լյութեր Քինգ Կրտ.

Ուզում եմ մի պատմություն պատմել, որը պատկերում է Հայր Աստծո մտերիմ սերը և մշտական հոգատարությունը:

Վերջերս Իրաք գնացի: Ինձ հրավիրել էին քարոզելու Դուբայում, մի միջոցառման շրջանակներում, և ես որոշեցի, որ դա գերազանց հնարավորություն է՝ այցելելու մի ծառայություն, որը կոչվում է «Կանխարգելիչ սեր»:

Առաջին օրը Ձեսիկա և Ձերեմի Կորտնիների հետ էի: Նրանք այցելում էին եզդի փախստականների խմբերի, որոնց հետ վերականգնողական աշխատանք էին կատարում այն բանից հետո, երբ ԻՍԻՊ-ը սպանել էր ամեն տասներորդին և տեղահան էր արել նրանց: Քանի որ ես չգիտեի արաբերեն և քրդերեն, միայն կարող էի հետևել Ձեսիկային, որը շփվում էր այն կանանց և ընտանիքների հետ, որոնց նա օգնել էր զբաղվել օճառի պատրաստմամբ:

Ես դեռ հիշում եմ այդ թանկ մարդկանց արձագանքը:

Նրանք լուսավորվում էին՝ տեսնելով Զեսիկային: Բազմաթիվ առումներով նա հույս էր ներշնչում: Նա մի մարդ էր, ով հավատում էր նրանց: Նրանք ջերմորեն ողջունեցին նրան և հյուրասիրեցին կերակուր և ըմպելիք՝ իրենց ունեցածից: Նրանք ապրում էին ժամանակավոր վրաններում, բետոնե աղյուսներից պատրաստված սենյակներում, կոնտեյներների և բեռնատարների կցավագոնների մեջ:

Ես չկարողացա չնկատել մի փոքրիկ աղջկա, ով ամաչում և թաքցնում էր իր երեսը: Երբ Զեսիկան նստեց, այդ աղջիկը կծկվեց նրա մոտ, մինչ նա զրուցում էր փախստական կանանց և մի քանի տղամարդկանց հետ: Բայց այդ աղջիկը մյուսներից առանձին էր նստած: Ես իմացա, որ ԻՍԻՊ-ը սպանել էր նրա հորը, իսկ նրա մայրն այդ ժամանակ այդտեղ չէր: Ես մղում զգացի նրա հանդեպ և հարցրի Զեսիկային նրա մասին, իմացա, որ նա կորցրել էր իր աչքը չարորակ ուռուցքի պատճառով: Սիրտս թփրտաց: Խնդրեցի Զեսիկային կանչել այդ աղջկան ինձ մոտ և թարգմանել այն, ինչ կասեմ նրան: Նա հազիվ յոթ տարեկան լիներ: Նա եկավ անվճռականորեն և վարանելով՝ հետևելով ներկաների խոսքերին և խրախուսանքին:

Ես նստեցրի նրան ծնկիս՝ հասկանալով, թե որքան անհարմար և վախեցնող զգացում է լիովին անծանոթ մարդու կողմից առանձնացված լինելը:

Բայց Սառայի և իմ միջև ավելի շատ ընդհանրություններ կային, քան նա կարծում էր:

Ես պատմեցի նրան, որ հինգ տարեկանում կորցրել էի աչքս ուռուցքի պատճառով: Նա շրջվեց և ուշադիր նայեց իմ դեմքին՝ փորձելով հասկանալ, թե արդյո՞ք դա ճիշտ էր: Դրանից հետո նա նայեց այդ կցասայլի մեջ հավաքված մարդկանց դեմքերին: Միգուցե ասում էր. «Ես գտա ինչ-որ մեկին, ով հասկանում է ինձ»:

Իմ «iPad»-ը պայուսակիս մեջ էր: Ես ցույց տվեցի Սառային իմ ընտանեկան լուսանկարները՝ շշնջալով նրա ականջին բա-

ռեր, որոնք Ձեսիկան սիրով թարգմանում էր:

> «Սառա՛, դու կարող ես երազել: Սառա՛, դու կարող ես ընտանիք ունենալ: Սառա՛, դու կարող ես անել այն, ինչ Աստված խոսում է քո սրտին»:

Ես ուզում էի, որ նա իմանար, որ նա կորցրել էր իր աչքը, ոչ թե իր կյանքը:

Այն ամենից հետո, ինչ նա կրել էր, միգուցե աչքի կորուստը փոքր բան էր: Այնուամենայնիվ, ես չէի կամենում, որ դա սահմանափակեր նրան կամ վճռորոշ լիներ նրա համար:

Ձեսիկան չգիտեր, որ ես նույնպես կորցրել էի իմ աչքը: Նա պատմեց, թե որքան դժվար էր մաքուր պահել Սառայի աչքը: Նրա արհեստական աչքը փոշով էր պատվում: Ես մեղմորեն փորձեցի փակել նրա կոպը. այն չէր փակվում: Այդ արհեստական աչքը նախատեսված էր մեծահասակի համար, և այնքան մեծ էր, որ թույլ չէր տալիս փակել նրա կոպը: Ձեսիկան ասաց, որ նրանք մեծ դժվարությամբ էին կարողացել ձեռք բերել այդ աչքը նրա համար: Դա լավագույնն էր, ինչ նրանց հաջողվել էր գտնել Իրաքում:

Ես բռնել էի Սառայի ձեռքից, երբ մենք քայլում էինք դեպի մեր մեքենան:

Երկուսս էլ լուռ էինք:

Այդ գիշեր, պառկած Կորտնիների տան ներքնահարկում, ես չէի կարողանում քնել: Մտածում էի այդ աղջկա մասին: Ես երբեք չեմ վերապրել հայր կորցնելու ցավը նման դաժան, անիմաստ մահվան միջոցով, և ո՛չ էլ գիտեմ, թե ինչ է նշանակում զրկվել այն ամենից, ինչը շրջապատել է ինձ: Ես ոչինչ չէի կարող անել նրա կյանքում տեղի ունեցածի վերաբերյալ, բայց միգուցե հնարավոր էր ինչ-որ բան անել նրա աչքի վերաբերյալ:

Անցավ մի քանի ամիս, և ես իմացա, որ Ձեսիկան Միացյալ Նահանգներում է: Ես կապվեցի նրա հետ և իմացա, որ

նա նույնպես լինելու էր Կալիֆոռնիայում այն միջոցառմանը, որտեղ ես էի լինելու: Իմ ակնաբույժը Կոլորադո Սփրինգսում՝ Միտչել Մայոն, կարճ ժամանակ առաջ աշխատել էր եզդի երեխաների հետ և տեղյակ էր նրանց աչքերի գույնի առանձնահատկություններից: Նա մեծ ուրախությամբ օգնեց ինձ՝ տրամադրելով մի քանի մանկական չափի աչքեր Սառայի համար:

Ձեսիկան և ես կապ հաստատեցինք Կալիֆոռնիայում, և ես մի ողջույնի խոսք ձայնագրեցի Սառայի համար, որը Ձեսիկան պետք է թարգմաներ նրա համար:

Այդ երեկոյի միջոցառմանը Ձեսիկան փորձագետների խմբում էր: Ես լսում էի և լաց էի լինում, երբ նա պատմում էր, թե ինչպես իմ այցելությունը ազդեցություն թողեց և հպվեց Սառային: Ուշադրություն դարձնելով այդ լքված փոքրիկ աղջկան՝ ես բարձրացրի նրան արքայադստեր կարգավիճակի:

Մի՞թե մեր Տերը չի անում նույնը: Նա առանձնացնում է նրանց, ովքեր ուզում են թաքնվել, և թույլ է տալիս անհույսներին երազել:

Ձեսիկան վերադարձավ Իրաք՝ Սառայի համար արհեստական աչքեր տանելով: Ես թույլ կտամ, որ նրա գրառումն Ինստագրամում ցույց տա, թե ինչ նշանակություն ունեցավ այդ նվերը Սառայի համար.

> «Սառան դիտում էր Լիզային, ով ասում էր, որ հիշում էր իրեն, որ ինքը գեղեցիկ էր, որ ինքը կարող էր անել այն ամենը, ինչ ցանկանար, և թե որքան էր Աստված սիրում իրեն: Երբ ես թարգմանում էի Լիզայի խոսքերը նրա համար, արցունքները թափվում էին նրա աչքերից, և այդ պահին ես մտածեցի, թե քանի՜ անգամ էին նրան անվանել գեղեցիկ, փայփայված, հիշվող և հասկացված»:

Այդ գրառմանը կից Ձեսիկան տեղադրել էր լուսանկարներ, որոնցում Սառայի մայրը փոխում էր հին աչքը նորով: Նրա հարազատները հավաքվել էին նրա շուրջը՝ տեսնելու

համար, թե ինչպիսի տեսք էր այն ունենալու: Նրա քեռին խոսում էր իրենց փոխադարձ սիրո և հոգատարության մասին: Նրա մորաքույրը չէր կարողանում զսպել իր հիացմունքը այն մեծ փոփոխության պատճառով, որը պարգևել էր այդ փոքրիկ առարկան: Լուսանկարների վերջին խմբում ներկայացված էր Սառայի կյանքի ամբողջական պատմությունը. Սառան՝ չարորակ ուռուցքով, որը սպառնում էր խլել նրա կյանքը, Սառան՝ պլաստիկ աչքով, որը նա կարողացել էր ձեռք բերել Իրաքում, Սառան՝ իր նոր աչքով, շրջապատված ընտանիքով և ընկերներով: Ահա թե ինչպես Ջեսիկան նկարագրեց այդ փոփոխությունը.

> «Երանի՜ բոլորդ կարողանայիք տեսնել փոփոխություններն այս փոքրիկ աղջկա կյանքում. նա քայլում է բարձր գլխով և նախկինի պես չի ամաչում լուսանկարվել մարդկանց հետ: Միայն տեսնեիք, թե ինչպես էր երեկ նա վարում խոսակցությունը սեղանի շուրջ, երբ ճաշում էի նրանց հետ. ես նույնիսկ չճանաչեցի նրան, քանի որ նրա վարքը լիովին փոխվել էր: Սերը կարող է փոխել ամեն ինչ՝ այս փոքրիկ աղջկան և ամբողջ բնակավայրեր»:

Աստծո բարությունն անփոփոխ է, և Նրա սերը հավիտյան է: Ես խոնարհվում եմ՝ մտածելով, որ Աստված թույլ տվեց ինձ գնալ Իրաք թեկուզ միայն հանդիպելու համար այդ փոքրիկ աղջկան (ով կորցրել էր իր աչքը նույն տեսակի ուռուցքի պատճառով, որն ունեցել էի ես), որպեսզի նա ճանաչեր Իր սերը:

Սիրո օրինակը

Մեղմասություն կլինի ասելը, որ մորս և իմ հարաբերություններում խնդիրներ կային: Որքան հիշում եմ, մեր միջև մշտապես ներքին լարվածություն էր եղել: Վերջին տասը տարիների ընթացքում, երբ զանգահարեի նրան, մեր զրույցն արագորեն վերածվում էր ինչ-որ չափի թյուրըմբռնման: Սակայն հիմա ես

պետք է ճիգ գործադրեմ, որպեսզի հիշեմ այն խիստ խոսքերը, որոնք մենք ասում էինք միմյանց:

Փոխարենը ես հիշում եմ այն խոսքերը, որոնք այդպես էլ չասացի:

Երանի՜ ես ավելի վճռականորեն ցույց տայի ու ասեի, որ սիրում էի նրան: Ինչ վերաբերում է սիրո դրսևորմանը, մայրս և ես խոսում էինք տարբեր լեզուներով՝ նման իտալերենի և անգլերենի: Ցավոք, ես հրաժարվում էի երկլեզու դառնալ, քանի դեռ ուշ չէր: Այո՛, նրա կյանքի վերջին ամսվա ընթացքում ես ասացի այն ամենը, ինչ ուզում էի ասել: Ասացի, որ սիրում եմ նրան: Ես խնդրեցի, որ նա ների ինձ ցանկացած տրտմության համար՝ մեծ թե փոքր, որ պատճառել էի: Ես պառկեցի նրա հիվանդանոցային մահճակալի եզրին և գրկեցի նրա տկար մարմինը՝ զգուշանալով, որ չդիպչեի այն խողովակներին և լարերին, որոնք պահում էին նրան այդ մահճակալի մետաղյա շրջանակի վրա: Նա մոտեցրեց իր գլուխը և շշնջաց նույնը: Եվ այդ պահին մեր միջև անջրպետը քանդվեց: Երկուսս էլ լաց եղանք՝ համակված այն գիտակցությամբ, որ այնքա՜ն քիչ ժամանակ ունեինք նվիրելու միմյանց այս սերը հավիտենության այս կողմում: Չանցավ մեկ ամիս, և նա հեռացավ կյանքից:

> Ես հիշում եմ այն խոսքերը, որոնք այդպես էլ չասացի:

Հավիտենության խոստումը մեղմացրեց այդ իրողության հարվածը: Բայց նույնիսկ այդ դեպքում զղջումը կարող է դաժանաբար ցավ պատճառել: Անցյալում ես պատասխանում էի դրա մեղադրանքներին արդարացումներով կամ պատասխան մեղադրանքներ տեղալով: Սակայն տարիների ընթացքում յուրացրել եմ այլ, և երբեմն՝ ավելի բարդ մոտեցում. ես ընդունում եմ իմ սխալները: Սկզբում այս տարբերակը շատ ավելի ցավոտ էր, քանի որ այն դուրս էր մղում իմ ներքին

վերքերն առաջնային պլանի: Նույնիսկ այդ դեպքում խիզա՛խ եղեք և արե՛ք դա: Խոստանում եմ՝ դա կփրկի ձեզ ապագայում բազմաթիվ անտեղի նեղություններից:

Ճշմարտությունն այն է, որ ես պետք է ավելի շուտ սկսեի սիրել իմ մորը: Ես նրա հանդեպ սեր ցուցաբերելու մեծ հնարավորություններ ունեի, սակայն չարեցի դա: Թեև չեմ կարող փոխել անցյալը, ես կանգնած եմ պարզ ընտրության առջև ապագայի վերաբերյալ. կա՛մ կշարունակեմ զղջալ և տխրել, կա՛մ կվերածեմ իմ սխալները դասերի՝ այլ մարդկանց համար: Բանն այն է, որ երբ դուք ընդունում եք սխալը, այն կորցնում է իր ազդեցությունը ձեր կյանքում: Սովորե՛ք ինձնից: Դուք երբեք չեք զղջա բարի խոսքեր ասելու, ջերմություն նվիրելու և առատաձեռն լինելու համար: Բայց դուք կզղջաք այն սիրո պատճառով, որը չեք նվիրել:

Երբ դուք ընդունում եք սխալը, այն կորցնում է իր ազդեցությունը ձեր կյանքում:

Սիրեք սրտա՛նց, իմ գեղեցի՛կ ընկերներ, և դուք լավ կյանք կունենաք: Սերն է, որ փոխում է մեզ: Մեր երկնային Հայրը, Ով անկոտրում կերպով սիրում է մեզ, անզիջում կերպով պահանջում է, որ սիրենք միմյանց: Այնքա՛ն մարդիկ կան, որոնց մենք թշնամի ենք անվանում, այնինչ նրանք պարզապես խոցված մարդիկ են, որոնք հուսահատորեն սիրո կարիք ունեն: Որպես Քրիստոսի հետևորդներ՝ մենք չենք կարող չսիրել նրանց: Միմյանց սիրելը պատվիրան է, ոչ թե առաջարկ. «Սա է Իմ պատվիրանը, որ իրար սիրեք, ինչպես որ Ես ձեզ սիրեցի» (Հովհ. 15.12):

Նա կոչ է անում սիրել՝ «ինչպես որ Ես ձեզ սիրեցի»:

Հիսուսն է մեր օրինակը:

Իմ սխալն այն էր, որ ես սիրում էի իմ մորը՝ ի պատասխան այն օրինակի, որով նա էր սիրում ինձ: Գրեթե իմ ամբողջ կյանքում մայրս և ես անճոռնի պար էինք պարում՝ երկու քայլ առաջ և անմիջապես երկու քայլ ետ՝ այդպես էլ ոչ մի տեղ չհասնե-

լով: Իր մահից մեկ տարի առաջ նա ասաց ինձ, որ լարվածությունը մեր միջև իմ մեղավորությունը չէր: Նա բացատրեց, որ նա պարզապես երբեք մտերիմ հարաբերություն չէր կառուցել ինձ հետ: Նրա խոսքերը ցավ պատճառեցին ինձ, թեև համոզված եմ, որ նա այդպես ասաց՝ ինձ օգնելու համար: Կարծում եմ՝ նա հույս ուներ, որ այդ խոստովանությունն ազատություն կտար ինձ:

Հիմա ես գիտեմ, որ մայրական կապի բացակայությունը կարևոր չէր, քանի որ մենք կապված էինք Քրիստոսի մեջ:

Ինչպե՞ս կընթանար ամեն բան, եթե ես սիրեի այնպես, ինչպես Հիսուսն է սիրում ինձ:

Այսպիսով, ի՞նչ է նշանակում հետևել ինչ-որ օրինակի: Այս հարցին պատասխանելու համար կանդրադառնամ միջին դպրոցին: Մեր դպրոցական առարկաներից մեկը կոչվում էր տնայնագործություն, և այն ներառում էր կարուձևի կարճատև ուսուցում: Մենք օգտագործում էինք բաց դարչնագույն բարակ թղթից պատրաստված նմուշներ, որոնց վրա արված էին ուղիղ և կետիկավոր գծեր՝ մկրատների և գնդասեղների համար: Նպատակն այն էր, որ մենք սովորեինք կտրել կտորը՝ հարմարեցնելով մարդու չափերին:

Ավելի ուշ, երբ ինքնուրույն պետք է կատարեի դա, ես կարդում էի ցուցումները և ուսումնասիրում էի պատրաստի նմուշները՝ կարճուղիներ գտնելու համար: Ուզում էի արագ վերջացնել իմ առաջադրանքը. այնպես որ, ես չէի ավարտում կարերը: Եվ բոլոր խելացի մարդիկ հասկանում են, թե արդյունքում ինչ էր տեղի ունենում: Իմ կարած հագուստները լավ տեսք ունեին կարճ ժամանակվա ընթացքում, բայց շուտով կարերն առանձնանում էին, և փոսիկներ էին հայտնվում: Սիրո և կարի մեջ կարճուղիներ չկան... մեզ պատվիրված է հետևել մեզ տրված օրինակին:

Մարդկանց սիրելու հարցում շատերս չենք ավարտում կարերը, քանի որ չենք ցանկանում ժամանակ հատկացնել՝ մեր

հարաբերությունների կտորը պատրաստելու համար: Մենք փակում ենք դրսի բացվածքները՝ հագուստին արտաքնապես պատրաստի տեսք հաղորդելով, բայց ներսում խառնաշփոթ է՝ բաղկացած կախված թելերից և ձգված կտորից: Կարճուղիներ փնտրելով՝ մենք բավարարվել ենք արդարացումներով, օրինակ՝ «ես չեմ կարող պատշաճ կերպով սիրել, քանի որ չեմ մեծացել քրիստոնեական ընտանիքում»:

Սիրե՛ք այնպես, ինչպես որ Հիսուսն է սիրում ձեզ: Երբեմն սա կարող է մի փոքր վերացական թվալ: Ու թեև դժվար է գտնել հստակ աստվածաշնչյան օրինակներ մեր առօրյա ընթացքի համար, ես հասկացա հետևյալը. ես երբեք մեծ սխալներ չեմ գործում, երբ սիրում եմ մարդկանց այնպես, ինչպես ուզում եմ, որ ինձ սիրեն:

Մենք սահմանափակված չենք այն բանով, թե որքան են մեր ծնողները սիրել մեզ: Սա բարի լուր է: Չէ՞ որ նրանք չեն մեր սիրո օրինակը: Հիսուսն է մեր սիրո օրինակը: Եվ Հիսուսի բոլոր հետևորդները կարող են հետևել Նրա օրինակին: Հիսուսը սիրում էր մարդկանց՝ խոսելով ճշմարտությունը, ապրելով ըստ ճշմարտության, ազատ արձակելով կապյալներին և բժշկելով հիվանդներին: Նա հայտնում էր այն, ինչ կա Հոր սրտում, որտեղ էլ Նա լիներ:

Սիրեք՝ խոսելով ճշմարտությունը

Երբեմն սիրելը նշանակում է ասել ինչ-որ մեկին նրա բացթողումների մասին: Յուրաքանչյուրիս կյանքում կան բացթողումներ և այնպիսի խնդիրներ, որոնք մենք չենք տեսնում: Եթե խնդրենք, Հիսուսը ցույց կտա մեզ ճշմարտությունը մեր մասին, որպեսզի մենք ուղիղ սիրտ ունենանք:

Երբ հարուստ և ազդեցիկ երիտասարդը հարցրեց Հիսուսին, թե ինչ պետք է անի՝ հավիտենական կյանք ժառանգելու համար, Հիսուսը սիրով պատասխանեց նրան.

«Հիսուսն էլ նրան մտիկ տվեց, նրան սիրեց և ասաց. «Մեկ բան պակաս է քեզ. գնա՛, ինչ որ ունես՝ ծախի՛ր և աղքատներին տուր և գանձ կունենաս Երկնքում, և խաչն առած՝ ե՛կ, Ինձ հետևի՛ր» (Մարկոս 10.21):

Այդ երիտասարդի «մեկ բանը» ամեն ինչն էր: Հիսուսը գիտեր, թե ինչ էր պետք՝ նրա բանտարկված սիրտը բացելու համար: Ձեր «մեկ բանը» կարող է լինել ինչ-որ մեկին ներելը, կամ՝ վստահելը, որ Աստված հոգում է ձեր մասին: Ինչ էլ լինի, Սուրբ Հոգին գիտի, թե ինչ է պետք՝ ձեր սրտի կապանքները հեռացնելու համար: Մեզնից շատերի պես՝ այդ հարուստ երիտասարդ իշխանը մեծ ներուժ ուներ, բայց պահում էր իր գանձը սխալ տեղում: Նրա գանձերը պետք է տեղափոխվեին այնտեղ, որտեղ նրա սիրտը փափագում էր լինել. հավիտենության մեջ: Հիսուսը տեսավ նրան, սիրեց, լսեց նրա սրտի աղաղակը և ասաց Ճշմարտությունը:

Սերը խոսում է՝ լսելի լինելու համար:

Սերը երևում է մեր բառերի մեջ. այն ակնհայտ է թե՛ մեր ասածի մեջ, թե՛ այն բանում, ինչ որոշում ենք չասել: Սերը երևում է մեր ձայնի տոնայնության մեջ: Բոլորս ենք ասել ճիշտ խոսքեր, բայց՝ սխալ կերպով: Նույնիսկ պատահել է, որ ես ասել եմ սխալ խոսքեր՝ ճիշտ կերպով, բայց դա, միևնույն է, լավ չէ:

Սերը խոսում է՝ լսելի լինելու համար:

Երբեմն սերը շշնջոց է. այլ դեպքերում այն եռանդագին աղաղակ է բարձրացնում: Երբ մենք սիրում ենք... սերը կգտնի իր ձայնը:

Սերը բարձրացնում է մարդկանց

Այլ դեպքերում, սերը նշանակում է ցույց տալ, թե ինչպես է կրոնն աղավաղել Հոր խոսքերը և մտադրությունները: Կարդանք Ղուկասի 13-րդ գլխից.

> «Եվ ժողովարաններից մեկում սովորեցնում էր շաբաթ օրը: Եվ ահա մի կին կար, որ հիվանդության ոգի ուներ տասնութ տարուց ի վեր: Եվ կծկված էր ու ամենևին չէր կարողանում ուղիղ կանգնել» (խս. 10,11):

Տասնութ երկարատև, ճնշող տարիներ հիվանդության ոգին փոխել էր այդ կնոջ կեցվածքը: Սա աննկատ բնագավառ չէր նրա համար. նա գիտեր, որ կռացած էր: Միգուցե նրան պատվիրել էին ավելի ջանասիրաբար հավատալ, ավելի երկար աղոթել, ապաշխարել ինչ-որ մեղքից: Նա ամաչում էր իր վիճակից: Նա հուսահատորեն ցանկանում էր ուղղվել, բայց ոչ մի կերպ չէր կարողանում: Նա գիտեր, որ ժողովարանի առաջնորդներն անհարմար էին զգում իր ներկայությամբ, բայց տասնութ տարի շարունակ գալիս էր: Նա գիտեր, որ Աստված իր միակ հույսն էր: Միգուցե դուք գիտեք, թե ինչպես էր նա զգում իրեն:

Երիտասարդ ռաբբունի Հիսուսը սովորեցնում էր: Թեև այդ կնոջ կռացած դիրքը սահմանափակում էր նրա տեսադաշտը, նա լսեց Հիսուսի խոսքերը: Այդ խոսքերը հպվեցին նրա սրտին. արցունքները թրջեցին նրա գետնին հառած երեսը: Հիսուսը դադարեց խոսել: Այդ կինը դեռ չգիտեր, բայց Սերը հենց նոր նկատել էր իրեն: Ի՞նչ էր տեղի ունենում: Արդյո՞ք Նա խոսում էր այդ կնոջ հետ: Նա կողքի շրջեց իր գլուխը՝ տեսնելու համար: Նրա հայացքը թափանցեց այդ կնոջ սրտի խորքը: Նրան շրջապատող մարդիկ ճանապարհ տվեցին, և Նա մոտեցավ կնոջը՝ շշնջոցների ներքո:

> «Եվ Հիսուսը նրան տեսնելով՝ Իր մոտ կանչեց ու ասաց. «Ո՛վ կին, արձակված ես քո հիվանդությունից»: Եվ ձեռքը դրեց նրա վրա, և նա շուտով ուղղվեց և փառավորում էր Աստծուն» (խս. 12,13):

Նա չհարցրեց այդ կնոջը՝ արդյո՞ք ուզում էր ազատություն ստանալ: Նա չհարցրեց կրոնական առաջնորդների թույլտ-

վությունը: Նա հպվեց այդ կնոջ կորացած մեջքին: Նրա սիրտը սկսեց արագ բաբախել, երբ մարմինը լցվեց զորությամբ: Նրա կրծքավանդակը լայնացավ, և բռնված մեջքը կրկին շարժուն դարձավ: Նա կանգնեց ուղիղ հասակով և պարզեց իր ձեռքերը դեպի երկինք: Հանպատրաստից փառաբանության գոչյունները դուրս թռան նրա շուրթերից:

Երբ Սերը տեսավ նրան, առանձնացրեց ու խոսեց նրա կյանքում՝ ազատություն և հույս հռչակելով, և հպվեց նրան: Մենք գիտենք, որ Հիսուսն անում էր միայն այն, ինչ տեսնում էր Իր Հորն անելիս: Այս բժշկությունը հրաշալիորեն ցույց է տալիս, թե ինչպիսին է Հոր սիրտը: Ցավոք, ոչ բոլորը կիսեցին այդ կնոջ ուրախությունը:

> «Իսկ ժողովարանի գլխավորը շատ բարկացած, որ Հիսուսը շաբաթ օրը բժշկեց, պատասխանեց և ասաց ժողովրդին. «Վեց օր կա, որ նրանցում պետք է գործել: Հիմա այն օրերը եկեք բժշկվեք, և ոչ թե շաբաթ օրը»» (խս. 14):

Կինը ցնծում էր, իսկ կրոնական առաջնորդը բղավում էր: Գործե՞ր: Երբվանի՞ց բժշկությունը դարձավ մարդու գործը: Այն մշտապես եղել է Աստծո գործը: Մի՞թե կարող էր ժողովարանից ավելի լավ տեղ լինել բժշկության համար: Սերն ընդհատել էր նրանց կրոնական կյանքը: Հիսուսն անմիջապես պատասխանեց.

> «Կեղծավո՛ր, ձեզնից ամեն մեկը շաբաթ օրն իր եզը կամ էշը չի՞ արձակում մսուրից և տանում ջուր տալիս: Բայց սա, Աբրահամի աղջիկը լինելով, որին սատանան ահա տասնութ տարի կապել էր, արժան չէ՞ր, որ շաբաթ օրն այն կապանքից արձակվեր» (խս. 15,16):

Այս դստեր բժշկությունը ցավոտ հարված էր կրոնական մարդկանց համար: Մի՞թե կարծում եք, որ Աստված երբևէ կամեցել է, որ ավանակները և եզներն արժանանային ավելի լավ

վերաբերմունքի, քան Իր զավակները: Շաբաթը հանգստի և վերականգնման համար է: Ցանկացած տեսակի կեղեքում հակառակ է Աստծո մտադրությանը շաբաթ օրվա համար: Այդ կինն Աբրահամի դուստր էր: Աստծո սիրտը գործողության դրդեց Հիսուսին, քանի որ Աստված անկոտրում է Իր գերված զավակներին ազատ արձակելու հարցում:

> «Եվ երբ Նա այս ասաց, ամոթով էին լինում ամենը, որ հակառակվում էին Նրան: Եվ ամբողջ ժողովուրդն ուրախանում էր այն բոլոր փառավոր գործերի համար, որ Նրանով լինում էին» (խս. 17):

Ցավոք, երբեմն դժվար է միաժամանակ սիրել կրոնը և մարդկանց: Եթե հայտնվեք այս խաչմերուկում, որոշում կայացրեք, որ սիրելու եք մարդկանց, ոչ թե վարդապետական դրույթները: Սերը կարող է հաղթահարել ստերը և խաբեությունը, բայց ատելությամբ լցված և դատող մարդիկ մշտապես վանում են մարդկանց: Հավատքը գործում է սիրով: Կան դեպքեր, երբ սիրել՝ նշանակում է ասել ճշմարտությունը. այլ դեպքերում, սիրել՝ նշանակում է լինել ճշմարտությունը: Այս հատվածում Հիսուսն արեց երկուսն էլ: Ազատ արձակելով այդ կապված դստերը՝ Նա ցույց տվեց Աստծո սերը մարդկանց հանդեպ, որը վեր է կրոնական կանոններից և գործերից:

Ինչպես որ հավատքը մեռած է՝ առանց գործերի, այնպես էլ գործերն անիմաստ են՝ առանց սիրո:

Ինչպես որ հավատքը մեռած է՝ առանց գործերի, այնպես էլ գործերն անիմաստ են՝ առանց սիրո:

Գործեր՝ առանց սիրո

> «Եթե մարդկանց և հրեշտակների լեզուներով խոսեմ, բայց սեր չունեմ, ես եղա ձայն հանող պղինձ կամ հնչող ծնծղա: Եվ

> եթե մարգարեություն ունենամ և գիտենամ բոլոր խորհուրդները և ամեն գիտությունը, և եթե ամեն հավատքն ունենամ, մինչև սարերն էլ տեղափոխելու, բայց սեր չունեմ, ոչինչ եմ: Եվ եթե իմ բոլոր ապրանքներն աղքատներին ուտեցնեմ և իմ մարմինը մատնեմ, որ այրվի, բայց սեր չունեմ, ես ոչ մի օգուտ չեմ ունենա» (Ա Կորնթ. 13.1-3):

Այս խոսքերում նշված են մի շարք բարի գործեր, որոնք թերի են՝ առանց սիրո: Դրանց թվում են ձայնը, գիտելիքը, հավատքը և առատաձեռնությունը: Ցանկացած պարգև կամ տաղանդ, որը պատկանում է մեզ, պետք է ցույց տա մարդկանց մեր առատաձեռն Աստծուն, ոչ թե մոտեցնի նրանց մեզ: Եթե դուք ստանայիք մեծագույն նվերը, որը կարող էիք պատկերացնել՝ տուն, մեքենա կամ ձեր ուսանողական վարկի ամբողջական մարումը, ինչպե՞ս կզգայիք: Ինչպե՞ս կարծագանքեիք այն օրը, երբ ստանայիք այդ բանալիները կամ կանխիկ գումարը: Մի՞թե բնական չէր լինի, եթե գրկեիք և շնորհակալություն հայտնեիք նրան, ով տվեց դա ձեզ: Մի՞թե մենք ունենք թեկուզ մեկ բարի բան, որն Աստված չի տվել: Ո՛չ: Այնպես որ, մեր արձագանքը գոհությունն է. մենք պատրաստ ենք տալ Նրան այն ամենը, ինչ ունենք, նույնիսկ՝ մեր կյանքը: Բայց առանց սիրո՝ մեր պարգևներն անօգուտ են:

Դիտարկենք այն պարգևները, որոնց մասին Պողոսը խոսում է՝ սկսելով ձայնի զորությունից:

Ձայն

Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, որտեղ կան բազմաթիվ եռանդուն, համոզիչ և գրավիչ հռետորներ: Մենք լսում ենք տարբեր տեսակի և նշանակության ձայներ: Անթիվ ձայներ բոլոր բնագավառներում մրցակցում են՝ ձգտելով լսված լինել: Դժվար է իմանալ, թե ինչ է գտնվում բոլոր քարոզների, հոդվածների և հաղորդումների ետևում: Ձանազանությունը սկսվում է, երբ պատրաստում ենք մեր սրտի հո-

ղը: Եվ երբ մենք խոսում ենք, պետք է մի քանի բարդ հարցեր տանք մեզ:

> «Արդյո՞ք ես խոսում եմ՝ ելնելով սիրուց, թե՞ ցանկանում եմ, որ ինձ տեսնեն և լսեն»: Բոլորս ենք ցանկանում լսված լինել: Եվ բոլորս լսված լինելու իրավունք ունենք: Բայց եթե մենք խոսում ենք՝ ելնելով վիրավորանքից, հպարտությունից կամ հայտնի դառնալու ցանկությունից, մեր վարձատրությունը հենց լսված լինելն է:

Մեր սրտերը պատրաստելու արդյունքում սիրո դրդապատճառը չի կորսվի մեր խոսքի մեջ: Պողոսը զգուշացնում է մեզ, որ անկախ այն բանից, թե որքան խորը և ոգեշնչված են մեր խոսքերը՝ եթե չլինի սերը, դրանք անօգուտ կլինեն՝ նման տհաճ և նյարդայնացնող աղմուկի:

Միայն Աստված գիտի, թե ինչից ելնելով ենք մենք խոսում: Նա տեսնում է ավելին, քան մեր արտաքինը. Նրա հայացքը թափանցում է մեր սրտերը: Նույն կերպով, Նա լսում է ավելին, քան մեր խոսքերը: Նա լսում է այն աղբյուրը, որից դրանք բխում են: Նա լսում է մեր խոսքի երգեցիկ կամ աններդաշնակ հնչողությունը: Սիրով կազմված ամենապարզ նախադասությունները նման են սիմֆոնիայի: «Ներիր ինձ...» բառերն ավելի հաճելի են Նրան, քան ամենապերճախոս ճառերը, որոնք լի են հպարտությամբ և նման են գրատախտակին քսվող եղունգների խզզոցի կամ սգացողների կեղծ լացուկոծի:

Գործք 12-րդ գլխի հետևյալ հատվածը սրա փայլուն օրինակն է.

> «Մի որոշված օր Հերովդեսը, թագավորական զգեստ հագած, ատյանում նստած էր և հրապարակավ ատենաբանում էր նրանց: Եվ ամբոխն աղաղակում էր, թե՝ *Դա Աստծո ձայն է, և ոչ թե մարդու:* Եվ իսկույն Տիրոջ հրեշտակը զարկեց նրան, որովհետև Աստծուն չտվեց փառքը: Եվ որդերով լցվեց, մեռավ» (խս. 21-23):

Պատկերացնո՞ւմ եք: Երկրպագությունը պատկանում է միայն Աստծուն: Երբ թագավորական զգեստ հագած Հերովդեսը սխալ գործեց՝ իրեն վերագրելով Աստծո փառքը, եկավ նրա վերջը: Մի ակնթարթում մի հրեշտակ զարկեց նրան, և որդերը սկսեցին ուտել նրա մարմինը: Այս կյանքից հեռանալու ինչպիսի՜ զարհուրելի ձև: Շատ բժիշկներ ասում են, որ ամեն մարդու մարմնում կա մակաբույծների որոշակի քանակ: Ներողություն, ես գիտեմ, որ սա հաճելի բան չէ: Սակայն, եթե սա ճշմարիտ է, նշանակում է, որ այդ պահին ի հայտ եկավ այն, ինչն աննկատ գտնվում էր նրա ներսում: Միգուցե սա էր պատճառը, որ առաքյալներն արագորեն պատռեցին իրենց հանդերձները՝ ցույց տալու համար, որ իրենք մարդ են, երբ մարդիկ կարծում էին, որ նրանք աստվածներ են: Գործք 14.13,14-ում գրված է.

> «Երբ առաքյալները հասկացան, թե ինչ էր կատարվում, նրանք խիստ շփոթվեցին և պատռեցին իրենց հանդերձները՝ որպես տագնապի նշան: Նրանք շտապեցին դեպի ամբոխը և գոչեցին. «Մարդի՛կ, ի՞նչ եք անում: Մենք միայն տկար մարդ արարածներ ենք՝ ինչպես մնացած բոլորը: Ահա թե ինչու ենք եկել՝ պատմելու ձեզ բարի լուրը, որպեսզի դուք շրջվեք այս անարժան առասպելներից և դառնաք կենդանի Աստծուն: Նա ամեն ինչի Արարիչն է՝ երկրի, երկնքի, ծովի և այն ամենի, ինչ գտնվում է դրանցում»» (TPT):

Հետաքրքրական է նշել, որ Գործք 12.21-23-ին նախորդող խոսքում, Հերովդեսի ատենախոսության համատեքստում, տեսնում ենք, որ Հերովդեսը ոչ միայն հրաշալի ելույթ էր ունենում, այլև հայտարարում էր իր բարի կամքի դրսևորման մասին: Հերովդեսը բարկացել էր Տյուրոսի և Սիդոնի վրա և, որպես արդյունք, դադարեցրել էր նրանց սննդի մատակարարումը: Տյուրոսից և Սիդոնից պատվիրակություն էր եկել՝ խաղաղություն խնդրելու համար: Նրանք դաշնակից

էին գտել ի դեմս Բղաստոսի, որը Հերովդեսի օգնականն էր: Այդ երկու քաղաքները սննդի լուրջ կարիք ունեին: Հերովդեսի ելույթն ազդարարում էր բաղձալի հաշտությունը: Տյուրոսի և Սիդոնի համար այդ փոփոխությունը նշանակում էր խաղաղություն և վերադարձ բարգավաճ կյանքին: Թեև Հերովդեսը համոզվել էր, սակայն նրա շարժառիթները մաքուր չէին:

Գիտելիք

Հաջորդ պարգևը, որը նշված է Ա Կորնթացիների թղթում, ապագան կանխասելու, կյանքի գաղտնիքները բացահայտելու և ամեն տեսակի գիտելիք ունենալու ապշեցուցիչ կարողությունն է: Որքան էլ հրաշալի լինեն այս պարգևները, և որքան էլ օգտակար լինեն հասարակության համար, դրանք ոչինչ չեն ավելացնում այն մարդու կյանքում, ով սեր չունի: Առաջին Կորնթացիների 8-րդ գլուխը նկարագրում է այն պայքարը, որը կարող է լինել սիրո և գիտելիքի միջև.

> «...գիտելիքը հպարտացնում է, բայց սերը շինում է: Եթե մեկը կարծում է, թե բան գիտի, նա դեռ բան չիմացավ, ինչպես պետք է իմանալ: Բայց եթե մեկն Աստծուն սիրի, նա ճանաչված է Նրանից» (խս. 1-3):

Եվ է՛լ ավելի ընդգծելու համար այս լարված պայքարը, կարդանք նույն խոսքերն «Ավյուն» թարգմանությունից.

> «Որքա՜ն հեշտորեն ենք մենք գոռոզանում մեր կարծիքների պատճառով: Բայց սերը շինում է մեր նոր կյանքի կառույցը: Եթե ինչ-որ մեկը մտածում է, որ ինքն ամենագետ է, նա դեռ պետք է շատ բան սովորի: Բայց եթե մարդը ջերմեռանդորեն սիրում է Աստծուն, նա կունենա գիտելիք Աստծո մասին» (ՏՊՏ):

Եթե մեր ունեցած գիտելիքը չի կառուցում մարդկանց, ժամանակն է ստուգել մեր շարժառիթները: Ավելին իմանա-

լը հնարավորություն է՝ ավելի շատ սիրելու համար: Աստծուն ճանաչելը պետք է մշտապես դրդի մարդկանց սիրելուն:

Վերջին մի քանի տարիներին ինձ հետ կապ են հաստատել բազմաթիվ հոգևոր դուստրեր: Նրանք չեն ցանկանում ընդլայնել իրենց կապերը կամ հրավիրել ինձ քարոզելու: Նրանք խորհուրդներ են հարցնում ինձնից սիրո և կյանքի մասին: Կարիք չկա, որ նրանք գործեն բոլոր այն սխալները, որոնք ես եմ գործել: Այնպես որ, ես օգտագործում եմ այն փորձառությունը, որը ձեռք եմ բերել՝ նրանց բարձրացնելու համար: Սերը բարձրացնում է ձեր սիրտը՝ առանց ցավեցնելու ձեր գլուխը: Կրթությունը և փորձառությունը չպետք է թույլ տան մեզ այնպես վարվել, որ մարդիկ մեզնից ցածր զգան իրենց: Օրենքի ուսուցիչները և փարիսեցիները հենց այդպես էին գործածում գիտելիքը: Գիտելիքը՝ առանց սիրո, քիչ արժեք ունի:

Աստծուն ճանաչելը պետք է մշտապես դրդի մարդկանց սիրելուն:

Որքան ավելի ենք հասկանում, թե ով ենք մենք Քրիստոսի մեջ, այնքան ավելի ենք սկսում բարձրացնել մարդկանց: «Իմանալ՝ ինչպես որ պետք է իմանանք» սկզբունքը նշանակում է սիրել մարդկանց այնպես, ինչպես Քրիստոսն է սիրում նրանց:

Սերը երբեք չի վիրավորում մարդու արժանապատվությունը:

Սերը երբեք չի պարծենում մարդկանց առջև:

Սերը հարձակվում է այն բերդի վրա, որում պահված են գերիները:

Սերը չի հարձակվում գերիների վրա. սերն ազատ է արձակում գերիներին:

Մենք կարող ենք պարզապես իմանալ սիրո մասին՝ առանց սիրելու. մենք կարող ենք պարզապես ընդունել հասկացությունը սիրո մասին՝ առանց ընդունելու մարդկանց:

Մենք կանչված ենք սիրելու *յուրաքանչյուրին:* Մենք չենք

կարող սիրել միայն նրանց, ովքեր մեզ նման են՝ տեսքով և վարքով: Մենք պետք է սիրենք այն մարդկանց, ովքեր համաձայն չեն մեզ հետ: Սա չի նշանակում, որ մենք փոխզիջման ենք ենթարկում մեր համոզմունքները և շփոթեցնում ենք մարդկանց մեր գործերով: Մեր մշակույթը սերը հավասարեցրել է հավանություն տալուն: Երբեմն մեծագույն սերը, որը կարող ենք ցուցաբերել, սիրով չհամաձայնելն է: Սա նման է պարանի վրայով քայլելուն: Մենք պետք է ամեն օր որոշում կայացնենք զգայուն լինել մարդկանց հանդեպ:

Սերն անհրաժեշտ է ոչ թե սահմանել, այլ՝ ցուցադրել: Սերը դժվար չէ ճանաչել, երբ տեսնում ենք այն: Սերը զգացմունք չէ. այն կենսառաձ է: Շատ առումներով, սերը մեծագույն սովորությունն է, որը յուրաքանչյուրը կարող է զարգացնել կյանքում:

> «Եվ դպիրներից մեկը մոտ եկավ՝ լսելով, որ վիճում էին, և երբ որ տեսավ, թե լավ պատասխանեց նրանց, Նրան հարցրեց. «Ո՞րն է ամենից առաջին պատվիրանը»: Հիսուսն էլ նրան պատասխանեց, թե. «Ամեն պատվիրաններից առաջինը սա է. «Լսի՛ր, Իսրայե՛լ, մեր Տեր Աստված մեկ Տեր է: Եվ սիրի՛ր քո Տեր Աստծուն ամբողջ սրտով և ամբողջ անձով և ամբողջ մտքով և ամբողջ զորությունով»: Սա է առաջին պատվիրանը: Եվ երկրորդը՝ սրա նման. «Սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պես»: Սրանցից ավելի մեծ ուրիշ պատվիրան չկա»»: Եվ դպիրը Նրան ասաց. «Լա՛վ, վարդապետ, ճշմարտությամբ ասացիր, թե մեկ է Աստված, Նրանից բացի ուրիշը չկա: Եվ Նրան սիրելը ամբողջ սրտից և ամբողջ մտքից և ամբողջ անձից և ամբողջ զորությունից, և ընկերոջը անձի պես սիրելը ավելի է, քան թե բոլոր ողջակեզները և զոհերը»: Եվ Հիսուսը տեսնելով, որ իմաստությամբ պատասխանեց, ասաց նրան. «Դու հեռու չես Աստծո արքայությունից»: Եվ այլևս ոչ ոք չէր համարձակվում Նրան մի բան հարցնել» (Մարկ. 12.28-34):

Նույնիսկ այսօր, շատ առումներով, մենք հեռու չենք Աստծո թագավորությունից: Մենք տեսնում ենք այն հեռվից, սակայն

գոյություն ունի բաժանարար անդունդ մեր համոզմունքների և եկեղեցու վարքի միջև: Սերն այն պատասխանն է, որը վերջ է դնում բոլոր հարցերին: Այն բոլոր խնդիրների լուծումն է:

> «Ոչ ոքի ոչինչ պարտական չմնաք՝ բացի իրար սիրելուց, որովհետև ընկերոջը սիրողն օրենքը կատարել է» (Հռոմ. 13.8):

Սերը կատարում է օրենքը: Սերն ազատում է մեզ բոլոր զգացմունքային, ֆիզիկական և հասարակական պարտավորություններից: Մենք պարտք ենք միայն սեր՝ այն, ինչն ինքներս ձրիաբար ստացել ենք....

> «Արթո՛ւն եղեք, հաստա՛տ կացեք հավատքում, արիացե՛ք և ուժովացե՛ք: Ձեր բոլոր բաները թող սիրով լինեն» (Ա Կորնթ. 16.13,14):

Առաջին Կորնթացիների այս երկու խոսքերի գաղափարները փոխկապակցված են: Անհրաժեշտ է հասունություն, հավատք, կայունություն, զգոնություն և ուժ, որպեսզի մեր բոլոր գործերը սիրով լինեն:

Սերը գործողության է դրդում մեզ: Վերջերս գնացել էի մի համերգի, որտեղ ներկաներին առաջարկեցին հովանավորել մեկական երեխայի՝ «Քոմփեշն Ինտերնեյշնլ» կազմակերպության միջոցով: Որպես ծառայություն՝ մենք համագործակցում ենք որբ երեխաներին օժանդակող կազմակերպությունների հետ: Սակայն այս անգամ զգացի, որ պետք է անձամբ արձագանքեի: Ես բարձրացրի ձեռքս և մեկ փաթեթ ստացա: Բացելով այն՝ տեսա մի փոքրիկ աղջկա լուսանկար, որը ծնվել էր իմ ծննդյան օրը: Մի՞թե դա պատահականություն էր: Այդ երեխայի լուսանկարն ամրացված է իմ դարակի վրա՝ համակարգչիս վերևի մասում: Այդ սիրո քայլը նման էր այն բանին, որ իմ երկնային Հայրը համբուրեր այտս:

Ամեն օրը ևս մեկ հնարավորություն է սիրելու համար:

Եվ քանի որ Աստված սիրում է մարդկանց, Նա չի կամենում, որ մեր ազատությունը թույլ չտա Իր սիրուն հպվել նրանց: Սերը մտածում է այն մասին, թե ինչպես են մեր որոշումներն ազդելու մարդկանց վրա: Առաջին Կորնթացիների 8-րդ գլխում Պողոսը երկար խոսում է այս մասին՝ բացատրելով, որ թեև կուռքերը ոչինչ են, կուռքերին զոհաբերված միսն ուտելը կարող է վիրավորել այն նորահավատներին, որոնք դեռ չունեն այս հայտնությունը: 11-րդ և 12-րդ խոսքերում նա ցույց է տալիս, թե ինչ պտուղ ունի հայտնությունը՝ առանց սիրո.

Ամեն օրը ևս մեկ հնարավորություն է՝ սիրելու համար:

> «Այսպիսով, ըստ էության, երբ վարվեցիք համաձայն այն ազատության, որը, ինչպես գիտեք, դուք ունեք, դուք կործանեցիք այդ տկար հավատացյալին՝ այն եղբորը, որի համար Քրիստոսը մահացավ: Եվ երբ դուք գայթակղեցնում եք ավելի տկար հավատացյալներին՝ այս կերպով խոցելով նրանց խիղճը, դուք նույնպես ցավ եք պատճառում Օծյալին» (ՏՊՏ):

Իսկ ո՞րն է սիրո արձագանքն այս ամենին:

> «Այսպիսով, ես եզրակացնում եմ, որ եթե որոշակի կերակուրներ ուտելը խորապես վիրավորում է իմ եղբորը և սահմանափակում է նրա առաջընթացը Քրիստոսում, ես այլևս չեմ ուտի այն: Ես չեմ ուզում հանցավոր լինել իմ եղբոր կամ քրոջ խոցված և պարտված լինելու մեջ» (Ա Կորնթ. 8.13, ՏՊՏ):

Այս խոսքը պատկերավոր ցույց է տալիս, որ սերը որոշում է ապրել *հանուն* այլ մարդկանց: Միայն գիտելիքն ասում է. «Քանի որ կուռքը ոչինչ է, ես ազատ եմ, և կարող եմ ուտել այն, ինչ ցանկանում եմ: Ես պատասխանատու չեմ իմ եղբոր արձագանքի համար»: Սակայն, միանալով սիրուն, գիտելիքը ձգտում է առաջընթաց բերել մարդկանց: Այս միությունն ասում է. «Ես գի-

տեմ, որ կուռքը ոչինչ է, բայց իմ եղբայրը և քույրը կարևոր են: Ես ավելի շատ հոգում եմ նրանց մասին, քան՝ իմ ազատությամբ վարվելու իրավունքի: Ես ոչ մի դեպքում չեմ կամենում, որ իմ ազատությունից բխող քայլերը վտանգեն նրանց»: Սերը սահմանափակում է իրեն՝ այլ մարդկանց կառուցելու համար:

Իհարկե, սիրել՝ չի նշանակում ապրել մարդկանց վախերի և կարծիքների *ազդեցության* ներքո: Ավելի ճիշտ է ասել, որ սերն իրազեկ է: Կուռքերին զոհաբերվող միսն ուտելը որևէ նշանակություն չունի մեր հասարակության համար, բայց Առաջին եկեղեցում դա շատ արդիական և նուրբ հարց էր: Հույն նորահավատների համար դժվար էր որևէ կերպով համաձայնեցնել իրենց նախկին ծեսերն իրենց նոր կյանքի հետ: Եվ այն մարդիկ, ովքեր հայտնություն ունեին միակ ճշմարիտ Աստծո մասին, գիտակցում էին, որ սերը նշանակում է պատվել այդ մարդկանց զգացմունքները: Սերը երբեք չի օգտագործում իր ազատությունը՝ թույլերին խոցելու համար:

Սերը երբեք չի օգտագործում իր ազատությունը՝ թույլերին խոցելու համար:

Հավատք

Կ. Ս. Լյուիսը գրում է. «Ժամանակ մի՛ վատնեք՝ մտածելով՝ արդյո՞ք «սիրում» եք ձեր մերձավորին. վարվե՛ք այնպես, ասես սիրում եք նրան: Հենց որ անենք դա, կբացահայտենք մեծագույն գաղտնիքներից մեկը: Երբ վարվում եք այնպես, ասես սիրում եք ինչ-որ մեկին, դուք իսկապես սկսում եք սիրել նրան»[1]:

Երբ մենք սիրում ենք՝ հավատքով և հավատքի մեջ լինելով, այս տառապյալ աշխարհը տեսնում է, թե ինչպիսին է Հոր սիրտը: Սիրելն ավելի կարևոր է, քան սիրված լինելը: Մեր հավատքի ճշմարիտ չափը նրանում չէ, թե որքան սիրված

ենք մենք, այլ՝ թե որքան ենք մենք սիրում: Այո՛, բոլորս ենք կամենում սիրված լինել: Երբ ընդունում ենք Հոր անկոտրում սերը մեր հանդեպ, մենք հաստատուն ենք դառնում Նրանում և կարողանում ենք սիրել մարդկանց: Նման կերպով սիրելու համար անհրաժեշտ է հավատք ունենալ: Մենք գիտենք, որ հավատքն այն ամենի հաստատությունն է, ինչի հանդեպ մենք հույս ունենք: Բոլորս հույս ունենք, որ կսիրենք և սիրված կլինենք, բայց մեզնից ոչ ոք չի կարող ճշմարտապես սիրել՝ առանց հավատքի: Գաղատացիների 5.6-ում գրված է. «Որովհետև Քրիստոս Հիսուսում ո՛չ թլփատությունն (օրենքն) է մի բան կարող, և ո՛չ անթլփատությունը, այլ՝ *հավատքը, որ սիրով գործում է»:*

Հավատքը և սերն անկարելի է բաժանել... դրանք հավիտյան միահյուսված են: Աստված գիտեր, որ անկարելի է հետևել Քրիստոսին և սիրել այնպես, ինչպես որ Նա է սիրում՝ մեր ուժերով և կարողությամբ: Այդ պատճառով, Նա հավատքի չափ տվեց ամեն մեկիս: Հավատքը թուլասիրտների համար չէ: Հավատքը նշանակում է, որ մենք կարող ենք սիրել, նույնիսկ երբ սեր չենք զգում:

> «Լսե՞լ եք, որ ասվեց. «Քո ընկերոջը սիրի՛ր և քո թշնամուն ատի՛ր»: Բայց Ես ասում եմ ձեզ. «Սիրե՛ք ձեր թշնամիներին... և աղոթք արե՛ք ձեզ... հալածողների համար»» (Մատթ. 5.43,44):

Առաջին հայացքից Հին կտակարանի մոտեցումը լիովին տրամաբանական է. ատի՛ր քո թշնամուն, սիրի՛ր քո ընկերոջը... և վերջ: Բայց ավելի խորը մտածենք: Եթե դուք ավելի քան մեկ տարի ամուսնացած եք, հավանաբար գիտեք, որ երբեմն հավատք է պետք՝ ձեր կողակցին սիրելու համար: Երբ Ձոնը և ես նոր էինք ամուսնացել, ուշ երեկոներին մենք վիճում էինք անհեթեթ թեմաներով և հոգնած պառկում էինք քնելու՝ բավականին հեռու մեկս մյուսից, և քնելիս ասում էինք իրար.

«Ես հավատքով ներում եմ քեզ»:

Այդ ժամանակ դա նշանակում էր. «Ես գիտեմ, որ պետք է ներեմ քեզ, բայց պատրաստ չեմ թողնել իմ վիրավորանքը. այնպես որ, ես անում եմ դա հավատքով»: Ես դա չէի անում հավատքով. դա ընդամենը կրոնական սուր խոսք էր՝ ուղղված ամուսնուս: Իմ սրտի դիրքը սխալ էր, սակայն հնարավոր է, որ այդ սկզբունքը ճիշտ էր:

Ինչ-որ մեկին հավատքով ներելը վստահության քվե է, որ լավագույն օրերը դեռ առջևում են: Դրանով մենք նույնպես անձնատուր ենք լինում Աստծուն: Մենք ներում ստացանք հավատքով, այնպես որ, մենք նույնպես կարող ենք հավատքով ներել:

Եթե դուք ընտանիք ունեք, կլինեն պահեր, երբ հարկադրված կլինեք հավատքով սիրել ձեր եղբայրներին և քույրերին: Եթե դուք որևէ եկեղեցի եք հաճախում, կլինեն մարդիկ, որոնց դուք ստիպված կլինեք հավատքով սիրել: Ես ընկերներ ունեմ, որոնց հավատքով եմ սիրում (և փա՛ռք Աստծուն, նրանք անում են նույնը ինձ համար): Բայց Հիսուսի սերը չսահմանափակվեց մեր ընկերներով:

Հիսուսն անցավ այն բանից, ինչը դժվար է, և վստահաբար քայլ արեց դեպի անհնարինը: Նա պատվիրեց մեզ՝ սիրել մեր թշնամիներին:

Բոլորս թշնամիներ ունենք: Ես կուզեի, որ այդպես չլիներ, բայց թշնամիներն իրողություն են մեր կյանքում: Այս փաստը գիտակցելը չի հեշտացնում նրանց սիրելը: Թշնամուն սիրելու համար միանշանակ հավատք է պետք: Հեշտ չէ դարձնել մյուս երեսը, երբ թշնամու ձեռքը պատրաստ է կրկին հարվածել ձեզ: Միգուցե առաջին ապտակն անսպասելի լինի, բայց երբ դուք գիտեք, թե ինչ է լինելու, ձեզ հավատք է պետք, որ չարգելեք երկրորդ ապտակը կամ ինքներդ չապտակեք, հատկապես եթե ձեր մեջ կիսով չափ սիցիլիացու արյուն է հոսում:

Անհրաժեշտ է հավատք ունենալ, որպեսզի օրհնեք այն

մարդկանց, որոնք նախանձի կամ չարության պատճառով որոշում են անիծել, չարախոսել և քննադատել ձեզ (այս սկզբունքները վերաբերում են և՛ իրական կյանքին, և՛ սոցիալական ցանցերին): Անհրաժեշտ է հավատք ունենալ, որպեսզի բարություն անեք ձեզ ատողներին: Եվ անհրաժեշտ է հավատք ունենալ, որպեսզի թեկուզ ինչ-որ չափով անկեղծորեն աղոթեք նրանց համար, ովքեր շահագործում և հալածում են ձեզ: Ես չեմ ասում, որ դուք պետք է թույլ տաք ձեզ ցավ պատճառող մարդկանց՝ շարունակ ցավ պատճառեն ձեզ: Սիրե՛ք նրանց ապահով տարածությունից՝ հավատքով և աղոթքի միջոցով: Հիսուսը սիրում էր բոլորին, բայց մի՛ շփոթեք դա բոլորին վստահելու հետ:

Մեզ կօգնի գիտակցումն այն մասին, որ իրականում մենք չենք պայքարում տեսանելի երևույթների հետ, այլ՝ անտեսանելի խավար ուժերի: Նույնպես օգտակար է իմանալ, որ մենք միայնակ չենք մեր պայքարի մեջ:

Հենվելով «Լոգոս» ծրագրի խորը իմաստության վրա՝ ես կարողացա կազմել «սեր» բառի հունարեն համարժեք «ագապե»-ի պարզ գործնական սահմանում. «ընտրել սիրով վարվելը, նույնիսկ եթե մարդիկ արժանի չեն դրան, և նույնիսկ եթե դուք բախվելու եք մերժվածության և հիասթափության»: Սերը գործում է՝ անկախ մեր նախընտրություններից և հակվածություններից: Այս սահմանումը ներկայացնում է սիրո հիմունքները:

Մեր սերը բացում է նրանց սիրտն Աստծո սիրո համար:

Մարդիկ զգում են, երբ մենք սիրում ենք նրանց, և մեր սերը բացում է նրանց սիրտն Աստծո սիրո համար: Նրանք զգում են՝ արդյո՞ք մենք սիրում և ուշադրություն ենք դարձնում նրանց, թե՞ պարզապես ուզում ենք, որ նրանք փոխվեն: Ստանալով անկոտրում սեր մեր Հորից՝ մենք պետք է սիրենք այնպես, ինչպես որ սիրվել ենք.

Անվախ կերպով, քանի որ սիրո մեջ վախ չկա:

Անձնուրաց կերպով, քանի որ սերը եսակենտրոն չէ:

Ազատ վիրավորանքից, քանի որ սերը հեշտորեն չի վիրավորվում:

Հաղթական կերպով, քանի որ սերը երբեք չի պարտվում:

Անվերջ, քանի որ սերը հավիտենական է:

Եթե ազգերը սիրեին իրենց հարևաններին՝ ինչպես իրենց, նրանք դուրս չէին գա միմյանց դեմ: Չէին լինի պատերազմներ և նույնիսկ լուրեր պատերազմների մասին: Մեր դժվարությունների մեծ մասն առաջանում է, երբ փորձում ենք խաղաղություն հաստատել Խաղաղության Իշխանի թագավորության սահմաններից դուրս:

Չափազանց երկար ժամանակ մեր երկիրը բզկտվել է ռասայական խտրականության ոգու կողմից: Բոլոր նախապաշարմունքներն առաջանում են բարկության և անիրազեկության պատճառով, սակայն մի՛ կարծեք, որ դրանց ետևում գտնվող ոգին անմիտ է: Նա հատուկ ռազմավարություն ունի, որը սկսել է իրականացնել դեռ Եդեմի պարտեզում: Ադամի ու Եվայի անկումը սկիզբ դրեց բազմաթիվ պառակտումների: Դրանցից մեկն այն է, որ եղբայրները դուրս են գալիս իրար դեմ: Ռասայական խտրականությունը օձի հնարներից մեկն է: Մենք չպետք է տեղ տանք դրան և հանդուրժենք դա: Յուրաքանչյուր քրիստոնյա, որտեղ էլ նա ապրի, պետք է մերժի ռասայական խտրականության ցանկացած դրսևորում և անի հնարավորինս ամեն ինչ՝ դրան վերջ տալու համար:

Առատաձեռնություն

Ի վերջո, Ա Կորնթացիների 13.3-ում Պողոսը նշում է առատաձեռնության անժխտելի դրսևորումներ, օրինակ՝ մեր *ամբողջ* ունեցվածքն աղքատներին բաժանելը և մեր մարմինները նահատակության տանջալի կրակին մատնելը, և գրում է եկեղեցուն, որ եթե նման արարքների շարժառիթը սերը չէ,

դրանք որևէ օգուտ չեն տա մարդուն:

Նա ներկայացնում է իր հիմնական ասելիքը.

Ամեն ինչ – Սեր = Ոչինչ:

Առանց սիրո՝ մենք ոչինչ ենք:

Առանց սիրո՝ մենք ոչ մի օգուտ չենք տալիս:

Աստված անդրդվելիորեն պահանջում է, որ սերը լինի մեր բոլոր գործերի շարժառիթը:

Սա խիստ սթափեցնող է: Մենք պետք է լիովին անկեղծ լինենք. միայն հավիտենությունը ճշգրտորեն կկշռի մեր դրդապատճառները: Ես պատրաստ եմ խոստովանել, որ իմ կյանքում կարող են լինել տագնապալի չափերի հասնող խոսքեր և գործեր, որոնք զուրկ են հավիտենական արժեքից: Չկա ոչ մի պատճառ, թե ինչու դուք չպետք է սովորեք իմ սխալներից: Նման ադամանդի, որը գոլորշիանում է՝ ենթարկվելով ջերմության և թթվածնի ուժգին ազդեցությանը, մեկ օր մեր գործերը փորձվելու են Աստծո ներկայության ուժգին լույսով, որն ի հայտ կբերի մեր դրդապատճառները:

Աստված անդրդվելիորեն պահանջում է, որ սերը լինի մեր բոլոր գործերի շարժառիթը:

Ադամանդները հավերժական չեն

Այս պահին, երբ գրում եմ, իմ ձախ ձեռքի մատին այլ ադամանդե քարով մատանի է դրված: Ինչ-որ կերպով իմ խելահեղ կյանքի ընթացքում ես կոտրեցի առաջին մատանին: Եվ Սիցիլիայում, քառասունութերորդ տարեդարձիս, Ձոնը կրկին զարմացրեց ինձ, այս անգամ՝ օվալաձև ադամանդով:

Իմ արցունքաձև ադամանդե քարը ճաքեց՝ ինչ-որ բանի պատճառով: Այն արդեն դուրս էր գալիս իր շրջանակից, երբ տարա ապահովագրական ընկերություն, որտեղ այն գրանց-

ված էր: Սակայն ես այնքա՜ն զգացմունքորեն էի վերաբերվում այդ վնասված ադամանդին, որ ետ գնեցի: Հուսով եմ՝ մեկ օր ես նորոգման կտամ այդ ճաքած ադամանդը, որպեսզի այն կտրվի և ձևափոխվի: Ես կնվիրեմ իմ թոռնուհիներից մեկին, որպեսզի այն նոր պատմության սկիզբ դառնա:

Երեսունհինգ տարին երկար ժամանակ է ամուսնության համար:

Ես չեմ ձևացնի, որ կատարելապես սիրել եմ իմ ամուսնուն... ո՛չ, այդպես չի եղել:

Ունեցել ենք դժվար պահեր, երբ երկուսս էլ հուսահատված ենք եղել: Մեր կյանքում եղել են խիստ խոսքեր և դժվարին փուլեր, երբ մեր սերն ասես կոտրված ադամանդի է նմանվել: Եղել են այնպիսի պահեր, երբ ես նայում էի մեր սիրուն և չէի տեսնում փայլ կամ խոստումներ, այլ միայն՝ սուր եզրեր: Սակայն մենք չմնացինք մեր հուսահատության մեջ, այլ՝ աճ ունեցանք:

Մենք դեռ կատարյալ չենք, բայց ուժեղ և առողջ ենք: Մենք անդրդվելիորեն որոշել ենք, որ լավագույնս սիրելու ենք մեկս մյուսին: Մենք օգնություն ենք խնդրում և գնում ենք խորհրդատվությունների՝ նոր գործիքներ ձեռք բերելու և նոր գաղափարներ ստանալու համար: Եվ լավագույն կերպով սիրելը նշանակում է, որ երբ սխալներ ենք գործում, մենք առաջ ենք շարժվում՝ որոշում կայացնելով սովորել դրանցից: Ավելի հասունանալով՝ մենք այնպես ենք արել, որ մեր հարաբերությունները կառուցվեն մեր նվիրման վրա, ոչ թե՝ ընդհարումների: Ոչ ոք չի շահում, երբ մենք հաշվում ենք մեկս մյուսի սխալները և հատուցում ենք պահանջում իրարից:

Տարիների ընթացքում մենք որոշել ենք առանձնացնել մեր սխալներից այն դասերը, որոնք սերը սովորեցրել է մեզ: Ինչպես և ցանկացած փոխհարաբերության մեջ, երբեմն Զոնն էր ավելի մեղավոր, իսկ երբեմն՝ ես: Հարաբերությունների կենտրոնում երբեք չպետք է կշեռքի նժարները տանել այս կամ այն

կողմ՝ երկուսի մեղավորության չափը որոշելու համար: Մեր հարաբերությունների մեջ հազվադեպ են եղել այնպիսի պահեր, երբ ինձ կարելի էր մեղադրել չափից շատ սիրելու մեջ: Երբ խոսքը սիրո մասին է, մենք մշտապես աճելու տեղ ունենք:

Ես ուզում եմ ավելի շատ սիրել իմ ամուսնուն, ոչ թե ավելի շատ սիրահարված լինել նրան (իհարկե, դա նույնպես հրաշալի կլիներ): Ես հասկացել եմ, որ վտանգավոր է, երբ թույլ եմ տալիս իմ զգացմունքներին թելադրել իմ քայլերը: Մեր զգացմունքները՝ թոկին կապած շան պես, պետք է վարժված լինեն մեր գործերին հետևելու համար: Իսկ դա նշանակում է, որ սերն, ըստ էության, որոշում է:

Ջոնն ուզում է լավագույնս սիրել ինձ: Մենք ուզում ենք ցույց տալ մեր սերն Աստծո հանդեպ՝ լավագույնս սիրելով մեկս մյուսին: Թեև երկուսս ունենք այս ցանկությունը, բայց այն չի կատարվի, եթե մենք նորանոր պահանջներ ներկայացնենք իրար: Ես սովորեցի այս դասը շատ վաղ իմ կյանքում:

Իմ ծնողները շատ բարդ ամուսնություն են ունեցել: Ես հիշում եմ, որ տուն էի գալիս դպրոցից, և սառնարանի վրա կտրոնների, դպրոցական դասացուցակների և մեր տնային պարտականությունների կողքին փակցված էր մի պայմանագիր: Այն մանրամասն գրված ցուցակ էր, որում մայրս նշել էր բոլոր փոփոխությունները, որոնք ակնկալում էր իմ հորից: Օգտագործելով իր անշարժ գույքի գործակալի հմտությունները՝ մայրս իրավաբանական պայմանագրի պես մի փաստաթուղթ էր կազմել: Նա նույնիսկ վերջնաժամկետ էր նշել, որի լրանալուց առաջ հորս վարքը պետք է փոխված լիներ: Ծնողներս ստորագրել էին այդ փաստաթուղթը: Իմ մայրը հասել էր ճգնաժամային պահի: Նրա վերապահումները ողջամիտ կհամարվեին առողջ ամուսնության մեջ, բայց իմ ծնողների ամուսնությունը խիստ խոցված էր: Ես ասե՞լ եմ, որ իմ հայրը հարբեցող էր և հարյուր տոկոսանոց սիցիլիացի: Այդ փաստաթուղթը մնում էր իր տեղում, նույնիսկ երբ մեր ընտանիքի ընկերները և ազգականներն այցելում էին մեզ:

Կարիք չկար, որ սպասեի որոշված վերջնաժամկետին: Թեև ես դեռ տասներկու տարեկան էի, գիտեի, որ իմ հայրը դիտավորյալ ձախողվելու էր, և մայրս պատասխանատվության էր ենթարկելու նրան, որպեսզի երկուսն էլ ազատվեին սիրուց զուրկ ամուսնությունից: Ետհաշվարկը սկսվել էր, և մի քանի ամիս անց ծնողներս ամուսնալուծվեցին:

Առանց սիրո, անկարելի է արդարացնել նույնիսկ պարզորեն ներկայացված սպասումները: Ե՛վ ընկերության, և՛ ընտանիքի, և՛ ամուսնության մեջ սերը ողորմության և շնորհքի աղբյուրն է: Օրենքը բացարձակ պարզությամբ ներկայացրեց Աստծո պահանջները և հույսերը մեր հանդեպ, սակայն մենք ձախողվեցինք: Նույնիսկ այդ դեպքում, մշտապես կային մարդիկ, որոնք հաղթահարում էին օրենքի գրի սահմանափակումները և ճաշակում էին Աստծո բարությունը: Օրինակ, կանայք՝ Ռախաբը և Հռութը, և տղամարդիկ՝ Դավիթը և Աբրահամը, ի զորու էին պահել Աստծո օրենքն իրենց սրտով, թեև գործնականում նրանք ձախողվում էին: Պատահական չէ, որ նրանք հավատքի հսկաների թվում են, քանի որ հավատքը գործում է սիրով:

> «Հույսն էլ չի ամաչեցնում, որովհետև Աստծո սերը փռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու ձեռքով, որ տրվեց մեզ» (Հռոմ. 5.5):

Երբ մենք սիրում ենք, դա ոչ միայն լսվում է, այլև տեսնվում է:

Սերը ձգտում է մարդկանց

Դուք կարոտո՞ւմ եք, երբ որոշ մարդիկ չեն զանգահարում ձեզ: Ես՝ այո: Ես կարոտում եմ մարդկանց ձայնը, նրանց ձայնի տոնայնությունը և առոգանությունը: Վերջերս զգացի, որ պետք է զանգահարեմ մի գեղեցիկ երիտասարդ կնոջ, որի հետ պատրաստվում էի համաժողով անցկացնել: Այն պահին, երբ նա պատասխանեց իմ զանգին, լաց էր լինում: Մենք զրու-

ցեցինք, աղոթեցինք: Այդ պահին նա իրական մարդու հետ շփվելու կարիք ուներ: Եթե ես թերթեի նրա էջերը սոցիալական ցանցերում, երբեք չէի իմանա, որ նա ցավ էր զգում: Դուք չեք լսի մարդու լացի ձայնը՝ նայելով նրա լուսանկարին:

Սոցիալական ցանցերը պարզապես հարթակ են, որոնք երբեք նախատեսված չեն եղել մարդկային հպումը և հարաբերությունները փոխարինելու համար: Օգտագործե՛ք այն, որպեսզի կառուցեք ձեր հարաբերությունները, ոչ թե փոխարինեք դրանով ձեր շփումը մարդկանց հետ:

Սոցիալական ցանցերի միջոցով մարդկանց քարոզելը չի նշանակում, որ մենք կարող ենք անտեսել երես առ երես շփումը: Դժվար է հասցնել երկուսն էլ, և եթե դուք պետք է ընտրեք այս երկուսի միջև, խոսե՛ք այն մարդկանց հետ, ում տեսնում եք ձեր աչքերով: Ես լրջորեն մտահոգված եմ այն բանով, որ մենք ստեղծում ենք հայտնիների շուրջը պտտվող դիտելասիրական մշակույթ, որը վիրտուալ պարիսպներ է կառուցում՝ ստիպելով շատերին անտեսված զգալ իրենց:

Եկեք կառուցենք ցանկապատներ, ոչ թե պարիսպներ: Այսինքն, կառուցենք սահմաններ, ոչ թե խոչընդոտներ: «Լավ ցանկապատ՝ լավ հարևան» ասացվածքը նշանակում է, որ պետք է հարգել մեկը մյուսի հողատարածքը, ընտանի կենդանիներին և սեփականության սահմանները: Ցանկապատները կառուցվում էին, որպեսզի ներսում պահեին ընտանի կենդանիներին, ոչ թե դրսում թողնեին մարդկանց: Ցանկապատները բաժանում էին դաշտերը, սակայն թույլ էին տալիս երկու կողմերում գտնվող մարդկանց տեսնել իրար: Ինչ վերաբերում է սոցիալական ցանցերին, մենք պետք է կառուցենք ցանկապատ, ոչ թե պարիսպ: Մենք պետք է ունենանք այնպիսի սահմաններ, որոնց միջով, վրայով և նույնիսկ ներքևով կարելի է անցնել, բայց որոնք, միևնույն ժամանակ, պաշտպանում են մեզ կատաղած ցլերից:

Եկեք չտրամադրենք այնքան ժամանակ՝ բազմիոյուննե-

րին քարոզելու համար, որ մոռանանք մեկս մյուսի հետ զրուցելու արվեստը: Զանգահարե՛ք ինչ-որ մեկին: Թակե՛ք ինչ-որ մեկի դուռը: Գրկե՛ք ինչ-որ մեկին:

Սերը մտերմություն է պահանջում:

Զրուցե՛ք անծանոթ մարդկանց հետ. չէ՞ որ դուք անում եք դա սոցիալական ցանցերում: Խոսե՛ք իրական մարդկանց հետ մթերային խանութում: Բռնե՛ք նրանց ձեռքը: Գրկե՛ք և համբուրե՛ք ձեր ամուսնուն, երեխային, թոռանը: Խուտուտ տվեք նրանց և ստիպե՛ք ցած դնել իրենց «iPad»-ը կամ հեռախոսը: Երբ նրանք խնդրեն ձեզ ինչ-որ հաղորդում դիտել, փոխարենը զբոսանքի գնացեք նրանց հետ: Նայե՛ք մարդկանց աչքերին և նկատե՛ք նրանց: Հեռվից ատելը հեշտ է, իսկ սերը մտերմություն է պահանջում: Հիսուսը մեր օրինակն է, իսկ Նա երբեք չէր վախենում մոտենալ մարդկանց:

Դառնալ անկոտրում սիրո մեջ

Ես գիտեմ, որ մեր հաջորդ մեջբերումը Հռոմեացիների թղթից՝ շատ ծավալուն է, սակայն այս հատվածը փայլուն կերպով ցույց է տալիս, թե ինչպես սիրել մարդկանց: Եղե՛ք գթած, պատվող, ջանասեր, ջերմեռանդ, համբերատար, հարատևող և հյուրասեր: Երբեք վրեժ մի՛ լուծեք, խոնա՛րհ եղեք, բարի խորհո՛ւրդ ունեցեք, եղե՛ք խաղաղարար և հաղո՛րդ եղեք ձեր թշնամիների կարիքներին: Աստծո օգնությամբ եկեք սիրենք, ինչպես որ Նա սիրեց մեզ:

Եկեք Հռոմեացիների 12-րդ գլուխը դարձնենք մեր աղոթքը՝ խնդրելով Սուրբ Հոգուն ցույց տալ մեզ այն բնագավառները, որոնցում մեր սրտերը պետք է բաց լինեն:

Սիրելի երկնային Հա՛յր,

Ես ուզում եմ սիրել այնպես, ինչպես որ Դու ես սիրում: Ես

որոշում եմ կայացնում ապրել այսպես.

«Եղբայրասիրության մեջ իրար վրա գթած եղե՛ք, պատիվ տալու մեջ իրարից առաջ անցե՛ք: Ձանքի մեջ թույլ չլինեք, հոգով ջերմեռանդ եղե՛ք, Տիրոջը ծառայե՛ք: Հույսով ուրախացե՛ք, նեղությանը համբերե՛ք, աղոթքում հարատևե՛ք: Սրբերի պիտույքներին հաղորդ եղե՛ք, հյուրասիրությանը հետևե՛ք: Ձեզ հալածողներին օրհնե՛ք. օրհնե՛ք և մի՛ անիծեք: Ուրախացողների հետ ուրախացե՛ք, և լացողների հետ լացե՛ք: Իրար վրա միևնույն խորհուրդն ունեցե՛ք, բարձր բաները մի՛ խորհեք, այլ՝ խոնարհների հետ խոնարհվե՛ք, ձեր անձերում իմաստուն մի՛ եղեք: Մեկին չարի տեղ չար մի՛ հատուցեք, բոլոր մարդկանց առջև բարի խորհուրդ ունեցե՛ք: Եթե կարելի է, որքան ձեզնից է կախված, բոլոր մարդկանց հետ խաղաղություն ունեցե՛ք: Ձեր անձերի համար վրեժխնդրություն մի՛ արեք, սիրելինե՛ր, այլ բարկությանը տեղ տվեք, որովհետև գրված է. «Վրեժխնդրությունն Իմն է, Ես հատուցումը կտամ,- ասում է Տերը»: Արդ, եթե քո թշնամին սոված է, հաց տուր նրան, և եթե ծարավ է, ջուր տուր նրան, որովհետև այս անելով՝ կրակի կայծեր կժողովես նրա գլխի վրա: Մի՛ հաղթվիր չարից, այլ բարիով հաղթի՛ր չարին» (Հռոմ. 12.10-21):

6

ԱՆԿՈՏՐՈՒՄ՝ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Մենք չենք կարող սիրել Աստծուն՝ առանց ատելու այն, ինչ Նա է ատում»:

Չարլզ Սփերջեն

Ես գիտեմ, սա խիստ արտահայտություն է: Ես նույնպես լիովին հանկարծակիի եկա, երբ կարդացի այն, բայց անհնար է սիրել Աստծուն, եթե չենք ատում այն, ինչ Նա է ատում: Թույլ տվեք պատմել, թե ինչպես այս երկու իրողությունների միջև պայքարը պարզ դարձավ ինձ համար: Ես նոր էի ավարտել նախորդ գլուխները սիրո մասին, երբ լսեցի Սուրբ Հոգու շշնջոցը. «Լի՛զա, Ես նույնպես անկոտրում եմ ատելության մեջ»:

Իմ սիրտը մի պահ կանգ առավ:

«Ինչպե՞ս մեր Աստված, Ով սեր է... կարող է ատել»:

Ես անմիջապես հիշեցի մի խոսք Առակաց գրքից՝ որպես պատասխան. «Վեց բան կա, որ Տերն ատում է...»: Հաճախ

չեմ մեջբերում այս հատվածը: Ես անմիջապես բացեցի իմ Աստվածաշնչի ծրագիրը, պատճենեցի չորս խոսք Առակաց 6-րդ գլխից, տեղադրեցի դրանք նոր տեքստային ֆայլի մեջ, և դրանով ամեն ինչ ավարտվեց:

Մենք անցկացնում էինք մեր արձակուրդը Ֆլորիդայում, և տասնմեկ հոգով տեղավորվել էինք մեկ առանձնատանը: Ես գրում էի մեր ընկերներից մեկի վագոն-տնակում և մոռացել էի վերցնել իմ հեռախոսը: Երբ տուն վերադարձա, ես բազմաթիվ տեքստային հաղորդագրություններ էի ստացել:

Դրանցից մեկն իմ ընկեր ռաբբի Բրայանից էր: Նա գրում էր, որ Սուրբ Հոգին ցույց է տվել իրեն, որ ես գիրք էի գրում, և խրախուսեց ինձ հետևել այն նոր մտքին, որը ստացել էի այդ օրը: Առանց իմանալու, թե ինչի մասին է խոսքը՝ նա հավաստիացնում էր ինձ. «Դա հակաթույն է, որը կհակառակվի եկեղեցուն ներարկած թույնին, որը Աստվածաշնչի սրբազան իմաստությունը փոխարինում է աշխարհիկ խաբեությամբ»: Նա շարունակում էր. «Այս վճռական և ճգնաժամային պահին մենք ժամանակ չունենք, որ ձգտենք ընդունված լինել այս աշխարհի կողմից և համապատասխանել այս հասարակության անառողջ պատկերացմանը այն մասին, թե ինչպիսին պետք է լինի հավատացյալը: Սա գայթակղություն է՝ հիմնված մեր եսասիրության և անապահովության զգացումի վրա: Փոխարենը, մենք պետք է թույլ տանք, որ Աստծո *պատկերը* որոշի, թե ում պետք է նմանակենք, և որ Աստծո *նմանությունը* սահմանի, թե ինչպես պետք է վարվենք այս աշխարհում»:

Հաջորդ առավոտյան, նախքան գրելը և սուրբգրային հատվածներ որոնելը, ես աղոթեցի. «Երկնային Հա՛յր, խնդրում եմ, խոսի՛ր ինձ հետ: Իմ առաջին արձագանքն այն է, որ ատելությունն անհամատեղելի է այնպիսի Աստծո հետ, որը սեր է, սակայն Առակաց գրքում ես հստակ տեսնում եմ, որ կան բաներ, որոնք Դու ատում ես: Սովորեցրո՛ւ ինձ, Հիսուսի անունով, ամե՛ն»:

Հազիվ էր «ամեն» բառը դուրս եկել իմ շուրթերից, Սուրբ Հոգին սկսեց խոսել: Ես հնարավորինս արագ սկսեցի գրել այն, ինչ լսում էի: Ահա հիմնական թեմաները, որոնք ցանկանում եմ ուսումնասիրել այս գլխում:

Աստված ատում է այն ամենը, ինչը կործանում է սերը:

Աստված ատում է այն ամենը, ինչը կործանում է սերը:

Աստված ատում է այն ամենը, ինչը կործանում և վնասում է նրանց, ում Ինքը սիրում է:

Աստված ատում է այն ամենը, ինչը խեղաթյուրում է Իր պատկերը և աղավաղում է մեր ինքնությունը:

Կարճ ասած՝ մեր Հայրն ատում է այն ամենը, ինչն աղավաղում և կործանում է սերը:

Աստված սիրում է մարդկանց: Աստված սիրում է կոտրված մարդկանց: Աստված սիրում է կապված մարդկանց: Աստված սիրում է մեղավորներին: Աստված սեր է, իսկ սերը երբեք չի ատում մարդկանց, քանի որ մարդիկ Աստծո սիրո առարկաներն են:

Աստված սիրում է ամեն *մեկին*, բայց Նա չի սիրում ամեն *ինչ:*

Արարչագործության սկզբում Աստծո բոլոր արարածները բարի էին և մեր բարօրության համար էին: Ցավոք, կարիք չկա ասել ձեզ, որ մենք այլևս չենք քայլում Եդեմի կուսական հողի վրա: Մեր ոտքերի տակի հողն իսկ աղաղակում է ցավագին՝ փափագելով իր վերականգնմանը: Նույնպես, յուրաքանչյուր մարդու սիրտը հուսահատորեն փափագում է ճանաչել և վերապրել ճշմարիտը, արդարը և գեղեցիկը: Մենք կամենում ենք, որ սերը լիովին արտահայտվի մեր կյանքի ամեն բնագավառում: Հնարավո՞ր է արդյոք, որ մենք վերածել ենք սերը կուռքի և սկսել ենք սեր անվանել այն, ինչը սեր չէ: Արդյո՞ք մենք հավատացել ենք, որ սիրով ենք վարվում, այնինչ

իրականում այդպես չի եղել: Աստված սեր է, բայց սերն Աստված չէ: Մենք երկրպագում ենք Աստծուն, ոչ թե սիրուն: Ոչինչ չի կարող բաժանել մեզ Աստծո սիրուց Հիսուս Քրիստոսում (տե՛ս Հռոմ. 8.39): Այնուամենայնիվ, մենք վտանգի մեջ ենք, երբ առանձնացնում ենք սերը մեր Աստծո չափանիշներից:

Աստված սեր է (տե՛ս Ա Հովհ. 4.8): Աստված լափող կրակ է (տե՛ս Եբր. 12.29): Նրանում ենք մենք ապրում (տե՛ս Գործք 17.28): Ի մի բերելով այս ճշմարտությունները՝ չափազանցություն չի լինի ասելը. «Մենք ապրում ենք Աստծո սիրո լափող կրակի մեջ»:

Ինչո՞ւ ատելություն

Ատելությունը զգացմունքային և բացասական բառ է: Այն անկարելի է չեզոք անվանել: Օրինակ, լսելով այն՝ ես անմիջապես մտաբերում եմ «հանցագործություն՝ ատելության հողի վրա» արտահայտությունը: Որպեսզի խոսենք այս մասին, անհրաժեշտ է, որ դուք չհենվեք ատելության հետ կապված ձեր անձնական փորձառության վրա և դադարեք կապակցել ատելությունը որևէ մարդու հետ: Մի կողմ դրեք այն ամենը, ինչ գիտեք ատելության և ատելությամբ լցված արարքների մասին, որպեսզի կարողանաք հասկանալ ճշմարտությունը: Դուք համաձա՞յն եք, որ սիրո սահմանումը խեղաթյուրվել է թե՛ մեր մշակույթի, թե՛ մարդկանց կողմից: Դուք համաձա՞յն եք, որ «սեր» բառը սխալմամբ է գործածվում: Չափազանց հաճախ մարդիկ ասում են, որ սիրում են՝ չունենալով համապատասխան գործեր և նվիրում: Երբ որևէ բառ սկսում է չափազանց հաճախ գործածվել, դրա իմաստը կարող է թուլանալ և նույնիսկ կորսվել: Որպեսզի ճշմարտապես սիրենք՝ այնպես, ինչպես որ Աստված է սիրում, մենք չենք սիրի այն, ինչ Նա ատում է:

Ինչպես որ սերն անկարելի է սահմանել՝ առանց հաշվի առնելու Արարչի հավիտենական էությունը, նույն կերպով,

մենք պետք է դիմենք Աստվածաշնչին՝ ատելությունը սահմանելու համար: Եկեք մի պահ մի կողմ դնենք ատելության հետ կապված մեր մարդկային *փորձառությունը* և դիտարկենք այս բառի *իմաստը:*

Որպես գոյական՝ դրա իմաստն ընդգրկում է այնպիսի բացասական բառեր, ինչպիսիք են թշնամանքը, անբարյացակամությունը, հակակրանքը և զզվանքը: «Ատել» բայը նշանակում է արհամարհել, հակակրանք զգալ, խորշել և նողկալ:

Առաջին հայացքից կարելի է հեշտորեն ենթադրել, որ այս հատկանիշներից ոչ մեկն առնչություն չունի Աստծո հետ, Ով ոչ միայն սիրում է, այլև սեր է: Այնուամենայնիվ, ես որոնեցի հատվածներ Աստվածաշնչում և հայտնաբերեցի հետևյալը: Մեր Հայրն ատում է՝

> այն, ինչը խաթարում է արդարադատությունը և ճշմարտությունը,
>
> երբ այրիները, որբերը և օտարերկրացիները ճնշված են,
>
> տարեցներին անարգելը և սեփական ընտանիքն անտեսելը,
>
> այն ամենը, ինչը խեղաթյուրում է Նրա բարությունը և արատավորում է Նրա պարգևները,
>
> երբ սերը վերածվում է եսասիրության, և ընկերները թշնամիներ են դառնում,
>
> այն, ինչը փոխում է Նրա պատկերը և աղավաղում է մերը,
>
> երբ չարը բարի է անվանվում, և անմեղները սպանվում են,
>
> երբ ամբարտավանությունը և հպարտությունն այլասերում են մեզ:

Այս կետերը ոչ թե սպառիչ ցուցակ են, այլ ընդհանուր ամփոփում: Որպես ելակետ՝ մենք կարող ենք ասել, որ Աստված ատում է այն ամենը, ինչը խեղաթյուրում է սերը, քանի որ այն,

Աստված ատում է այն ամենը, ինչը խեղաթյուրում է սերը, քանի որ այն, ինչն արժեզրկում է սերը, արժեզրկում է մեզ:

ինչն արժեզրկում է սերը, արժեզրկում է մեզ:

Երբ սուրբգրային հատվածներ էի որոնում, որպեսզի գաղափար կազմեի այն մասին, թե ինչ է Աստված ատում, ես ցնցվեցի՝ պարզելով, որ Աստվածաշնչում օգտագործվում է ավելի քան երեք հազար բառ՝ նկարագրելու համար այն, ինչն արժեզրկում է սիրո արդյունքները:

Երբ սերն արժեզրկվում է, մեր պատկերացումն Աստծո մասին, որը սեր է, նույնպես ցավալիորեն աղավաղվում է: Արդյունքում այն զավակները, որոնք փնտրում են Հորը, շփոթվում են: Ի վերջո, Աստծո ատելության նպատակն է պաշտպանել այն, ինչ Նա սիրում է: Այդ դեպքում, ինչո՞ւ էի ես զարմանում: Յուրաքանչյուր սիրող ծնող ատում է ցանկացած չարիք, որը ձգտում է կործանել իր երեխաներին: Հին կտակարանը բաղկացած է ոչ թե բարկացկոտ Աստծո խոսքերից, այլ սիրող Հոր հորդորներից, Ով կամենում է, որ Իր զավակներն ունենան լավագույնը կյանքում: Հիսուսը չփոխեց Աստծո կարծիքը Նոր կտակարանում: Հիսուսը եկավ, որպեսզի ցույց տար Հոր սիրտը:

Ոչ մի ծնող չի կամենում, որ իր զավակները բախվեն դժվարությունների: Այնուամենայնիվ, մեր մեծագույն թշնամին կյանքի նեղությունները և մարտահրավերները չեն: Երկրային նեղությունները կարող են ծառայել որպես հնոց, որը կդրդի Աստծո զավակներին խոնարհվել և աղոթել: Մարտահրավերները կարող են նորովի բացել մեր աչքերը, որպեսզի նոր տեսողություն ստանանք՝ կարդալով Աստծո Խոսքը: Մեր իրական թշնամիներն ավելի աննկատ են: Խոսքն այնպիսի չարիքների մասին է, ինչպիսիք են հպարտությունը, փոխզիջումը, կռապաշտությունը և անբարոյությունը: Այս խեղաթյուր-

ված երևույթները ստում են Աստծո զավակներին՝ ակնարկելով, որ մենք կարող ենք ծառայել երկու տերերի՝ Աստծուն և այս աշխարհի համակարգին:

Եկեք անկեղծ լինենք. մի նոր քաղցած սերունդ է եկել անապատ: Նրանք դեգերում են հին ճանապարհներով՝ հիասթափված այն ամենից, ինչ տեսել են ընտանիքում, կառավարության մեջ և նույնիսկ՝ իրենց եկեղեցական համայնքներում: Այս քաղցի փուլում թշնամին վերցրել է նրանց, տարել է վեհ բարձունքները և խոստացել է ամբողջ աշխարհը, եթե նրանք պարզապես խոնարհվեն և երկրպագեն նրա կառուցած եսակենտրոնության զոհասեղանի մոտ: Մեր մշակույթը կրկնում է թշնամու առաջարկը՝ խրախուսելով խաղաղություն հաստատել այնտեղ, որտեղ չի կարող խաղաղություն լինել, և սուրբ անվանել այն, ինչը սուրբ չէ: Մեր մշակույթը դիմում է մեր դատողությանը և առաջարկում է մերժել այն Գրքի սահմանները, որն այսօր հնաոճ են անվանում, և Նրա վաղեմի խոսքերը, որին այսօր լուռ Աստված են համարում:

Մի նոր քաղցած սերունդ է եկել անապատ:

Լույսն ատելը

Եթե մենք ճշմարտապես սիրում ենք լույսը, պետք է պատրաստ լինենք, որ խավարն ատելու է մեզ: Եթե մենք ցանկանում ենք, որ այս աշխարհը սիրի մեզ, պետք է սիրենք այն, ինչ ինքն է սիրում: Սակայն սա դեռ վերջը չէ. մենք նաև պետք է ատենք այն, ինչ ատում է այս աշխարհը: Եթե չանենք երկուսն էլ, այս աշխարհն ատելու է մեզ: Մենք պետք է հավանություն տանք այն ամենին, ինչին հավանություն է տալիս այս աշխարհը. հակառակ դեպքում, այն դուրս կգա մեր դեմ:

«Աստծո լույսը եկել է այս աշխարհ, բայց մարդկանց սրտերը սիրում են իրենց խավարն ավելի, քան Լույսը, որովհետև

նրանք ցանկանում են, որ խավարը ծածկի իրենց չարությունը: Այնպես որ, չար մարդիկ ատում են Լույսը և փորձում են թաքնվել, քանի որ նրանց կյանքը լիովին բացահայտվում է Լույսի մեջ: Բայց նրանք, ովքեր սիրում են Ճշմարտությունը, կգան Լույսի մեջ և կընդունեն դրա բացահայտումը, քանի որ Լույսը կհայտնի, որ իրենց պտղաբեր գործերն արվել են Աստծո կողմից» (Հովհ. 3.19-21, ՏՊՏ):

Երբ մենք վախենում ենք բացահայտումից, ավելի հեշտ է սիրել խավարը և մեղադրել լույսը՝ իր բացահայտող հատկության համար: Ոմանք որոշում են լույս անվանել խավարը: Ես հասկանում եմ դա: Հեշտ չէ, երբ մատնացույց են անում ձեր սխալները, սակայն երբեմն դա օգտակար է: Ի վերջո, այն, ինչ թաքնված է խավարի ներքո, բերվելու է լույսի մեջ: Ավելի լավ է՝ այսօր թույլ տվեք Սուրբ Հոգուն զբաղվել ամեն մի խավար բնագավառով: Մի՛ վախեցեք: Մենք ունենք հավաստիացում, որ նույնիսկ խավարը լույս է Նրա համար:

«Եվ եթե ասեմ՝ թող խավարն ինձ ծածկի, այն ժամանակ գիշերն էլ լույս կլինի իմ շուրջը:

Մութն էլ Քեզ համար խավար չէ, գիշերն էլ ցերեկվա պես լույս է, խավարն էլ լույսի պես է Քեզ համար» (Սաղմ. 139.11,12):

Սուրբ Հոգին կարող է լուսավորել մեր ուղին և առաջնորդել մեզ մեր ճանապարհներում: Մեր վախը հաղթահարելու միակ միջոցն է՝ ընդունել լույսը մեր կյանքի բոլոր բնագավառներում: Երբ մենք որոշում կայացնենք, որ ատելու ենք խավարի բոլոր դրսևորումները մեր կյանքում, մենք կընդունենք լույսը և կշրջվենք այն ամենից, ինչ լույսը մատնացույց կանի: Սերը ծաղկունք է ապրում նվիրված սրտում. սա է պատճառը, որ Աստված ատում է այն ամենը, ինչը պառակտում է մեր նվիրումը: Առաջին եկեղեցին հասկանում էր սա: Կարդացե՛ք Հիսուսի եղբայր Հակոբոս առաքյալի եռանդագին կոչը.

«Դուք հոգևոր շնացողներ եք դարձել, որոնք ունեն սիրավեպ՝ անսուրբ հարաբերություն այս աշխարհի հետ: Չգիտե՞ք, որ այս աշխարհի արժեքների հետ սիրախաղեր անելով՝ դուք հակառակվում եք Աստծուն: Ով որոշում է լինել այս աշխարհի ընկերը, դարձնում է իրեն Աստծո թշնամին: Մի՞թե ձեզ համար ոչինչ է այն խոսքը, որն ասում է. «Այն Հոգին, որ Աստված փչեց մեր սրտերում, խանդոտ Սիրեկան է, Ով կամենում է, որ մենք ամբողջովին Իրենը լինենք»» (Հակոբ. 4.4,5, ՏՊՏ):

Ոմանք կպնդեն, որ այս խոսքերը չեն վերաբերում մեր օրերին: Նրանք պատճառաբանում են, որ մենք զարգացել ենք՝ հասնելով ավելի բարձր մակարդակի: Սակայն նայելով շուրջս՝ ես չեմ կարողանում հիշել այնպիսի ժամանակ, երբ մարդկությունն այս աստիճան խորտակված է եղել: Երկնային արժեքները խիստ տարբերվում են երկրային արժեքներից: Այնպես որ, այս հատվածը զգուշացնում է մեզ նույնիսկ սիրախաղ չանել այս աշխարհի արժեքների հետ:

Երկնային արժեքները խիստ տարբերվում են երկրային արժեքներից:

Առակաց 6-րդ գլխից ես սկսեցի իմ որոնումն այն մասին, թե ինչ է ատում մեր սիրո Աստված: Միասին կարդանք այս հատվածը.

«Վեց բան կա, որ Տերն ատում է, և յոթը զզվելի են Նրա Հոգու առջև. ամբարտավան աչքեր, ստախոս լեզու և անմեղ արյուն թափող ձեռքեր, չար խորհուրդներ հնարող սիրտ, չարության համար վազելու շտապող ոտքեր, ստեր փչող անիրավ վկա և եղբայրների մեջ կռիվներ գցող» (Խս. 16-19):

Իսկ այժմ ավելի մանրամասն դիտարկենք այս յոթը.

Հպարտություն

Աստված ատում է հպարտությունը, քանի որ հպարտության պատճառով մարդը հակառակվում է սիրո վերափոխող զորությանը: Հակոբոսի գիրքը հայտնում է մեզ, որ Աստված հակառակվում և ընդդիմանում է հպարտներին, սակայն շնորհք է տալիս նրանց, ովքեր խոնարհ են և պատրաստ են սովորել (տե՛ս Հակոբ. 4.6):

> «Հասարակ քրիստոնեություն» գրքում Կ. Ս. Լյուիսը գրում է. «Որովհետև հպարտությունը հոգևոր քաղցկեղ է. այն քայքայում է սիրելու կարողությունը, գոհունակությունը և նույնիսկ՝ ողջամտությունը»[1]:

Իհարկե, մեր Հայրը չի կարող չատել մեր վերափոխման նման խեղաթյուրիչ թշնամուն:

Հպարտությունը պատկերելու համար, Առակաց 6.17-ն օգտագործում է «ամբարտավան աչքեր» արտահայտությունը: Նման մարդիկ վերևից ներքև են նայում և արհամարհում են մյուսներին: «Ավյուն» թարգմանությունը ներկայացնում է սա հետևյալ կերպով. «մարդկանց ցածրացնելը և սեփական անձը գերազանց համարելը»: Այնուամենայնիվ, մի՞թե մենք չենք տեսնում այս հայացքը գրեթե բոլոր գովազդներում և նորաձևության ամսագրերում:

Ահա ևս մի քանի հատվածներ, որոնք խոսում են հպարտության կործանարար ազդեցության մասին:

> «Տիրոջ երկյուղը չարն ատելն է.
> հպարտությունն ու ամբարտավանությունը և չար գնացքը
> և նենգավոր բերանը Ես ատում եմ» (Առակ. 8.13):

Ի վերջո, հպարտությունը կաղավաղի մեր խոսքը և կտանի մեզ չարության ճանապարհով:

«Աչքերի ամբարտավանությունը և սրտի հպարտությունը, որ ամբարիշտների լույսն է, մեղք է» (Առակ. 21.4):

Այս խոսքը ցույց է տալիս, որ մեղքը թաքնված է հպարտության «լույսի» ետևում և խավարեցնում է անօրեն մարդկանց միտքը:

«Եթե փորձես ուղղել ամբարտավան և ծաղր անող մարդուն, սպասիր բարկացած վիրավորանք՝ ի պատասխան: Եվ եթե փորձես հանդիմանել չար մարդուն, մի՛ զարմացիր, եթե միայն ապտակ ստանաս երեսիդ: Այնպես որ, նույնիսկ մի՛ փորձիր ուղղել ծաղրողին, որովհետև նա միայն կատի քեզ դրա համար: Բայց ուղղի՛ր իմաստուններին. նրանք է՛լ ավելի կսիրեն քեզ» (Առակ. 9.7,8, ՏՊՏ):

Հպարտությունը դրդում է մեզ պաշտպանվել, դարձնում է ամբարտավան և կուրացնում է, որպեսզի չտեսնենք մեր իրական վիճակը: Ծաղրը և ամբարտավանությունը հպարտության կողմնակիցներն են: Հպարտությունն ընդունում է ցանկացած խրատ՝ որպես վիրավորանք: Խրատը երբեք հաճելի չէ, բայց մենք կարող ենք սովորել սիրել դրա պտուղը՝ իմաստությունը:

Որպեսզի սիրենք այն, ինչ սիրում է մեր Հայրը, մենք պետք է առաջին հերթին փակենք հպարտության դուռը, քանի որ այն կործանման է տանում:

Սուտ

Ստախոս լեզուն վերաբերում է և՛ ստելուն, և՛ ասեկոսեներ տարածելուն: Իմ ընկե՛ր, մեր օրերում և ժամանակաշրջանում չենք կարող չափից շատ զգույշ լինել այն հարցում, թե ինչ ենք մենք ասում, կրկնում և տեղադրում սոցիալական ցանցերում: Այսօր ստերը ճանապարհորդում են տեղեկատվական մայրուղով և զրկում են մարդկանց բարի անունից՝ տարածելով վեճեր և տարաձայնություններ:

Գոյություն ունի մի լավ սկզբունք. «Եթե չգիտես, ուշադրություն մի՛ դարձրու»: Աստված ատում է միտումնավոր կերպով չարախոսելը և ստելը: Առակաց 12.22-ում գրված է. «Զզվելի են Տիրոջ համար ստախոս շրթունքները, բայց հավատարմություն անողները հաճելի են Նրան»: Այս խոսքը ցույց է տալիս, որ սուտը հաճախ անհավատարմության ծածկոց է: Աստված ճշմարտության հեղինակը և հիմնադիրն է: Ստելով՝ մենք վարվում ենք մեր նախկին վերակացուի՝ սատանայի պես, որը ստի հայրն է, քանի որ նրանում ճշմարտություն չկա: Սուտն անեծք է սիրո համար: Սուտն անհամատեղելի է սիրո հետ: Եվ ահա ամենասարսափելի փաստը ստի մասին. երբ մենք երկար ժամանակ ստում ենք, կորցնում ենք ճշմարտության զգացողությունը և, փաստորեն, խաբում ենք ինքներս մեզ:

Սուտն անհամատեղելի է սիրո հետ:

Անմեղ արյուն թափող ձեռքեր

«Անմեղ արյուն թափող ձեռքեր» արտահայտությունը նշանակում է անմեղ մարդկանց սպանելու կանխամտածված կամ այլասերված ցանկություն: Առակաց գրքի ժամանակաշրջանում սա վերաբերում էր լայնորեն տարածված երեխաների զոհաբերությանը Բահաղ-Մողոքի և Աստարովթի երկրպագուների կողմից, որն ընդօրինակում էին նաև Իսրայելցիները (տե՛ս Գ Թագ. 14): Այս պաշտամունքն ընդգրկում էր նաև սեռական օրգիաներ, որոնց արդյունքում աշխարհ եկած նորածինները զոհաբերվում էին Մողոքի կրակի մեջ, և նրանց հուսահատ ճիչերը խլացվում էին հեթանոսական քրմերի թմբուկների ձայներով: Անհավատալի է թվում, որ մայրը կարող էր նետել իր ողջ մանկանը կրակի բոցերի մեջ, սակայն Եսայի մարգարեն գրում է այս սովորույթի մասին.

«Դուք գոհացնում եք ձեր կիրքը ցանկացած վայրում, որում

> շուք եք գտնում, և շնանում եք ձեր ուզած պահին: Դուք սպանում եք ձեր երեխաներին ցանկացած հարմար պահին. ամեն մի քարանձավ և խորշ հարմար է ձեզ համար... Դուք ելաք բարձր սարի վրա՝ ձեր պիղծ սեռական կրքի և մահվան կրոնի պաշտամունքը կատարելու համար: Փակ դռների ետևում դուք հավաքում եք ձեր թանկարժեք աստվածներին և աստվածուհիներին: Լքելով Ինձ՝ դուք անցել եք ամեն սահման՝ մերկանալով և դարձնելով ձեր անկողինը ձեր երկրպագության վայրը» (57.5,7,8, MSG):

Արդյո՞ք մենք երկրպագության վայր ենք դարձրել մեր խառնակ անկողինները՝ հարկադրելով անմեղ երեխաներին վճարել դրա համար:

Այսօր չկան թմբուկներ և քարանձավներ: Մենք չափազանց քաղաքակիրթ ենք դարձել դրանց համար: Անմեղ արյունը թափվում է մոր որովայնի լռության մեջ: Մայրը կարող է ընտրել՝ քնա՞ծ լինել, թե՞ արթուն այդ «վիրաբուժական գործողության» ժամանակ: Մանկանը արգանդի մեջ սպանելը նշանակում է, որ և՛ մայրը, և՛ հայրը չեն լսի կամ չեն տեսնի իրենց երեխայի մահը: Գրեթե հիսուն տարվա ընթացքում մեր երկիրը հաստատել է արհեստական վիժեցման լայնատարած պրակտիկա: Արհեստական վիժեցման կողմնակիցները հաճախ են անվանել դա կնոջ «սրբազան ծեսը» կամ «սրբազան խորհուրդը»[2]: Այս արարքը նույնիսկ ներկայացվել է որպես «կրոնական ազատություն»: Թող Աստված օգնի մեզ: Մենք որոշում ենք կայացնում ատել այս արարքը, ոչ թե դրանում ներգրավված մարդկանց: Սերն աջակցում է այն համարձակ երիտասարդ կանանց, ովքեր որոշում են կյանք պարգևել, ինչպես նաև գործում է՝ փրկելու համար նրանց, ովքեր անմեղ արյուն են թափել:

Չար խորհուրդներ հնարող սիրտ

Չար խորհուրդներ հնարող սիրտը վերաբերում է քմա-

հաճ և դիտավորյալ կերպով չարիք ծրագրելուն՝ ինչ-որ մեկին վնաս հասցնելու համար: Աստված ծրագիր ունի մեր կյանքի համար, որի նպատակն է օգուտ տալ մեզ, ոչ թե վնաս հասցնել: Ահա թե ինչու է պատվիրված օրինել մեզ չարչարողներին և հալածողներին, ոչ թե՝ անիծել: Երբ չարիք ենք ծրագրում ինչ-որ մեկի դեմ, մենք հակառակվում ենք Աստծո կամքին թե՛ նրա, թե՛ մեր կյանքում:

Նույնիսկ եթե ամեն աչք այս աշխարհում փակված լինի, կա Մեկը, Ով տեսնում է:

Չարության համար վազելու շտապող ոտքեր

Աստվածաշնչում հստակ գրված է, որ չարությունից պետք է շրջվել և փախչել, ոչ թե վազել դրա մոտ: «Վազել» բառն օգտագործելու փոխարեն, «Ավյուն» թարգմանությունը նկարագրում է Առակաց 6.18-ը մեզ համար ավելի հասկանալի բառերով. «Չարախնդորեն անել այն, ինչն ակնհայտորեն սխալ է»: Որոշ մարդիկ հպարտանում են այն գործերով, որոնց համար անպատիժ են մնացել: Եթե նրանք չեն բռնվում, սկսում են մտածել, որ իրենք խելացի են: Նրանք չեն հասկանում, որ նույնիսկ եթե ամեն աչք այս աշխարհում փակված լինի, կա Մեկը, Ով տեսնում է:

Անիրավ վկաներ

Ես զարմացել էի, որ Առակաց 6-ում Աստծո համար ատելի բաների թվում նշվում է և՛ ստախոս լեզուն, և՛ անիրավ վկան: Մի՞թե դրանք գրեթե նույնը չեն: Երբ ուսումնասիրեցի դրանց տարբերությունը գտնելու համար, պարզվեց, որ անիրավ վկան նա է, ով ստում է երդման ներքո: Նա պարզապես չի ստում մարդկանց. նա ստում է Աստծուն և խեղաթյուրում է

արդարադատության ընթացքը: Մեր արդար Աստված ատում է անարդարությունը: Ահա թե ինչու ենք մենք երդվում ամերիկյան դատական ատյաններում. «Ես երդվում եմ, որ իմ տված վկայությունը լինելու է ճշմարտություն, ամբողջ ճշմարտությունը, և ոչինչ՝ բացի ճշմարտությունից, և թող Աստված օգնի ինձ»: Աստված է գերագույն Դատավորը: Այսպիսով, կեղծ վկայություն տալով՝ մենք խարխլում ենք արդարադատության հիմքը, որն Աստված սահմանել է բոլորի համար (կարդացե՛ք նաև Ելից 18.21, Առակ. 17.15):

Եղբայրների մեջ կռիվներ գցող

Աստված նույնպես ատում է եղբայրների մեջ տարաձայնություններ առաջացնելը: Ես լիովին համոզված եմ, որ թեև Առակաց 6-րդ գլխում գրված է «եղբայրներ», սա վերաբերում է նաև քույրերին: Տարաձայնության հականիշը համաձայնությունն է, որը նշանակում է համերաշխություն, ներդաշնակություն և միասնություն: Դավիթ թագավորն առաջարկում է հակաթույն՝ տարաձայնություններ առաջացնող մարդկանց գայթակղությանը չտրվելու համար.

> «Ես ունայն մարդկանց հետ չեմ նստում և կեղծավորների հետ չեմ գնում:
>
> Ես ատում եմ չարերի ժողովքը և ամբարիշտների հետ չեմ նստում:
>
> Լվանում եմ ձեռքերս անմեղությամբ և Քո սեղանի չորս կողմով պտույտ եմ տալիս, ո՛վ Տեր:
>
> Որ օրհնության ձայնը հնչեցնեմ և Քո բոլոր սքանչելիքները պատմեմ:
>
> Ո՛վ Տեր, ես սիրում եմ Քո տան բնակությունը և Քո փառքի բնակվելու տեղը»:
>
> (Սաղմ. 26.4-8)

Մենք խուսափում ենք ստախոսների, կեղծավորների և չարագործների հետ հաղորդակցվելուց՝ սիրելով Աստծուն և սիրելով Աստծո տունը: Երբ միասին հավաքվում ենք, ստեղծվում է գոհության մթնոլորտ, և մենք հռչակում ենք Աստծո հավատարմությունը և սքանչելիքները: Աստծո մասին խոսելը կարող է արագորեն դատարկել որոշ սրահներ և նույնքան արագորեն լցնել մյուսները:

Մենք ավարտեցինք Առակաց 6-րդ գլխի ցուցակը, սակայն գոյություն ունեն այլ բաներ, որոնք Աստված ատում է.

Սեռական անբարոյություն, պղծություն և կռապաշտություն

> «Որովհետև սա գիտեք, որ ոչ մի պոռնիկ, կամ պիղծ, կամ ագահ, որ կռապաշտ է, ժառանգություն չունի Քրիստոսի և Աստծո արքայության մեջ: Ոչ ոք թող չխաբի ձեզ դատարկ խոսքերով, որովհետև այս պատճառով էլ Աստծո բարկությունը գալիս է անհնազանդության որդիների վրա» (Եփես. 5.5,6):

Աստված չի կարող չատել այն բաները, որոնք խեղաթյուրում են մեր մտերմությունը, կամ խաբում, նվաստացնում, պղծում և կործանում են մեզ: Այս երեքը՝ սեռական անբարոյությունը (ամեն տեսակի սեռական գործունեություն, որը հակառակ է աստվածաշնչյան սկզբունքներին), պղծությունը (կեղտոտ, բիրտ և անվայել խոսքեր և գործեր) և կռապաշտությունը (ագահությունը և ցանկասիրությունը) գրեթե անբաժան են: Մենք տեսնում ենք, որ մեծ մասամբ դրանք սահուն կերպով միաձուլվում են այն ամենի մեջ, ինչը մեր մշակույթը ժամանց է անվանում:

Մեկ անգամ ես ծուղակն էի ընկել. ինձ նստեցրել էին մի տղամարդու կողքին, ով տասնչորս ժամ շարունակ դիտում էր «Գահերի խաղը»՝ Լոս Անջելեսից դեպի Սիդնեյ թռիչքի ամբողջ

ընթացքում (դա այն դեպքերից մեկն էր, երբ ես շնորհակալ էի, որ տեսնում էի միայն մեկ աչքով): Ես պղծված էի զգում ինձ այն բանի պատճառով, ինչ տեսնում էի, երբ շրջում էի գլուխս կամ անցնում էի նրա կողքով՝ զուգարան գնալու համար: Այդ տղամարդը լիովին կտրված էր իրեն շրջապատող աշխարհից: Երբ այս երեքը հարմարավետ կերպով փաթեթավորվում են և հաճախակի են ցուցադրվում, դրանք ընդունված են դառնում: Ցավոք, մենք սկսում ենք նմանակել այն ամենին, ինչը զվարճացնում է մեզ:

Ագահություն

Ագահությունը չարիք է, որն Աստվածաշունչը նկարագրում է որպես ցանկասիրություն և կռապաշտություն: Ես լսել եմ, որ անառողջ վերաբերմունքը փողին (ագահությանը)՝ խիստ վտանգավոր է, քանի որ փողի պատճառով մենք սկսում ենք աստվածներ զգալ մեզ: Թվում է, թե ազդեցություն ունենք և կարող ենք ձեռք բերել այն, ինչ ցանկանում ենք: Ինչո՞ւ պետք է վստահել Աստծուն, եթե կարող ենք գնել՝ ինչ կամենանք: Ագահությունը և ցանկասիրությունը հաճախ համարվում են ավելի աննշան չարիքներ, և այդ պատճառով ավելի ընդունելի են հասարակության կողմից: Մի՛ խաբվեք: Ագահությունը դաժան բռնապետ է, որը խաբում է մարդկանց՝ դրդելով մտածել, որ իրենք ազատ են (տե՛ս Հայտն. 3.7-18): Ագահության գերիներն ավելի բարձր են գնահատում հարաբերությունն ունեցվածքի և դիրքի հետ, քան՝ մարդկանց: Ցանկասիրության և ագահության հակաթույնը առատաձեռնությունը և խոնարհությունն են:

Հիսուսը զգուշացրեց Իր աշակերտներին. «Ոչ մի ծառա չի կարող երկու տիրոջ ծառայել, որովհետև կա՛մ մեկին կատի և մյուսին կսիրի, կա՛մ մեկին կպատվի և մյուսին կարհամարհի: Չեք կարող Աստծուն ծառայել և մամոնային» (Ղուկ. 16.13):

Մամոնան կամ փողը գործիք է, որը պետք է օգտագործել, ոչ թե սիրել: Պետք է սիրել, ոչ թե օգտագործել մարդկանց: Այդ

մասին մենք կխոսենք հաջորդ կետում:

Ապահարզան կամ ամուսնալուծություն

> ««Որովհետև Ես ատում եմ ապահարզանը», - ասում է Տերը՝ Իսրայելի Աստված: - «Ձեր կնոջից ամուսնալուծվելը նշանակում է դաժան հարված հասցնել նրան», - ասում է Երկնքի զորքերի Տերը: - «Այնպես որ, հսկե՛ք ձեր սրտերը. անհավատարիմ մի՛ եղեք ձեր կնոջը»» (Մաղաքիա 2.16, NLT):

Ամուսնալուծության ցավը դառը և խորն է: Ահա թե ինչու է Աստված ատում այն: Նա չի ատում այն մարդկանց, ովքեր ամուսնալուծվել են... Նա ատում է ամուսնալուծության պատճառով առաջացած պառակտումը: Մաղաքիայի օրերում կանայք իրավունք չունեին ամուսնալուծվել իրենց ամուսիններից: Պատկերացրեք մեր երկնային Հոր բարկությունը, երբ տեսնում էր, որ Իր սիրելի ուխտի դուստրերը մերժվում և լքվում էին այն որդիների կողմից, որոնք, ինչպես Նա հույս ուներ, սիրելու էին նրանց: Հաճախ նրանց փոխարինում էին օտարերկրյա կանանցով: Աստված ատում էր այն դառնությունը և ամոթը, որն այդ արարքը պատճառում էր Իր դուստրերին: «Նոր միջազգային թարգմանության» մեջ գրված է, որ իր կնոջից ամուսնալուծված տղամարդը «բռնությամբ է վարվում նրա հետ, ում ինքը պետք է պաշտպանի» (Մաղաքիա 2.16):

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ կանայք նույնպես կարող են ամուսնալուծվել իրենց ամուսիններից: Երբեմն ամուսնական դավաճանության կամ դաժան բռնության պատճառով կողակիցներից մեկը (տղամարդը կամ կինը) համարում է, որ ամուսնալուծությունն ամենաողջամիտ տարբերակն է իր կյանքի և երեխաների ապահովության համար: Նման դեպքերում ամուսնալուծությունը միջոց է, որը կխոչընդոտի մեկ այլ բան, որն Աստված ատում է... այնպիսի իրավիճակ, երբ կինն ամուսնացած է, սակայն սիրված չէ

(տե՛ս Առակ. 30.23): Եթե ավելի խորը դիտարկենք սա, կտեսնենք, որ ամուսնալուծության հանդեպ Աստծո ատելության հիմքը մեկս մյուսի հանդեպ խստասիրտ վերաբերմունքն է:

Ամուսնության մեջ Աստված միացնում է մեզ Իր Հոգով և մեկ է դարձնում.

> «Մի՞թե Տերը մեկ չդարձրեց ձեզ՝ ձեր կնոջ հետ: Մարմնով և հոգով դուք Նրանն եք: Եվ ի՞նչ է Նա ցանկանում: Աստվածապաշտ երեխաներ՝ ձեր միությունից: Այնպես որ, հսկե՛ք ձեր սրտերը. հավատարի՛մ մնացեք ձեր երիտասարդության կնոջը» (Մաղաքիա 2.15, NLT):

Ամուսնական միությունը խորհրդանշում է Քրիստոսի և Նրա հարսնացուի միությունը: Ամուսնալուծությունները՝ դրդված եսասիրությունից, անհավատարմությունից և մերժվածությունից, աղավաղում են գաղափարն այն մասին, որ Աստված նման է ամուսնու, որը երբեք չի թողնի և չի անտեսի մեզ:

Աստված չի ցանկանում, որ մեր մեջ որևէ կասկած լինի Իր անկոտրում սիրո վերաբերյալ: Նա ոչ մի դեպքում չի պատրաստվում թողնել այն ուխտը, որը կնքել է մեզ հետ: Նա երբեք չի լքի մեզ և դաժանորեն չի վարվի մեզ հետ: Անկախ այն բանից, թե քանի անգամ մենք կարող ենք հիասթափեցնել Նրան՝ Նա երբեք չի հիասթափեցնի մեզ:

Թեև օրենքի ներքո գոյություն ունեին դրույթներ ամուսնալուծության վերաբերյալ, մեր Աստված հավատարիմ է Իր հարսնացուին: Ամուսնալուծությունը խեղաթյուրում է պատկերացումը Քրիստոսի և Նրա եկեղեցու մասին, մեր Փեսայի մասին, որը միշտ հավատարիմ է, նույնիսկ եթե մենք անհավատարիմ ենք:

Աստված գիտի, և մենք՝ նույնպես, որ ամուսնալուծությունը պառակտել է շատ ընտանիքներ և կոտրել է շատ սրտեր: Աստված նախատեսել է որոշակի դրույթներ ամուսնալուծության վերաբերյալ, քանի որ Նա ատում է այնպիսի դաժան

երևույթներ, ինչպիսիք են անհավատարմությունը և լքվածությունը: Այնուամենայնիվ, Աստված երբեք չէր նախատեսել, որ ամուսնական ուխտն ավարտվեր ամուսնալուծությամբ:

Երկակի չափանիշներ և կեղծավորություն

> «Ինչ-որ մեկի համար բարձր չափանիշներ սահմանելը և անձամբ դրանցով չապրելը այն է, ինչ Աստված իրականում ատում է: Բայց Նրան հաճելի է, երբ մենք կիրառում ենք չափման ճիշտ չափանիշներ» (Առակ. 11.1, ՊՊ):

> «Տերն ատում է երկակի չափանիշները: Դա վատագույն կեղծավորությունն է» (Առակ. 20.23, ՊՊ):

Հիսուսը մշտապես հանդիմանում էր փարիսեցիների կեղծավորությունը: Նա զբաղված էր Իր Հոր գործով՝ Երկնքի թագավորությունը կառուցելով, իսկ նրանք գործադրում էին մարդկային թագավորության օրենքները: Նրանք սահմանում էին բարձր չափանիշներ բոլորի համար, սակայն իրենք չէին ապրում դրանցով: Նրանց կեղծավորությունը պղտորում էր այն ջրերը, որոնք պետք է մաքուր լինեին: Ինչպես արդեն տեսանք, նրանց համոզմամբ՝ շաբաթ օրը բժշկելը վիրավորական էր: Մի կողմում ուխտի նշանն էր, իսկ մյուսում՝ դրա սքանչելիքները: Հիսուսը զգուշացրեց Իր հետևորդներին Մատթեոս 23.2-4-ում.

> «Մովսեսի աթոռի վրա դպիրները և փարիսեցիները նստեցին: Արդ ինչ էլ, որ ասեն ձեզ պահել, պահե՛ք և արե՛ք, բայց նրանց գործերի պես մի՛ արեք, որովհետև *ասում են, բայց չեն անում:* Որովհետև ծանր և դժվարակիր բեռներ են կապում և դնում մարդկանց ուսերին, բայց իրենց մատով չեն ուզում շարժել դրանք»:

Մենք երբեք չենք կարողանա կատարել այն, ինչ քարոզում ենք, եթե մեր դրդապատճառն է՝ *տեսնվել* մարդկանց կողմից,

ոչ թե *բարձրացնել* մարդկանց: Կրոնները ներթափանցված են հպարտությամբ, և կեղծավորությունը ճնշում է դրանց հետևորդներին: Կեղծավոր առաջնորդները հավատում են, որ ցածրացնելով մարդկանց՝ իրենք ավելի շատ կբարձրանան: Սա հակասում է Աստծո թագավորության գործելակերպին: Մենք խոնարհվում ենք Նրա առջև, որպեսզի Նա բարձրացնի մեզ: Եվ բարձրանալուց հետո կրկին խոնարհվում ենք, որպեսզի բարձրացնենք ուրիշներին: Անկեղծ ասած՝ ավելի շատ մարդիկ են օգուտ քաղել՝ սովորելով իմ սխալներից, քան, այսպես կոչված, իմ «հաջողություններից»:

Մենք խոնարհվում ենք Նրա առջև, որպեսզի Նա բարձրացնի մեզ:

Քանի դեռ մենք չենք ոգեշնչվել այլ մարդկանց կեղծավորությունն ատելու մտքից, եկեք խնդրենք Սուրբ Հոգուն հայտնել ցանկացած հետք, որ այս երևույթն ունի մեզանում: Կեղծավորությունը կարող է խիստ աննկատ սողոսկել յուրաքանչյուրիս կյանք: Ես հայտնաբերել եմ, որ միակ բանը, որն արմատախիլ է անում այն, Աստծո Խոսքն է: Սուրբ գրքի ճշմարտության լույսը ճշտորեն բաժանում է մեր դրդապատճառները և բացահայտում է ցանկացած խավար, որը կարող է աննկատ ներս թափանցել: Զգո՛ն եղեք այս թշնամու դեմ: Այն նենգ է: Կեղծավորությունն ատում է անկեղծությունը. այնպես որ, արե՛ք ամեն ինչ, որ շրջապատեք ձեզ ճշմարտությունը խոսող մարդկանցով: Խոցելի եղեք ճիշտ մարդկանց մոտ և խնդրե՛ք նրանց անկեղծորեն խոսել ձեր կյանքում (ներողություն, բայց դուք չեք կարողանա անել սա Ֆեյսբուքով):

Իմաստությունը մերժելը

Իմաստություն. դուք կա՛մ սիրում եք այն, կա՛մ ատում եք: Իմաստությունը սիրելու համար մենք պետք է որոշում կայաց-

նենք սիրել այն, ինչը բնականորեն ատում ենք՝ խրատը: Լսե՛ք իմաստության խոսքերը.

> «Մինչև ե՞րբ պիտի, ո՛վ անմիտներ, անմտություն սիրեք, և մինչև ե՞րբ պիտի ծաղր անելը հաճելի լինի ծաղր անողներին, և հիմարներն ատեն գիտությունը: Ե՛տ դարձեք դեպի Իմ հանդիմանությունը. ահա Ես Իմ Հոգին կթափեմ ձեզ վրա, Իմ խոսքերը կհասկացնեմ ձեզ» (Առակ. 1.22,23):

Եթե երբևէ եղել է ժամանակ, երբ իմաստության թափման կարիք ենք ունեցել, այն հիմա է: Ես ինքս եմ փնտրում այնպիսի հարցերի պատասխաններ, որոնք երբեք չէի մտածի, որ կառաջանային մեզ մոտ: Մեր գլխիվայր թվացող աշխարհում կրկին պետք է դիմենք Սուրբ գրքին՝ այն խոսքերին, որոնք հիմնադրեցին այս երկիրը:

Առակաց 8-րդ գլխում իմաստության ձայնը խոսում է և նկարագրում է Տիրոջ երկյուղը՝ որպես ատելություն չարի հանդեպ. «Տիրոջ երկյուղը չարն ատելն է. հպարտությունն ու ամբարտավանությունը և չար գնացքը և նենգավոր բերանը Ես ատում եմ» (խս. 13):

Սաղմոս 34-ում գրված է.

> «Եկե՛ք, որդինե՛ր, լսե՛ք Ինձ.
>
> Ես Տիրոջ երկյուղը սովորեցնեմ ձեզ:
>
> Ո՛վ մարդ, որ կյանք ես ուզում և լավ օրեր սիրում՝ բարություն տեսնելու համար:
>
> Պահի՛ր քո լեզուն չարությունից, և քո շրթունքները, որ նենգություն չխոսեն:
>
> Հեռացի՛ր չարից և գործի՛ր բարին. խնդրի՛ր խաղաղություն և նրա ետևից գնա» (խս. 11-14):

Այս հատվածները ցույց են տալիս, որ նենգավոր խոսքը՝ հպարտ ճանապարհների հետ, չարիք է ծնում:

Հոբի գրքում Տիրոջ երկյուղը զուգակցվում է իմաստության հետ. «Ահա Տիրոջ երկյուղն է իմաստությունը, և չարությունից հեռանալը հանճար է» (28.28):

Այլ հատվածներում Տիրոջ երկյուղը նկարագրվում է որպես Նրա Խոսքի առջև դողալը: Ես համոզված եմ, որ Տիրոջ երկյուղը նաև խոնարհեցնում է մեզ, երբ հայտնություն ստանալով Աստծո սրբության և մեր սրբության պակասի մասին՝ տրվում ենք Նրա ողորմությանը:

Նույնիսկ Հիսուսն էր բերկրանք զգում Տիրոջ երկյուղի մեջ: Եսային մարգարեացավ այն մասին, թե ինչպես էր Աստծո Հոգին դրսևորվելու Հիսուսի կյանքում.

> «Եվ Նրա վրա կհանգչի Տիրոջ Հոգին, իմաստության և հանճարի Հոգին, խորհրդի և զորության Հոգին, գիտության և Տիրոջ երկյուղի Հոգին: Եվ Նրա ախորժանքը Տիրոջ երկյուղն է, և Նա Իր աչքի տեսածի պես չի դատի, և ոչ՝ Իր ականջների լսածի պես կհանդիմանի» (11.2,3):

Երբ մենք գիտակցում ենք, որ կամակոր ենք եղել մեր ճանապարհների և մտքի մեջ, Նա չի վարվում մեզ հետ՝ ըստ մեր չար վարքի: Նա չի չափում մեզ՝ ըստ մեր թերացումների, այլ՝ ըստ Իր անկոտրում սիրո:

Չարիք

> «Սերը՝ առանց կեղծավորության, չարն ատե՛ք, բարո՛ւն հետևեք» (Հռոմ. 12.9):

Թե՛ սիրելը, թե՛ ատելը գիտակցաբար կայացվող որոշումներ են: Բոլորին սիրելը դժվար է, բայց Աստծո հետ դա հնարավոր է: Ամեն ինչ սիրելը կեղծավորություն է և, իրականում, անհնար է: Մեր օրերում անկարելի է խուսափել չարից: Ես հասկանում եմ դա: Բայց չի նշանակում, որ մենք պետք է թույլ տանք, որ մեզ ճնշեն, վախեցնեն և, ի վերջո, լռեցնեն. հիմա

չեզոք դիրք գրավելու ժամանակը չէ:

Մենք պետք է ատենք աղքատությունը, բայց սիրենք աղքատներին:

Մենք պետք է ատենք պատերազմը, բայց սիրենք դրանից տուժած այրիներին, որբերին և փախստականներին:

Չարը ատելը չի նշանակում, որ պետք է ատելությամբ լցված լինենք: Մենք ահաբեկիչներ չենք, այլ՝ քրիստոնյաներ: Մենք օծված ենք՝ չարը բարությամբ հաղթելու համար: Այնպես որ, մենք չենք ստում և բարի չենք անվանում չարը: Մենք չենք հաստատում ճշմարտությունը միայն խոսքերով: Մենք ապրում ենք ճշմարտությամբ, խոսում ենք ճշմարտությունը և հաստատում ենք ճշմարտությունը մեր կյանքով:

Եկեղեցին միշտ չէ, որ հաջողությամբ է արել սա:

Ես միշտ չէ, որ հաջողությամբ եմ արել սա: Ուզում եմ է՛լ ավելի կատարելագործվել սրանում:

Շատ երկար ժամանակ մենք հայտնի ենք եղել այն բաներով, որոնց դեմ ենք, ոչ թե՝ այն բաներով, որոնց կողմ ենք, և նույնիսկ՝ ոչ այն Անձնավորությամբ (Հիսուսով), Ում կողմից ենք: Փորձելով վերականգնել հավասարակշռությունը՝ եկեղեցին, թվում է, սկսել է վարվել այս աշխարհի պես. այն հավանություն է տալիս *ամեն ինչին* և սեր է անվանում դա: Կրկին, մենք սիրում ենք *ամեն մեկին:* Բայց եկեք չմոռանանք, որ մենք պատերազմի մեջ ենք, ինչը նշանակում է, որ մենք չենք կարող սիրել *ամեն ինչը:* Ինչպես գրում էր Չարլզ Սփերջենը. «Մենք պարտավոր ենք սիրել մեր թշնամիներին, բայց պարտավոր չենք սիրել Աստծո թշնամիներին: Մենք պետք է ցանկանանք նրանց կատարյալ պարտությունը՝ որպես թշնամիներ, սակայն պետք է ցանկանանք նրանց փառավոր դարձը՝ որպես մարդիկ, որպեսզի նրանք ստանան Աստծո ներումը և դառնան Նրա ընկերները, հետևորդները և ծառաները»[3]:

Մենք այնքան ենք վախենում, որ մեզ կմեղադրեն դատելու մեջ, որ անխոս ենք դարձել: Մենք չենք կարող նման լինել այն

կնոջը, ով իր ամուսնու հետ անհաջող վիճաբանությունից հետո որոշում է լռել, փոխարենը սովորի համաձայնության գալ նրա հետ: Նրա լռությունն ի վերջո վնաս կհասցնի նրանց հարաբերությանը և կկանգնեցնի դրա աճը: Փոխարենը թույլ տանք, որ անցյալի ձախողումները սահմանափակեն մեզ, եկեք առաջ գնանք՝ ճշմարտությամբ, խոնարհությամբ և սիրով, և կառուցենք այն, ինչը հնարավոր է կառուցել: Մենք սկսում ենք՝ որոշում կայացնելով, որ խորշելու ենք մեր նախընտրություններից այն ամենի հանդեպ, ինչն Աստված ատում է:

Եկեք առաջ գնանք՝ ճշմարտությամբ, խոնարհությամբ և սիրով, և կառուցենք այն, ինչը հնարավոր է կառուցել:

Երբ սկսենք ապրել ճշմարտությամբ և սիրով, մարդիկ կլսեն մեզ, քանի որ մենք կխոսենք ճշմարտությունը՝ սիրով: Սա անչափ կարևոր է, քանի որ...

Սերը՝ առանց ճշմարտության, սուտ է:

Ի՞նչ եք դուք ատում

Այն, ինչ դուք ատում եք, հավանաբար նաև վախեցնում է ձեզ: Ես օձերի, սարդերի և կարիճների սիրահար չեմ: Տանել չեմ կարողանում այդ երեքին, բայց ամենից շատ՝ օձերին: Եթե կարիճ տեսնեմ, կսատկեցնեմ: Ես դարձա դրանց երդվյալ թշնամին այն բանից հետո, երբ մի կարիճ խայթեց իմ կրտսեր որդուն, երբ նա չորս տարեկան էր (զգուշացնում եմ՝ նրանք սատկած են ձևանում, որպեսզի խայթեն ձեզ): Սարդերի հետ ավելի բարդ է: Ես վախենում եմ այն բանից, թե ինչպես են նրանք տեղաշարժվում: Ես խնդրում եմ Զոնին կամ որդիներիցս մեկին սատկեցնել դրանց: Իսկ եթե տանը տղամարդ չկա, ինքս եմ անում դա: Սակայն օձերն այլ են: Դուք չեք կա-

րող կոշիկով օձ սատկեցնել: Գոնե ես այդպես չեմ կարծում, բայց չեմ էլ փորձել:

Ես գրում եմ՝ նստած մեր տան նկուղի մի անկյունում: Իմ սեղանի վերևի պահարանի վրա մաչետե է ամրացված: Ես որոշեցի, որ չեմ վախենա, եթե մենակ լինեմ մեր տանը և օձ տեսնեմ, ես կհարձակվեմ: Կվերցնեմ այդ մեծ դանակը և բարձր աղոթելով՝ կսատկեցնեմ այն: Ես վճռել եմ, որ անելու եմ դա, քանի որ անկարելի է թույլ տալ, որ իմ տանը որևէ օձ սողա կամ ձու դնի: Ինչո՞ւ: Քանի որ իմ տանն ապրում են մարդիկ, որոնց ես սիրում եմ:

Կան նաև այլ բաներ, որոնք ես ատում եմ: Բաներ, որոնք սպառնում են բոլորիս: Ես ատում եմ սեռական բռնությունը երեխաների հանդեպ: Ատում եմ սեռական թրաֆիքինգը, որը վերաբերում է ցանկացած տարիքի և սեռի մարդու: Եվ ես չեմ հանդիպել այնպիսի մարդու, ով չի վրդովվում այս երկուսի պատճառով: Մենք գիտենք, որ այդ արարքները վնաս են հասցնում թե՛ զոհերին, թե՛ հանցագործներին: Այդ արարքների դաժանությունը և այլասերումը խոցում և վնասում են դրանց բոլոր մասնակիցներին՝ մինչև նրանց էության խորքը: Սակայն բավական չէ ատել սեռական թրաֆիքինգը և բռնությունը: Մենք պետք է ատենք նաև պոռնոգրաֆիան:

Ինչո՞ւ:

Պոռնոգրաֆիան սեռական բռնության և թրաֆիքինգի խթանիչն է: Մենք չենք կարող սիրել պոռնոգրաֆիան, հավանություն տալ կամ նույնիսկ ժպտալ դրան, եթե իսկապես ատում ենք սեռական բռնությունը և թրաֆիքինգը: Բռնության և թրաֆիքինգի զոհերին ճշմարտապես սիրելու համար մենք պետք է ատենք բռնության և թրաֆիքինգի խթանիչը՝ պոռնոգրաֆիան: Պատշաճ կերպով սիրելու համար, մենք պետք է ատենք այն ամենը, ինչը խեղաթյուրում է մարդկանց՝ դրդելով բռնության ենթարկել և ստրկացնել երեխաներին և կանանց:

Պոռնոգրաֆիան ստորացնում է սերը, խեղաթյուրում է

մտերմությունը և նվաստացնում է սեռական կյանքը, որն Աստծո բարի և զարմանալի պարգևն է: Պոռնոգրաֆիան ստրկացնում է նրանց, ում Աստված փափագում է ազատություն տալ: Գիտակցելով սա՝ ես որոշում եմ կայացրել խորշել պոռնոգրաֆիայի ցանկացած դրսևորումից (գրական ստեղծագործություններ, ֆիլմեր, պարբերականներ կամ առցանց նյութեր):

Ես պետք է խորշեմ այն ազդեցությունից, որը պոռնոգրաֆիան թողնում է սիրո վրա, քանի որ դա չարիք է: Ես խորշում եմ այն ազդեցությունից, որը պոռնոգրաֆիան թողնում է ընտանիքի վրա: Ես անթիվ պատմություններ եմ լսել կանանց մասին, որոնք պառկած են իրենց անկողնում և մտածում են, թե ինչո՞ւ իրենց ամուսինները չեն դիպչում իրենց: Նրանք համարում են, որ ցանկալի *չեն:* Երանի՜ նրանք *ավելի* գրավիչ լինեին, որպեսզի նրանց ամուսինները ցանկանային նրանց: Եվ հանկարծ նրանք իմանում են, որ ունեն մրցակից՝ երևակայական, վիրտուալ սեռական հարաբերություն, որը քայքայել է իրենց մտերմությունը: Նրանց ամուսիններն արդեն նվիրել են իրենց ցանկությունն ինչ-որ մեկին, ով առցանց է, որին նրանք նույնիսկ հպվելու կարիք չունեն:

Ցավոք, կանայք նույնպես ընկնում են այս կործանարար շրջանի գերության մեջ: Ըստ վերջերս անցկացրած մի հարցման՝ երեք կանանցից մեկը պոռնոգրաֆիա է դիտում առնվազն շաբաթը մեկ անգամ[4]: «Հաֆինգտոն Փոստ» պարբերականը պնդում է. «Պոռնոգրաֆիկ կայքերի ամսական հաճախելիությունն ավելի բարձր է, քան «Նեթֆլիքսինը», «Ամազոնինը» և «Թվիթերինը» միասին»[5]: Համաձայն «Պայքար նոր թմրանյութի դեմ» ծառայության տվյալների՝ «Միայն անցյալ տարի «Պոռնհաբ» կայքն ունեցել է 91.980.225.000 դիտում, այսինքն՝ 12.5 տեսանյութի դիտում՝ երկիր մոլորակում ապրող ամեն մարդու հաշվով»[6]:

Կարո՞ղ եք պատկերացնել:

Պոռնոգրաֆիան սեր չէ: Այն բռնաբարում է մեր միտքը՝ առարկայացնելով և ստորացնելով մարդկանց, որոնք ստեղծված են

իրենց Արարչի գեղեցկությամբ և նմանությամբ: Մարդիկ գերվում են այդ պատկերներով, և ամոթը սկսում է խեղդել նրանց: Մենք պետք է սիրենք գերիներին՝ ատելով այն համակարգը, որը դանդաղորեն և վստահաբար ծուղակն է գցում նրանց:

Երբ մենք չենք ատում չարը, մեր սերն իսկական չէ:

«Ավյուն» թարգմանության Հռոմեացիների 12.9-ը մի փոքր ավելի բանաստեղծական է.

> «Թող որ ձեր սրտի ներքին մղումը միշտ լինի դեպի սերը մեկը մյուսի հանդեպ, և երբեք մի՛ վարվեք այնպես, ասես դերասան եք և դիմակ եք կրում: Ատե՛ք չարը և ընդունե՛ք այն ամենը, ինչը բարի և առաքինի է»:

Երբ մենք չենք ատում չարը, մեր սերն իսկական չէ:

Լռելու գայթակղությունը կարող է շատ մեծ լինել, հատկապես երբ գիտենք, որ ձայն բարձրացնելու դեպքում մեզ կպիտակեն որպես անիրազեկ և ծայրահեղական: Ամեն անգամ, երբ ես խոսել եմ այս խնդրի մասին, ինձ քննադատել են քրիստոնյաներ, որոնք ասել են, որ այն, ինչ իրենք անում են ծածուկում, իրենց անձնական գործն է, և նրանք ճիշտ են: Բայց, միևնույն ժամանակ, ես չեմ կարող լռել, քանի որ տեսել եմ պոռնոգրաֆիայի մյուս կողմը: Ես տեսել եմ դրա զոհերին՝ սկսած գողացված և սեռական բռնության ենթարկված երեխաներից մինչև խարխլված ամուսնությունները և սեռական կախվածության մեջ գտնվող մարդկանց: Երբ ձայն եմ բարձրացնում՝ խոսելով այս մասին, իմ սոցիալական էջերը կոտրում են և պոռնոգրաֆիկ պատկերներ ու տեսանյութեր են տեղադրում:

Մենք այլևս չենք կարող ժպտալ՝ նայելով չարին ապահով հեռավորությունից: Մենք չենք կարող թույլ տալ, որ այն լինի մեր աչքի առջև, և չենք կարող թույլ տալ մեզ վարանել դրա ներկայությամբ: Մենք չենք կարող լռել, միայն որովհետև չենք ուզում խնդիրներ ունենալ: Եթե մենք ծուղակն ենք ընկել,

պետք է օգնություն խնդրենք: Մենք չենք կարող լուռ մնալ, երբ անհրաժեշտ է պաշտպանել սերը: Մենք չենք կարող համաձայնության դիմակ կրել:

Հետևել Հիսուսին՝ մեր Օրինակին

Չարլզ Սփերջենը գրել է. «Մենք սիրում ենք այն, ինչ սիրում է Հիսուսը. մենք ատում ենք այն, ինչ ատում է Հիսուսը. մենք ձգտում ենք այն բանին, ինչին ձգտում է Հիսուսը. մենք խորշում ենք այն ամենից, ինչից խորշում է Հիսուսը: Սա է ճշմարիտ ընկերությունը, երբ կա մեկ սիրտ՝ երկու մարմիններում»[7]:

Ինչպես որ գրել է Սփերջենը, Հիսուսը մեր օրինակն է և՛ սիրո, և՛ ատելության մեջ: Ի՞նչ է սիրում Հիսուսը. մարդկանց: Հիսուսը սիրում է բոլոր կորսվածներին և ձգտում է փրկել նրանց: Հիսուսը սիրեց Իր թշնամիներին և ընկերներ անվանեց նրանց: Ընկերությունն Աստծո հետ անհամատեղելի է մարդկանց ատելու հետ:

Ի՞նչ է ատում Հիսուսը: Հիսուսն ատում է սիրո թշնամիներին. կեղծավոր կրոնը, որն առաջին և գլխավոր թշնամիներից մեկն է: Որոնելով կեղծավորության իմաստը՝ նկատեցի բնագավառներ, որոնցում ես կեղծավոր եմ. երբ ձգտում եմ պահպանել իմ հարաբերությունները մարդկանց հետ ավելի շատ, քան ձգտում եմ նրանց փրկությանը. երբ լուռ եմ մնում՝ սիրով վարվելու փոխարեն. երբ սիրախաղ եմ անում հեռվից, փոխարենը արագորեն շրջվեմ և հեռանամ: Այն, ինչից ես հրաժարվում եմ խորշել հիմա, սովորական կդառնա իմ թոռների կյանքում:

Գ. Ք. Չեստերտոնը գրել է. «Հանդուրժողականությունը համոզմունքներ չունեցող մարդու առաքինությունն է»: Վախենում եմ, որ մենք որոշել ենք հանդուրժել այնպիսի բաներ, որոնք մեկ օր կարող են պարտության մատնել մեզ: Մենք միշտ պետք է բարի և հարգալից լինենք, բայց լռությունը՝ հանդուրժողականության պատճառով, կարող է արագորեն

վերածվել աջակցության:

Ինչի՞ն է ձգտում Հիսուսը: Նա ասաց. «Սակայն առաջ Աստծո արքայությունը և Նրա արդարությունը խնդրե՛ք, և այդ ամենը կտրվի ձեզ» (Մատթ. 6.33):

Ի՞նչ է նշանակում խորշել, և ինչի՞ց է խորշում Հիսուսը: Խորշել՝ նշանակում է խուսափել ինչ-որ բանից՝ դրանից հեռանալով: Մենք արդեն խոսեցինք այս մասին: Մենք չենք նստում չարիքի հետ, մատների արանքով չենք նայում այլասերությանը և չենք խոսում ունայն բաների մասին: Պողոսը շատ լավ է նկարագրում սա.

> «Նրանց աչքերը բանալու և խավարից դեպի լույսը դարձնելու և սատանայի իշխանությունից՝ դեպի Աստված, որ նրանք մեղքերի թողություն և սրբերի հետ ժառանգություն առնեն՝ Ինձ հավատալով» (Գործք 26.18):

Մենք չենք շրջվում մարդկանցից: Մենք աղոթում ենք, որ նրանք շրջվեն այն ամենից, ինչը խավարեցնում է նրանց անձերը:

Նախքան իմ վերստին ծնվելը, ես Քրիստոսի թշնամին էի, ոչ թե Նրա ընկերը: Երբ իմ խստացած սիրտը փափկեց, ես զգացի, թե ինչն էր ցավ պատճառում Նրա սրտին: Հիսուսի առաջնորդությանը հետևելը կյանքի ոճ է: Մենք շրջվում ենք այն բաներից, որոնք բարձր էինք գնահատում, որպեսզի ընդունենք այն, ինչն արժեքավոր է Նրա համար:

Ավելի քան մեկ դար առաջ Չարլզ Սփերջենը գրեց. «Ներկա ժամանակաշրջանն այնքան թեթևամիտ է, որ եթե մարդը սիրում է Փրկչին, նա մոլեռանդ է, և եթե ատում է չարի ուժերը, նա անհանդուրժողական է»[8]:

Ես չեմ էլ կարող պատկերացնել, թե ինչ Նա կասեր մեր օրերի մասին: Մեր մշակույթն այլևս թեթևամիտ չէ. այն անառակ է:

Մենք *պետք է* սիրենք ճշմարտությունը, որն ազատություն է տալիս մարդկանց, և միևնույն ժամանակ ատենք այն ստերը,

որոնք ստրկացնում են նրանց:

Աստված լույս է, և Նրանում չկա խավար. ճիշտ նույն կերպով, Նա բարի է, և Նրանում չկա չարություն: Լիովին բարի Աստված չի կարող մասամբ չար լինել: Չկա ոչ մի միասնություն լույսի և խավարի միջև, չկա ոչ մի ընկերակցություն բարու և չարի միջև, և դիվական կուռքերն Աստծո տաճարի մասը չեն: Իսկ ի՞նչ է գրված Հիսուսի մասին: Եբրայեցիների թուղթը մեջբերում է Սաղմոս 45.6,7-ում գրված Դավթի մարգարեությունը.

> «Բայց Որդուն ասում է. «Քո աթոռն, ո՛վ Աստված, մինչև հավիտյանս հավիտենից է: Քո թագավորության գավազանը ուղիղ գավազան է: Սիրեցիր արդարությունը և ատեցիր անօրինությունը: Սրա համար օծեց Քեզ, ո՛վ Աստված, Քո Աստվածը, ուրախության յուղով՝ ավելի, քան Քո ընկերներին»» (Եբր. 1.8,9):

Հիսուսը սիրում է արդարությունը և ատում է անօրինությունը: Մի՞թե Նրա աշակերտները կարող են տարբերվել Նրանից: Ժամանակն է, որ հիշենք, որ հալածանքը մեր փրկության մասն է:

> «Երանի՛ ձեզ, երբ մարդիկ ձեզ ատեն, և երբ ձեզ ջոկեն և նախատեն և ձեզ վրա չար անուն հանեն՝ մարդու Որդու պատճառով: Ուրա՛խ եղեք այն օրում և ցնծացե՛ք, որ ահա ձեր վարձքը շատ է Երկնքում, որովհետև այդպես էին անում մարգարեներին նրանց հայրերը» (Ղուկ. 6.22,23):

Զանազանություն

Չարլզ Սփերջենը գրել է. «Զանազանությունը չի նշանակում իմանալ տարբերությունը բարու և չարի միջև, այլ՝ իմանալ տարբերությունը բարու և գրեթե բարու միջև»[9]:

Կան շատ բաներ, որոնք բարի են թվում, սակայն մենք

զգում ենք, որ դրանք չար են: Մենք ապրում ենք այնպիսի օրերում, երբ անհրաժեշտ է և՛ սպառիչ կերպով իմանալ Սուրբ գիրքը, և՛ ունենալ Սուրբ Հոգու առաջնորդությունը: Աստվածաշունչը կտա մեզ ճիշտ սահմաններ, իսկ Բարձրյալ Աստծո Հոգին կտա մեզ կյանքի խոսքեր: Անհրաժեշտ է, որ Սուրբ Հոգին լուսավորի Աստծո Խոսքը, որպեսզի իմանանք, թե ինչպես և ում սիրել, նաև՝ ինչպես և ինչը ատել: Սա է պատճառը, որ այս գլուխը գրելիս ես լրջորեն ապավինել եմ Սուրբ գրքին: Իրականում, աստվածաշնչյան հատվածները շատ ավելին էին, քան այն, ինչ մենք ամփոփեցինք այս գլխի էջերում: Այդ պատճառով, ավելի շատ հատվածներ եմ ընդգրկել ձեզ համար Հավելված 1-ում: Աղոթե՛ք և հարցրե՛ք Սուրբ Հոգուն, թե ինչպես կիրառեք դրանք: Փոխարենը ասեմ ձեզ, թե ինչ պետք է մտածեք, ես ցանկանում եմ թույլ տալ Սուրբ Հոգուն առաջնորդել ձեզ: Իսկ հիմա, մինչև հաջորդ գլխին անցնելը, կաղոթե՞ք ինձ հետ:

Սիրելի երկնային Հա՛յր,

Ես ուզում եմ սիրել այն, ինչ Դու ես սիրում, սիրել այնպես, ինչպես Դու ես սիրում: Ես չեմ ուզում կեղծավոր լինել: Չեմ ուզում վարվել ամբարտավան կերպով: Խնդրում եմ, որ սովորեցնես ինձ, թե ինչ ես Դու ատում, որպեսզի Քո սերը ծաղկունք ապրի իմ կյանքում: Սո՛ւրբ Հոգի, փչի՛ր Քո շունչն այս սուրբգրային հատվածների վրա և բացահայտի՛ր դրանք ինձ համար: Տո՛ւր ինձ խիզախություն, որ խախտեմ լռությունը այն խոսքերով, որոնք ազատ կարձակեն կապյալներին: Հիսուսի անունով, ամե՛ն:

7

ԱՆԿՈՏՐՈՒՄ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«Այնտեղ, որտեղ գտա ճշմարտությունը, ես գտա իմ Աստծուն, Ով ինքը ճշմարտությունն է»:

Սբ. Օգոստինոս

Թեև բոլորս ենք ստել, ծգտումը դեպի ճշմարտությունը դրված է մեր սրտի խորքում: Առանց ճշմարտության՝ մենք նման ենք ղեկ չունեցող նավի, որը քշվում է ամեն մի վարդապետության քամուց և ամեն մի զգացմունքի քմահաճույքից, ինչն արդյունքում կործանման եզրին է հասցնելու մեզ: Որքան ավելի ծգտենք ճշմարտությանը, այնքան ավելի այն կառաջնորդի մեզ: Ճշմարտությունը ոչ թե «ինչ» է, այլ՝ «ով»:

Փոխարենը վիճենք, թե ինչն է ճշմարիտ, մենք պետք է հիշենք, թե ինչու է ճշմարտությունը կարևոր, և ապրենք ճշմարտությամբ, քանի որ ճշմարտությունը կենդանի է: Մենք ապրում ենք ճշմարտությամբ, երբ բացում ենք մեր սիրտը մեր Տիրոջ և Փրկչի առջև, Ով ասաց. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը: Ոչ

ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ Ինձանով» (Հովհ. 14.6):

Եթե այս պնդումը ճշմարիտ է, դրա ամեն մի մասը նույնպես պետք է ճշմարիտ լինի: Եթե Հիսուսը *միակ* ճանապարհն է, ոչ թե *բազմաթիվ* ճանապարհներից մեկը, նշանակում է՝ պնդումն այն մասին, որ ոչ ոք չի գալիս Հոր մոտ՝ առանց Նրա, նույնպես պետք է ճշմարիտ լինի: Եթե Հիսուսը ստեց և սխալ կերպով մեկնաբանեց այն, թե Ով է Ինքը, և եթե Նա պարզապես Հոր մոտ տանող բազմաթիվ ճանապարհներից մեկն է, նշանակում է՝ Հիսուսը չի կարող լինել կյանքը:

Հիսուսի խոսքերն Իր մասին կա՛մ լիովին ճիշտ են, կա՛մ բոլորովին սխալ են: Այլ տարբերակ հնարավոր չէ: Բենջամին Ֆրանկլինի խոսքերով՝ «Կես ճշմարտությունը հաճախ մեծ սուտ է»: Ամեն մասնակի ճշմարտության հիմքում սուտ կա: Եթե Հիսուսն իսկապես ճանապարհն է, Նա նույնպես պետք է լինի ճշմարտությունը և կյանքը:

Հիսուսի խոսքերն Իր մասին կա՛մ լիովին ճիշտ են, կա՛մ բոլորովին սխալ են:

Սակայն մեր մշակույթը մերժում է բացարձակ ճշմարտությունները: Մեզ համոզել են, որ դրանք չափազանց սահմանափակող և խիստ են: Ճշմարտությունը չի կարող չհեռացնել ստերը, բայց այն անում է դա և՛ անսասան կերպով, և՛ մեղմորեն: Ճշմարտությունը պետք է մեղմ լինի խոսքի մեջ և անփոխարինելի ու բացարձակ՝ սկզբունքների մեջ: Բացարձակ ճշմարտությունները հիմքային փաստեր են, իսկ հիմքային փաստերն անսասան են: Եվ բացարձակ ճշմարտությունները խիստ և սահմանափակող չեն. դրանք պաշտպանական միջոցներ են: Առանց բացարձակ, անփոփոխ ճշմարտությունների՝ մենք միշտ կառուցելու ենք ավազի վրա: Բացարձակ ճշմարտությունները այն սկզբունքներն են, որոնք պաշտպանում են մեզ, և այն համոզմունքներն են, որոնք խարսխում են մեզ, երբ մեզ հարվածում են կյանքի փոթորիկները, և հրապուրում են գայթակղությունները:

Բոլոր ճանապարհները չեն տանում Հռոմ

Հին ժամանակներում մարդիկ ասում էին. «Բոլոր ճանապարհները տանում են Հռոմ», քանի որ անցյալում Հռոմ քաղաքը Հռոմի կայսրության ճանապարհային համակարգի հանգույցն էր: Սակայն շատ ժամանակ անց, երբ Հռոմն ընկավ իր իշխանության բարձունքից, այս ասացվածքը դադարեց ճշմարիտ լինել: Այն վերածվեց դարձվածքի, որը նշանակում է, որ բոլոր ճանապարհներն ի վերջո տանում են նույն վայրը: Բայց այն, ինչ մի ժամանակ ճշմարիտ էր Հռոմի մասին, անկարելի է կիրառել Աստծո թագավորության վերաբերյալ:

Աստծո ճշմարտությունը չի փոփոխվում մարդկային թագավորությունների և մարդկային մտքի փոփոխությունների հետ մեկտեղ: Ճշմարտությունը պարզապես անժամանակյա չէ. այն հավիտենական է: Աստծուն տանող ճանապարհը սկսվում է դռնից՝ Հիսուս Քրիստոսից: Ինչո՞ւ Աստված պետք է ուղարկեր Իր միածին Որդուն, եթե լինեին այլ տարբերակներ: Մի՞թե անհրաժեշտ էր ուղարկել Հիսուսին, եթե Նա պարզապես լավագույն տարբերակն էր: Ես չէի առաջարկի իմ որդիներից որևէ մեկին, եթե դա չլիներ միակ տարբերակը: Միայն Հիսուսն է մեր քավությունը: Շատ մեծ սխալ է հավատալը, որ բոլոր ճանապարհները տանում են դեպի փրկություն, թեև բոլոր ճանապարհները տանում են Հիսուսի հետ հանդիպման: Սուրբ գրքում գրված է.

> «Նրա համար էլ Աստված շատ բարձրացրեց Նրան, և Նրան մի անուն շնորհեց, որ ամեն անունից ավելի բարձր է, որ Հիսուսի անունով կրնկվի ամեն ծունկ երկնավորների և երկրավորների և երկրի տակ լինողների, և ամեն լեզու դավանի, թե Հիսուս Քրիստոսը Տեր է՝ Հայր Աստծո Փառքի համար» (Փիլիպ. 2.9-11):

«Երկրի տակ լինողները» արտահայտությունը վերաբերում է դիվական տիրույթին: Կգա այն օրը, երբ նրանք հար-

կադրված կլինեն ճանաչել Հիսուսի գերիշխանությունը, թեև չեն ստանա Նրա փրկությունը:

Միգուցե հակադարձեք՝ ասելով, որ ամբողջ ճշմարտությունը հարաբերական է, և կարիք չկա այդքան ծայրահեղ լինել: Միգուցե դուք կարծում եք, որ այն, ինչը ճշմարիտ է ինձ համար, կարող է ճշմարիտ չլինել ձեզ համար:

Եթե այդպես է, նշանակում է՝ մենք չենք խոսում նույն բանի մասին: Բացարձակ ճշմարտություն ասելով ես նկատի չունեմ այն, ինչը կարող է ճշմարիտ լինել ինձ *համար*, բայց ոչ՝ ձեզ *համար:* Օրինակ՝ ես կիսով չափ սիցիլուհի եմ: Ամուսնացած եմ: Ես մայր եմ և տատիկ եմ: Այս ամենը ճշմարիտ է ինձ համար հիմա, սակայն անպայման չէ, որ սա վերաբերի բոլորին: Այնպես որ, սա ճշմարտությունը չէ, այլ պարզապես ճշմարիտ է: Նույն կերպով, այն, ինչը ճշմարիտ էր ինձ համար տասը տարի առաջ, անպայման չէ, որ ճշմարիտ լինի այսօր:

Ես կբերեմ մեկ այլ օրինակ այն մասին, որ ինչ-որ բան ճշմարիտ է, սակայն ճշմարտությունը չէ: Իմ պատուհանից ես տեսնում եմ Կոլորադոյի ջինջ կապույտ երկինքը: Ես կարող եմ վստահաբար հայտարարել. «Երկինքը կապույտ է», և հաջորդ մի քանի ժամվա ընթացքում իմ խոսքերը ճիշտ կլինեն: Այնուամենայնիվ, այս պնդումը ճշմարտությունը չէ, քանի որ այն հակառակ է մի սկզբունքի. ճշմարտությունը պետք է անփոփոխ լինի: Երբ արևը մայր մտնի, երկինքն այլևս կապույտ չի լինի: Նշանակում է՝ այն, ինչը ճշմարիտ էր կեսօրին, ճշմարիտ չի լինի կեսգիշերին: Վախենում եմ, որ շատ առումներով մենք գտնվում ենք մեր մարդկային անձերի կեսգիշերի մեջ:

Ճշմարիտը վերաբերում է մեր կյանքի հատկանիշներին, փուլերին և բնագավառներին: Այն, ինչը ճշմարիտ է մի փուլում, պարտադիր չէ, որ ճշմարիտ լինի մյուսում: Նման ճշմարիտ երևույթները գոյություն ունեն մարդկանց որոշակի խմբերի մեջ և ենթակա են փոփոխության: Այն, ինչը վերաբերում է միայն մի քանիսին, չի կարող լինել ճշմարտությունը: Ճշմարի-

տը կարող է հարաբերական լինել, ճշմարտությունը՝ երբեք:

Եթե մենք բարձր չպահենք ճշմարտությունը, այն խոցելի կդառնա մեր ներկա մշակույթում: Ահա թե ինչու բոլորս պետք է իմանանք հին գրվածքները, որպեսզի տարբերենք ճշմարտությունը՝ անկախ հասարակական կարծիքի տատանումներից և մեր պատկերացումներից: Այն երևույթը, երբ ճշմարտությունը կախված է կարծիքներից, կոչվում է ռելյատիվիզմ կամ հարաբերականություն: Այն համոզմունք է, որ իրարից տարբերվող բաները կարող են ճիշտ լինել տարբեր մարդկանց համար կամ տարբեր ժամանակներում: Այս սահմանման ներքո ճշմարտությունը մշտապես փոփոխվելու է:

Հարաբերականության գաղափարախոսությունը խարխլում է ճշմարտության իսկ իմաստը: Որպեսզի ինչ-որ բան ճշմարտություն համարվի, այն պետք է ճշմարիտ լինի ամեն ժամանակ: Եթե այդպես չէ, ինչ-որ մեկը կարող է ստել ինչ-որ բանի մասին և ասել, որ դա *իր ճշմարտությունն* է: Անկարելի է թույլ տալ, որ մարդկային ընկալումները որոշեն ճշմարտությունը: Եթե այդպես լինի, բոլորս կնայենք կյանքին տարբեր աչքերով: Մեզ անհրաժեշտ է անսասան և անկոտրում Անձ, որը խարսխում է մեր անձերը մեր Արարչի ճշմարտությանը:

Որպես քրիստոնյաներ՝ չենք կարող հավատալ, որ ճշմարտությունը հարաբերական է, քանի որ մենք հավատում ենք, որ Ճշմարտությունը մեր ազգականն է՝ Հիսուս Քրիստոսը, մեր Եղբայրը, Անկյունաքարը, Տերը և Ադամանդը: Աստծո Խոսքը (Հիսուսը) վերափոխում է մեզ, իսկ հարաբերականությունը այս աշխարհի նման է դարձնում մեզ:

Լինել ճշմարտությունը՝ այլ բան է, քան խոսել ճշմարտությունը կամ, նույնիսկ, այն պատշաճ կերպով ներկայացնելը: Նույնիսկ եթե մեզնից որևէ մեկը կարողանար լիարժեք կերպով հավատարիմ լինել, մենք երբեք չէինք կարող *լինել* ճշմարտությունը:

Մենք կարող ենք խոսել ճշմարտությունը:

Մենք կարող ենք ապրել՝ ըստ ճշմարտության:

Մենք կարող ենք սիրել ճշմարտությունը:

Մենք կարող ենք ատել ճշմարտությունը:

Մենք կարող ենք ուրանալ ճշմարտությունը:

Մենք կարող ենք հավատալ ճշմարտությանը:

Բայց միայն Քրիստոսը կարող է հայտարարել, որ Ինքը ճշմարտությունն *է:*

Բուդդան ասաց բազմաթիվ ճշմարիտ խոսքեր, բայց նա չհայտարարեց, որ ինքը ճշմարտությունն *է:* Բուդդան խոստովանեց, որ մարդ է, ով փնտրում էր ճշմարտությունը: Նմանապես, Մուհամմեդն ասաց շատ բաներ, որոնք ճիշտ էին, բայց նա չհայտարարեց, որ ինքը ճշմարտությունն *է:*

Հիսուսը չասաց. «Ես ձգտում եմ ճշմարտությանը», կամ «Ես բազմաթիվ ճշմարտություններից մեկն եմ»: Նա ասաց. «Ես եմ ճշմարտությունը»: Եվ եթե մենք ասենք, որ բոլոր ճանապարհները տանում են Հռոմ (կամ՝ դեպի փրկություն), մենք ստախոս ենք անվանում Հիսուսին:

Ի՞նչ է ճշմարտությունը

Ընդհանրապես, ի՞նչ է ճշմարտությունը: Աշխարհի սկզբից ի վեր մարդկությունը տվել է այս հարցը: Մենք գտնում ենք պատասխանը Հիսուսի խոսքերում՝ գրված Հովհաննեսի Ավետարանում. «Նրանց սուրբ արա Քո ճշմարտությամբ. Քո Խոսքը ճշմարտություն է» (17.17):

Այս խոսքը չի նշանակում, որ Աստծո Խոսքում ճշմարտություն կա, ինչը, իհարկե, այդպես է, այլ՝ որ Աստծո Խոսքն *ամբողջովին* ճշմարտություն է: Հիսուսը մարմին դարձած Խոսքն է, ինչը նշանակում է, որ Նրա կյանքը ցույց է տալիս կենդանի ճշմարտությունը: Ճշմարտությունն օրհնում է մեզ և օգնում է նվիրվել, որպեսզի առանձնացված լինենք Նրա սուրբ նպատակների համար: Առանց Հիսուսի, Ով ճշմարտությունն

է, չի կարող սրբություն լինել: Եթե Աստծո Խոսքը ճշմարտությունն է, և Հիսուսը մարմին դարձած Խոսքն է, նշանակում է՝ Հիսուսը ճշմարտությունն է: Թեև ճշմարտությունն անհատական չէ, մեկ օր յուրաքանչյուրս անհատապես հաշվետու է լինելու ճշմարտությանը:

> «Աստծո բոլոր խոսքերը մաքրված են.
>
> Նա ասպար է Իրեն ապավինողների համար:
>
> Չավելացնես Նրա խոսքերի վրա, որ միգուցե քեզ հանդիմանի, և դու ստախոս երևաս» (Առակ. 30.5,6):

Շատերը հավատում են, որ մենք առաջադիմել ենք իմաստության մեջ և զարգացել ենք՝ հասնելով մարդկային մտքի բարձունքներին, և եկել է ժամանակը այլ կերպ մեկնել Սուրբ գիրքը: Մի՞թե կարող ենք հավատալ դրան՝ հաշվի առնելով ներկա հասարակական խորը ցնցումները աշխարհով մեկ: Ամեն օր մենք լսում ենք հերթական դաժան արարքի մասին:

Եթե մենք ենք իմաստության չափանիշը, կարելի է ասել, որ երկիրը կշռել է մեզ և որոշել է, որ շատ թեթև ենք: Փոխարենը համարենք, որ լուսավորված ենք, մենք պետք է խնդրենք Աստծո լույսը:

> «Ուղարկի՛ր Քո լույսը և Քո ճշմարտությունը:Նրանք առաջնորդեն ինձ և տանեն դեպի Քո սուրբ սարը և դեպի Քո բնակարանները» (Սաղմ. 43.3):

Լույսը և ճշմարտությունը հավատարիմ առաջնորդներ են: Աստված լույս է և ամեն ճշմարտության աղբյուրն է: Լույսը լուսավորում է, իսկ ճշմարտությունն առաջնորդում է: Ճշմարտությունը կարելի է նմանեցնել ճանապարհային նշանների և ցուցանակների, իսկ լույսը՝ ճանապարհը գտնելու կարողությանը: Սակայն երբ ճանապարհային նշանները հեռացնեն, մարդիկ կարող են հեշտորեն մոլորվել:

> «Նեղ դռնով ներս մտե՛ք, որովհետև լայն է դուռը, և ընդարձակ՝ ճանապարհը, որ կորուստն է տանում, և շատերն են նրանով գնացողները: Քանի՜ նեղ է դուռը, և նեղվածք է ճանապարհը, որ տանում է կյանք, և քիչ են նրան գտնողները» (Մատթ. 7.13,14):

Հիսուսն է այն նեղ դուռը, որը տանում է դեպի կյանք: Նրա ճանապարհը հստակ է, սակայն դժվար է: Ոմանք ասում են, որ սիրող Աստված կընդգրկեր բոլորին: Նա այդպես էլ արել է: Նա հրավիրում է բոլորին *գալ:* Նա ճանապարհ է բացել մեզ համար, բայց մենք ենք որոշում, թե որ ճանապարհով գնալ: Հիսուսը չի հարկադրի մեզ մտնել նեղ դռնով: Նա չի ստի Իրեն հետևելու գնի մասին: Նա չի ասի, որ Իր ետևից գնալը հեշտ է, այն դեպքում, երբ դա հեշտ չէ: Նա գնացել է մեր առջևից և առաջարկում է հետևել Իրեն. «Եթե ուզում եք լինել Իմ աշակերտները, ուրացե՛ք ձեր անձը, վերցրե՛ք ձեր խաչը և հետևե՛ք» (տե՛ս Մարկ. 8.34):

Մատթեոս 7.13-ում գրված է ևս մեկ դռան մասին: Այն լայն մուտք ունի, որը տանում է դեպի ընդարձակ և հեշտ ճանապարհ: Այս մուտքի վրա գրված են բառեր, որոնք խրախուսում են մեզ ապրել մեզ համար և հետևել մեր երազանքներին: Այս լայն մուտքը թույլ է տալիս վերցնել այն, ինչ ուզում ենք: Այն շատ ավելի հայտնի է, սակայն կործանման է տանում:

Այս աշխարհում մենք տեսնում ենք՝ ասես խամրած հայելու մեջ նայելով: Այնպես որ, մեզ անհրաժեշտ է, որ լույսը և ճշմարտությունն ուղեկցեն մեզ, մինչ մենք ձգտում ենք այն բարձր և սուրբ կյանքին, որի համար Աստված կանչել է մեզ: Լույսը ցրում է խավարը, որը գալիս է, երբ ապրում ենք մեր մտքի ստվերների ներքո:

Ճշմարտությունը կարող է անհարմար կամ չսիրված լինել, բայց այն, միևնույն է, ճշմարտությունն է: Ճշմարտությունը հավիտենական է. այն ներհյուսված է Բարձրյալ Աստծո Խոսքի և կանոնների մեջ: Ճշմարտությունը կախված չէ հասարակական կարծիքից և չի որոշվում մրցութային կարգով:

Ճշմարտացիությունը և սուտը

Բոլորս ենք ստել: Մեզնից ոմանք ստել են՝ մտածելով, որ խոսում են ճշմարտությունը: Այլ դեպքերում մենք իմացել ենք, թե ինչ ենք անում, և միտումնավոր ստել ենք: Նույնպես, մարդիկ ստել են մեզ: Ճիշտ այնպես, ինչպես որ մենք ենք ակամա ստել, մարդիկ ստել են մեզ ոչ դիտավորյալ՝ մտածելով, որ իրենց ասածը ճիշտ է: Իսկ երբեմն մարդիկ ստել են մեզ միտումնավոր: Բացի այն, որ մենք ստել ենք, և մարդիկ ստել են մեզ, բոլորս հավատացել ենք ստերի: Ես կխոսեմ իմ մասին. *ես* հավատացել եմ ստերի:

Գոյություն ունեն բազմաթիվ պատճառներ՝ ստելու համար: Սուտն օգտագործվում է՝ մարդկանց ցավից պաշտպանելու համար: Մարդիկ ստում են, երբ վախենում են: Այլ դեպքերում, ստի նպատակը կորուստներից խուսափելն է: Մարդիկ ստում են, երբ չեն ուզում կորցնել իրենց փոխհարաբերությունները, ունեցվածքը կամ դիրքը: Նրանք նաև կարող են ստել՝ այս բաները ձեռք բերելու համար:

Դուք ստեղծված եք ճշմարտության համար: Այնպես որ, թեև երբեմն դա կարող է վախեցնել մեզ, մենք պետք է մշտապես ճշմարտացի լինենք ինքներս մեզ հետ: Ինքներս մեզ ստելը շփոթմունք է առաջացնում մեզանում: Իմ կյանքում կան բնագավառներ, որոնցում տարիներ շարունակ ստել եմ ինքս ինձ: Բայց մենք պետք է հիշենք, որ, ի վերջո, ճշմարտությունն է սատարելու մեզ:

Ես հավատացել եմ իմ մասին ստերի և լսել եմ ստեր ուրիշների մասին: Ես չեմ էլ կարող թվարկել, թե քանի անգամ եմ լիովին համոզված եղել, որ ինչ-որ բան ճիշտ է, սակայն հետագայում պարզվել է, որ ես սխալվել եմ:

Եթե ես թողնված լինեմ իմ մտքերին, իմ դատողությունը կարող է անցում կատարել տրամաբանությունից դեպի զգացմունքները և, ի վերջո, հասնել անհեթեթության: Իմ զգացմունքները կուրացրել են իմ զանազանելու կարողությունը

շատ ավելի հաճախ, քան կուզեի խոստովանել, և գերել են այն ստի թելադրանքին: Քանի դեռ սուտը դուրս չի բերվում թաքստոցից և չի ստուգվում ճշմարտության լույսի ներքո, այն անվերահսկելիորեն ավելանում է: Ստերը տարածվում են, քանի դեռ չի ասվում ճշմարտությունը:

Ստերը տարածվում են, քանի դեռ չի ասվում ճշմարտությունը:

Ապրել ճշմարտության մեջ

«Եվ Հիսուսն Իրեն հավատացած հրեաներին ասաց. «Եթե դուք Իմ խոսքի մեջ կենաք, ճշմարտապես Իմ աշակերտներն եք: Եվ ճշմարտությունը կճանաչեք, և ճշմարտությունը կազատի ձեզ»» (Հովհ. 8.31,32):

Ապրելով ճշմարտության (Աստծո Խոսքի) մեջ՝ մենք մտերմորեն կճանաչենք ճշմարտությունը, և այն ճշմարտությունը, որով կապրենք, կազատի մեզ: Ճշմարտությամբ ապրելը քանդում է գերության կապանքները ճիշտ այնպես, ինչպես որ ստերով ապրելը կուրացնում է մեզ: Հիսուսը հրավիրում է մեզ մոտենալ ճշմարտությանը, ինչպես որ բոլորը հրավիրված էին հարսանեկան խնջույքին.

««Արդ, գնացե՛ք դեպի ճանապարհների անցքերը, և ում որ գտնեք, կանչե՛ք հարսանիքը»: Եվ այն ծառաները դուրս գնացին ճանապարհները և ժողովեցին ամենին, ում որ գտան՝ չարը և բարին, և հարսանիք բազմականներով լցվեց: Բայց երբ որ թագավորը մտավ, որ բազմականներին մտիկ անի, այնտեղ մի մարդ տեսավ՝ հարսանիքի հանդերձ չհագած, և նրան ասաց. «Ընկե՛ր, ինչպե՞ս մտար այստեղ, որ հարսանիքի հանդերձ չունես»: Եվ նա պապանձվեց: Այն ժամանակ թագավորն ասաց ծառաներին. «Դրա ոտքերը և ձեռքերը կապե՛ք: Վե՛ր առեք դրան, դրսի խավարը գցե՛ք: Այնտեղ կլինի լացը և ատամների կրճտելը: Որովհետև շատերն

> են կանչված, բայց քչերը՝ ընտրված»» (Մատթ. 22.9-14):

Յուրաքանչյուրը կանչված է ապրելու ճշմարտության մեջ, սակայն գոյություն ունի ընդունված զգեստակարգ: Մենք հագնում ենք Քրիստոսին և Նրա արդարությունը, ոչ թե՝ մեր կեղտոտ ցնցոտիները: Գառը մեր հարսանեկան հանդերձն է, մեր անկոտրում ճանապարհը և մեզ ծածկող Անկյունաքարը:

Ճշմարտությունը կարող է վիրավորական լինել: Թոմաս Պեյնը գրել է. «Նա, ով չի համարձակվում վիրավորել, չի կարող ազնիվ լինել»: Ես գերադասում եմ վիրավորվել ճշմարտությամբ, քան մուտք գործել հավիտենություն ստի ճանապարհով: Նմանապես, ավելի լավ է՝ ես ռիսկի դիմեմ և վիրավորեմ մարդկանց, քան ստեմ:

Հիսուսը վիրավորեց Իր ամենամոտ աշակերտներին: Հովհաննեսի Ավետարանում գրված է.

> «Նրա աշակերտներից շատերն ասացին. «Սա շատ դժվար է հասկանալ: Ինչպե՞ս ինչ-որ մեկը կարող է ընդունել սա»: Հիսուսն իմացավ, որ Իր աշակերտները տրտնջում էին, և ասաց նրանց. «Սա վիրավորո՞ւմ է ձեզ»» (6.61,62, NLT):

Ինչո՞ւ նրանք վիրավորվեցին: Հիսուսը շատ խիստ ճշմարտություն ասաց: Մի քանի խոսք առաջ Նա հայտարարեց. «Ես ճշմարտությունն եմ ասում ձեզ, եթե դուք չուտեք մարդու Որդու մարմինը և չխմեք Նրա արյունը, չեք կարող հավիտենական կյանք ունենալ ձեզանում» (6.53, NLT):

Այս պնդումը վեր էր նրանց պատկերացումից: Հիսուսը գիտեր, որ այդ պահին Իր խոսքերն անհասկանալի էին նրանց համար: Նա նույնպես գիտեր, որ հետագայում նրանք լիովին հասկանալու էին այն, ինչ Ինքն ասում էր: Կարծում եմ՝ պետք է հարցնենք մեզ. «Մենք կհետևե՞նք Հիսուսին (ճշմարտությանը) նույնիսկ այն դեպքում, երբ չենք հասկանում»:

Մենք պետք է պատասխանենք այս հարցին բազմաթիվ բնագավառներում: Մենք պետք է պատասխանենք այս հարցին՝ որ-

պես ծնողներ, ընկերներ, ամուսիններ, առաջնորդներ, սպառողներ և ամենակարևորը՝ որպես կենդանի Աստծո ծառաներ:

Օրինակ, եթե ես անառողջ հարաբերություն ունեմ և ոչինչ չեմ անում, ես թույլ եմ տալիս, որ անառողջ վարքը շարունակվի: Լուռ մնալը քրիստոնեավայել չէ. դա շփոթության մեջ է գցում մեզ: Բոլորս էլ աճելու հնարավորություն ունենք ողջամիտ առերեսումների և զրույցների ժամանակ: Եթե ոչինչ չի ասվում, և ամեն ինչ ընթանում է իր հունով, վրդովմունքը կշարունակի ավելանալ և կվերաճի այնպիսի պոռթկման, որը լիովին անակնկալ կլինի հակառակ կողմի համար: Բացասական քայլեր ձեռնարկելը հազվադեպ է դրական արդյունքներ տալիս: Նույնը վերաբերում է ոչինչ չանելուն:

Մենք կհետևե՞նք Հիսուսին (ճշմարտությանը) նույնիսկ այն դեպքում, երբ չենք հասկանում:

Չխոսելով ինչ-որ բանի մասին՝ մենք հավանություն ենք տալիս դրան: Երբ չենք խոսում խնդիրների մասին, մենք ասում ենք. «Ես այնքան էլ չեմ մտածում ապագայում մեր հարաբերությունների մասին»: Երբ մենք հոգ ենք տանում, մենք խոսում ենք այնպես, որ մեր խոսքերը լսվեն, որպեսզի հաղորդակցման ուղիներ կառուցենք ապագայի համար: Եթե իսկապես հոգ ենք տանում Քրիստոսի մարմնի մասին, պետք է այնպես անենք, որ մեր գործերը և անգործությունը, մեր խոսքերը և լռությունը մշտապես պատիվ բերեն ճշմարտությանը:

Ապրել խիզախությամբ և համոզմունքներով

Երբ Աստծո ձեռքը մեզ վրա է, դա ակնհայտորեն երևում է մեր կյանքում: Երբ Աստծո Խոսքը ոչ միայն համարձակ քարոզվում է, այլև վստահությամբ կիրառվում է, ստեղծվում է մթնոլորտ փոփոխության համար: Մեզանում փոփոխություն

է տեղի ունենում: Մենք ոչ միայն լսում ենք ճշմարտությունը, այլև ապրում ենք դրանով: Որքան ավելի է Սուրբ Հոգին արթնացնում մեզ, այնքան ավելի ուշադիր ենք մենք դառնում, ավելի հաստատ ենք կանգնում և ավելի խորն ենք գիտակցում, որ այն ճշմարտությունը, որը կրում ենք մեր մեջ, սուրբ է: Երբ Աստծո Խոսքը քարոզվում է մեր կյանքով, Սուրբ Հոգին պողպատի պես ամուր է դարձնում մեր համոզմունքները:

Ովքեր լսելու ականջ ունեն, նույնպես իմաստություն և խիզախություն կստանան՝ ճշմարտությամբ ապրելու համար: Աստծո Խոսքն ընկնում է բարի հողի մեջ և պտուղ է բերում առաջին հերթին՝ մեր կյանքում: Նախ՝ դա տեղի է ունենում մեր *ներսում,* որպեսզի կատարվի նաև մեր *միջոցով:*

Վերջերս սոցիալական ցանցերի միջոցով զրուցեցի մի աղջկա հետ, որը գեղեցիկ էր, երիտասարդ և խիզախ՝ իր հավատքի մեջ: Նա հարցրեց, թե ինչպես եմ ես դիտարկում այն փաստը, որ զարմանալի հոգևոր պարգևներով օժտված հանրահայտ ծառայողները խարխլված անձնական կյանք ունեն: Նրանց կյանքը թունավորված էր ամեն ինչով՝ սկսած շնությունից և խմիչքի չարաշահումից մինչև ֆինանսական խարդախությունը: Ես պատասխանեցի, որ իմ կարծիքով՝ մեր կյանքը քարոզում է ավելի բարձր, քան մեր պարգևները: Աստծո պարգևները պետք է շրջապատված լինեն Հոգու պտղով, որը զարգանում է, երբ մենք հնազանդվում ենք ճշմարտությանը:

Երբ գիտենք ճշմարտությունը, մենք չենք կարող այնպես վարվել, ասես անտեղյակ ենք դրան: Եթե չգիտենք ճշմարտությունը, մենք այն փնտրելու կանչ ենք լսում: Մենք փնտրում ենք այն Աստծո Խոսքում և տեսնում ենք Հիսուսի կյանքում: Եվ բացահայտելով՝ մենք չենք կարող ձևացնել, որ չենք լսում մեր մշակույթի խլացնող աղաղակը, որը գերության մեջ է՝ ինքն իրեն ստելու պատճառով: Նույնիսկ այս պահին կան մարդիկ, ովքեր գիտակցում են, որ այն, ինչն, իրենց կարծիքով, ազատություն էր, իրականում կապանք է: Հիսուսը մեր ճշմարտությունն է՝ ստերի աշխարհում:

Ճշմարտությունը և՛ առյուծ է, և՛ գառ:

Ճշմարտությունն անկոտրում է, անթափանցելի է ստերի համար և անսասան է ժամանակի գետի համար:

Ճշմարտությունը նույնքան բարձր է խոսում շշուկով, որքան՝ գոչելով:

Ճշմարտությունը ո՛չ ուժգնացվում է, ո՛չ էլ թուլացվում կարծիքներով:

Ճշմարտությունը դժվար է, բայց ոչ մի դեպքում կոպիտ չէ:

Ճշմարտությունը չի վիճում, քանի որ այն վերջին խոսքն է:

Ճշմարտությունը պարզապես անժամանակյա չէ. այն հավիտենական է:

Ճշմարտությունը համոզմունք է առաջացնում:

Մենք անկոտրում կերպով հակառակվում ենք ճշմարտության ցանկացած խեղաթյուրմանը՝ ապրելով ըստ ճշմարտության Խոսքի: Ճշմարտությունը պետք է ակնհայտորեն երևա մեր կյանքում: Մենք չենք կարող ընտրել լուռ հարմարավետությունը, երբ անթիվ մարդիկ ապրում են ստերից առաջացած նեղության մեջ:

Սիրելի երկնային Հա՛յր,

Թող Քո ճշմարտությունն ակնհայտորեն երևա իմ կյանքում: Ես խնդրում եմ, որ ուժ տաս ինձ, որպեսզի խիզախորեն ապրեմ՝ ըստ իմ համոզմունքների, խոսեմ Քո ճշմարտությունը և ապրեմ Քո ճշմարտությամբ: Թող իմ խոսքերը լինեն մեղմ, ոչ թե կոպիտ: Թող որ ամեն ինչ իմ կյանքում սիրով արտահայտի Քո ճշմարտությունը:

8

ԱՆԿՈՏՐՈՒՄ՝ ԽՈՍՔԻ ՄԵՋ

«Քարը նետելուց հետո չես կարող կրկին ետ բերել այն, սակայն դու պատասխանատու ես քարը բարձրացնելու և նետելու համար, որովհետև այդ արարքն առաջացավ քո ներսում»:

Արիստոտել

Ձեր բառերը ստեղծում են ձայնային ալիքներ, որոնք նման են քարերի՝ հեռու նետված այն օվկիանոսի մեջ, որը մենք աշխարհ ենք անվանում: Որքան ավելանում է մեր ազդեցությունը մարդկանց սրտերի և ականջների վրա, այնքան մենք ավելի հաշվետվողականության և իմաստության կարիք ունենք:

Վերջերս լսեցի, որ Խաղաղ օվկիանոսում աղբի հսկայական կուտակում կա: Ըստ որոշ տվյալների՝ այն ավելի մեծ է, քան Մեքսիկան, իսկ Տեխաս նահանգը գաճաճ է համարվում դրա համեմատ: Այն կոչվում է «Խաղաղ օվկիանոսի հյուսիսային աղբակույտ»: Այդ աղբակույտը գրավում է մեկ միլիոն քառակուսի մետր տարածք և գրեթե 8.3 միլիոն տոննա քաշ ունի: Այս պլաստիկ թափոնների զանգվածը կուտակվում է օվկիանոսի

հոսանքների միջոցով: Պլաստիկ նյութերի քայքայման համար պահանջվում է մոտավորապես 400 տարի: Այնպես որ, շատ իրատեսական մտահոգություն կա, որ մինչև 2050 թվականը պլաստիկ նյութերի ծավալն օվկիանոսում կարող է գերազանցել ջրային ձկների և կենդանիների ընդհանուր քաշը: Երբ պլաստիկը սկսում է քայքայվել, այն ուտում են ճայերը, ինչպես նաև՝ ջրային ձկները և կենդանիները: Պլաստիկի մասնիկները հայտնվում են ձկների մարմիններում, որոնցով սնվում են մարդիկ: Ծովային արարածներին սպանելուց և մարդկանց թունավորելուց բացի՝ այս կենսաբանորեն վտանգավոր թափոններն ապագայում կարող են դժվարացնել մարդկանց տեղաշարժն օվկիանոսով: Ես ուզում եմ ցույց տալ, որ իրականում պլաստիկը չի անհայտանում, իսկ ժամանակի ընթացքում այն է՛լ ավելի անճանաչելի և վտանգավոր է դառնում[1]:

Ես չեմ կարող զուգահեռ չանցկացնել այս պլաստիկ թափոնների ահռելի քանակի և մեր վնասակար, վտանգավոր և աղտոտող բառերի միջև:

Լեոնարդո դա Վինչին կրկնում է Արիստոտելի գաղափարը.

> «Եթե դու քար ես գցում լճակի մեջ, այն ալիքները, որոնք հասնում են ափերին, կրկին վերադառնում են դեպի այն վայրը, որտեղ ընկել էր քարը, և հանդիպելով այլ ալիքների՝ չեն կանգնեցնում միմյանց ընթացքը: Լճակում մեկ քարընկեցը ծնունդ է տալիս բազմաթիվ շարժումների՝ առաջընթաց և ետընթաց»[2]:

Առաջընթաց և ետընթաց: Արդյո՞ք մեր խոսքերն առաջ են տանում Քրիստոսի ուղերձը, թե՞ դրդում են մարդկանց ետ գնալ: Երանի՜ մեր քարերն ընկնեին միայն փոքրիկ լճակներում: Բայց ավա՜ղ, դրանք ընկնում են և ալիքներ են ստեղծում անծայրածիր ջրերում: Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, որ որքան էլ հեռու նետենք քարը, դրա ազդեցությունը կվերադառնա մեր ափերը: Եթե այն, ինչ մենք

փոխանցում ենք մարդկանց, մեր համոզմունքն է Աստծո սիրո մեջ, դրանից բարության օղակներ դուրս կգան: Բայց եթե մենք նետում ենք բամբասանքի և չարախոսության քարեր, մեզ վերադարձող ալիքները նույն տեսակի կլինեն:

Խոսքը սրբազան գործիք է, որը վստահվել է մեզ Արարչի կողմից: Ոչ ոք իրավունք չունի կարծիքների օվկիանոսի մեջ նետել այն, ինչ ինքը զգում է ինչ-որ պահի՝ հարկադրելով մարդկանց բախվել իր անհաջող ուղերձին: Իրականում, սա ոչնչով չի տարբերվում աղբ նետելուց: Երբ մեր խոսքերն ասված են, այլևս ոչինչ չի կարելի անել: Մենք պատասխանատու ենք մեր խոսքերի համար: Սա ընդգրկում է գրելը, խոսելը, գրառումներ անելը և գրառումներով կիսվելը: Շնորհքը չի ջնջել Նոր կտակարանի զգուշացումները: Լսե՛ք Հակոբոսին.

> «Շատ վարդապետներ մի՛ եղեք, եղբայրնե՛րս՝ գիտենալով, որ մեծ դատաստան պիտի ընդունեք» (Հակոբ. 3.1):

Սովորեցնել՝ նշանակում է փոխանցել, հաղորդել, բացատրել, ցույց տալ, խրատել, կրթել, պարզաբանել և ցուցադրել: Այս խոսքը չի վերաբերում միայն ուսուցիչներին: Եթե մենք անում ենք որևէ բան այս ամենից, այս զգուշացումը վերաբերում է նաև մեզ: Սոցիալական ցանցերում գրառումներ անելը, ինտերնետային բլոգ վարելը և ձեր տեղական եկեղեցում սովորեցնելը պետք է արվի ճշմարտությամբ, իմաստությամբ, ինչպես նաև հաղորդակցական և աստվածաբանական հաշվետվողականությամբ: Այն, ինչ մենք գրում, սովորեցնում և ասում ենք, պետք է համապատասխանի Սուրբ գրքին:

Կարծի՞ք, թե՞ համոզմունք

Խոսքի մեջ անկոտրում լինելու համար պահանջվում է տարբերել կարծիքը ճշմարտությունից: Այնքան հեշտ է կար-

ծիքներ կազմելը, և այնքան դժվար է դրանք մեր ներսում պահելը: Եթե մենք չզգուշանանք, ապա կարծիքներ հայտնելը և ընդունելը կարող է կախվածություն առաջացնել: Մենք կարող ենք ակնթարթորեն տեսնել, թե ինչ են մարդիկ մտածում և զգում ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով: Նույնպես, մենք կարող ենք մի քանի վայրկյանում ավելացնել մեր կարծիքը կարծիքների օվկիանոսին: Միգուցե ոգևորիչ է լսելը, թե ինչ են մարդիկ ասում, հատկապես երբ զրուցում են մեզ հետ: Սակայն ես պետք է զգուշացնեմ ձեզ. թույլ մի՛ տվեք, որ հարաբերականորեն անծանոթ մարդկանց կարծիքը չափազանց մեծ ազդեցություն թողնի ձեզ վրա:

Այնքան հեշտ է կարծիքներ կազմելը, և այնքան դժվար է դրանք մեր ներսում պահելը:

Թույլ մի՛ տվեք, որ անծանոթ մարդիկ խոցեն ձեզ իրենց անփույթ խոսքերի նետերով: Թույլ մի՛ տվեք, որ ձեր վիրտուալ շփման շրջանակն ավելի մեծ ազդեցություն թողնի ձեզ վրա, քան իրականը: Դուք ծնվել եք սարերը գետնին հավասարեցնելու համար, ոչ թե՝ լրահոսներ թերթելու: Դուք ծնվել եք երես առ երես հարաբերությունների համար, ոչ թե՝ գրաֆիկական պատկերակների: Խոսե՛ք Աստծո Խոսքը, մի՛ արծագանքեք Աստծո Խոսքին միայն գրառումներ հավանելու և դրանցով կիսվելու միջոցով: Այդ ամենը սխալ չէ, սակայն խիստ սահմանափակ է: Դուք ստեղծված եք իրական հաղորդակցման համար:

Մի՛ ընկեք համեմատությունների ծուղակը, քանի որ ձեր սրտի խորքում դուք ձգտում եք ավելիին: Դուք ստեղծվել եք ձեր Արարչի համար: Ինչո՞ւ լսել անծանոթներին, երբ դուք հրավիրված եք Բարձրյալի հետ մտերմորեն հաղորդակցվելու համար: Աստված հրավիրել է ձեզ անմիջապես Իր ներկայության մեջ: Հենց այդտեղ՝ համեմատություններից և խանգա-

րող հանգամանքներից ազատ, Սուրբ Հոգին կյանք կփչի ձեր մեջ, կկանգնեցնի ձեզ և կլցնի ձեր բերանն Իր Խոսքով: Տե՛ղ ազատեք ձեր կյանքում Աստծո Հոգու համար:

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, որտեղ կան ավելի շատ կարծիքներ, քան համոզմունքներ, ինչը ծանր երևույթ է: Կարծիքները երերուն են դարձնում մեզ, իսկ համոզմունքները հաստատում են: Կարծիքները հիմնավորված չեն՝ նման պլաստիկ շշերի, որոնք ազատորեն լողում են օվկիանոսում: Կարծիքները վերաբերում են մարդկանց և երևույթների և փոխվում են հասարակական միտումների հետ: Որպես քրիստոնյաներ՝ պետք է ունենանք Աստծո Խոսքով ձևավորված համոզմունքներ, որոնք իրենց հերթին պետք է ձևավորեն մեր կարծիքները: Թույլ մի՛ տվեք կարծիքներին արմատախիլ անել ձեր համոզմունքները:

Վճռականություն

> «Բա՛ց պահեք ձեր աչքերը, ամուր հարե՛ք ձեր համոզմունքներին, ամբողջովին նվիրվե՛ք դրանց, վճռակա՛ն եղեք» (Ա Կորնթ. 16.13, MSG):

Ի՞նչ է նշանակում վճռական լինելը: Լինել անկոտրում՝ անշարժ, անփոխզիջում և անպարտելի:

Որպես մարդամոտ, ներըմբռնողական և զգացմունքային անձնավորություն՝ ինձ համար դժվար է այսպիսին լինել: Համաձայն իմ խառնվածքի՝ ես պատրաստ եմ տեղ տալ թե՛ իմ, թե՛ այլ մարդկանց զգացմունքներին: Ես ցանկանում եմ, որ բոլորը ճիշտ լինեն, որ մարդիկ ճիշտ, երջանիկ, լսված և ընդունված զգան իրենց: Միևնույն ժամանակ, կարող եմ խիստ համառորեն և զգացմունքորեն վերաբերվել ամեն ինչին՝ սկսած իմ առավոտյան էսպրեսոյից մինչև սոցիալական արդարության հարցերը (իսկ դա շատ հոգնեցուցիչ է): Ես անտանելի կդառնայի, եթե չլիներ Աստծո Խոսքը: Առանց Աստվածաշնչի՝

ես նման կլինեի պարան չունեցող օդապարուկի, որը մի պահ սավառնում է իսկ հաջորդ պահին ինչ-որ բանի է բախվում: Ես պետք է վճռականորեն որոշում կայացնեմ, որ իմ կարծիքները ենթարկվելու են իմ համոզմունքներին: Հակառակ դեպքում, ցանկացած մշակութային քմահաճույք կարող է ազդեցություն թողնել ինձ վրա:

Սոցիալական ցանցերը կարող են արտահայտիչ կերպով ցույց տալ մեր և՛ թույլ, և՛ ուժեղ կողմերը: Տարիներ առաջ խճճվել էի մի քննարկման մեջ Ֆեյսբուքում: Ես մտածում էի, որ եթե ճիշտ կերպով շարադրեի իմ մտքերը և կարողանայի ավելի պարզ արտահայտվել, ինձ հետ վիճող մարդիկ կհասկանային ինձ: Սակայն ես դոփում էի տեղում, քանի որ, առանց հասկանալու, հայտնվել էի վեճեր հրահրող մարդկանց ազդեցության ներքո:

Ես կանգ առա միայն, երբ իմ որդիներից մեկը նկատեց դա: Նա վերցրեց իր հեռախոսը և բացատրեց.

- Մայրի՛կ, այդ մարդիկ չեն ուզում հասկանալ: Նրանք ուզում են վիճել քեզ հետ մեծ լսարանի առջև: Նրանք օգտագործում են քո հարթակը՝ քեզ վրա հարձակվելու համար: Հերի՛ք է խոսես նրանց հետ: Պարզապես արգելափակի՛ր նրանց:

Ես մտածեցի՝ մի՞թե կարելի է արգելափակել ինչ-որ մեկին: Մի՞թե դա չարության դրսևորում չի լինի: Ո՛չ. այդ դեպքում ես պաշտպանում էի իմ հարթակը և այն մարդկանց, որոնք այցելում էին այդ հարթակ: Կա մեծ տարբերություն սոցիալական ցանցերի և թշնամությամբ լցված ցանցերի միջև:

Դա առնվազն հայտնություն էր ինձ համար:

Այն, ինչ մենք քննարկում էինք, հավիտենական կարևորություն ունեցող թեմա չէր: Դա վերաբերում էր կարծիքներին, ոչ թե համոզմունքներին: Բոլորս ենք տեսել սոցիալական ցանցերում, թե ինչպես է ամբոխը հարձակվում որևէ անհատի կամ իրադարձության վրա... մեծ արագությամբ: Արդյունքում ես սովորել եմ ունենալ հաստատուն համոզմունքներ և փոփոխական կասկածներ:

Սոցիալական ցանցերն, անկասկած, այն ոլորտներից են, որ-

տեղ ամբոխի ճնշումն ամենամեծն է: Մարդկանց թույլատրված է գրառումներ անել ցանկացած թեմայով: Այնպես որ, օգտագործե՛ք ձեր խոսքի պարգևը՝ օրհնելու, զորացնելու, խրախուսելու և առաջնորդելու համար: Հետևե՛ք այն մարդկանց, որոնք անում են նույնը: Հաստատե՛ք այն, ինչն արժանի է հաստատման, հաղորդակցվե՛ք ողջամիտ մարդկանց հետ, հարգալից կերպով հարցեր տվեք, սակայն այնպես ապրեք, որ հաճելի լինեք Աստծուն, ոչ թե մարդկանց: Աստվածաշունչը զգուշացնում է մեզ.

> «Բայց դու պետք է *տեղյակ լինես*, որ վերջին օրերում հասարակության բարքերն այնպիսի այլասերում և անկում կապրեն, որ Աստծո ժողովրդի համար չափազանց դժվար կլինի» (Բ Տիմոթ. 3.1, ՏՊՏ):

Այս խոսքը՝ Աստվածաշնչի «Քինգ Ջեյմս» թարգմանությամբ, սկսվում է «Սա՛ էլ իմացիր...» խոսքերով և նկարագրում է վերջին ժամանակները՝ որպես «վտանգավոր»: Անգլերեն «Ստանդարտ» թարգմանությունը հորդորում է մեզ. «Հասկացի՛ր... կգան դժվարին ժամանակներ»: «Մեսիջ» թարգմանության մեջ գրված է. «Միամիտ մի՛ եղիր: Առջևում դժվար ժամանակներ են»:

Որքանով տեղյակ եմ, այդ դժվարություններն արդեն սկսվել են: Այլասերումը մշտապես սկսվում է հասարակական կառուցվածքը և ճշմարտությունը համակարգված կերպով խարխլելով: Ինչպես որ մենք սովորում ենք անկոտրում լինել Հիսուսի ճշմարտության մեջ, Ով մեր ճանապարհն է, նույնպես սովորենք անկոտրում լինել մեր խոսքի մեջ՝ հիմնվելով մեր համոզ-

Ինչպես որ մենք սովորում ենք անկոտրում լինել Հիսուսի ճշմարտության մեջ, Ով մեր ճանապարհն է, նույնպես սովորենք անկոտրում լինել մեր խոսքի մեջ՝ հիմնվելով մեր համոզմունքների վրա:

մունքների վրա: Եկեք ընդունենք Պողոսի խոսքերը՝ ուղղված Առաջին եկեղեցուն:

> «Գիտենալով՝ Աստծուց սիրված եղբայրնե՛ր, ձեր ընտրությունը, որ մեր Ավետարանը ձեզ մոտ չեղավ միայն խոսքով, այլև զորությամբ և Սուրբ Հոգով և շատ լիությամբ, ինչպես լավ գիտեք, թե որպիսիք եղանք ձեր մեջ ձեզ համար: Եվ դուք նման եղաք մեզ և Տիրոջը՝ խոսքն ընդունելով շատ նեղության մեջ Սուրբ Հոգու ուրախությամբ» (Ա Թեսաղ. 1.4-6):

Ժամանակն է, որ լսենք, և ես կհամարձակվեմ ասել՝ որ հնազանդվենք Նրան, Ով շնորհել է մեզ խոսքի արտոնությունը: Նա, Ով շատ վաղուց խառնեց լեզուները Բաբելոնի աշտարակաշինության ժամանակ, կարող էր լռեցնել մեզ, բայց փոխարենը որոշեց խրատել՝ խոսքի պարգևը գործածելու մեջ:

«Կյանք՝ առանց մրցակցության» գիրքը գրելիս ես աշխատում էի մի գլխի վրա, որի թեմայի վերաբերյալ չեմ կարող չեզոք դիրքորոշում ունենալ. խոսքը սեռերի մասին է: Այդ գլխի նախնական տարբերակում ես շարունակ խոսում էի ընդդեմ մի ծառայողի թյուր ուսմունքների: Ես համոզված էի, որ պետք է մանրամասնորեն բացատրեի ամեն ինչ: Իմ արձակագրությունը հիմնականում վերածվել էր բանավեճի: Հասկանալով, որ մոլորվել էի կարծիքների մեջ՝ ես ուղարկեցի այդ գլուխն իմ վստահելի ընկերուհիներից մեկին:

Նա մեղմորեն ասաց, որ իմ բառերը վերածվել էին դատարկախոսության: Գրելու ընթացքում ես պարզապես սկսել էի տեղի տալ իմ զգացմունքներին, ինչի արդյունքում վեճի մեջ էի ներքաշելու իմ ընթերցողներին: Նա ցույց տվեց այն մասը, որն անհրաժեշտ էր հեռացնել. դա ամբողջ գլխի կեսն էր: Ես լսեցի: Խմբագրեցի: Եվ ուրախ եմ, որ արեցի դա: Ոչ ոք չպետք է անտեսի կարծիքների աշխարհում մոլորվելու վտանգը: Բոլորս կարիք ունենք այնպիսի մարդկանց, ովքեր կասեն մեզ

այն, ինչ չենք ուզում լսել: Մարդկանց, որոնց հետ մենք իրական շփում ունենք: Մարդկանց, որոնք հասանելի են և ունեն մեր հեռախոսահամարը: Մարդկանց, որոնց մենք ենթարկվում ենք: Այո՛, ես հենց դա նկատի ունեմ: Եթե մենք չենք ենթարկվում ինչ-որ մեկի իշխանությանը, նշանակում է, որ մենք չունենք իրական իշխանություն: Մենք ունենք իշխանություն ոչ թե հետևորդների որոշակի քանակի, այլ՝ հաշվետվողական նեղ շրջանակում լինելու շնորհիվ:

Բոլորս կարիք ունենք այնպիսի մարդկանց, ովքեր կասեն մեզ այն, ինչ չենք ուզում լսել:

Մենք ապրում ենք մի մշակույթում, որտեղ կարծիքներն անկառավարելի են, և բառերը հրթիռների պես արձակվում են թե՛ թշնամիների, թե՛ ընկերների վրա: Այս ամենը ուղղակիորեն հակառակ է Հակոբոսի գրքի հորդորին («թող ամեն մարդ շուտ լինի լսելու համար, և ծանր՝ խոսելու համար, և ծանր՝ բարկանալու համար», 1.19): Հաճախ մարդիկ թույլ են տալիս, որ իրենց խոսքերը թևեր առնեն՝ առանց գիտակցելու, որ դրանք անակնկալի են բերելու ոչնչի մասին չկասկածող աշխարհը: Այս ժամանակաշրջանում, որտեղ մենք ունենք մեծ հնարավորություններ և ցածր հաշվետվողականություն, իրականում չենք կարող իմանալ, թե որտեղ կհասնեն մեր խոսքերը և ինչ արդյունք կունենան: Մենք չենք կարող վերահսկել այն, ինչի ազդեցությունը չենք կարող գնահատել:

Ես հեռու եմ մնում որոշ ֆորումներից, քանի որ Սուրբ գիրքը զգուշացնում է մեզ. «Հիմար և անկիրթ վիճաբանություններից ե՛տ քաշվիր՝ իմանալով, որ կռիվներ են ծնում» (Բ Տիմոթ. 2.23): Եթե ես չունեմ սպառիչ տեղեկություն ինչ-որ հարցում, կարիք չկա, որ դատողություններ անեմ այդ մասին: Եվ եթե ես պատասխանատու չեմ ինչ-որ բանի համար, մի՞թե արժե, որ պատասխանեմ: Իմ կարծիքները կարող են տատանվել՝ հա-

մածայն մարդկանց կամ երևույթների մասին ունեցած իմ պատկերացումների: Ես փորձում եմ (որքան հնարավոր է) թույլ չտալ, որ իմ կարծիքները գերակշռեն իմ համոզմունքները:

Առաջնորդվելու համար ոչ թե կարծիքներով, այլ ճշմարտությամբ, մենք պետք է ծանոթ լինենք Աստվածաշնչի ճշմարտությանը, և երբեմն մեզ օգնություն է հարկավոր՝ այն տարբերելու համար: Իմ ընկերուհիներից մեկը պատմում էր, որ ինչ-որ նյութեր էր կարդում, և ինչ-որ պահի դրանք տարօրինակ թվացին իրեն: Այնուամենայնիվ, նրա ներսում համակրանք էր առաջացել այդ նյութերի հեղինակի հանդեպ. այնպես որ, նա ցույց տվեց իրեն անհանգստացնող հատվածն իր ամուսնուն: Նրա ամուսինը տող առ տող կարդաց այդ հատվածը և բացատրեց, թե ինչպես էր հեղինակն անցում կատարել Աստվածաշնչի ճշմարտությունից իր անձնական փորձառությանը: Նույնիսկ Պողոս առաքյալը հանդիմանեց Պետրոսին, որ նա այլ կերպ էր վարվում, երբ հեթանոսների հետ էր, և այլ կերպ՝ երբ հրեաների հետ էր: Ճշմարտությունը խոսողները հարկավոր են բոլորիս:

Բառերի ուժը

Բառերը սերմեր են, որոնց պտուղը կարող է լինել կյանքը կամ մահը: Բառերը քարեր են, որոնցով կարելի է կառուցել կամ սպանել: Եկեք չասենք, որ սիրում ենք Աստծո Խոսքը, իսկ հետո հակասենք դրան մեր բառերով: Բառերը և՛ արժեքավոր են, և՛ վտանգավոր:

Մերձավոր Արևելքում քարկոծումը մահապատժի տեսակներից էր, որն ընդունել էին, որպեսզի ոչ ոքի չկարողանային մեղադրել հանցավորի մահվան մեջ: Քարկոծումը տեղի է ունենում նաև Արևմուտքում: Պարզապես մենք այլ կերպ ենք անում դա: Մենք քարերով չենք հարվածում, այլ՝ բառեր ենք նետում: Եվ որքան ավելի շատ մարդիկ են մասնակցում բառեր նետելուն, այնքան ավելի քիչ է մեր մեղքի զգացումը: Եթե բոլորն

ասում են նույնը, նշանակում է՝ ոչ ոք մեղավոր չէ, ճի՞շտ է:

Մեր մշակույթը կարող է ընդունել նման տրամաբանությունը, սակայն՝ ոչ մենք: Մենք կանչված ենք ավելի բարձր նպատակի և չափանիշի համար: Մենք այս աշխարհի քաղաքացիները չենք: Մենք հասկանում ենք բառերի ուժը, նույնիսկ եթե այս աշխարհը չի հասկանում դա: Մենք չենք կարող մեզ թույլ տալ քարկոծել մարդկանց, քանի որ գիտենք ավելի լավ ճանապարհի մասին, իսկ ավելի լավն իմացողը ի զորու է նաև ավելի լավ վարվել:

Աստծո Խոսքի ճրագը և Սուրբ Հոգու առաջնորդությունը էապես կարևոր են, եթե մենք պատրաստվում ենք նավարկել կասկածների աշխարհում: Շփոթմունքի ծածկոցի ներքո ստերն ավելի են շատանում: Ես չունեմ բոլոր պատասխանները, և անհնար է, որ խոսեմ ձեր եզակի իրավիճակի մասին: Ես չեմ ուզում ասել ձեզ, թե ինչպես վարվեք: Իմ գործն է՝ ուղղորդել ձեզ դեպի աղբյուրը և օգնել, որ լսեք և սովորեք:

Բամբասանք

Եկեք ուշադրություն դարձնենք մեր խոսքերին և դադարենք տրտմեցնել Աստծուն: Բամբասանքը երբեք չի փառավորել Աստծուն, իսկ սոցիալական ցանցերը երբեմն լցված են միայն բամբասանքով: Առաջին անգամ, երբ ես տրտմեցրի Սուրբ Հոգուն, անմիջապես զգացի դա: Կարիք չկար, որ ինչ-որ մեկն ասեր ինձ այդ մասին: Ես ինքս հասկացա դա: Չեմ հիշում, թե ինչ ասացի: Ես հիշում եմ, թե ինչ զգացի: Հանկարծ որովայնիս ներսում տագնապալի թրթիռ սկսվեց... այնպիսի վատ կանխազգացում, որը զգուշացնում է վերահաս վտանգի մասին:

Ես այդպես էի զգում ինձ, երբ երեխա էի և ստում էի ծնողներիս: Ես նման բան չէի զգացել արդեն տարիներ շարունակ: Նախորդ տասը տարվա ընթացքում ասում էի այն, ինչ ուզում էի: Ես չէի էլ անհանգստանում, երբ ոչ հաճելի կերպով էի խո-

սում ինչ-որ մեկի մասին: Չէ՞ որ ես պարզապես կրկնում էի այն, ինչ տեսել և լսել էի: Ինչո՞ւ էի զգում դա, եթե իմ բոլոր մեղքերը ներված էին:

Իմ քրիստոնեական ընթացքի սկզբում ես չէի գիտակցում, որ ամեն ինչ փոխվել էր այն պահից, երբ խնդրել էի Սուրբ Հոգուն լինել իմ Խորհրդատուն ամեն հարցում: Նա լրջորեն է վերաբերվում այս աշխատանքին:

Մեզնից շատերը երբեք միտումնավոր չեն թալանի, սպանի կամ անիծի ինչ-որ մեկին, բայց բամբասանքի միջոցով մենք կարող ենք անել երեքը միաժամանակ: Ես գիտեմ, որ իմ բերանն ավելի շատ խնդիրներ է առաջացրել իմ կյանքում, քան ցանկացած այլ բան: Ցավոք, այն, ինչ ես խոսել եմ, խնդիրներ է առաջացրել նաև այլ մարդկանց կյանքում: Ես տրտմեցրել եմ իմ ամուսնու սիրտն իմ անզգույշ խոսքերով շատ ավելի հաճախ, քան կուզեի խոստովանել: Ես տրտմություն եմ պատճառել իմ երեխաներին չափազանց թույլ կամ չափազանց խիստ խոսքերով: Ես խոսել եմ այն բաների դեմ, որոնց վերաբերյալ իրավունք չունեի բարձրացնել իմ ձայնը: Ես լուռ եմ եղել, երբ պետք է օգնության ձեռք մեկնեի: Ես նաև գիտեմ, որ այլ մարդկանց խոսքերն ավելի շատ խնդիրներ են ստեղծել իմ կյանքում, քան ես սպասում էի:

Բժշկող բառեր

Բառերը կարող են լինել այս մոլորակի ամենակառուցողական և ամենակործանարար ուժերը: Կարող եմ ասել, որ ինչպես մարդկանց խոսքերը խոցել են ինձ, այնպես էլ Աստծո Խոսքը բժշկել է ինձ: Դա տեղի է ունեցել, երբ մարդիկ փոխանցել են ինձ Աստծո Խոսքի Ճշմարտությունները: Դա տեղի է ունեցել աղոթքի կամ ընթերցանության պահերին, երբ որևէ սուրբգրային հատված կամ խոսք հանկարծ գրավել է իմ ուշադրությունը: Նման պահերին մեկ ակնթարթում ամեն ինչ փոխվում է, և իմ աչքերը բացվում են: Երբ մենք լսում ենք մեր

Արարչի իմաստությունը և հավատում ենք դրան, մենք օգտվում ենք ճշմարտությունը հեշտորեն յուրացնելու հնարավորությունից:

> «Սուրբ և անարատ կրոնասիրությունն Աստծո և Հոր առջև սա է՝ որբերին և այրիներին այցելել նրանց նեղության մեջ և իր անձն աշխարհից անարատ պահել» (Հակոբոս 1.27):

Մենք սիրում ենք այս խոսքը: Սակայն որքա՞ն հաճախ ենք լսում նախորդ խոսքի բառերը.

> «Եթե ձեզնից մեկը կարծում է թե կրոնասեր է և իր լեզուն չսանձահարի, այլ իր սիրտը խաբի, այնպիսի մարդու կրոնասիրությունը զուր է» (Հակոբոս 1.26):

Անպարկեշտ բառեր

Մի՛ վարկաբեկեք ձեր գործը ձեր խոսքով: Հակոբոսն ասում է մեզ, որ եթե մեր արարքները ճիշտ են, բայց խոսքերը՝ սխալ, մեր կրոնասիրությունը մոլորեցնող և անարժեք է: Ինչո՞ւ, քանի որ ոչինչ ավելի լավ ցույց չի տալիս մեր սրտի վիճակը, քան մեր խոսքը:

Մի՛ վարկաբեկեք ձեր գործը ձեր խոսքով:

Ներողություն, ընկերնե՛ր, բայց մենք պետք է աշխատենք մեզ վրա:

Հակոբոսի գիրքը շարունակում է.

> «Որովհետև շատ բաներով մեղանչում ենք ամենքս: Եթե մեկը խոսքով չի մեղանչում, նա կատարյալ մարդ է, ով կարող է իր ամբողջ մարմինը սանձահարել: Տե՛ս, ձիերի բերանը սանձ ենք դնում, որ նրանք հնազանդվեն մեզ, և նրանց ամբողջ մարմինը կառավարում ենք» (3.2,3):

Հիսուսը միակ կատարյալ մարդն էր, և Նա խոսում էր միայն Իր Հորից լսածը: Հիսուսի եղբայր Հակոբոսը շատ հետաքրքիր օրինակներ է բերում այս հատվածում: Գոյություն ունի կապ՝ մեր կողմից ասված կամ չասված բառերի և մեր կյանքի ընթացքի միջև: Ճանապարհ գնալու օրինակից հետո նա անցում է կատարում ծովի հոսանքներով նավարկելուն.

> «Ահա նավերն էլ, որ այսչափ մեծ են և սաստիկ քամիներից քշվում են, մի փոքր ղեկով կառավարվում են՝ որ կողմ ղեկավարի միտքը կամենա» (3.4):

Նույնիսկ երբ քամիները սաստիկ են, և կյանքն անհաղթահարելի է թվում, Աստծո Խոսքն առաջնորդում է մեզ կյանքի փոթորիկների միջով:

> «Այնպես էլ լեզուն մի փոքր անդամ է, բայց մեծ-մեծ բաներ է խոսում: Տե՛ս, մի փոքր կրակը որքա՞ն բան է վառում» (3.5):

Եկեք կրակ չգցենք մեր ներկայի մեջ և նավաբեկության չենթարկենք ո՛չ մեզ, ո՛չ մեր եղբայրներին և քույրերին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ասում էին. «Թույլ բերանը նավ է խորտակում»՝ հիշեցնելու համար, որ անզգույշ խոսակցությունները կարող էին վտանգավոր հետևանքներ ունենալ: Մարդիկ պետք է ուշադիր լինեին, որ անզգուշորեն չփոխանցեին այնպիսի տեղեկություն, որը թշնամին կարող էր օգտագործել: Պատերազմի ժամանակ մենք երբեք չգիտենք, թե ով է լսում մեզ:

Միգուցե Աստված կամենում է ինչ-որ բան սկսել ձեր կյանքում, սակայն դուք կարող եք կործանել դա ձեր բառերով: Հնարավո՞ր է, որ ձեր ընթացքը հակառակ է Նրա ծրագրերին:

Միգուցե դուք սպասում եք առաջխաղացման կամ ինչ-որ հնարավորության:

Միգուցե դուք ուզում եք, որ ձեր հարաբերությունն ինչ-որ մեկի հետ բժշկվի և վերականգնվի:

Միգուցե ձեր խոսքերը կամ արարքները խափանում են ձեր աղոթքները:

Միգուցե դուք խոսում եք այն ժամանակ, երբ պետք է լսեք:

Միգուցե ձեր ձայնի տոնը սխալ է:

Միգուցե դուք ճիշտ խոսակցություն եք սկսել սխալ մարդկանց հետ:

Միգուցե դուք սովորելու փուլում եք:

Միգուցե դուք ունեք ավելի շատ հարցեր, քան պատասխաններ:

Մատթեոս 12.36,37-ը խոստանում է մեզ. «Կարող եք համոզված լինել հետևյալում. երբ դատաստանի օրը գա, բոլորը հաշվետու կլինեն ամեն անփույթ բառի համար, որը խոսել են: Ձեր իսկ բառերը կօգտագործվեն որպես վկայություն ձեր դեմ, և ձեր բառերը կա՛մ կարդարացնեն, կա՛մ կմեղադրեն ձեզ» (ՏՊՏ):

Մենք դատվում ենք ըստ այն բանի, թե ինչ ենք խոսում և ինչպես ենք որոշում արձագանքել Հիսուսի խոսքերին: Ես ցանկանում եմ, որ իմ խոսքը պատվի Նրա կյանքը: Ես կամենում եմ բարձրացնել աշակերտներ, ոչ թե հրապուրել կրոնական զբոսաշրջիկների:

Ճիշտ հարցեր, սխալ լսարան

Մեր ընտանիքում մի քանի տղամարդ կա, ինչը նշանակում է, որ հեռուստացույցի հեռակառավարման վահանակը վերցնելը կարող է դժվար լինել: Վերջերս մենք արձակուրդի էինք գնացել և ինչ-որ ֆիլմ էինք որոնում՝ ընտանիքով դիտելու համար, երբ այն տղամարդը, որի ձեռքում վահանակն էր, կանգ առավ մի դրվագի վրա՝ *«Կնքահայրը»* ֆիլմից: Ելնելով հարգանքից իմ սիցիլիական արմատների հանդեպ՝ ես կիսվում եմ այն խոսքով, որը մենք լսեցինք. «Երբեք մի՛ պատմիր ոչ ոքի՝ քո ընտանիքից դուրս, թե ինչ ես դու մտածում»:

Հավանաբար, «երբեք» բառը գործածական է միայն մաֆիայի համար, բայց միևնույն է՝ այդ խոսքի մեջ ճշմարտություն կա: Առողջ ընտանեկան մթնոլորտը լավագույն վայրն է մտքերի փոխանակման համար: Չկան կատարյալ ընտանիքներ. կան միայն առողջ ընտանիքներ, որոնք նվիրված են յուրաքանչյուր անդամի առաջադիմությանը:

Միգուցե դուք մտածեք. *«Բայց, Լի՛զա, իմ ընտանիքի անդամներից ոչ ոք քրիստոնյա չէ»:* Ես ուզում եմ, որ դուք մտածեք ընտանիքի մասին ավելի լայն իմաստով: Դուք կարող եք մտքերի փոխանակում ունենալ հավատքի ընտանիքի մեջ: Ընտանիքը բաղկացած է այն մարդկանցից, որոնք հոգում են ձեր մասին՝ մարդկանցից, որոնց հետ դուք երկրպագում եք, ձեր փոքր խմբի անդամներից կամ նույնիսկ այն քրիստոնյաներից, որոնց հետ դուք աշխատում եք: Սոցիալական ցանցերն ընտանիք չեն: Սոցիալական ցանցերը լավ միջոց են ազդեցություն թողնելու համար, բայց ոչ՝ մտքերի փոխանակման համար:

Այդ ֆիլմը տվեց մեզ ևս մեկ պնդում. «Երբեք մի՛ միաբանվիր ինչ-որ մեկի հետ՝ ընդդեմ քո ընտանիքի: Երբե՛ք»:

Մեր հավատքի ընտանիքը խնդիրներ ունի: Կարելի՞ է ասել, որ եկեղեցին պետք է ավելի հասուն կերպով աշխատի կանանց հետ: Այո՛: Արդյո՞ք կան դրական տեղաշարժեր այս հարցում: Այո՛: Իսկ կա՞ն այլ խնդիրներ, որոնցով դեռ պետք է զբաղվել: Այո՛: Բայց ի՞նչ կշահենք, եթե դուրս գանք Քրիստոսի հարսնացուի դեմ:

Վերջերս Թվիթերում հայտնվեց մի գրառում, որը կանանց առաջարկում էր կիսվել իրենց դժգոհություններով եկեղեցու առաջնորդներից և պատմել նրանց կողմից վատ վերաբերմունքի մասին: Այդ գրառումը շատ լայն արձագանք գտավ: Բազմաթիվ կանայք ձայն բարձրացրին դրա միջոցով, և այն հասանելի դարձավ լայն հանրությանը: Ես ուշադրություն դարձրի, որ երբ ինչ-որ մեկը դրական մեկնաբանություն էր

թողնում եկեղեցու մասին, նրան լռեցնում էին:

Արդյո՞ք անհրաժեշտ էր խոսել այդ մասին: Այո՛: Սակայն ես համաձայն չեմ, որ սոցիալական ցանցերը ճիշտ հարթակ է՝ նման խնդիր ներկայացնելու համար, թեև այն հրաշալի միջոց է՝ լուծումներ առաջարկելու համար:

Եթե դուք ունեք պատասխան, ազդարարե՛ք այն սոցիալական ցանցերի բոլոր «կտուրներից»: Բայց եթե ուզում եք բողոքել, քննադատել կամ մարտավարություն մշակել, խոսե՛ք այդ մասին ճիշտ մարդկանց հետ: Երբ անում եք դա սոցիալական ցանցերի միջոցով, անհնար է իմանալ, թե ով է հետևում ձեզ: Եկեք խոսենք ճիշտ հարցերի մասին ճիշտ մարդկանց հետ:

Ֆորումներ կազմակերպելը՝ եկեղեցու մասին սոցիալական ցանցերում կամ այլ հանրային հարթակներում չարախոսելու համար, նման է հարսնացուին բացահայտելուն, երբ ոմանք համարում են, որ նա վատ վարք ունի: Արդյո՞ք դա օգտակար է, եթե հաշվի առնենք այն փաստը, որ ըստ Սուրբ գրքի՝ գոյություն ունի այս աշխարհի համակարգը, որն արդեն իսկ ատում է մեզ: Արդյո՞ք դա օգուտ է բերում վճռի հովտում գտնվող բազմություններին, որոնք չունեն հիմքային գիտելիքներ՝ մեր փաստարկները ճիշտ կերպով ընկալելու համար:

Հանրության առջև մենք պետք է խոնարհեցնենք մեզ՝ խոստովանելով, որ ձախողվել ենք սրտանց սիրելու հարցում: Դրանից հետո մենք պետք է միասին ոտքի ելնենք և ծրագրենք, թե ինչ կարելի է անել, ոչ թե դատապարտենք ներկա իրավիճակը: Չափազանց հաճախ մենք ճիշտ քննարկում ենք ծավալում սխալ մարդկանց հետ: Երբ այդպես ենք վարվում, անմիտ մարդկանց տպավորություն ենք թողնում:

Տարածում սոցիալական ցանցերով

Երբեմն, երբ ինչ-որ բան արագորեն տարածվում է սոցիալական ցանցերում, մարդիկ վարակվում են, ոչ թե ազդեցություն են կրում: Եկեք այնպես անենք, որ մեր գրառումները տևական փոփոխություն բերեն, ոչ թե անուն վաստակեն այն տեղադրողի համար: Եկեք չշտապենք հարձակվել այն բանի վրա, թե ինչ և ինչպես են մարդիկ կառուցում: Եկեք լինենք եկեղեցի կառուցողներ, ոչ թե՝ կործանողներ: Ես ինքս կրել եմ կանանց դեմ ուղղված ամեն տեսակի նախապաշարմունք: Ես գրեթե վաթսուն տարեկան եմ, սակայն ինձ դեռ մեղադրում են գայթակղություն տարածելու և չափազանց համարձակ լինելու մեջ: Ես չեմ պատրաստվում դադարեցնել այն, ինչ կառուցում եմ՝ մի քանիսի անմիտ մեկնաբանություններին պատասխանելու համար: Ես օծված եմ՝ մարգարեանալու, ոչ թե քննադատելու համար, կառուցելու, ոչ թե քանդելու համար: Եվ դուք՝ նույնպես:

> Եկեք լինենք... կառուցողներ, ոչ թե՝ կործանողներ:

Ճիշտ պատասխան ստանալու համար մենք պետք է սեղանի շուրջ հավաքենք ճիշտ մարդկանց: Սա նշանակում է, որ մենք քննարկման ենք հրավիրում բոլոր ռասաներին պատկանող և՛ տարեց, և՛ երիտասարդ կանանց: Երբ նման զրույցները տեղի են ունենում իրական պայմաններում, մենք օգուտ ենք ստանում դուստրերի հարցերից, մայրերի պատասխաններից ու փորձառությունից և տատիկների իմաստությունից ու ողջախոհությունից. սա երեքպատիկ թել է, որը հեշտորեն չի կտրվի:

Մեր բառերը գնահատելը

Սոցիալական ցանցերը կարող են օգտագործվել շատ դրական նպատակների համար: Մենք կարող ենք խրախուսել մարդկանց: Մենք կարող ենք արագորեն տեղեկություն

տարածել: Մենք կարող ենք աղոթքի խնդրանքներ ուղարկել ցանկացած կարիքի համար՝ սկսած անձնական խնդիրներից մինչև համազգային ճգնաժամը: Ձեզնից շատերն այնքա՛ն սիրալիր էին, որ աղոթում էին ինձ համար, երբ գրում էի այս գիրքը: Շատ առումներով, սոցիալական ցանցերը կարող են լինել օգտակար, խրախուսական, զարգացնող, տեղեկատվական և նույնիսկ՝ կրթական:

Ես թեթևորեն չեմ վերաբերվում սոցիալական ցանցերից օգտվելու արտոնությանը և պատասխանատվությանը: Երբեմն սխալ եմ վարվել և ճիշտ չեմ գնահատել իմ բառերը: Չնայած դրան՝ ես գիտակցում եմ, որ կարող եմ խնամքով ընտրել իմ բառերը, սակայն, միևնույն է, սխալ հասկացված լինել: Պատճառն այն է, որ մենք, ըստ էության, չգիտենք, թե ում հետ ենք խոսում, ինչն արդյունավետ հաղորդակցման գլխավոր պայմաններից է: Յուրաքանչյուրը յուրովի է ընկալում ամեն ինչ:

Ես փորձում եմ օգտագործել սոցիալական ցանցերը, որպեսզի ծառայեմ այն մարդկանց, ովքեր պատիվ են ընծեռել ինձ՝ թույլ տալով ազդեցություն թողնել իրենց կյանքում: Իմ գրառումներից մի քանիսը պարզապես զվարճալի և անմեղ են, իսկ մյուսները՝ լուրջ: Սա կյանքի ռիթմն է: Լինում են օրեր, երբ ես ավելի արդյունավետ եմ սոցիալական ցանցերում, քան մյուս օրերին: Ես սովորել եմ սահմանափակել իմ կարծիքները (թեև, իհարկե, ունեմ դրանք): Ես փորձում եմ հնարավորինս չասել այնպիսի բաներ, որոնք հակասում են Աստվածաշնչին և իմ կյանքին: Ես լռում եմ, երբ չեմ կարողանում հաճելի խոսք ասել ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի մասին (ինչը հեշտ չէ):

Մեր սրտերը հսկելու լավագույն միջոցներից մեկն է հսկել այն բառերը, որոնք մենք թույլ ենք տալիս մուտք գործել մեր կյանք: Երբեմն մարդիկ այնքան էլ բարի չեն մեր հանդեպ: Համոզված եմ՝ դուք գիտեք, թե ինչպիսին են լինում հարձակումները սոցիալական ցանցերում: Ձեզ կարող են տարբեր պիտակներ փակցնել՝ սկսած մայր առյուծից մինչև հերետիկոս կին, որը պետք է

լռի (և սրանք դեռ վատ անունները չեն): Լինելով այս ամենի մեջ՝ ես սովորել եմ ունենալ «հաստ կաշի և փափուկ սիրտ»:

Քանի որ սոցիալական ցանցերը լի են տարատեսակ զգացմունքներով, ես միտումնավոր սահմանափակում եմ անձնական պատմությունների ընթերցումը, որոնք հաճախ ներկայացվում են չափազանցված: Այս ամենի լույսի ներքո վերադառնանք Բ Տիմոթեոս 2.23-26-ին.

> «Հիմար և անկիրթ վիճաբանություններից ետ քաշվիր՝ իմանալով, որ կռիվներ են ծնում: Բայց Տիրոջ ծառային պետք չէ կռիվ անել, այլ՝ ամենի հետ հեզահոգի լինել, սովորեցնող, ոխ չպահող, հակառակվողներին հանդարտությամբ խրատող, թերևս Աստված նրանց ապաշխարություն տա՝ ճշմարտությունն իմանալու համար, և սատանայի որոգայթից զգաստանալու, որից նրանք որսացվել են՝ նրա կամքին ծառայելու համար»:

Ամեն ինչ և ամեն մեկը չէ, որ արժանի է պատասխանի: Երբեմն պատասխանելով՝ դուք հաստատում եք ինչ-որ մեկի հիմարությունը: Ամեն մեկը չէ, որ պետք է իմանա, որ մեր հանդեպ վատ են վարվել: Մենք ավելի բարձր ենք դրանից: Մենք պետք է տանենք մեր ցավը մեր Հոր բարձր ատյանը, ոչ թե հանձնենք անդեմ ամբոխի դատաստանին:

Հանրահա՞յտ, թե՞ ազդեցիկ

Վերջերս զգացի, թե ինչպես Սուրբ Հոգին հարցրեց. «Լի՛զա, դու ուզում ես լինել հանրահա՞յտ, թե՞ ազդեցիկ»:

«Ազդեցիկ», - պատասխանեցի ես:

Որպեսզի հաջողակ լինենք այս կարծրատիպերով լի աշխարհում, մենք պետք է մշտապես տանք մեզ այս հարցը. «Հանրահա՞յտ, թե՞ ազդեցիկ»: Միգուցե դուք կարդում եք այս գիրքը, քանի որ գիտեք, որ կանչված եք ազդեցություն թողնե-

լու համար: Դա նշանակում է, որ ժամանակ առ ժամանակ ձեր դիրքորոշումներն ընդունված չեն լինի: Ավելի լավ պատկերացում կազմելու համար՝ եկեք սահմանենք «հանրահայտ» և «ազդեցիկ» բառերը և ընդգծենք դրանց տարբերությունները:

«Հանրահայտ» բառը նշանակում է սիրված, տարածված, ընդունված, նորաձև և գերժամանակակից: Հանրահայտ լինելը բոլորովին սխալ չէ, եթե մենք թույլ չենք տալիս, որ դա վերահսկի մեզ: Հանրահայտ մարդիկ ունեն իրենց հատուկ վերելքները և վայրէջքները. յուրաքանչյուրը, ով սովորել է միջնակարգ դպրոցում, գիտի այս մասին:

Համբավը կարելի է ձեռք բերել և կորցնել ավելի արագ, քան ազդեցությունը: Մենք կարող ենք խթանել մարդկանց և հանրահայտ դառնալ: Մենք կարող ենք ասել մարդկանց այն, ինչ նրանք ուզում են լսել, և հանրահայտ դառնալ: Մենք կարող ենք ասել մարդկանց այն, ինչ նրանք չպետք է լսեն, և հանրահայտ դառնալ:

Մյուս կողմից, «ազդեցիկ» բառը նշանակում է ուժեղ, կարևոր, համոզիչ, արդյունավետ, գործուն և առաջատար: Բոլոր գործնական հարցերում մենք կարող ենք լինել ազդեցիկ, սակայն հարաբերականորեն անհայտ՝ մեր մշակույթի հանրահայտ շրջանակներում: Ես համոզված եմ, որ Երկնքում մենք կբացահայտենք, որ երկնային սրահներում ամենից ազդեցիկ մարդկանց մեծ մասը հարաբերականորեն անհայտ է եղել այս երկրի փողոցներում: Նրանք պատրաստ են եղել գաղտնի ցանել, ավելի շատ ժամանակ են անցկացրել՝ երեսնիվայր խոսելով Աստծո հետ, քան սելֆիներ չրխկացնելով: Ահա թե ինչու եմ որոշում կայացրել, որ ազդեցիկ եմ լինելու:

Լավագույն տարբերակը կլիներ ունենալ այս երկու հատկանիշներն էլ: Ես մի քանի ընկեր ունեմ, որոնք փայլուն կերպով համատեղում են այս երկուսը: Այնուամենայնիվ, նրանք չեն սկսել իրենց ընթացքը հանրահայտ լինելու ցանկությամբ. նրանք պարզապես ցանկացել են հավատարիմ լինել: Ովքեր ցանկանում են լինել Քրիստոսի վկաները, պետք է սկսեն այս

կերպով: Հավատարիմ և ազդեցիկ լինել՝ նշանակում է զգուշորեն ընտրել բառերը, և ինչպես շնորհքի թանկ պարգևի դեպքում, չօգտագործել խոսքի ազատությունը՝ որպես մեղք գործելու թույլտվություն:

Թեև մեր կառավարությունը թույլ է տալիս մեզ ասել այն, ինչ ուզում ենք, ի վերջո, մենք հաշվետու ենք ավելի բարձր թագավորության առջև: Ինչո՞ւ մեզնից որևէ մեկը պետք է ուզի հիմնվել իր կարծիքների վրա, եթե մենք անարգել մուտք ունենք դեպի Բարձրյալ Աստծո իմաստությունը և հանճարը: Աստծո Խոսքը հայտնում է գաղափարներ և մտադրություններ, ոչ թե գաղափարներ՝ առանց մտադրության: Իմ կյանքի ընթացքում ես հաճախ եմ համոզվել Առակաց գրքի այն ճշմարտության մեջ, որ բազմաթիվ խոսքերի դեպքում սխալվելն անխուսափելի է:

> «Շատախոսության մեջ հանցանքի պակաս չի լինի, բայց իր շրթունքները զսպողը խելացի է»:
>
> (Առակ. 10.19)

Հուսով եմ՝ դուք համաձայն եք, որ սոցիալական ցանցերը միշտ չէ, որ առողջ միջավայր են, և դրանք, անկասկած, ընտանիք չեն: Դրանցում մենք տեսնում ենք ընդամենը այն, ինչ մարդիկ ցույց են տալիս մեզ: Երբեմն դա նշանակում է, որ մենք տեսնում ենք միայն նրանց կյանքի լավագույն կողմը, այլ դեպքերում՝ միայն վատագույնը: Երբեմն այն, ինչ նրանք ասում և ցույց են տալիս մեզ, սուտ է: Ես չեմ թվարկի, թե իմ անունով ստեղծված քանի էջեր են կապ հաստատել մարդկանց հետ և գումար խնդրել գոյություն չունեցող մանկատների համար:

Վիրտուալ և իրական

Անկեղծ ասած, շատ ավելի հեշտ է ներդրում ունենալ վիրտուալ լսարանի մեջ, քան ձևավորել իրականը: Սմարթֆոնով

նախադասություններ գրելը շատ ավելի հեշտ է, քան ընտանիքի և ընկերների հետ դժվար զրույցներ ունենալը: Բլոգներ վարելը թույլ է տալիս մեզ ցանել խոսքեր, որոնք արագորեն ուշադրություն են գրավում և դրական արձագանք են առաջացնում, իսկ իրական շփման մեջ մենք պետք է համբերատար լինենք, քանի որ խոսակցություններն այլ կերպ են ընթանում: Գլխավոր տարբերություններից մեկն այն է, որ երկրորդ դեպքում մենք պետք է թույլ տանք մարդկանց խոսել:

Վիրտուալ շփման շրջանակները կարող են լինել լավ կամ վատ, առողջ կամ խիստ անառողջ: Առողջ վիրտուալ շփումը խրախուսում է մեր կապը և հարաբերություններն իրական մարդկանց հետ: Եթե դուք նման վիրտուալ շփում ունեք, դա լավ է:

Հանրահայտ մարդիկ միշտ չէ, որ հաշվետու են:

Անցյալում երբեք չեն եղել այսքան տպավորիչ և համոզիչ բլոգերներ: Ես հետևում եմ մի քանի բլոգների, որոնք առողջ սննդի և առաջնորդության մասին են: Ես խիստ զգուշորեն եմ ընտրում այն մարդկանց, որոնց թույլ եմ տալիս ազդել իմ մտքի վրա: Ես ուզում եմ իմանալ՝ արդյո՞ք նրանք իսկապես հաշվետու են ինչ-որ մարդու կամ սկզբունքի, քանի որ հանրահայտ մարդիկ միշտ չէ, որ հաշվետու են:

Երբ մենք միայնակ ենք և խնդիրներ ունենք, ձգտում ենք շփվել միայնակ և խնդիրներ ունեցող կանանց հետ: Միգուցե մենք պայքարում ենք հետծննդաբերական դեպրեսիայի կամ սննդային վարքագծի խանգարման դեմ և ճանաչում ենք այլ կանանց, որոնք նման խնդիրներ ունեն: Մենք սկսում ենք շփվել նրանց հետ՝ մեր ընդհանրությունների հիման վրա: Լավ է իմանալ, որ մենք միայնակ չենք, և որ ինչ-որ մեկը հասկանում է մեզ: Այդպիսի հարաբերությունները կարող են առողջ և բժշկարար լինել, քանի դեռ դրանք ուղղորդում են մեզ դեպի առողջությունը և ուժերի ճշմարիտ աղբյուրը: Դրանք վնասա-

կար են դառնում այն ժամանակ, երբ մենք թույլ ենք տալիս մարդկանց մտածել մեր փոխարեն:

Միգուցե մենք գտել ենք մի կին բլոգերի, և ամեն ինչ սկսվել է առողջ կերպով: Մեզ դուր էր գալիս այդ կնոջ անհատականությունը, խոցելիությունը և բացառիկ զգայունությունը: Մենք հաճույքով էինք հետևում, երբ նա բարձրաձայնում էր այն, ինչի մասին մյուսները միայն համարձակվում էին մտածել: Մենք սիրում էինք նրա ավյունը: Բայց եթե չհաստատվենք իրական շփման և Աստծո խոսքի մեջ, կարճ ժամանակ անց մենք կսկսենք ընկալել ամեն ինչ այդ անձնավորության պես: Այն, որ մենք սկսում ենք տալ նույն հարցերը, ինչ նա, սխալ չէ, եթե գիտենք, թե որտեղ պատասխաններ գտնել:

Օրինակ, եթե ինչ-որ կին բողոքում է, որ հաճույք չի ստանում իր ամուսնու հետ ունեցած սեռական հարաբերություններից, արդյո՞ք մենք կտանք մեզ նույն հարցը, թե՞ կսկսենք մտածել է՛լ ավելի սերտ մտերմություն կառուցելու մասին:

Միգուցե մի կին բլոգերի ամուսնությունն ավարտված է: Նա գրում է այդ մասին բանաստեղծական ոճով, և նրա նյութի մեջ արդեն իսկ կա խոստում նոր սկզբի, նոր զուգընկերոջ մասին: Նա չի դիտարկում իր ամուսնալուծությունը՝ որպես երկու մարդկանց պառակտում, այլ վերածում է այն ճշմարտության և սիրո հաղթանակի: Եթե մենք կապված լինենք այդ վիրտուալ անձնավորության հետ ավելի զգացմունքորեն, քան մեր իսկ ամուսինների, մենք կվտանգենք մեզ՝ դիտարկելով մեր ամուսնությունը նրա փորձառության լույսի ներքո: Մենք կմտածենք, որ միգուցե մեր ամուսնուն լքելն իրականում ազնվության և խիզախության դրսևորում է:

Մի պահ կա՛նգ առեք: Իսկապե՞ս:

Ամուսնությունն ուխտ է Աստծո առջև: Եթե ձեր ամուսնությունը ձեզ դուր չի գալիս, կառուցե՛ք այն: Ցա՛ծ դրեք ձեր հեռախոսը, անջատե՛ք ձեր համակարգիչը և մոռացե՛ք այն ստերը, որոնք ստիպում են ձեզ համեմատվել այլ մարդկանց հետ:

ժամանա՛կ անցկացրեք իրար հետ:

Ես երբեք խորհուրդ չեմ տա ձեզ պահպանել ձեր ամուսնությունը, եթե ձեզ կամ ձեր երեխաներին վտանգ է սպառնում, կամ եթե ձեր ամուսինը հավատարիմ չէ ձեզ: Ես խոսում եմ այնպիսի իրավիճակների մասին, որոնցում դուք «կորցրել եք ձեր զգացմունքները»: Նման դեպքերում հեռանալը կարող է ավելի հեշտ թվալ, քան ձեր հարաբերությունը զարգացնելու դժվարին աշխատանքը: Այնուամենայնիվ, երբ Աստված աշխատում է ձեզ հետ, որ դարձնի ձեզ անկոտրում, անսասան, անպարտելի և սիրով լցված անձնավորություն, Նա չի ընտրում հեշտ ճանապարհներ: Նա կամենում է, որ մենք կայուն լինենք՝ խոսքով և գործով:

Մի՛ հրապարակեք

Անհամաձայնությունները Քրիստոսի մարմնում նորություն չեն: Կորնթոսի եկեղեցուն ուղղված իր առաջին նամակում Պողոսը գրեց.

> «Եվ ինչպե՞ս եք համարձակվում դատի տալ մեկդ մյուսին: Երբ դուք մտածում եք, որ ձեր հանդեպ սխալ են վարվել, մի՞թե արժե կանգնել այնպիսի դատարանի առջև, որը ոչինչ չգիտի Աստծո ճանապարհների մասին՝ քրիստոնյաների ընտանիքի առջև կանգնելու փոխարեն: Գալիս է այն օրը, երբ այս աշխարհը կանգնելու է Հիսուսի հետևորդներից բաղկացած երդվյալ ատենակալների առջև: Եթե մեկ օր դուք որոշելու եք այս աշխարհի ճակատագիրը, մի՞թե լավ գաղափար չէ այսպիսի փոքրիկ խնդիրների վրա սովորելը» (6.1,2, MSG):

Ինչ-որ մեկին դատարան տանելը այսօր կարելի է համեմատել մասնավոր հարցը հանրությանը հայտնի դարձնելու հետ: Ըստ սուրբգրային նմուշի՝ մենք պետք է գնանք այն մարդու մոտ, ով սխալ է վարվել մեր հանդեպ, սկզբում՝ անձամբ, իսկ

հետո՝ որևէ ընկերոջ հետ: Մենք պետք է խոսենք հեզությամբ, և մեր նպատակը պետք է լինի վերականգնումը և ճշմարտությունը: Սոցիալական ցանցերը որպես արդարադատության համակարգ օգտագործելը ոչ աստվածաշնչյան մղձավանջ է:

Պողոսի նամակը Տիմոթեոսին կարելի է իրավամբ համարել հրատապ ուղերձ մեր օրերի համար.

> «Միամիտ մի՛ եղիր: Առջևում դժվար ժամանակներ կլինեն: Երբ վերջը մոտենա, մարդիկ լինելու են տարված իրենցով, լինելու են փող սիրող, սեփական անձը գովազդող, ինքնահավան, հայհոյող, ծնողներին անարգող, կոպիտ, դաժան, անողորմ, անընկերասեր, չարախոսող, անվերահսկելի, վայրի, անպատկառ, դավաճանող, անխիղճ. փքուն շատախոսներ, որոնք կախվածության մեջ են կրքից և ալերգիա ունեն Աստծո հանդեպ: Նրանք ցույց են տալիս, թե կրոնական են, բայց կուլիսների ետևում կենդանիներ են: Հեռո՛ւ մնա այդ մարդկանցից» (Բ Տիմոթ. 3.1-5, MSG):

Ծանո՞թ է հնչում: Տարված իրենցով և փող սիրող. ճի՛շտ է: Սեփական անձը գովազդող և ինքնահավան. ճի՛շտ է: Հայհոյող, ծնողներին անարգող, կոպիտ և դաժան. ճի՛շտ է: Վախենում եմ, որ չեմ կարող դուրս թողնել այս կետերից ոչ մեկը: Պողոսը զգուշացնում է Տիմոթեոսին, թե ինչ վտանգ է սպառնում, երբ նման մշակույթն ընդունված է դառնում.

> «Նրանք այն տեսակի մարդիկ են, որոնք շողոքորթող խոսքերով մտնում են անկայուն և կարիքավոր կանանց տները և շահագործում են նրանց՝ կանանց, որոնք, իրենց մեղքերից ընկճված, համակերպվում են ցանկացած նոր կրոնական տարօրինակության հետ, որը «ճշմարտություն» է անվանում իրեն» (Բ Տիմոթ. 3.6, MSG):

Այս խոսքը կարդալը շատ ծանր է, հատկապես՝ կանանց համար: Պողոսի զգուշացմանը հետևելու համար բոլորս

պետք է խորը շունչ քաշենք և թույլ տանք, որ Սուրբ Հոգին բացատրի մեզ այն: Կարծում եմ՝ կարելի է ասել, որ այս խոսքը նկարագրում է այնպիսի կանանց, որոնք չունեն առողջ շփման շրջանակ և չեն կատարում այն կոչումը, որն Աստված տվել է իրենց: Երբ մեզնից որևէ մեկը (կին, թե տղամարդ) մեկուսանում է և անպետք է զգում իրեն, նա հեշտ որս է դառնում նրանց համար, ովքեր պատրաստ են շահագործել նրան:

Բոլորս գիտենք, որ մենք ստեղծված չենք գորշ կյանքի համար: Ձանձրույթը և ընկճվածությունը կարող են դրդել մեզ ապրել այլ մարդկանց կյանքով: Մենք մեկնաբանություններ ենք թողնում բլոգներում, ժամեր ենք անցկացնում սոցիալական ցանցերում և խճճվում ենք այլ մարդկանց անձնական կյանքերի մեջ: Եկեք անկեղծ լինենք. ավելի հեշտ է գրառումներ կատարել, քան աղոթել: Երբ մենք գիտենք, որ կանչված ենք ինչ-որ բան կառուցելու համար, սակայն չունենք հնարավորություններ, խոցելի ենք դառնում կեղծավոր մարդկանց համար:

Մյուս կողմից, երբեմն մեր կյանքն անկայուն է դառնում, քանի որ մենք չափից ավելի ենք նվիրվում ինչ-որ բանի և ժամանակ չենք հատկացնում հանգստի ու վերականգնման համար: Չեմ կարող ասել ձեզ, թե որքան պատմություններ եմ լսել և՛ տղամարդկանց, և՛ կանանց մասին, որոնք աներևակայելիորեն զբաղված են և լիովին սպառված են իրենց կյանքի ռիթմի պատճառով: Արդյունքում նրանք սիրային կապեր են սկսում ինտերնետի միջոցով:

Իմ առաջին արձագանքն այսպիսին էր. «Որտեղի՞ց ձեզ ժամանակ դրա համար: Դուք նույնիսկ ժամանակ չունեք ձեր կողակցի հետ շփվելու համար: Ինչպե՞ս ստացվեց, որ կարողանում եք ժամեր շարունակ հաղորդագրություններ ուղարկել անծանոթ մարդկանց»: Սակայն ես հասկացա, որ առցանց սիրային կապը փախուստի միջոց է: Նրանք կարող են ներկայանալ՝ ինչպես ուզում են, և բոլորովին ազատ լինել պատասխանատվությունից: Փոխարենը փոխեն իրենց առօրյան՝ ավելի

շատ ժամանակ ունենալու համար, այդ մարդիկ կործանում են իրենց կյանքը:

Եկել է դժվար ընտանեկան խոսակցությունների ժամանակը. անջատե՛ք ձեր համակարգիչը: Ցա՛ծ դրեք ձեր հեռախոսը: Խոսե՛ք ձեր երեխաների հետ: Մտերմացե՛ք ձեր ամուսնու կամ կնոջ հետ: Հանդիպե՛ք ձեր ընկերներից մեկին և միասին սուրճ խմեք: Զրուցե՛ք նրա հետ հեռախոսով: Ներդրե՛ք ձեր ժամանակն այնպիսի բաների մեջ, որոնք իրական են:

Այո՛, եկեղեցին պետք է իմանա իր դուստրերի կարիքների մասին: Կանայք ցավ են զգում: Կանանց ամենամյա հավաքույթները լավ են, բայց դա բավական չէ: Կանայք ասում են ինձ, որ հոգնել են սովորելուց և չկատարելուց, սակայն մեր հիասթափություններն առցանց տեղափոխելը նույնպես չի նշանակում կատարել Խոսքը: Բավական չէ մերժել այն, ինչը չի գործում: Եկեք միասին կառուցենք առողջ հաղորդակցման համակարգ Քրիստոսի մարմնի համար: Եկեք հետևենք Հիսուսի առաջին հետևորդների օրինակին, որոնք միասին հաց էին կիսում և սովորում էին: Աշխարհով մեկ գնալը և մարդկանց աշակերտելը սկսվում է մեր անմիջական շփումից:

Աշխարհով մեկ գնալը և մարդկանց աշակերտելը սկսվում է մեր անմիջական շփումից:

Շատ եկեղեցիներում կանայք ունեն թույլտվություն, բայց ոչ՝ դիրք: Այս իրավիճակը փոխելու համար մենք պետք է ճիշտ քննարկումներ սկսենք ճիշտ մարդկանց հետ: Առցանց խմբերը լավ են, բայց գրողը, վիդեո բլոգերը կամ ֆեյսբուքյան «ընկերը» չի կարող նայել ձեր աչքերի մեջ: Ինչ-որ մեկը Թվիթերում չի կարող գրկել ձեզ: Մեզ պետք են մարդիկ՝ մտերիմ և անձնական շփման համար: Օգտագործելով անթիվ բառեր՝ մենք անդեմ ենք դարձնում չափազանց շատ մարդկանց, որոնք ունեն Հիսուսի կարիքը:

Այս գլխի վրա աշխատելու ընթացքում Առակաց և Ժողովող գրքերը դարձան խոսքի մեջ անկոտրում լինելու ուղեցույց ինձ համար: Հավելված 2-ում ընդգրկել եմ 50 հատված այս գրքերից, որոնք կսովորեցնեն, թե ինչ խոսեք և ինչի համար բացեք ձեր միտքը, որպեսզի իմաստուն կերպով կառուցեք ձեր կյանքը:

Սիրելի երկնային Հա՛յր,
Օգնի՛ր ինձ բացել իմ բերանն իմաստությամբ, և թող որ շնորհք լինի իմ լեզվի վրա (ըստ Առակ. 31.26-ի): Յո՛ւյց տուր ինձ իմ ընտանիքը՝ այն մարդկանց, որոնց հետ կարող եմ Երկնքից ոգեշնչված զրույցներ ունենալ իմ մտահոգությունների մասին: Ների՛ր ինձ, որ մոռանում եմ, որ Դու սրբում և պատրաստում ես Քո Հարսնացուին: Ես կգործածեմ իմ բառերը՝ կառուցելու, ոչ թե կործանելու համար, բժշկելու, ոչ թե խոցելու համար, մարգարեանալու, ոչ թե քննադատելու համար, ամե՛ն:

9

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ

«Երկրպագությունը նշանակում է հնազանդեցնել մեր ամբողջ էությունն Աստծուն: Այն նշանակում է զարթեցնել խիղճը Նրա սրբությամբ, սնուցել միտքը Նրա ճշմարտությամբ, մաքրել երևակայությունը Նրա գեղեցկությամբ, բացել սիրտը Նրա սիրով, հանձնել կամքը Նրա մտադրությանը»:

Վիլյամ Թեմփլ

Վերջերս երեք թոռնիկներիս հետ գնացինք մեր տան մոտակայքում գտնվող մի այգի՝ բալ քաղելու: Չգիտեմ՝ պատճառն այն էր, որ ես միայն մեկ աչքո՞վ եմ տեսնում, թե՞ մոռացել էի՝ ինչ էր նշանակում հետևել երեք փոքր երեխաների, բայց կարճ ժամանակ անց նրանցից մեկին վտանգ էր սպառնում: Մինչ ես ճյուղ էի իջեցնում, որպեսզի Սոֆյան կարողանար հասնել դրան, նա ճչաց. «Լի՛զին», և մատով ցույց տվեց փողոցի կողմը: Ես շրջվեցի և տեսա, որ երկու տարեկան Լիզին դուրս էր եկել փողոց: Ես բաց թողեցի ճյուղը և վազեցի նրա մոտ: Նրա ուղղությամբ մի մեքենա էր գալիս:

Ես բղավեցի. «Կանգնի՛ր, Լի՛զի, վերադարձի՛ր»: Լիզին շրջվեց՝ նայելով ինձ չարաճճիությամբ փայլող աչքերով: Նա անմիջականորեն ծիծաղեց և շարունակեց քայլել: Նա մտածում էր, որ ես բռնոցի էի խաղում: Ես վազեցի դեպի փողոցը՝ մտածելով, որ միգուցե մեքենայի վարորդը չէր նկատել Լիզիի թմբլիկ փոքրիկ մարմինը, և ձեռքերով նշան արեցի, որ արգելակեր, քանի որ ակնհայտ էր, որ Լիզին չէր էլ մտածում կանգնելու մասին:

Ես հասա նրան միջնագծի վրա, երբ նա արդեն պատրաստվում էր անցնել փողոցի մյուս կողմը: Արագորեն գիրկս առա և նրա գալարվող մարմինը ուժգնորեն սեղմեցի բաբախող սրտիս: Մենք ապահով սպասեցինք միջնագծի վրա, մինչ երկկողմանի երթևեկությունն ընթացքի մեջ էր, իսկ հետո անցանք փողոցը՝ կրկին միանալով նրա եղբորը և քրոջը:

Լիզին շարունակ ծիծաղում էր՝ մտածելով, որ այդ ամենը մի մեծ արկած էր: Ի վերջո, որտեղի՞ց երկու տարեկան երեխան իմանար, թե ինչ էր ավտովթարը: Սոֆյան՝ նրա հինգ տարեկան քույրիկը, նույնպես երբեք ավտովթար չէր տեսել, բայց շատ լավ գիտեր, թե ինչ էր դա: Ես համոզված էի, որ դա վտանգավոր էր և նույնիսկ կարող էր մահացու լինել: Կարող եք վստահ լինել, որ մինչև այդ օրվա ավարտը ես կա՛մ գրկում էի Լիզիին, կա՛մ ամուր բռնում էի նրա ձեռքը:

Ես լիովին համոզված եմ, որ ձեզնից ոչ ոք չի վիճարկի այն, ինչ ես արեցի Լիզիի համար. նա կա՛մ իմ գրկում էր, կա՛մ բռնում էր ձեռքս: Բոլորս գիտենք, թե ինչ վնաս կարող են հասցնել մեքենաները: Իմ գիտելիքը դրդեց ինձ վազել դեպի ընթացող մեքենաները և փրկել Լիզիին իր իսկ որոշումից:

Այս գլխում ես թողնելու եմ այն ապահովությունը, որը մենք ունենք՝ կանգնած մայթի վրա, և կրկին սլանալու եմ դեպի երկկողմանի երթևեկության վտանգները: Հուսով եմ՝ դուք կլսեք այն, ինչ կա իմ սրտում, քանի որ, եթե մենք թույլ չտանք, որ Տերը փոխի այն, թե ինչպես ենք մենք մտածում, ապրում և

սիրում, շատերը երբեք չեն տեսնի Նրա սերը և լույսը մեր միջոցով: Մենք չենք ուզում ապրել փարիսեցիների նման և այնպիսի բեռներ դնել մեր սերնդի վրա, որոնք բարձրացնելու համար ինքներս ոչինչ չենք անում:

Մենք ապրում ենք այն օրերում, որոնցում իմաստություն և գթասրտություն է պահանջվում: Մեր նպատակն է՝ ազատություն հրատարակել բոլոր կապյալներին: Մենք ազատություն հրատարակողներ ենք: Մենք բանտապետներ, պահակներ և դատավորներ չենք, որոնք որոշում են, թե ով պետք է ազատ արձակվի: Նույնպես, մեր օրերի շփոթմունքի պատասխանը՝ բանտն ազատության վայր անվանելը չէ:

Մեր նպատակն է՝ ազատություն հրատարակել բոլոր կապյալներին:

Հանել շյուղը

> «Մի՛ դատեք, որ չդատվեք: Որովհետև ինչ դատաստանով, որ դատում եք, նրանով պիտի դատվեք: Եվ ինչ չափով, որ չափում եք, նրանով կչափվի ձեզ: Եվ ինչո՞ւ քո եղբոր աչքի միջի շյուղը տեսնում ես և քո աչքի միջի գերանը չես նշմարում: Կամ՝ ինչպե՞ս կասես քո եղբորը՝ թող շյուղը աչքիցդ հանեմ, և ահա քո աչքի մեջ գերան կա: Կեղծավո՛ր, առաջ քո աչքից գերանը հանիր և հետո մտիկ կտաս քո եղբոր աչքից շյուղը հանելու» (Մատթ. 7.1-5):

Որպես նախկին հարկահավաք՝ Մատթեոսը շատ լավ գիտեր, թե ինչպես է մարդը զգում իրեն, երբ նրան դատում են: Այս հատվածի հետևությունն է՝ *«մի՛ դատեք»:* Թեև դա ճիշտ է, բայց լիարժեք չի ներկայացնում այս հատվածը: Եկեք ավելի ուշադիր կարդանք, թե ինչ է գրված այստեղ: Երբ նոր էի քրիստոնյա դարձել, ես այնպիսի դատող վերաբերմունք էի զգում

այլ քրիստոնյաներից, որ հակադարձում էի դրան՝ ինքս նրանց դատելով: Օրինակ՝ իմ կրկնակի ծակած ականջները վիրավորական էին շատերի համար, քանի որ դա ինքնավնասման ճչացող ձև էր համարվում: Ես ընդդիմանում էի՝ նրանց կրոնական մոլեռանդներ անվանելով: Փա՜ռք Աստծուն, որ այդ ժամանակ ես բլոգ չունեի: Իմ պիտակները մնում էին իմ մտքում: Եվ ո՞ւմ դատաստանն էր ավելի խիստ: Ես ինքս քայլ կանեմ՝ ասելով, որ ավելի խիստ էր իմ դատաստանը:

Իմ կրկնակի ծակած ականջները պարզապես շփոթեցնում էին նրանց, իսկ ես խստորեն դատապարտում էի ինձ մեղադրողներին:

Նրանց աչքի մեջ շյուղ կար, իսկ իմ աչքի մեջ այնքան փայտ կար, որ կարելի էր մի ամբողջ ժամանցային կենտրոն կառուցել: Իմ աչքի միջի գերանը թույլ չէր տալիս տեսնել նրանց աչքի միջի շյուղը: Որպեսզի այդ իրավիճակը փոխվեր, մի քանի բան պետք է տեղի ունենար: Առաջին հերթին, ես պետք է խոստովանեի, որ իմ աչքի մեջ գերան կար:

Մեր աչքի միջի շյուղը փակում է մեր տեսադաշտը... մենք միայն տեսնում ենք մարդկանց միջի խավարը: Եկեք մեկ քայլ առաջ գնանք. ոչ ոք չի ցանկանա, որ մի մարդ, ում աչքերը փակված են, որևէ բժշկական միջամտություն կատարի իր մարմնում: Եկեք հեռացնենք մեր աչքերի կապը և լուծենք մեր իսկ խնդիրները, որպեսզի կարողանանք օգնել մարդկանց, ոչ թե շարունակենք ցավ պատճառել նրանց:

Մեր դատող ընկերը, որի մասին գրված է Մատթեոսի 7-րդ գլխում, ճիշտ էր. նրա եղբոր աչքի մեջ կար շյուղ, որը պետք էր հեռացնել: Սակայն Հիսուսը կեղծավոր անվանեց նրան, քանի որ նա մատնացույց էր անում դիմացինի սխալը՝ անտեսելով իր վիճակը: Նման վիճակում մարդկանց օգնելը հանգեցնում է հակառակ արդյունքների: Եկեղեցին մատնացույց է անում այս աշխարհի սխալները, այնինչ Աստված կամենում է, որ մենք թույլ տանք, որ Իր Խոսքն ամբողջովին փոխի մեզ:

Արդյո՞ք մեր օրերի չարիքների համար ողբալն ինչ-որ արդյունք է տվել:

Աստվածաշունչը պարզորեն սովորեցնում է, որ փոփոխությունը տեղի է ունենում, երբ մենք փոխում ենք մեր դիրքորոշումը:

> «Եվ Իմ ժողովուրդը, որի վրա կոչված է իմ անունը, խոնարհվի և աղոթք անի և Իմ երեսը խնդրի և իրենց չար ճանապարհներից ետ դառնա, այն ժամանակ Ես կլսեմ Երկնքից և կներեմ նրանց մեղքը և կբժշկեմ նրանց երկիրը» (Բ Մնաց. 7.14):

Աստված նայում է Իր ժողովրդի դիրքորոշմանը: Այս հատվածն ընդգծում է երկրպագությունը և ապաշխարությունը: Առանց սիրո՝ մենք կարող ենք լինել լիովին ճիշտ, սակայն զարհուրելի կերպով սխալ:

Մեր երկիրը բժշկության կարիք ունի:

Եվ այդ բժշկությունը սկսվում է մեզնից:

Այն սկսվում է, երբ Աստծո ժողովուրդը խոնարհվում է, աղոթում է, փնտրում է Աստծո երեսը և շրջվում է մեղավոր ճանապարհներից: Դուք հասկանո՞ւմ եք, թե որքան ազդեցիկ է սա: Կարևոր չէ, թե ով է կառավարում երկիրը: Կարևոր չէ, թե ինչպիսի օրենսդրություն է ընդունվում: Կարիք չկա, որ ետ դարձնենք բոլորին իրենց չար ճանապարհներից. մենք պետք է պարզապես հեռացնենք մեր աչքերի շյուղերը, իսկ հետո վարվենք ըստ Աստծո Խոսքի:

Վերափոխումը սկսվում է, երբ մենք խոստովանում ենք սեփական խնդիրները և որոշում ենք ապրել ըստ ճշմարտության: Վերափոխումը չի որոշվում այն ճշմարտությամբ, որը մենք գիտենք, այլ արտացոլվում

Վերափոխումը սկսվում է, երբ մենք խոստովանում ենք սեփական խնդիրները և որոշում ենք ապրել ըստ ճշմարտության:

է այն ճշմարտությամբ, որով մենք ապրում ենք: Սերը մեր վերափոխման ընթացքի բանալին է: Առանց հավատքի, հույսի և սիրո՝ վերափոխումն անհնար է: Սիրո բացակայության պատճառով է, որ մարդիկ հեռացել են սրբությունից և չեն ցանկանում փոխվել:

Ահա թե ինչու այսօր ընդունված չէ ասել, որ ցանկացած երևույթ կամ անձնավորություն կարող է սխալ լինել: Նույնիսկ եկեղեցին է ընդունել ավելի «քաղաքականապես ճիշտ» դիրքորոշում՝ ասելով, որ գոյություն չունեն բացարձակ չափանիշներ, և այն, ինչը սխալ է ինձ համար, կարող է ճիշտ լինել ձեզ համար: Դա ճիշտ չէ: Այն սերունդը, որը չունի համոզմունքներ, չունի նաև վերափոխում:

Ես ուզում եմ փոխվել: Այս աշխարհը կարիք ունի, որ ես փոխվեմ: Ամեն մի օրը ևս մեկ հնարավորություն է Հիսուսին հետևելու և Նրան նմանվելու համար: Ես այնքա՜ն շնորհակալ եմ, որ Աստված հանել է իմ վրայից իմ ամոթը, որպեսզի հագցնի ինձ Իր արդարությունը: Հիսուսը չպահեց ինձ գերության մեջ՝ արդար անվանելով իմ ամոթալի արարքները: Նույնպես, Նա մաքուր չանվանեց իմ կեղտոտ հանդերձները. Նա մաքրեց դրանք Իր Խոսքով:

Ամոթը մեր ինքնությունը չէ, սակայն երբեմն մենք զգում ենք այն: Երբեմն «ամոթալի» բառը միակն է, որը կարող է բնութագրել մեր արարքները: Ես վարվել եմ ամոթալի կերպով: Դա չի նշանակում, որ ինքս ամոթալի եմ: Դա նշանակում է, որ ես ասել և արել եմ այնպիսի բաներ, որոնցից ամաչում եմ: Երբ մենք թույլ ենք տալիս, որ ամոթը հեռացնի մեզ Աստծուց, մենք փորձում ենք ծածկել մեզ թզենու տերևներով և մեղադրում ենք մեր շուրջը գտնվող մարդկանց: Մենք կարող ենք թույլ տալ, որ ամոթը բաժանի մեզ Աստծուց, կամ կարող ենք հեռանալ խավարից և թույլ տալ, որ մեր Արարչի լույսը և սերը է՛լ ավելի մոտեցնեն մեզ Նրան:

Աստված վերջնականորեն հեռացնում է մեր ամոթը՝ Իր սիրով և սրբությամբ:

Իմ ամոթը չի հեռացվի, եթե ես արդարացնեմ իմ վատ վարքը և մեղքը: Ես չեմ կարող ետ նայել և պատվավոր անվանել իմ ամոթալի արարքները՝ արդարացնելով դրանք իմ հանգամանքներով: Իմ ամոթը հեռացվեց, երբ ես շրջվեցի ստերով լի կյանքից և որոշեցի ապրել ճշմարտությամբ:

Վերափոխումը չի ստում. այն չի ժխտում մեր մերկությունը:

Այն մերկերին հագնված չի անվանում:

Այն չի թաքնվում Աստծո ներկայությունից թզենու տերևների և ծառերի ետևում:

Վերափոխումը սկսվում է, երբ մենք խոստովանում ենք, որ մերկ ենք:

Այն խոստովանում է, որ մենք ձախողվել ենք՝ փորձելով ծածկել մեզ այս աշխարհի ժամանակավոր զարդարանքներով և թզենու տերևներով:

Այն խոստովանում է, որ իրականում, դրանք չեն ծածկել մեզ:

Այն մի կողմ է դնում մեր բոլոր ունայն մարդկային փորձերը և խնդրում է մեր սուրբ Հորը զգեստավորել մեզ ճշմարտությամբ:

Երբ մենք ընդունում ենք Քրիստոսի իշխանությունը, մի կողմ ենք դնում մեր ամոթալի, ինքնակամ արարքները և վարվում ենք լույսի զավակների պես: Եփեսացիների 4.21-25-ը նկարագրում է այս փոխանակումը.

> «Քանի որ դուք լսել եք Հիսուսի մասին և իմացել եք այն ճշմարտությունը, որը Նրանից է, դե՛ն նետեք ձեր հին մեղավոր բնությունը և ձեր նախկին կյանքի ոճը, որն ապականված է կրքով և խաբեությամբ: Փոխարենը, թույլ տվեք, որ Հոգին նորոգի ձեր մտքերը և դիրքորոշումները: Հագե՛ք ձեր նոր բնությունը, որը ստեղծված է Աստծո պես՝ ճշմարտապես արդար և սուրբ» (NLT):

Դե՛ն նետեք այդ ամենը: Շնորհքի Սուրբ Հոգին զորացնում է մեզ, որ հեռացնենք մեր հին անկում ապրած բնությունը և ինքնաարդարացման պիղծ ցնցոտիները այնպես, ասես

Այն, ինչը մենք հանդուրժում ենք մեզանում, չի փոխվելու. փոխվելու է այն, ինչի հանդեպ մենք հստակորեն որոշելու ենք անհանդուրժողական լինել:

դրանք մահվան պատանքներ լինեն (քանի որ այդպես էլ կա): Ինչո՞ւ ինչ-որ մեկը պետք է ուզի նոր հանդերձ կրել՝ կեղտոտի և հնի վրայից: Վաղ թե ուշ, կեղտոտված հանդերձի լաքաները և գարշահոտությունը կթափանցեն նորի վրա և կապականեն: Եվ մեզնից ոչ ոք չի կարող դիմանալ երկուսն էլ կրելու ծանրությանը: Մենք դեն ենք նետում հին բնությունը՝ հին սովորություններով, երբ նորոգում ենք մեր միտքը և դիրքորոշումները՝ ձգտելով աստվածապաշտության և սրբության:

Հենց մենք *ճանաչում ենք* լավագույնը, *վարվում ենք* ըստ լավագույնի:

Հենց մենք *ճանաչում ենք* ճշմարտությունը (Հիսուսին), մենք զորություն ենք ստանում՝ ճշմարտությամբ *վարվելու* համար:

Կիրքն այլևս իրավունք չունի խեղաթյուրել մեր ցանկությունները: Ագահությունը և հարստության խաբեությունն այլևս իրավունք չունեն քող գցել մեր մտքի վրա: Հինը նոր անվանելու փոխարեն՝ մենք նորոգում ենք մեր կյանքը:

Եվս մեկ հայացք հանդուրժողականությանը

Հանդուրժողականությունն ինքնին մարդասիրական է թվում: Այնուամենայնիվ, այն, ինչը մենք հանդուրժում ենք մեզանում, չի փոխվելու. փոխվելու է այն, ինչի հանդեպ մենք հստակորեն որոշելու ենք անհանդուրժողական լինել:

Վերջերս իմ որդու տանն էի, և թոռնուհիներիցս մեկը (որն անանուն չի մնա) մտածեց, որ կարելի է ընդլայնել *ձեռքերի* ախտահանման միջոցի գործածությունը: Նա կերակրեց դրանով իր եղբորը, որին դա դուր չեկավ, և արագորեն պատմեց

այդ մասին իր հայրիկին: Երբ հայրիկը լսեց, նրա արձագանքը կարելի է նկարագրել ցանկացած կերպով, բայց ոչ՝ հանդուրժողականությամբ: Դրան անմիջապես հետևեց սիրով լի, բայց խիստ զրույց ձեռքերի ախտահանման միջոցի օգտագործման մասին: Իմ թոռնուհու մոտ գտնվող միջոցն առգրավվեց, մինչև որ նա կհավաստիացներ, որ ապագայում չէր շփոթելու ձեռքերը բերանների հետ:

Մի՞թե նրա հայրը չարությամբ վարվեց: Իհարկե՝ ո՛չ: Այն, ինչը *պաշտպանում* է մեր ձեռքի մաշկը, կարող է *թունավորել* մեր մարմինը: Նա փորձում էր ապահովել իր ընտանիքի անդամների անվտանգությունը: Նրա փոքրիկ աղջիկը չէր գիտակցում այն, ինչը գիտակցում էր նա: Երբ գիտենք ավելին, մենք խրատում ենք մարդկանց: Մենք չենք կարող ակնկալել, որ երեխան կհասկանա, որ չի կարելի խմել բոլոր հեղուկները, որոնք հաճելի բուրմունք ունեն: Մենք պետք է սովորեցնենք նրանց հիմա, որպեսզի ապագայում նրանք իմանան այդ մասին:

Խնդրում եմ, համարձա՛կ եղեք և մի՛ վերագրեք այս ճշմարտությունն այլ մարդկանց: Վերագրե՛ք այն ձեզ:

Ի՞նչ եք դուք հանդուրժում կամ ինչի՞ հետ եք համակերպվել ձեր կյանքում:

Ո՞ր բնագավառներում դուք պետք է լինեք պակաս հանդուրժողական կամ լիովին անհանդուրժողական ապագայում:

Ի՞նչն է խոչընդոտում ձեր վերափոխման ընթացքին:

Նմանակե՛ք Աստծուն

Եփեսացիների 5-րդ գլուխը խրատում է մեզ.

«Ուրեմն, նմանակե՛ք Աստծուն այն ամենում, ինչ անում եք, քանի որ դուք Նրա սիրելի զավակներն եք: Ապրե՛ք սիրով լի կյանքով՝ հետևելով Քրիստոսի օրինակին: Նա սիրեց մեզ և մատուցեց Իրեն որպես զոհ մեզ համար՝ հաճելի անուշահոտություն Աստծուն» (խս. 1,2, NLT):

Ինձ դուր է գալիս, թե ինչպես է «Ավյուն» թարգմանությունը ներկայացնում այս խոսքերը.

> «Հետևե՛ք Աստծուն և նմանակե՛ք Նրա բոլոր գործերին այն ամենում, ինչ անում եք, քանի որ այդ դեպքում դուք կներկայացնեք ձեր Հորը՝ որպես Իր սիրելի որդիներ և դուստրեր: Եվ շարունակեք վարվել՝ անձնատուր եղած Քրիստոսի շռայլ սիրուն, քանի որ Նա տվեց Իր կյանքը՝ որպես զոհ մեզ համար: Նրա մեծ սերը մեր հանդեպ հաճելի էր Աստծուն՝ նման պաշտամունքի բուրմունքի, քաղցր, բժշկարար անուշահոտության՝ երկնքում և երկրի վրա» (TPT):

Այս երկու խոսքերում չկա շատ բան, ինչի հետ կարելի է վիճել: Նախորդ գլխի վերջում Պողոսն ավարտեց իր խոսքն այն մասին, թե որքան կարևոր է բարությունը: Բոլորս ենք ուզում նմանակել մեր երկնային Հորը՝ վարվելով Նրա Որդի Հիսուսի պես: Առաջին հերթին սա նշանակում է վարվել սիրով: Հիսուսը սիրո անխառն դրսևորումն էր, բայց Հիսուսին նմանակելը նույնպես նշանակում է ապրել սրբությամբ, անձնատուր լինել Աստծուն և հնազանդվել Նրան: Անմիջապես հաջորդ խոսքում գրված է, թե ինչպիսին պետք է լինի մեր վարքը անօրինությամբ և անմաքրությամբ լի այս ժամանակաշրջանում.

> «Թող ձեր միջև չլինի սեռական անբարոյություն, անմաքրություն կամ ագահություն: Նման մեղքերը տեղ չունեն Աստծո ժողովրդի մեջ: Անպարկեշտ պատմությունները, հիմար խոսակցությունները և գռեհիկ կատակները ձեզ համար չեն: Փոխարենը, թող լինի գոհություն Աստծուն» (Եփես. 5.3,4, NLT):

«Ավյուն» թարգմանությունը ներկայացնում է Եփեսացիներին 5.3,4-ը հետևյալ կերպով.

> «Այս սերը որևէ կապ չունի սեռական անբարոյության, կրքի և ագահության հետ, քանի որ դուք Նրա սրբերն եք, և թող ոչ ոք չկարողանա մեղադրել ձեզ դրանց որևէ դրսևորման մեջ:

Հսկե՛ք ձեր խոսքը: Թողե՛ք անպարկեշտ խոսքը և անարժեք վիրավորանքները. դրանք անիմաստ բառեր են, որոնք խայտառակություն են բերում, և որոնց կարիքը չկա: Փոխարենը, թող երկրպագությունը լցնի ձեր սիրտը և արտահոսի ձեր բառերով, երբ դուք հիշեցնում եք մեկդ մյուսին Աստծո բարության մասին» (TPT):

Կարծում եմ՝ բոլորս գիտենք, որ երբեմն եկեղեցում գտնվող մարդիկ կարող են շատ չարակամ լինել: Եվ փոխարենը ընդունենք այս սուրբգրային հատվածները՝ ինքներս մեզ մաքրելու համար, մենք օգտագործում ենք դրանք, որպեսզի հալածենք այն մարդկանց, ում մեզնից ավելի հանցավոր ենք համարում: Սիրո և հաշվետվողականության սահմանները ոչ հստակ են դարձել: Հիմնականում պատճառն այն է, որ մարդիկ (քրիստոնյաները) ըստ արժանվույն չեն սիրել ճշմարտությունը և չեն ապրել ճշմարտությամբ: Ես գիտեմ, որ դուք ուզում եք տեսնել այս փոփոխությունը:

Որպեսզի օգնեմ մեզ՝ ըստ արժանվույն սիրել ճշմարտությունը և ապրել ճշմարտությամբ, ես ցանկանում եմ ներկայացնել երեք գաղափար Հռոմեացիների թղթից.

1. մեր Աստծո իրական լինելը
2. մեր օրերի իրականությունը
3. ճշմարտությունը մեր մասին

Ես նվիրելու եմ մեր ուսումնասիրության ամենամեծ մասը երրորդ կետին: Հենց դրանում է, որ մենք կքննենք մեր սրտերը և կհեռացնենք մեր աչքերի շյուղերը:

Ես մեջբերելու եմ աստվածաշնչյան հատվածները երկու թարգմանություններից, որպեսզի այն, ինչը միգուցե պարզ չլինի մի թարգմանության մեջ, հասկացվի մյուսի միջոցով: Առաջինը, խոսենք մեր Աստծո իրական լինելու մասին:

Մեր Աստծո իրական լինելը

«Որովհետև այն, ինչը կարող է հայտնի լինել Աստծո մասին, ակնհայտ է նրանց համար, որովհետև Աստված է ցույց տվել դա նրանց: Քանի որ Նրա անտեսանելի հատկանիշները, այսինքն՝ Նրա հավիտենական զորությունը և աստվածային բնությունը, պարզորեն ընկալվել են աշխարհի արարումից ի վեր՝ այն ամենով, ինչը ստեղծվել է: Այնպես որ, նրանք արդարացում չունեն» (Հռոմ. 1.19,20, ESV):

«Բայց հիմքային գիտելիքն Աստծո իրական լինելու մասին բավականին պարզ է: Բացե՛ք ձեր աչքերը, և ահա՛ այն: Երկար և մտածկոտ հայացք գցելով այն ամենին, ինչ Աստված ստեղծել է, մարդիկ մշտապես կարողացել են տեսնել այն, ինչ իրենց աչքերը, որպես այդպիսին, չեն տեսնում, օրինակ՝ հավիտենական զորությունը և Նրա աստվածային էության առեղծվածը: Այնպես որ, ոչ ոք չունի լուրջ արդարացում» (MSG):

Այն ամենը, ինչ մենք տեսնում ենք, ազդարարում է անտեսանելի Աստծո գոյությունը: Այն ամենը, ինչ մենք գիտենք, հայտնում է անհայտի իրական լինելու մասին: Արարչագործությունը հայտնում է զարմանալի և անսահման ստեղծարարություն ունեցող Աստծուն: Եթե ոչ ոք երբեք չպատմեր մեզ Արարչի մասին, բնության ներդաշնակությունը կհայտներ Նրա գոյությունը մեր աչքերին և ականջներին: Ամբողջ արարչագործությունը հայտնում է Արարչին: Մեր Աստված գերազանց է. Նա ձեր Տեր Աստվածն է, Ով միակն է և վեր է ամենից: Սաղմոսները վեհ կերպով նկարագրում են Բարձրյալ Աստծուն.

«Որովհետև Աստված մեծ է և արժանի է հազարավոր Ալելուիաների: Նրա աննկարագրելի գեղեցկության պատճառով աստվածներն էժան տեսք ունեն. հեթանոսական աստված-

ներն ընդամենը լաթեր ու ցնցոտիներ են: Աստված ստեղծեց երկինքները. թագավորական շուքը ճառագում է Նրանից. զորավոր գեղեցկությունն առանձնացնում է Նրան» (Սաղմ. 96.4-6, MSG):

Ինչպես նաև.

«Կրակը բորբոքվում է Նրա առջև՝ այրելով քարքարոտ սարերը: Նրա կայծակները լուսավորում են աշխարհը. երկիրը, լայնացնելով աչքերը, վախից դողում է: Սարերը աչք են գցում Աստծո վրա և հալվում են, հալվում են մոմի պես երկրի Տիրոջ առջև» (Սաղմ. 97.3-5, MSG):

Անհնար է կարդալ այս խոսքերը և չնկատել դրանցում արտացոլված ակնածանքը:

Մեր օրերի իրականությունը

Ամեն անգամ, երբ կանգ եմ առնում և մտածում մեր օրերի իրականության մասին, ես տալիս եմ միևնույն հարցը. «Հա՛յր, ի՞նչ է կատարվել»: Երբ շարունակում ենք կարդալ Հռոմեացիների թուղթը, հետևյալ խոսքերը ցույց են տալիս, թե ինչպես տեղի ունեցավ փոփոխություն.

«Որովհետև Աստծուն ճանաչելով՝ Նրան Աստծո պես չփառավորեցին կամ շնորհակալ չեղան, այլ իրենց մտածմունքներում ունայնացան, և նրանց անմիտ սրտերը խավարեցին: Ասելով, թե իմաստուն են, հիմարացան» (Հռոմ. 1.21,22):

Եվ «Մեսիջ» թարգմանությունից.

«Կատարվեց հետևյալը. մարդիկ կատարելապես ճանաչում էին Աստծուն, բայց երբ նրանք չվերաբերվեցին Նրան Աստծո պես՝ հրաժարվելով երկրպագել Նրան, նրանք նսեմացրին իրենց՝ հասցնելով հիմարության և շփոթության, և նրանց

> կյանքում չմնաց ո՛չ ողջամտություն, ո՛չ խրատ: Նրանք ձևացնում էին, թե հասկանում են ամեն ինչ, բայց անգրագետ էին կյանքի վերաբերյալ» (MSG):

Երբ անարգում ենք Աստծուն՝ անտեսելով Նրան մեր կյանքով, մենք հասարակացնում ենք մեզ՝ հասնելով անմտության: Սա նշանակում է, որ մենք կարդում ենք, բայց այդպես էլ չենք հասկանում: Ամբողջ արարչագործությունն ազդարարում է, որ Նա իրական է, և նման պայմաններում դժվար է չընդունել Արարչի գոյությունը, սակայն Աստծո մասին *իմանալը* և Աստծուն *երկրպագելը* շատ տարբեր բաներ են: Մենք կարող ենք ճանաչել Աստծուն՝ միայն երկրպագելով Նրան: Երբ անարգում ենք այն, ինչը պատվելու համար ստեղծվել ենք, մեր միտքն անհավասարակշռված է դառնում: Աստվածաշունչն օգտագործում է «ունայնանալ» բառը, որը նշանակում է դառնալ անպետք, դատարկ և անպտուղ: Այն նկարագրում է մտածելակերպ, որը չունի կառուցելու հմտություն և կարողություն: Ըստ «Մեսիջ» թարգմանության՝ «Նրանք ձևացնում էին, թե հասկանում են ամեն ինչ, բայց անգրագետ էին կյանքի վերաբերյալ»:

Այսօրվա իրողությունը ծանրանում է բոլորիս վրա: Պատմության մեջ երբեք չի եղել այսպիսի սերունդ, որն ունեցել է տեղեկություն ստանալու ավելի լայն հնարավորություններ, սակայն ավելի նեղ տեսադաշտ: Մենք բախվում ենք խիստ լուրջ խնդիրների առողջ միջանձնային հարաբերությունների հարցում: Մենք զարգացնում ենք մեր վիրտուալ կերպարը՝ իրական մարդկանց հետ հաղորդակցվելու հաշվին: Մենք սովորել ենք փախչել մի բանից մյուսը և հազվադեպ ենք երկար ժամանակով մնում մի տեղում, մինչև հեռանալու մղում զգալը: Երկրպագության համար կանգ առնելը և մտորելը կորսված հմտություն է դարձել:

Երկրպագության համար կանգ առնելը և մտորելը կորսված հմտություն է դարձել:

Հռոմեացիների թուղթը շարունակում է՝ նկարագրելով, թե ինչ է կատարվում, երբ մենք հրաժարվում ենք երկրպագել Աստծուն և տրվում ենք այլ բաների.

> «Եվ անեղծ Աստծո փառքը փոխեցին եղծանելի մարդու և թռչունների և չորքոտանիների և սողունների պատկերի նմանության հետ: Նրա համար Աստված էլ նրանց մատնեց իրենց սրտերի ցանկության մեջ՝ պղծության համար, որ խայտառակեն իրենց մարմիններն իրենց անձերում: Որոնք Աստծո ճշմարտությունը ստության հետ փոխեցին և երկրպագեցին և պաշտեցին ստեղծվածներին, քան թե Ստեղծողին, որ օրհնյալ է հավիտյանս, ամե՛ն» (1.23-25):

Եվ «Մեսիջ» թարգմանությունից.

> «Նրանք Աստծո փառքը, որը պահում է ամբողջ աշխարհն Իր ձեռքերում, փոխեցին էժան արձանիկներով, որոնք կարելի է գնել ցանկացած փողոցային կրպակից: Եվ, ըստ էության, Աստված ասաց. «Եթե դուք դա եք ուզում, դա էլ կստանաք»: Շատ ժամանակ չանցավ, որ նրանք ապրում էին խոզանոցում՝ պատված իրենց կեղտով, կեղտոտ՝ ներսից դուրս: Եվ այս ամենը՝ այն պատճառով, որ նրանք փոխեցին ճշմարիտ Աստծուն կեղծ աստծո հետ, և երկրպագեցին այն աստծուն, որին իրենք ստեղծեցին, փոխարենը երկրպագեին այն Աստծուն, Ով ստեղծել է իրենց՝ այն Աստծուն, Ում մենք օրհնում ենք, այն Աստծուն, Ով օրհնում է մեզ: Այո՛» (MSG):

Մեր արևմտյան մշակույթը թողել է հավիտենական իրականության փառքը՝ ընտրելով ժամանակավոր բավականությունն այն ամենով, ինչը կարող ենք գնել, ինչին կարող ենք հպվել, և ինչը կարող ենք վերահսկել: Ըստ էության, մենք արհամարհել ենք Արարչին, Ով կամենում է բարձրացնել մեզ, և երկրպագում ենք Նրա արարչագործությանը, որը ցած է իջեցնում մեզ: Ուղղելով մեր սրտերը փառասիրության և ագահության կուռքերին՝

մենք ստորացրել ենք մեզ սեռական պղծությամբ:

Մինչև եզրակացնելը, որ սա վերաբերում է մարդկանց որոշակի խմբի՝ մտածե՛ք այն մասին, ինչ գրում է հեղինակ Պրեստոն Սփրինքլը իր՝ «Մարդիկ, որոնց պետք է սիրել» գրքում. «Սեռական պղծությունն այստեղ չի սահմանափակվում միասեռ հարաբերություններով: Սա ընդհանուր արտահայտություն է, որն ընդգրկում է սեռական հարաբերություններն ամուսնությունից դուրս, շնությունը, բռնաբարությունը և ամեն տեսակի սեռական մեղքեր, որոնք գործում են թե՛ միասեռ, թե՛ տարասեռ մարդիկ»[1]:

Իմ հանցանքը նույնպես կա այս ցուցակում: Ես եկել եմ սերունդներով շնության մեջ ապրող ընտանիքից: Այսօր պոռնոգրաֆիան և ամեն տեսակի այլասերությունը հանրամատչելի է դարձել: Արևմուտքն արթնացել է խոզանոցում և զարմանում է, թե ինչպես է հասել իր ներկա վիճակին:

Երբ պահանջում ենք, որ կատարվի մեր կամքը, մենք հաճախ կորցնում ենք մեզ:

Երբ մենք հեռանում ենք Աստծուց, Նա վերցնում է Իր խոչընդոտող ձեռքը և թույլ է տալիս մեզ գնալ մեր ճանապարհով: Այս ճշմարտությունը ցույց է տալիս, թե ինչ կատարվեց Իսրայելի զավակների հետ, երբ նրանք անապատում էին: Նրանք դադարեցին հիանալ Աստծո մատակարարմամբ՝ մանանայով, և միս պահանջեցին: Նրանք մտածում էին, որ միսը կզորացներ իրենց: Աստված լոռամարգիներ տվեց, բայց արդյունքում նրանք տկարացան: Երբ պահանջում ենք, որ կատարվի մեր կամքը, մենք հաճախ կորցնում ենք մեզ. Ինչպես գրում է Պողոսը.

> «Նրա համար Աստված մատնեց նրանց անարգ կրքերի, և նրանց էգերը բնական գործածությունը փոխեցին անբնականի հետ: Այնպես էլ արուները, կնոջ բնական գործածութ-

> յունը թողնելով, իրենց ցանկություններով իրար հետ բորբոքվեցին: Արուներն արուների հետ խայտառակություն էին գործում, և այն փոխարենը, որ արժան էր իրենց մոլությանը, իրենց անձերում ընդունում էին» (Հռոմ. 1.26,27):

Եվ.

> «Այն, ինչ հետևեց դրան, ավելի վատ էր: Հրաժարվելով ճանաչել Աստծուն՝ կարճ ժամանակ անց նրանք արդեն չգիտեին, թե ինչպես մարդ լինել. կանայք չգիտեին, թե ինչպես կին լինել, տղամարդիկ չգիտեին, թե ինչպես տղամարդ լինել: Լինելով սեռական շփոթության մեջ՝ նրանք շահագործեցին և պղծեցին իրար. կանայք՝ կանանց հետ, տղամարդիկ՝ տղամարդկանց հետ. միայն կիրք, և ոչ մի սեր: Եվ նրանք վճարեցին դրա համար. ո՜հ, ինչպե՞ս նրանք վճարեցին դրա համար՝ Աստծո սիրուց զրկված, անաստված և անսեր թշվառներ դառնալով» (MSG):

Այս երկու խոսքերը սարսափելի վիճակ են պատկերում, բայց ամեն մի նախադասությունը մատնացույց է անում այն փաստին, որ մեզնից ոչ ոք չգիտի, թե ինչպես մարդ լինել՝ առանց մեր Արարչի իմաստության: Աստծո գիտելիքի մեջ է, որ մենք գտնում ենք մեզ՝ որպես մարդ: Աստծո գիտելիքն է, որ թույլ չի տալիս մեզ պղծվել՝ անկախ այն բանից, թե ինչ տեսք դա կարող է ունենալ (շնություն, ագահություն, դաժանություն, պոռնկություն և այլն):

Այնուամենայնիվ, վախենում եմ, որ մեր մշակույթը մոռացել է այս հիմքերը: Ամերիկյան ֆիլմերի մեծ մասը բռնություն է տարածում, իսկ մենք զարմանում ենք, երբ բռնություն ենք տեսնում մեր ընտանիքներում, դպրոցներում և փողոցներում: Հեռուստատեսային հաղորդումները և, ինչ խոսք, նաև գովազդները ներկայացնում են ամեն տեսակի սեռական հարաբերություններ: Մեզ ցուցադրվում է շատ ավելին, քան մենք պետք է տեսնենք, և այդ ազդեցությունն առաջացրել է այն-

պիսի բաներ, որոնց մեր նախորդ սերունդները չէին բախվում իրենց առօրյա կյանքում:

Մեր հասարակական կրթական համակարգը ճնշման է ենթարկվում, որպեսզի խրախուսի միջին դպրոցի տարիքի երեխաներին անձամբ որոշել իրենց սեռը, այնինչ նրանք գտնվում են իրենց կյանքի ամենաշփոթված ժամանակահատվածում: Մի՞թե մենք մոռացել ենք, թե որքան դժվար էր մեր դեռահասությունը (դա վաղուց է եղել, բայց ես դեռ հիշում եմ, թե ինչպիսի հոգեկան ապրումներ ունեի):

Եթե ինչ-որ մեկը խնդրեր ինձ միջին դպրոցում որոշել իմ ինքնությունը, ես կասեի, որ ես միաեղջյուր եմ: Ես փորձում էի հասկանալ, թե ինչ էր կատարվում իմ մարմնի հետ, և թե ինչու իմ կրծքերը չէին մեծանում: Այս շփոթությամբ լի շրջանում ես կգերադասեի նայել աղջիկներին հանդերձարանում՝ ինքնորոշվելու համար, քան թաքուն նայել տղաներին:

Այդ ժամանակահատվածում հետաքրքրությունը միևնույն սեռի հանդեպ բնական երևույթ է. յուրաքանչյուրը փորձում է հասկանալ, թե ինչ է կատարվում իր մարմնի հետ: Ինչո՞ւ մենք չենք պաշտպանում այս ընթացքը: Ինչո՞ւ ենք մենք սեռականացնում մեր երիտասարդներին:

Չի կարելի հանձնարարել դեռահաս տղային, որը տղամարդ է դառնում, և դեռահաս աղջկան, որը կին է դառնում, անձամբ որոշել իրենց սեռական ինքնությունը: Մի՞թե մենք թույլ կտանք, որ դպրոցական համակարգը և մեր մշակույթը սեռականացնեն մեր երեխաներին և աղավաղեն նրանց հասունացման ընթացքը: Որոշ դպրոցներում նույնիսկ ցուցադրում են միասեռ հարաբերությունների տեսանյութեր, որոնցում աղջիկները համբուրում են աղջիկներին, իսկ տղաները՝ տղաներին: Երեխաներին ասում են, որ եթե նրանք սեռական արձագանք ունեն իրենց տեսածի պատճառով, նշանակում է՝ նրանք միասեռ են:

Ո՛չ: Նրանք սեռական արձագանք ունեն, քանի որ Աստված

այնպես է ստեղծել մեզ, որ մենք սեռականորեն արձագանքենք սեռական երևույթներին, և վերջ: Երբ մենք սեռական երևույթ ենք տեսնում, մեր մարմինը սեռական արձագանք է ունենում: Սա վերաբերում է ամուրիներին և ամուսնացածներին, տարասեռներին և միասեռներին, տարեցներին և երիտասարդներին: Սա չի նշանակում, որ մենք ուզում ենք դավաճանել մեր կողակիցներին, և նույնիսկ՝ որ մենք ուզում ենք սեռական հարաբերություն ունենալ այն մարդկանց հետ, որոնց սեռական հարաբերությունները մեզ ցուցադրում են:

Ամուսնական ուխտի սահմաններում սեռական ցանկությունը տղամարդու և կնոջ միջև պատվելի է: Ամուսնությունից դուրս այն, ինչը պատվելի է, անպատիվ է դառնում: Ահա թե ինչու է շնությունը և պոռնկությունը համարվում ուխտի դրժում:Բացի այդ՝ կան սեռական ցանկություններ, որոնք Աստվածաշունչը տարբեր թարգմանություններում անվանում է անբնական և անարգ: Դրանց թվում են համասեռամալություն, արյունապղծությունը, մանկապղծությունը և անասնամոլությունը: Այստեղ ես պետք է մի պահ կանգ առնեմ: Հռոմեացիների 1-ին գլուխը հիշեցնում է, որ բոլորս ենք մեղանչել: Ագահությունը և չարախոսությունը նույնպիսի վշտալի մեղքեր են, ինչպիսիք են շնությունը և համասեռամոլությունը:

Մեղքի գինը

Հռոմեացիների 1.27-ը շարունակում է՝ նկարագրելով նման մտածելակերպին տրված մարդկանց պատիժը կամ այն գինը, որը նրանք պետք է վճարեն: Ես ուզում եմ հստակ նշել, որ Աստված *չէ*, որ ստիպում է մեզ վճարել: Նա կանչում է մեզ վերափոխման՝ ընտրելու կյանքը և օրհնությունը, ոչ թե մահը և անեծքները: Նա հրավիրում է բոլորիս՝ անառակ որդիներին, ովքեր արթնանում են վատնված կյանքի խոզանոցում, վերադառնալ Հոր մոտ՝ դեպի տուն, որտեղ պատմուճանը, մատանին և խնջույքը սպասում են մեզ: Այսօր մեր Աստված ասում

է. «Հիմա եկեք ու վիճաբանենք... եթե ձեր մեղքերը կրկնակի կարմրի պես լինեն, ձյան պես պիտի սպիտակեն» (Եսայի 1.18): Կարևոր չէ, թե ինչ ենք արել և ում հետ ենք արել դա. Նա կփրկի մեզ:

Բայց երբ մենք կառուցում ենք մեր կյանքը կռապաշտության, սեռական մեղքերի և ագահության չթրծված կրաշաղախով, այն, ի վերջո, փուլ կգա, և այդ փլուզումը շատ թանկ կնստի մեզ վրա: Երբ մենք վատնում ենք ամեն ինչ՝ հուսալով, որ ևս մեկ մարդ, ևս մեկ սեռ, ևս մեկ թմրանյութ, ևս մեկ մեքենա, ևս մեկ տուն կամ ևս մեկ կախվածություն ի վերջո կգոհացնի մեզ, մենք պատրաստում ենք մեզ պարտության համար: Մեր օրերի կոտրված մարդիկ այնքա՜ն հուսահատորեն են ձգտում լիարժեք զգալ իրենց, որ պատրաստ են դիմել ամենամեծ ծայրահեղությունների, և դրա պատճառը մասամբ այն է, որ մենք վերափոխման լավ օրինակ չենք նրանց համար:

Կարևոր չէ, թե ինչ ենք արել և ում հետ ենք արել դա. Նա կփրկի մեզ:

Հռոմեացիների թուղթը շարունակում է.

> «Եվ ինչպես որ չընտրեցին Աստծուն ունենալ իրենց գիտության մեջ, Աստված մատնեց նրանց անարգ մտքի, որ անարժան բաներ գործեն» (1.28):

Եվ «Մեսիջ» թարգմանությունից.

> «Քանի որ նրանք անհանգստություն չէին պատճառում իրենց, որ ճանաչեին Աստծուն, Աստված դադարեց անհանգստություն պատճառել նրանց և թույլ տվեց անցնել բոլոր սահմանները» (MSG):

Մենք սահմաններն անցած մարդիկ ենք: Մենք փախուստի դիմեցինք սիրող Հոր սահմանափակումներից և արդյուն-

քում ստրկացվեցինք ավերակներին: Մենք նման ենք Իսրայելի զավակներին, որոնցից ամեն մեկն անում էր այն, ինչ հաճելի էր իրեն: Հռոմեացիների թղթի հաջորդ մի քանի խոսքերը մանրամասնորեն նկարագրում են, թե ինչպիսին կարող են լինել մարդիկ, ովքեր ապրում են առանց աստվածային սահմանափակումների.

Մենք փախուստի դիմեցինք սիրող Հոր սահմանափակումներից և արդյունքում ստրկացվեցինք ավերակներին:

«Որոնք լցված են ամեն անիրավությամբ, պոռնկությամբ, անզգամությամբ, ագահությամբ, չարությամբ, լիքը նախանձով, մարդասպանությամբ, կռվով, նենգությամբ, չարաբարությամբ: Քսուներ, բամբասողներ, աստվածատողներ, թշնամացողներ, ամբարտավաններ, գոռոզներ, չար բաներ հնարողներ, ծնողներին անհնազանդներ, անմիտներ, ուխտադրուժներ, անգութներ, անհաշտներ, անողորմներ» (1.29-31):

Եվ «Մեսիջ» թարգմանությունից.

«Եվ դրանից հետո ամբողջ դժոխքը բաց թողնվեց. անվերահսկելի չարություն, զրկանք և ագահություն, արատավոր բամբասանք: Նրանք դժոխք դարձրին կյանքն այս երկրի վրա՝ իրենց նախանձով, առանց պատճառի սպանություններով, վիճաբանություններով և ստերով: Նայե՛ք նրանց. չարակամ, թունավոր, օձի լեզու ունեցող և Աստծուն ատող: Ահաբեկողներ, պարծենկոտներ, անտանելի շաղակրատներ: Նրանք շարունակ հնարում են նոր ձևեր՝ կյանքեր կործանելու համար: Նրանք լքում են իրենց ծնողներին, երբ նրանք ընդդիմանում են: Անմիտ, քծնող, դաժան, սառնասիրտ» (MSG):

Եվ այս սրտաճմլիկ ցուցակից հետո, որը պատկերում է այն մշակույթը, որը հրաժարվում է պատվել և երկրպագել Աստ-

ծուն, Պողոսն ամփոփում է իր նկարագրությունը 32-րդ խոսքով.

> «Որ Աստծո իրավունքները հասկանալով, թե այսպիսի բաներ գործողները մահվան արժանի են՝ ոչ թե միայն այս բաներն անում են, այլ գործողներին էլ կամակից են լինում»:

> «Եվ այնպես չէ, որ նրանք չեն կարող այլ կերպ վարվել: Նրանք շատ լավ գիտեն, որ թքում են Աստծո երեսին: Եվ նրանց հոգը չէ. ավելին՝ նրանք մրցանակներ են տալիս վատագույն բաները լավագույն կերպով անողներին» (MSG):

Ճշմարտությունն այն է, որ բոլորս արժանի ենք եղել մահվան: Սակայն մինչև վերջերս մեր մտքով նույնիսկ չի անցել, որ խնդրենք մարդկանց հավանություն տալ մեր նախկին կյանքի կործանարար վարքագծերին (ագահությանը, անբարոյությանը, հպարտությանը, բամբասանքին, նախանձին և այլն) և նույնիսկ պարգևատրել մեզ դրանց համար: Երբ մենք ընդունեցինք Քրիստոսին, շնորհքը զորություն տվեց մեզ, որ թողնեինք այն գործերը, որոնց պատճառով գտնվում էինք Աստծո զայրույթի ներքո: Մենք չենք կարող սխալ գործածել աստվածաշնչյան հատվածները շնորհքի մասին՝ վավերացնելու համար այն, ինչի պատճառով փոխզիջման ենք գնացել անցյալում: Ահա և մեր օրերի իրականությունը: Իսկ այժմ անցնենք ամենակարևորին:

Ճշմարտությունը մեր մասին

Սակայն, չէ՞ որ մենք մեր ժամանակների զավակները չենք. մենք հավիտենության զավակներն ենք: Այնպես որ, եկեք անցում կատարենք ներկայից դեպի այն, ինչ կարող էր լինել մեզ հետ՝ դիտարկելով Ճշմարտությունը մեր մասին, որը բացվում է մեզ համար Հռոմեացիների 2-րդ գլխում.

> «Նրա համար առանց պատասխան տալու ես, ո՛վ մարդ, ով էլ լինես, որ դատում ես, որովհետև ինչով որ ուրիշին դա-

տում ես, քեզ ես դատապարտում, որ դու նույնն ես գործում, որ ինքդ դատում ես: Բայց մենք գիտենք, որ Աստծո դատաստանը ճշմարտությամբ է նրանց համար, որ այսպիսի բաներ գործում են: Իսկ, ո՛վ մարդ, որ դատում ես այսպիսի բաներ գործողներին, և որ դու նույնն ես գործում, մի՞թե կարծում ես, թե դու կպրծնես Աստծո դատաստանից» (խս. 1-3):

Եվ «Մեսիջ» թարգմանությունից.

«Այդ մարդիկ խավար ոլորապտույտ ճանապարհի վրա են, որը ներքև է տանում: Բայց եթե մտածում ես, որ այդ պատճառով դու գտնվում ես բարձունքում, որտեղից կարող ես մատնացույց անել նրանց, կրկի՛ն մտածիր: Ամեն անգամ, երբ դու քննադատում ես ինչ-որ մեկին, դատապարտում ես քեզ: Մեկ անօրենը մյուսից լավը չէ: Մարդկանց դատելը և քննադատելը սեփական հանցանքները և սխալներն աննկատ պահելու հայտնի միջոց է: Բայց Աստծո ուշադրությունը շեղելն այդքան հեշտ չէ: Նա գիտի, թե ինչ կա նման ծխաքողերի ետևում, և Նա հաշիվ է պահանջում քեզնից քո գործերի համար: Չէ՞ որ դու չէիր կարծում, որ պարզապես մատնացույց անելով այլ մարդկանց՝ դու կշեղեիր Աստծուն, որ չտեսներ քո բոլոր չարագործությունները և խստորեն չպատժեր քեզ» (MSG):

Ո՛չ մի արդարացում

Ահա և նորից այս մասին: Մեր դերը ոչ մի դեպքում դատելը չէ: Ո՛չ մի դեպքում: Չափազանց երկար ժամանակ է, ինչ մենք փորձել ենք շեղել Աստծո ուշադրությունը մեր ձախողումներից, փոխարենը մեծարենք Նրան մեր վերափոխված կյանքով: Միայն Աստված է յուրաքանչյուրի և բոլորի Դատավորը: Մի-

Մեր դերը ոչ մի դեպքում դատելը չէ: Ո՛չ մի դեպքում:

գուցե մեր մեղքերն այլ բնույթի են, բայց դա չի նշանակում, որ Աստված հաշիվ չի պահանջի մեզնից մեր գործերի համար: Միգուցե մենք սեռական մեղքեր չենք գործում... իսկ ի՞նչ կասեք մյուս մեղքերի մասին: Ի՞նչ կասեք այնպիսի հանցանքների մասին, որոնց թվում են չարախոսությունը, նախանձը, բամբասանքը, պարծենկոտությունը և ագահությունը: Մի՞թե դրանք տարածված չեն եկեղեցում:

Բոլորս ողորմության կարիք ունենք. այնպես որ, եկեք ողորմություն ցուցաբերենք:

Բոլորս սիրո կարիք ունենք. այնպես որ, եկեք սեր ցուցաբերենք:

Բոլորս հույսի կարիք ունենք: Բոլորիս անհրաժեշտ են մարդիկ, ովքեր կարող են տեսնել մեր ներուժը: Մարդկանց սիրելը և ողորմություն ցուցաբերելը կանգնեցնում է մեզ վերափոխման ճանապարհին:

Պողոսը շարունակում է բացատրել, թե ինչպես է տեղի ունենում վերափոխումը.

> «Կամ թե Նրա քաղցրության առատությունը և համբերությունը և երկայնամտությունը արհամարհո՞ւմ ես՝ չգիտենալով, որ Աստծո քաղցրությունը քեզ ապաշխարության է տանում» (Հռոմ. 2.4):

Եվ.

> «Թե՞ դու մտածում էիր, որ քանի որ Նա սիրալիր Աստված է, թույլ կտա, որ դու ազատվես: Ավելի լավ է՝ ամենասկզբից այսպես մտածիր. Աստված բարի է, բայց թուլակամ չէ: Իր բարությամբ Նա ամուր բռնում է մեր ձեռքը և առաջնորդում է դեպի ծայրահեղ վերափոխմամբ բնութագրվող կյանք» (MSG):

Աստծո բարությունը մշտապես հրավեր է՝ ճշմարտությանը վերադառնալու համար, ոչ թե հավանություն՝ մեղանչելու համար: Կ. Ս. Լյուիսը գրում է. «Աստծո խստությունն ավելի բարի է, քան մարդու մեղմությունը, և Նրա հարկադրանքն ազատություն

է բերում մեզ»[2]: Աստծո վերջնական ցանկությունն է առաջնորդել մեզ դեպի ազատությունը՝ ճշմարտության ուղով: Հիսուսը հարություն առավ մեռելներից, որպեսզի մենք հեռանանք մեր անիրազեկությունից և ապրենք՝ պատվելով Նրա զոհը (Գործք 17.30,31):

Եկեք խոսենք այն մասին, որ Աստված ամուր բռնում է մեր ձեռքը և առաջնորդում է դեպի ծայրահեղ վերափոխմամբ բնութագրվող կյանք: Չգիտեմ, թե ինչ է սա նշանակում ձեզ համար. այնպես որ, ես կսկսեմ՝ պատմելով այն օրվա մասին, երբ Աստված ամուր բռնեց իմ ձեռքը:

Աստծո բարությունը մշտապես հրավեր է՝ ճշմարտությանը վերադառնալու համար, ոչ թե հավանություն՝ մեղանչելու համար:

Վերստին ծնված

Ես վերստին ծնվեցի քսանմեկ տարեկանում, իմ հարազատ քաղաքում, Փուրդյու համալսարանի ամառային դպրոցը հաճախելու ընթացքում: Մինչև այդ պահը, իմ կյանքը ներքև տանող խավար ոլորապտույտ ճանապարհ էր, որի մասին գրված է Հռոմեացիների թղթում: Ես չար, ինքնակամ, անկանոն և ապստամբ էի: Եվ մի երեկո, երբ ներկա էի մի զբոսախնջույքի, որը վերածվեց Աստվածաշնչի ուսուցման, իմ աչքերի թեփուկներն ընկան: Շրջապատված մարդկանցով, որոնք բարձրացնում էին իրենց ձեռքերը և երգում էին առանց որևէ ձայնային ներդաշնակության, ես չգիտեի, թե որտեղ նայեմ: Նրանց անկեղծ դեմքերից և բարձրացրած ձեռքերից խուսափելու համար՝ նայում էի երգաթերթիկին: Ես նախապես կարդացի հաջորդ երգի բառերը, որը կոչվում էր «Արդարության հանդերձներ»: Տողերից մեկում գրված էր, որ Աստված կարող է նայել ինձ և այլևս ինձ չտեսնել, այլ՝ տեսնել Հիսուսին:

Այդ պահին ես լսեցի Սուրբ Հոգու շշնջոցը. «Ես չեմ կարող նայել քեզ»: Կարդալով այդ խոսքերը՝ հասկացա, որ Հիսուսն այն ծածկոցն էր, որն անհրաժեշտ էր ինձ: Մինչև այդ պահը, ես պատճառաբանում էի իմ գործողությունները և որոշումները անթիվ արդարացումներով և մեղադրանքներով:

Այդ երեկո ես աղոթեցի՝ վերստին ծնվելու համար, և հանձնեցի իմ կյանքը Աստծո Սուրբ Հոգու առաջնորդությանը: Երբ վերադարձա իմ հանրակացարանային սենյակը, այնպիսի զգացողություն էր, որ իմ սենյակում կային իրեր, որոնք անհամատեղելի էին իմ նոր կյանքի հետ: Առանց ժամանակ կորցնելու՝ բոլոր այդ իրերը գցեցի աղբամանը:

Ոչ ոք չէր հանձնարարել ինձ, որ անեի դա: Երբ Աստծո Հոգին լցրեց ինձ, ես սկսեցի զգալ այնպիսի բաներ, որոնք նախկինում երբեք չէի զգացել: Այն արարքները, բառերը և վարքագծերը, որոնք ես ընդունված էի համարում, սկսել էին թվալ տարօրինակ, իսկ երբեմն՝ վշտալի: Պատճառը ո՛չ ամոթն էր, ո՛չ էլ մեղքի զգացումը: Դա նոր ազդեցություն էր. ես գիտակցում էի Սուրբ Աստծո ներկայությունը:

Ձոնը (իմ ապագա ամուսինը) շարունակ մեջբերում էր Պողոս առաքյալի խոսքերն ինձ համար: Ես հիշեցի, որ իմ սենյակում կար «Ճանապարհը» կոչվող Նոր կտակարանի հրատարակությունը, որը բաժանվել էր բոլոր սենյակներին համալսարանի կողմից: Ես շատ ժամանակ անցկացրի այդ գիշեր՝ փնտրելով Պողոս առաքյալի գիրքը: Ես կանգնեցրի այդ Աստվածաշունչը կռնակի վրա և աղոթեցի, որ այն բացվեր Պողոսի գրքի վրա: Ինձ համար բացված էջերի վրա տեսա հետևյալ խոսքը Բ Կորնթացիների 5.17-ից.

> «Ուրեմն, եթե մեկը Քրիստոսում է, նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ»:

Հասկանալով, որ դրանք Պողոսի խոսքերն են՝ կարծեցի, թե գտել եմ միակ գլուխը, որը նա գրել է: Ես հանգիստ քնեցի՝ առաջին անգամ վերջին տասնամյակի ընթացքում:

Ինչ-որ բան կատարվեց

Հաջորդ օրը ես արթնացա վաղ առավոտյան՝ գիտակցելով, որ իմ հոգին կենդանի էր: Ես իջա վերևի մահճակալից՝ պատրաստվելով տուն գնալ և պատմել մորս կատարվածի մասին: Անմիջապես լսեցի հետևյալ սարսուռ առաջացնող խոսքերը. «Ոչինչ չկատարվեց անցյալ երեկո: Դու չես փոխվել»: Ես սարսափահար գամվեցի տեղումս: Սկսեցի վիճարկել տեղի ունեցածն իմ ներսում. «Ո՞ւմ եմ ես խաբում... ի՞նչ քրիստոնյա՝ ինձնից»: Հանկարծ ես հիշեցի այն խաղաղությունը, որը վերապրեցի անցած երեկո: Ես հիշեցի, որ առաջին անգամ, երկար ժամանակվա ընթացքում, ես քնել էի՝ առանց ոգելից խմիչք օգտագործելու, և որ աղոթքից հետո, երբ Աստծո սիրո բժշկարար զորությունը հպվեց իմ մարմնին, ես բառացիորեն զգացի, որ իմ ստամոքսի մեջ հանգույցներ էին քանդվում:

Այդ պահին ճանաչեցի նրա ձայնը:

Դա թշնամու ձայնն էր:

Այդ ձայնն էր, որ հասցրել էր ինձ սննդի խանգարման: Այդ ձայնն էր, որ համակում էր ինձ վախով և անհանգստությամբ: Այդ ձայնն էր, որ մեկուսացրել էր և մեղադրում էր ինձ: Այդ ձայնն էր, որ հրապուրել էր ինձ՝ ներքաշելով մեղքի մեջ:

Իսկ այդ ձայնը երբևէ ասե՞լ էր ինձ, որ ես քրիստոնյա չէի: Երբե՛ք: Ոչ մի անգամ այն չէր բարձրացրել իմ հավիտենական կարգավիճակի հարցը: Այդ պահին ես հասկացա, որ ստախոսները և գողերը չեն գալիս՝ գողանալու այն, ինչ մենք չունենք: Դա առաջին առավոտն էր, որ ես փրկված էի, և այդ պատճառով էր, որ նա կասկածներ էր շշնջում ինձ:

Սակայն այդ խոսքերը ճիշտ հակառակ ազդեցությունը թողեցին ինձ վրա: Փոխարենը վարկաբեկեին այն, ինչ տեղի ունեցավ նախորդ գիշերը, դրանք է՛լ ավելի հաստատեցին ճշմարտությունը:

Ինչ-որ բան կատարվեց: Ես գրեթե բարձրաձայն ծիծաղեցի: Թշնամու ներկայությունը ցույց տվեց, որ իմ Աստված իրական է:

Ես որոշում կայացրի, որ կգնամ այնքան հեռու, որ այլևս հնարավոր չի լինի ետ դառնալ: Իմ կյանքում տեղի ունեցած փոփոխության մասին նույնիսկ կասկած չէր կարող լինել: Հենց այդտեղ և այդ պահին ես որոշում կայացրի լիարժեք կերպով նվիրվել Աստծուն:

Մեկ ամիս անց՝ աշնանային կիսամյակի սկզբին, երբ վերադարձա աղջիկների հանրակացարանը Արիզոնայում, ես պատմեցի ընկերուհիներիս, թե ինչ էր տեղի ունեցել իմ կյանքում ամառվա ընթացքում: Կարիք չկա ասել, որ բոլորը չէ, որ ուրախացան, և բոլորը չէ, որ հավատացին ինձ:

Թակոցներ իմ դռանը

Մեկ օր, իմ սենյակում ես բարձրաձայն Աստվածաշունչ էի կարդում, երբ բարձր ոտնաձայններ լսեցի միջանցքում, որոնց հետևեց մի թակոց իմ դռանը: Դռան ետևում մեր հանրակացարանի աղջիկներից մեկն էր, ով ասում էր. «Հերի՛ք է բարձրաձայն կարդաս»: Թվում է՝ նա նույնքան հանկարծակիի եկավ իր ասածից, որքան՝ ես: Այդ պահին հասկացա, որ դևերն իրական են: Մեր հանրակացարանի աղջիկներին հարգալից վերաբերվելու համար, ես բարձրանում էի հրշեջ սանդուղքով և բարձրաձայն Աստվածաշունչ էի կարդում հանրակացարանի շենքի տանիքին:

Այդ դիտակետից հռչակում էի Աստծո խոստումները մեր համալսարանի տարածքի, հանրակացարանի և իմ ապագայի վրա: Շատ գիշերներ ես առաջնորդություն էի զգում, որ քայլեի միջանցքներով և կամացուկ աղոթեի հանրակացարանի աղջիկների համար՝ կանչելով նրանց խավարի տիրույթից դեպի լույսի թագավորություն:

Չանցավ շատ ժամանակ, երբ լսեցի այլ թակոցներ իմ դռանը: Առաջին կուրսի աղջիկներն ուզում էին իմանալ, թե ինչ էր կատարվել ինձ հետ: Նրանք լսել էին, թե ինչպիսին եմ եղել, և տեսել էին, թե ինչպիսին եմ դարձել, և ուզում էին այն, ինչ

ես ունեի: Ես վերցրի «Կամպուս Քրուսեյդ» ծառայության ավետարանչական գրքույկներից մեկը, և նրանք բարձրաձայն կրկնեցին ինձ հետ ամբողջ գրքույկը՝ բառ առ բառ:

Ես հիշում եմ, թե ինչպես առաջին անգամ քարոզեցի մեր հանրակացարանի աղջիկներին: Դա տեղի ունեցավ անսպասելի: Ինչ-ինչ պատճառով որոշել էի, որ միջազգային տնտեսագիտության ֆակուլտետը լավ ընտրություն էր: Ուսման առաջին տարիները բավականին հեշտ էին, բայց նախավերջին և վերջին կուրսերում պրոֆեսորները սկսեցին «մաղել» թույլերին:

Ես և նույն դասընթացներին մասնակցող ևս մի քանի ուսանողուհի որոշեցինք միասին սովորել ամբողջ գիշերվա ընթացքում՝ միջանկյալ քննություններին պատրաստվելու համար: Արդեն առավոտ էր: Մենք ճաշարանում էինք՝ նստած նախաճաշի սեղանի շուրջ, և հարցեր էինք տալիս մեկս մյուսին քննության վերաբերյալ: Ես կոֆեինի հաբերի և սուրճի ազդեցության տակ էի, երբ պարելով ներս մտավ մեր հանրակացարանի աղջիկներից մեկը, ով իմաստուն կերպով ընտրել էր այն ֆակուլտետը, որտեղ պետք է սովորեի՝ որպես չորս որդիների ապագա մայր. տարրական կրթության ֆակուլտետը: Նա մի հայացք գցեց մեզ վրա և ասաց, որ մենք սարսափելի տեսք ունենք: Մենք մի պահ լռեցինք՝ նրա մեկնաբանությունն ընդունելու համար, և վերադարձանք մեր զրույցին: Բայց նա չհասկացավ մեր ակնարկը: Վերցրեց իր նախաճաշի սկուտեղը և, միանալով մեզ, ասաց մոտավորապես հետևյալը.

– Լի՛զա, այնպիսի տեսք ունես, ասես քո վրայով մեքենա է անցել:

Ես միայն հիշում եմ, թե ինչպես ցնցվեցի, և չվերածնված Լիզան սկսեց գլուխ բարձրացնել: Իմ բերանից դուրս թռավ մի հարց, որի մասին ես մտածում էի նախորդ մի քանի տարիների ընթացքում.

– Ինչո՞ւ ես դու այսպիսի [...] ամեն առավոտ:

Բոլորը ճաշարանում քարացան. վերստին ծնված աղջիկը հայհոյեց: Մինչև քրիստոնյա լինելը ես միշտ էի հայհոյում, սակայն նորահավատ դառնալուց հետո հայհոյում էի միայն իմ

մտքում: Բայց այս անգամ արեցի դա բարձրաձայն և մարդկանց առջև, և աղջիկներից շատերը չգիտեին, թե ինչ անեն: Նրանցից մեկն արագ որոշեց, թե ինչպես պիտի վարվի: Նա ոտքի կանգնեց, ուղղեց մատն ինձ վրա և ասաց.

– Ես գիտեի՛: Ես գիտեի՛, որ հնարավոր չէ, որ դու քրիստոնյա դարձած լինես: Դու շա՛տ վատն ես, - և շտապեց հեռանալ ճաշարանից:

Ես վեր կացա սեղանից, և իմ սիրելի սենյակակիցը բռնեց ձեռքս՝ հավաստիացնելով.

– Ես ուզում էի ասել նույնը:

Ես ժպտացի և կանգնեցի: Բոլորի աչքերն ուղղված էին ինձ: Իմ հաջորդ խոսքերը հետևյալն էին.

– Ուզում եմ ներողություն խնդրել քեզնից: Ես բոլորովին չէի վերահսկում ինձ:

Բոլորս ենք սխալներ գործելու, բայց արդարացումներ անելն անթույլատրելի է:

Ավելի ուշ իմ ընկերուհիներից շատերն ասացին, որ հենց այդ պահին նրանք հասկացան, որ ես քրիստոնյա եմ դարձել: Նրանք չէին լսել իմ աղոթքը ցնցուղի տակ կամ բարձրաձայն Աստվածաշունչ կարդալիս՝ տանիքին նստած: Նրանք չէին տեսել ինձ գիշերով միջանցքներով քայլելիս և իրենց համար աղոթելիս: Այդ օրը առաջին անգամ նրանք տեսան, թե ինչպես ես խոնարհեցրի ինձ:

Միգուցե մենք պետք է ընդունենք հենց այս դիրքորոշումը՝ խոնարհությունը, եթե ցանկանում ենք դառնալ անդառնալի վերափոխման օրինակ: Բոլորս ենք սխալներ գործելու, բայց արդարացումներ անելն անթույլատրելի է: Երբ մենք իմանում ենք ավելի լավ ճանապարհի մասին, մենք պետք է քայլենք դրանով: Եվ երբ, ընդհակառակը, ընտրում ենք սխալ ճանապարհը, պետք է պատասխանատվություն ստանձնենք դրա համար:

Չարլզ Սփերջենն ասել է.

> «Դուք չեք կարող քարոզել մեղքի մեջ հանդիմանվելու մասին, քանի դեռ չեք վերապրել դա: Դուք չեք կարող քարոզել ապաշխարության մասին, քանի դեռ ինքներդ չեք ապաշխարել: Դուք չեք կարող քարոզել հավատքի մասին, քանի դեռ չեք կիրառել այն. Ճշմարիտ քարոզն աղբյուր է: Այն բխեցնում է անձի խորքերում եղածը: Եթե Քրիստոսը ջրհոր չի բացել մեզանում, մեզնից արտահոսք չի լինի»[3]:

Ինձ սա դուր է գալիս. Ճշմարիտ քարոզն աղբյուր է. այն կենդանի ջրի աղբյուր է: Ողորմությունը պետք է անարգել բխի յուրաքանչյուրիս ներսից:

Սիրելի երկնային Հա՛յր,

Ամուր բռնի՛ր իմ ձեռքը և առաջնորդի՛ր ինձ դեպի ծայրահեղ վերափոխում: Ես ցանկանում եմ, որ իմ կյանքի ամեն բնագավառն ուղերձ լինի, որի միջոցով մարդիկ կտեսնեն Քեզ: Ես ցանկանում եմ ճանաչվել այն բանով, թե ինչի կողմն ես Դու, ոչ թե այն բանով, թե ինչի դեմ եմ ես: Ես այլևս չեմ արդարանա իմ սխալների համար: Հանդիմանի՛ր ինձ այն բնագավառներում, որոնք հակառակվում են Քո աշխատանքին իմ կյանքում:

10

ԱՆԿՈՏՐՈՒՄ՝ ՍՐԲՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Սրբությունը (Աստծո) մյուս բոլոր հատկանիշների կատարելությունն է: Նրա զորությունը սուրբ զորություն է. Նրա ողորմությունը սուրբ ողորմություն է. Նրա իմաստությունը սուրբ իմաստություն է: Նրա հատկանիշներից հենց սրբությունն է, որ դարձնում է Նրան արժանի մեր փառաբանությանը»:

Ջերի Բրիջիս

Ես հիշում եմ, որ կարդում էի «Սրբության ձգտում» գիրքը, երբ քսանն անց էի: Ամեն էջը իմ մեջ բացահայտում էր այնպիսի ձգտում, որը չէի գիտակցում: Ես հասկանում էի, որ Աստված սուրբ է, սակայն չէի գիտակցում, որ ինքս կարող էի սրբության ձգտել: Երբ հասկացա այս ճշմարտությունը, փոխվեց իմ օրագրի բառապաշարը, իմ շեշտադրումը երկրպագության մեջ, և նույնիսկ այն, թե ինչպես էի ես ընկերներ ընտրում: Պատճառն այն չէր, որ ինձ մյուսներից լավն էի համարում: Ընդհակառակը՝ ես գիտեի, որ ավելի թույլ և շատ ավելի խոցելի էի անսուրբ բաների համար:

Այնպես որ, սկսեցի ջանասիրաբար հսկել այն, ինչը հայտնվել էր ինձ, որպեսզի Սուրբը կարողանար հայտնվել իմ կյան-

քում: Ես մշտապես հակված էի եղել անկանոն կյանքին, սակայն բացահայտեցի, որ այդ կենսաոճը դանդաղ մահ էր: Ի պատասխան դրան՝ ես չափազանց երկար ժամանակ խստորեն սահմանափակեցի իմ կյանքը՝ այնքան, որ խճճվեցի կանոնների և արտաքին երևույթների մեջ: Երբ ծնվեց իմ առաջնեկը, ես խորապես ցանկանում էի, որ նա լիներ և՛ սուրբ, և՛ ազատ, ինչը նշանակում էր, որ նրա մայրը պետք է վերապրեր նույնը իր կյանքում:

Սրբությանը ձգտելը ազատություն է տալիս մեզ:

Մի՛ վախեցեք: Սրբությունը չի նշանակում ևս մի շարք կանոններ, որոնք սահմանափակում են մեզ: Բոլորովին ո՛չ. սրբությանը ձգտելը ազատություն է տալիս մեզ: Այն հավաստիացնում է, որ քրիստոնեական կյանքն ավելին է, քան դավանությունն արդար լինելու մասին: Սրբության միջոցով մենք ճանաչում ենք Աստծո անկոտրում լիարժեքությունը: Շոտլանդական աստվածաբան Սինքլեր Ֆերգյուսոնը գրում է.

> «Աստծո սրբությունը նշանակում է, որ Նա առանձնացված է մեղքից: Բայց սրբությունն Աստծո մեջ նույնպես լիարժեքության իմաստ ունի: Աստծո սրբությունը Նրա աստվածությունն է: Նրա սրբությունը ցույց է տալիս, որ Նա Աստված է՝ այն ամենով, ինչը Նրա համար Աստված լինել է նշանակում: Այսպիսով, Աստծուն Իր սրբությամբ հանդիպելը նշանակում է նաև համակվել այն գիտակցությամբ, որ Նա Աստված է, ոչ թե մարդ»[1]:

Աստված առանձնացված է մեղքից, սակայն Քրիստոսի միջոցով Նա այնքան մոտ է մեզ, որքան մեր շունչը: Երբ Նրա սուրբ ներկայության մեջ ենք, մենք հայտնություն ենք ստանում այն մասին, թե որքանով է Նա տարբերվում մեզնից, և միևնույն ժամանակ խորապես գիտակցում ենք, թե որքան է

Նա սիրում մեզ: Շատ առումներով, սրբությամբ ապրելու որոշումը մեր արձագանքն է Նրա արդարության պարգևին: Նա լուսե հանդերձներ է հագցրել մեզ. ինչո՞ւ մենք պետք է ուզենք կրել դրանք և կրկին թավալվել ցեխի մեջ: Մենք սիրված ենք Թագավորի կողմից, Ով տվեց Իր Որդուն, որպեսզի բարձրացնի մեր գլուխները մեր խավարից, և մենք կարողանանք տեսնել Իր լույսը: Ինչո՞ւ մենք պետք է ուզենք վերադառնալ խավարի մեջ:

Աստված սուրբ է, և Նա սրբությամբ է վարվում:

Ինչպես և Նրա սերը, Նրա սրբությունն անկոտրում է, անպարտելի է, անհերքելի է, անթափանցելի է, մշտական է, անսասան է և հաստատուն է:

Աստծո սրբությունն անզիջում և գրավիչ է. Նրա սրբությունը գեղեցիկ է՝ երբ այն սարսափազդու է, և երբ՝ մեղմ է:

Աստված սուրբ լույս է: Աստված սուրբ սեր է: Աստված սուրբ մաշող կրակ է:

Սրբությունն անկարելի է առանձնացնել Աստծո գերբնական բնությունից:

Աստված մեր սուրբ Հայրն է, որը թագավորում է Իր սրբությամբ, զարմանալի սքանչելիքներով և հրաշքներով: Աստծո սրբությունն ազդարարվում է թե՛ Հին, թե՛ Նոր կտակարաններում:

> «Ո՞վ է աստվածների մեջ Քեզ պես, ո՛վ Տեր: Ո՞վ է Քեզ պես՝ սրբության մեջ փառավորված, օրհնություններով սքանչելի, հրաշքներ անող» (Ելից 15.11):

Եվ

> «Ո՞վ է, որ Քեզնից չի վախենա, ո՛վ Տեր, և Քո անունը չի փառավորի, որ միայն Դու ես սուրբ: Որովհետև բոլոր ազգերը կգան և Քո առջև երկրպագություն կանեն, որովհետև Քո իրավունքները (կամ՝ արդար գործերը) հայտնվեցին» (Հայտն. 15.4):

Ի՞նչ է սրբությունը

Մինչև կշարունակենք նկարագրել Աստծո այս զարմանալի հատկանիշը, պետք է, նախ, հասկանանք այն: «Սուրբ» բառը կարելի է սահմանել որպես «կատարյալ՝ բարությամբ», կամ «արդար»: «Սրբություն» բառը հիմնականում վերաբերում է բնականից վեր և տարբեր լինելուն՝ այնպիսի վարքի, որը տարբերվում է սովորական մարդկային վարքից և մեծապես գերազանցում է այն: Քանի որ Աստված սուրբ է Իր ամբողջ էությամբ, Նա սուրբ է Իր բոլոր գործերում: Սուրբ Աստված սրբությամբ է վարվում: «Սուրբ» բառի հոմանիշներն են սրբացված, ընծայված, մաքրված, նվիրված, աստվածահաճո և սրբազան:

Քանի որ Աստված սուրբ է Իր ամբողջ էությամբ, Նա սուրբ է Իր բոլոր գործերում:

Ինչպես գրում է Ն. Տ. Ռայթը. «Մարդիկ հաճախ համարել են սրբությունը բացասական հատկանիշ կամ բարոյական սխալմունքների բացակայություն, սակայն, իրականում, սրբությունը դրական է: Սրբությունն այն պայծառ արտացոլքն է, որը հայտնվում է մարդկային բնավորության մեջ, երբ մենք սովորում ենք գործնականում կիրառել այն, ինչը նշանակում է կրել Աստծո պատկերը»[2]:

Ինձ սա դուր է գալիս: Մենք սովորում ենք ապրել սրբությամբ, երբ գործնականում կիրառում ենք այն, ինչը նշանակում է ապրել որպես Բարձրյալ Աստծո զավակ:

Աստված սուրբ է Իր շնորհքի, զորության, հավատքի, սիրո, ճշմարտության, գիտելիքի և դատաստանի մեջ: Մեր Աստված միշտ սուրբ է եղել, Նա սուրբ է հիմա, և Նա միշտ սուրբ կլինի: Այնուամենայնիվ, Նա կոչ է անում մեզ՝ նրանց, ովքեր սուրբ չեն եղել, ովքեր, հավանաբար, նույնիսկ հիմա սրբությամբ չեն վարվում, սուրբ լինել: Այս կոչի նպատակն այն չէ, որ մենք փորձենք անել դա մեր մարդկային կարողությամբ և

ձախողվենք: Քանի որ մենք Նրանն ենք, մեզ շնորհվել է աստվածային արտոնություն՝ լինելու Նրա սուրբ բնության մասնակիցները:

Այս խոստումը գրված է Բ Պետրոս 1.3,4-ում.

> «Նրա աստվածային զորությունը շնորհեց մեզ այն ամենը, որ կյանքի և աստվածապաշտության համար պետք է՝ Նրա գիտությամբ, որ մեզ կանչեց փառքով և առաքինությամբ, որոնցով ամենամեծ և պատվական խոստումներ են տրված մեզ, որ նրանցով հաղորդակից լինեք աստվածային բնությանը՝ աշխարհի մեջ ցանկությունից եղած ապականությունից հեռու փախչելով»:

Նրա աստվածային զորությունը շնորհել է մեզ *այն ամենը*, ինչի կարիքը մենք ունենք՝ աստվածապաշտությամբ և սրբությամբ վարվելու համար: Ոչինչ չի անտեսվել: Նա խոստացել է, որ սպառազինի մեզ *ամեն ինչով*, ինչի կարիքը ունենք՝ սուրբ կյանք վարելու համար: Այն, որ Քրիստոսը շնորհեց մեզ այս խոստումը, նույնքան հաստատ է, որքան այն, որ Նա ցույց տվեց մեզ սուրբ կյանք վարելու օրինակը: Չարլզ Սփերջենը գրում է. «Սրբության մեջ Աստված ավելի պարզորեն է երևում, քան որևէ այլ բանում՝ բացի Տեր Հիսուս Քրիստոսի Անձից, Ում կյանքն այդ սրբության կրկնությունն է»[3]:

Հիսուսը հայտնեց Հոր սրբությունը: Երբ խոսքը սրբության մասին է, Հիսուսը և՛ մեր օրինակն է, և՛ քահանայապետը: Քանի որ Նա և Աստված մեկ են, Հիսուսն ասաց և արեց բացառապես այն, ինչ Նա լսեց և տեսավ Հորից: Նա ցույց տվեց այն կյանքի օրինակը, որով մենք պետք է երկրպագենք Աստծուն:

Այս պատճառով, Պողոսը հարցնում է մեզ.

> «Ի՞նչ համաձայնություն ունի Աստծո տաճարը կուռքերի հետ, որովհետև դուք կենդանի Աստծո տաճարն եք, ինչպես Աստված ասաց, թե. «Նրանցում կբնակվեմ և նրանցում ման կգամ

> և նրանց Աստվածը կլինեմ, և նրանք՝ Իմ ժողովուրդը: Նրա համար նրանց միջից դուրս գնացե՛ք և բաժանվե՛ք», - ասում է Տերը, - «և պիղծ բաների մի՛ դիպչեք, և Ես կընդունեմ ձեզ, և Ես ձեզ հայր կլինեմ, և դուք Ինձ որդիներ և աղջիկներ կլինեք», - ասում է Ամենակարող Տերը» (Բ Կորնթ. 6.16-18):

Պողոսի առաջին հարցի պատասխանն է՝ ոչ մի: Չկա ոչ մի համաձայնություն: Օգտագործելով արամեերեն տեքստը՝ «Ավյուն» թարգմանությունն ավելի նրբորեն է ներկայացնում այս հարցը. «Ի՞նչ ընկերություն ունի Աստծո տաճարը դևերի հետ»: Պատասխանը պարզ է՝ ոչ մի: Պողոսը շարունակում է հորդորել մեզ.

> «Արդ, այսպիսի խոստումներ ունենալով, սիրելիներ՛ր՝ մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք Աստծո ահով» (Բ Կորնթ. 7.1):

Վերջերս կարդացի մի խորաթափանց հոդված, որը մատնացույց էր անում ժամանակակից Վեսլիական եկեղեցու մտածելակերպի թերացումները և համեմատում էր դրանք այդ եկեղեցու հիմնադրի մտածելակերպի հետ: Ահա մի քաղվածք այդ հոդվածից.

> «Քրիստոնյաները՝ վեսլիական/մեթոդիստական ավանդության մեջ, պետք է մասնավորապես հրաժարվեն մեղքերի ներումը (արդարացումը) և սրբությունը (սրբացումը) որպես երկընտրանք ներկայացնելուց, քանի որ Վեսլին աներկբա կերպով պնդում էր, որ երկուսն էլ քրիստոնեական կյանքի մասն են: Իր վերջին գրքում, որը կոչվում է *«Բացահայտել քրիստոնեական սրբությունը. Վեսլիական սրբության աստվածաբանության սիրտը»,* հեղինակ Դայան Լեկլերկը ցույց է տալիս, որ վեսլիականների վերջին սերունդը սրբության ուղերձի բարի տնտես չի եղել: Նա խոսում է ներկա ճգնաժամի մասին, որը կապված չէ սրբությունը ներ-

կայացնելու ձևի հետ, այլ շատ ավելի կործանարար բնույթ ունի. այն լռության և «սրբության արտահայտման բացակայության» ճգնաժամ է: Արդյունքում, Լեկլերկը համարում է, որ «մարդիկ անցել են մի ծայրահեղությունից մյուսը. նրանք թողել են օրինապաշտությունը, սակայն հոռետեսորեն են վերաբերվում այն փաստին, որ իրենք կարող են հաղթել մեղքը: Իմ ուսանողներից շատերը հավատում են, որ մեղքն անխուսափելի է, տարածվող է և մնայուն է քրիստոնյայի կյանքում: Ցավոք, թվում է՝ նրանք նույնիսկ պատկերացում չունեն, որ կարելի է ապրել այլ կերպով»»[4]:

Կարդալով սա՝ իմ ներսում հույս արթնացավ: Սրբությունն ընդգրկում է և՛ արդարացումը, և՛ սրբացումը. այս երկուսը միասին լիարժեք են դարձնում մարդուն:

Սուրբ կյանք

Սրբությունը՝ մեր գործերի մեջ

«Հետևե՛ք խաղաղության ամենի հետ և սրբության, որ առանց նրա ոչ ոք Տիրոջը չի տեսնի: Զգո՛ւյշ կացեք, որ մեկը հետ մնացող չլինի Աստծո շնորհքից, որ մի դառն արմատ վեր չբուսնի և նեղություն տա, և նրանով շատերը պղծվեն: Որ չլինի մեկը պոռնիկ և պիղծ՝ ինչպես Եսավը, որ մի կերակուրի համար իր անդրանիկությունը ծախեց» (Եբր. 12.14-16):

Վեճերը բարենպաստ միջավայր չեն սրբության համար: Աստծո սուրբ ներկայությունը չի կարող բնակվել անմիաբան և պառակտիչ մարդկանց հետ: Իր սրբության պատճառով, Նա չի կարող օրհնել վիրավորված և չներող մարդկանց, թեև փափագում է անել դա: Նույնպես, ցանկացած տեսակի սեռական անբարոյություն կմեկուսացնի մեզ: Եվ թող այն դասը, որն այդքան թանկ նստեց Եսավի վրա, սովորեցնի ամեն մեկիս գնահատել մեր ժառանգությունն ավելի, քան մեր ախորժակը բա-

վարարելու անմիջական ցանկությունը:

Քանի որ Աստված սուրբ է Իր ամբողջ էությամբ, Նա կոչ է անում մեզ սուրբ լինել մեր բոլոր գործերում:

Սրբությունը՝ մեր մտքի մեջ

> «Արդ սա եմ ասում և վկայում Տիրոջով, որ դուք այլևս չգնաք՝ ինչպես ուրիշ հեթանոսներն են գնում՝ իրենց մտքի ունայնությամբ, որ խավարած են մտքով և օտար են Աստծո կյանքից՝ այն տգիտության պատճառով, որ նրանցում է, իրենց սրտերի կուրության համար, որ անզգայացած՝ իրենց անձերը մատնեցին անառակության, ամեն պղծության գործերի մեջ՝ ագահությամբ» (Եփես. 4.17-19):

Ինչպես արդեն տեսանք, ունայնությունն օգտավետության հականիշն է: Մեր միտքը գործում է՝ համաձայն մեր գիտելիքների և վերապրումների, ինչն, իրականում, կարող է խոչընդոտել մեր վերափոխմանը: Այնուամենայնիվ, մենք չենք կարող վերադառնալ այն սովորություններին, որոնք ձեռք էինք բերել, երբ օտար էինք Աստծո կյանքից: Մենք մահանում էինք՝ տրվելով կռապաշտությանը և անառակությանը, և հուսալով, որ դրանք կենդանության զգացում կհաղորդեին մեզ: Մարդիկ, որոնց զգայունությունը բթանում է, ստիպված են ավելի ու ավելի խորն իջնել զգայական ոլորտի խավարի մեջ: Եփեսացիների թուղթը շարունակում է՝ մատնացույց անելով Հիսուսին.

> «Բայց դուք Քրիստոսին այսպես չսովորեցիք, եթե Նրանից լսեցիք և Նրանով սովորեցիք, ինչպես որ ճշմարտությունն է Հիսուսում, որ ձեզնից դուրս հանեք առաջին գնացքի պես եղող հին մարդը, որ խաբեբայության ցանկությամբ ապականված է, և ձեր մտքի հոգով նորոգվեք և նոր մարդուն հագնեք, որ Աստծո պատկերի պես ստեղծված է՝ ճշմարտության արդարությամբ և սրբությամբ» (4.20-24):

Ահա և նորից: Աստծո Խոսքը հորդորում է մեզ մի կողմ դնել մեր հին մարդուն՝ նրա կյանքի ոճը և բոլոր մեղավոր ցանկությունները, որպեսզի ճանապարհ բացենք նոր մարդու համար: Սուրբ Հոգին ձգտում է հայտնել մեզ մեր նոր մարդուն՝ ճշմարիտ արդարությամբ (մեր արդար դիրքով) և ճշմարիտ սրբությամբ (մեր կյանքով՝ այդ արդարության ներքո): Ն. Տ. Ռայթը հաստատում է այս գաղափարը՝ Պողոսի բանտային նամակների իր մեկնության մեջ.

> ««Ձեր մտքի հոգով նորոգվե՛ք» (խս. 23). ահա և գաղտնիքը: Եթե սիրտը ճիշտ դիրքում է, ժամանակն է նաև շտկել միտքը, ինչից հետո դուք բավականաչափ կամքի ուժ կունենաք, որպեսզի համապատասխանեցնեք նաև ձեր վարքը: Հեռացրե՛ք հինը և ընդունե՛ք նորը»[5]:

Իսկ ինչպե՞ս նորոգել մեր մտքի հոգին: Ինձ մշտապես տալիս են այս հարցը, բայց իմ պատասխանը միշտ չէ, որ այն է, ինչ մարդիկ ուզում են լսել: Մեր միտքը նորոգվում է, երբ հնազանդվում ենք Աստծո Խոսքի ճշմարտությանը: Եկեք մի քանի հատված կարդանք Պետրոսի առաջին թղթից՝ այս պնդումը հիմնավորելու համար:

Սրբությունը հնազանդություն է

> «Նրա համար, ձեր մտքի մեջքը գոտեպնդած (կամ՝ պատրաստելով ձեր միտքը գործողության) և զարթնած՝ կատարելապես հուսացեք այն շնորհքին, որ հասնում է ձեզ Հիսուս Քրիստոսի հայտնությունում՝ հնազանդ որդիների պես, չնմանվելով այն ձեր տգիտության ժամանակվա առաջի ցանկություններին, այլ ձեզ կանչող Սուրբի պես դուք էլ սուրբ եղեք ձեր բոլոր վարքերում, որովհետև գրված է. «Սո՛ւրբ եղեք, որ Ես սուրբ եմ»» (Ա Պետր. 1.13-16):

Ուսումնասիրելով այս հատվածը՝ ես պարզեցի, որ ըստ տարբեր թարգմանությունների՝ մեզ պատվիրվում է գոտեպն-

դել մեր մտքի մեջքը կամ պատրաստել մեր միտքը գործողության: Այս հատվածը կոչ է անում նորոգել և սպառազինել մեր միտքն Աստծո Խոսքով, որպեսզի մեր հույսը խարսխված լինի շնորհքով տրված զորության վրա: Նրա շնորհքը տալիս է մեզ և՛ հայտնություն, և՛ պատրաստակամություն՝ Հիսուս Քրիստոսին հետևելու համար:

Մենք պետք է որոշում կայացնենք, թե ինչին և ում ենք հնազանդվելու՝ մեր կրքերի՞ն, թե՞ այն Աստծո Խոսքին, որը ստեղծել է մեզ: Մեր հոգին պատրաստ է, բայց մեր մարմինը տկար է և հակված է մեղանչելու: Այնպես որ, մենք պետք է միտումնավոր կերպով որոշում կայացնենք հնազանդվել կյանքի ամեն բնագավառում: Երբ կարդում ենք Աստծո Խոսքը, մենք պետք է աղոթենք, որ Սուրբ Հոգին հայտնի ցանկացած բնագավառ մեր կյանքում, որում նմանվել ենք այս աշխարհին կամ փոխզիջման ենք գնացել, որը մենք հանդուրժում ենք՝ սովորության համաձայն կամ անտեղյակության պատճառով:

Հենց որ գիտակցենք, մենք ճիշտ կվարվենք:

Ես կկիսվեմ ձեզ հետ մի բանով, որպեսզի խրախուսեմ ձեզ: Ես հազվադեպ եմ *ցանկանում* հնազանդվել: Ես հնազանդվում եմ, քանի որ որոշում եմ պատվել Աստծուն: Այս խոսքը հորդորում է մեզ. քանի որ մեզ Կանչողը սուրբ է, մենք նույնպես պետք է սուրբ լինենք մեր բոլոր գործերում: Աստված սուրբ է Իր ամբողջ էությամբ: Մենք պետք է սուրբ լինենք մեր բոլոր գործերում: Սա նշանակում է, որ այն, թե ինչպես ենք մենք ապրում մարդկանց առջև, պետք է արտացոլի մեր հնազանդությունը մեր անտեսանելի Աստծուն:

Աստված սուրբ է, և մեր վարքը պետք է սուրբ լինի:

Աստված սուրբ է, և մեր վարքը պետք է սուրբ լինի:

«Սուրբ Հոգու միջոցով ձեր անձերը սրբելով ճշմարտության հնազանդությամբ՝ անկեղծ եղբայրասիրության համար, մա-

քուր սրտով իրար սերտ սիրեք՝ վերստին ծնված լինելով ոչ թե ապականության սերմից, այլ՝ անապական սերմից՝ Աստծո կենդանի և հավիտենական խոսքով» (Ա Պետր. 1.22,23):

Հնազանդությունը ճշմարտությանը՝ մաքրում է մեր անձերը: Այս մաքրագործումը տեղի է ունենում կատարելու միջոցով, ոչ թե պարզապես լսելու: Մենք փրկվում ենք անբիծ Գառան զոհի միջոցով, մեր միտքը նորոգվում է Խոսքով, և մեր անձը մաքրվում է ճշմարտությանը հնազանդվելով: Սա շարունակական գործընթաց է:

Որքան հնազանդվում ենք ճշմարտությանը, այնքան մեր միտքն ավելի է մաքրվում, և մենք կարողանում ենք է՛լ ավելի խորը սիրել միմյանց: Սերը չի կարող լինել ավելի խորը, քան այն տեղը, որ սիրտը հատկացնում է դրա համար: Աստծո Խոսքի մեջ բնակվելն ավելացնում է մեր խորությունը և ճշմարտապես սիրելու կարողությունը: Այն սիրտը, որը հակառակվում է ճշմարտությանը, միայն մակերեսորեն է սիրում: Քրիստոսն է ամեն ճշմարտության անապական սերմը և անկոտրում Անկյունաքարը: Առանց ճշմարտության՝ անհնար է սիրել:

Աստծո Խոսքի մեջ բնակվելն ավելացնում է մեր խորությունը և ճշմարտապես սիրելու կարողությունը:

Աստծո Խոսքի անապական սերմը մնում է հավիտյան: Մենք նույնիսկ չենք կարող ձգտել սրբության՝ առանց Աստծո Խոսքի, և չենք կարող բացատրել այս ձգտումը: Երբ Խոսքը սկսում է գործել մեզանում, մենք սիրում ենք և մնայուն պտուղ ենք տալիս, քանի որ այն սուրբ և ճշմարիտ է: Կլինեն պահեր այս կյանքում, երբ կթվա, թե ճշմարտությանը հնազանդվելը նման է մահվան: Բայց հիշե՛ք, ընկերնե՛ր, մեր օրերն այս աշխարհում ընդամենը գոլորշի են: Մենք կարթնանանք՝ բացահայտելու համար մեր ճշմարիտ կյանքը հաջորդում:

Սրբությունը մեր կապն է հավիտենական իրականության հետ:

Սրբությունը մեր՝ ոչ այս աշխարհից լինելն է:

Այս խոսքերը վերադարձնում են մեզ մեր Անկյունաքարին և այն բանին, թե ինչ է նշանակում լինել կենդանի Քարի և սուրբ ժողովրդի մասը:

Սրբությունը կառուցում է այնպիսի կյանք, որը պատվում է Աստծուն

«Արդ, դեն գցելով ամեն չարություն և ամեն խաբեություն և կեղծավորությունները և նախանձը և ամեն չարախոսությունը՝ նորածին երեխաների պես ցանկացե՛ք այն բանավոր անխարդախ կաթին, որ նրանով աճեք դեպի փրկությունը, եթե ճաշակել եք, որ Տերը քաղցր է» (Ա Պետր. 2.1-3):

Փրկությունը ձրիաբար տրվող պարգև է (ոչ թե այնպիսին, որը պետք է վաստակել), որի մեջ մենք աճում ենք ամեն օր: Ասես թե մեզնից ամեն մեկին դատարկ տուն են տվել: Մենք այդ տան մեջ ենք (մենք փրկված ենք), բայց այն պետք է կահավորել, որ հարմարավետ կերպով ապրենք և հրավիրենք այդտեղ այլ մարդկանց: Որքան մենք ճաշակում ենք Աստծո քաղցրությունը և բարությունը, այնքան ավելի ենք աճում բարության մեջ: Եվ դրանից հետո Պետրոսը գրում է.

«Բարի գալո՛ւստ դեպի կենդանի Քարը՝ կյանքի աղբյուրը: Աշխատավորները մի հայացք գցեցին այդ Քարի վրա և դուրս գցեցին այն. Աստված պատվավոր տեղում դրեց այն» (Ա Պետր. 2.4, MSG):

Սրբություն՝ նշանակում է, որ մենք վերահսկում ենք մեր մարմինը

«Որովհետև սա է Աստծո կամքը՝ ձեր սրբությունը, որ դուք ետ կենաք պոռնկությունից, և ձեզնից ամեն մեկը գիտենա

իր անոթը պահել սրբությամբ և պատվով, ոչ թե ցանկության կրքով, ինչպես հեթանոսներն էլ, որ Աստծուն չգիտեն: Չլինի, որ մեկը մի բանում չափից անցնի և իր եղբորը զրկի, որովհետև Տերն այդ բոլոր բաների համար վրեժխնդիր է, ինչպես առաջուց էլ ասացինք ձեզ և վկայություն տվեցինք: Որովհետև Աստված մեզ չկանչեց պղծության մեջ, այլ՝ սրբության մեջ: Ուրեմն, նա, ով անարգում է, ոչ թե մարդուն է անարգում, այլ՝ Աստծուն, Ով և տվեց մեզ Սուրբ Հոգին» (Ա Թեսաղ. 4.3-8):

Աստծո կամքն է, որ մենք ոչ միայն փրկվենք, այլև սուրբ դառնանք: Երբ մենք ճանաչում ենք Աստծուն, թույլ ենք տալիս, որ Նրա Խոսքն իշխի մեր կյանքում, և այլևս չենք ապրում մեր անցյալի հակումներով և մեր մշակույթի թելադրանքով: Թեսաղոնիկեցիներն ապրում էին չափազանց անկանոն կյանք վարող հասարակության մեջ. սիրուհիները, ծիսական սեռական հարաբերությունները, պատանի միասեռ զուգընկերները և մարմնավաճառները սովորական երևույթ էին այդ մշակույթում: Որպեսզի հավատացյալները հաստատ կանգնեին նման մեղսալի միջավայրում, նրանք պետք է աստվածապաշտության օրինակ լինեին մեկը մյուսի համար: Պողոսն արդարացումներ չէր առաջարկում թեսաղոնիկեցիներին՝ նրանց մշակույթի պատճառով. նա հավատում էր, որ Աստծո շնորհքի զորությունը բավական էր, որ նրանք սուրբ կյանք վարեին:

Մեզ հետևում են: Մեր կենսաոճը ցույց է տալիս մեր համոզմունքները: Եթե մեր պատճառով մարդիկ սայթաքեն և ընկնեն մեղքի մեջ, Աստված ոտքի կելնի նրանց համար:

Տիմոթեոսի երկրորդ թղթում գրված է.

«Բայց մի մեծ տան մեջ ոչ միայն ոսկեղեն և արծաթեղեն անոթներ կան, այլև փայտե և հողե էլ: Կան, որ պատվի համար են, և կան, որ անարգության համար են: Եթե մեկն իր անձը մաքրի այդպիսիներից, նա պատվական անոթ կլինի՝ սրբված և իր Տի-

> րոջն օգտակար, ամեն բարի գործերի համար պատրաստված: Երիտասարդական ցանկություններից փախի՛ր, այլ հետևի՛ր արդարության, հավատքի, սիրո, խաղաղության՝ Տիրոջ անունը սուրբ սրտանց իրենց վրա կանչողների հետ» (2.20-22):

Մենք տան մեջ ենք: Այնպես որ, ինչո՞ւ չդարձնենք մեզ հնարավորինս մաքուր և օգտակար տան Տիրոջ համար:

Այնքա՜ն բնագավառներ կան մեր կյանքում, որ երկարաժամկետ պատրաստություն են պահանջում: Օրինակ՝ պահանջվեց շատ ժամանակ, մինչև կարողացա սովորեցնել ամուսնության մասին: Նախկինում ես պատրաստ չէի այդ և այլ բնագավառներում. ես դեռ օգտակար չէի իմ Տիրոջ նպատակների համար: Ես գտնվում էի ընթացքի մեջ և դեռ հարմար չէի բարի գործերի համար: Միակ մրցանակը իմ կյանքում ստացել եմ տասը տարեկանում, «Առավել կատարելագործվող աշակերտ» անվանակարգում: Դա լավագույնս ներկայացնում է իմ կյանքի պատմությունը: Որպես կանոն, մենք մոռանում ենք, որ կատարելագործվելը նշանակում է հաղթել:

Ինչ-որ բանից փախչելը բավական չէ: Մենք պետք է փախչենք դեպի ինչ-որ բանը:

Ես ի սրտե ցանկանում եմ տեսնել երիտասարդ սերնդի, որն ավելի արագ է պատրաստվում: Սա նշանակում է, որ նրանք պետք է *փախչեն* իրենց երիտասարդական ցանկություններից: Փախչելը նշանակում է արագորեն հեռանալ՝ սարսափահար եղածի պես: Հեռացե՛ք կրքից, հպարտությունից, համեմատություններից և մրցակցությունից: Սակայն ինչ-որ բանից փախչելը բավական չէ: Մենք պետք է փախչենք դեպի ինչ-որ բանը: Ժամանակն է փախչել դեպի անկոտրում արդարությունը, հավատքը, սերը և խաղաղությունը: Ես ուզում եմ, որ երիտասարդ տղաները և աղջիկները լինեն այն մարդկանց թվում, ովքեր սրբությամբ և ի սրտե կանչում են Տիրոջ անունը:

Ես ուզում եմ, որ Տիրոջ անունն ամուր աշտարակ լինի ամեն սերնդի համար, իսկ Նրա անունը սուրբ է:

Սրբությունը նշանակում է, որ մենք մոտենում ենք Աստծուն Նրա պայմաններով, ոչ թե՝ մեր: Մեր մշակույթը սովորել է օգտագործել Աստծո շնորհքը՝ որպես թույլտվություն մեղք գործելու համար: Հրեական օրենքը բաղկացած է բարոյական օրենքներից և ծիսական արարողություններից: Շնորհքի ուխտի նպատակը ոչ մի դեպքում չի եղել բարոյական օրենքները չեղյալ դարձնելը: Սրբությունը և սերը է՛լ ավելի են բարձրացնում բարոյական օրենքները: Նոր ուխտում շնությունը սկսվում է ընդամենը սրտում որևէ կնոջ հանդեպ ցանկություն ունենալուց: Հին ուխտում այդ մեղքը չէր համարվում, քանի դեռ չէր արտահայտվում շնություն գործելով: Ես կրկին կանդրադառնամ Ն. Տ. Ռայթի իմաստությանը՝ խոսելով մեր ժամանակների մասին.

> «Մեր ժամանակակից աշխարհը սեռական ցանկությունը, նախընտրությունը և կյանքը դարձրել է ազատ՝ բոլորի համար: Միակ օրենքն այն է, որ մարդկանց պետք է թույլ տալ արտահայտել բոլոր այն ցանկությունները, որոնք առաջանում են կամ առաջացվում են նրանցում: Պողոսի համար, ինչպես նաև բարոյական վարք ուսուցանող բոլոր հրեա և Առաջին եկեղեցու քրիստոնյա ուսուցիչների համար, դա նույնն էր, ինչ ասել, որ դուք պետք է թույլ տաք չընտելացված ձիուն կամ ավանակին ամենուր վազել և ցատկոտել՝ վտանգելով թե՛ հեծյալին, թե՛ անցորդներին, և չկատարելով ոչ մի օգտակար աշխատանք: Սեռական ոլորտն իմաստուն Արարչի բարի պարգևն է, սակայն, ինչպես և բոլոր պարգևները, այն տրված է հատուկ նպատակով: Միայն այնպիսի աշխարհում, որի միակ նպատակը սեփական անձը գոհացնելն է, ինչ-որ մեկը կարող է ենթադրել, որ անհրաժեշտ չէ զսպել և վարժեցնել մեր ազդեցիկ ցանկությունները, որոնցից մեկը հենց սեռական ցանկությունն է»[6]:

Սեփական անձը գոհացնելը երբեք չպետք է լինի այն մարդկանց նպատակը, ովքեր հետևում են Քրիստոսին: Մենք չենք կարող թույլ տալ, որ մեր ցանկությունները և սեռական կրքերը տիրապետեն մեզ: Հիսուսը լիարժեք մարդ էր, և Նա բախվում էր գայթակղությունների՝ այնպես, ինչպես և մենք: Դա նշանակում է, որ Նա կարող էր զգալ նույն ցանկությունները, որոնց հետ պայքարում է մեզնից ամեն մեկը: Այնուամենայնիվ, Նա չմեղանչեց: Ինչպիսի գայթակղության էլ բախվեք, Հիսուսը հաղթահարել է այն, որպեսզի մեղքը չկարողանա իշխել ձեր կյանքում: Ես չեմ ասում, որ գայթակղությունը հաղթելը հեշտ է: Դա դժվար է, բայց արժե պայքարել՝ ազատություն ստանալու համար:

Սրբություն՝ նշանակում է խոսել ճշմարտությունը

> «Երբ անհավատ աշխարհն ատի ձեզ, պարզապես հիշեք, որ սկզբում նրանք ատել են Ինձ: Եթե դուք որոշեիք հավատարիմ լինել այս աշխարհին, նրանք կսիրեին ձեզ և կընդունեին յուրայինի պես: Բայց քանի որ դուք չեք հավասարվում այս աշխարհի արժեքներին, նրանք ատելու են ձեզ: Ես ընտրել եմ ձեզ և հանել եմ այս աշխարհից, որ Իմը լինեք» (Հովհ. 15.18,19, ՏՊՏ):

Մենք պետք է կանգնենք այս աշխարհի քաոսի մեջ և ազդարարենք ճշմարտությունը: Մենք ատելի կդառնանք, եթե որոշենք հավասարվել հավիտենական կյանքի արժեքներին: Տիրոջ համար սուրբ լինելը չի նշանակում, որ մարդկանց մշտապես դուր կգան մեր խոսքերը: Հաջորդ խոսքերում Հիսուսը ևս մեկ անգամ կրկնում է Իր պատվերը.

> «Ուրեմն, հիշե՛ք, թե ինչ սովորեցրի ձեզ, որ ծառան գերազանց չէ իր տիրոջից: Եվ քանի որ նրանք հալածեցին Ինձ, նրանք նաև կհալածեն ձեզ: Եվ եթե նրանք հնազանդվեցին Իմ ուսմունքներին, կհնազանդվեն նաև ձերին: Նրանք այս-

> պես կվերաբերվեն ձեզ, որովհետև դուք Իմն եք, իսկ նրանք չեն ճանաչում Նրան, Ով ուղարկեց Ինձ» (խս. 20,21, ՏՊՏ):

Մենք խոստում ունենք, որ ստանալու ենք հալածանք, ոչ թե հավանություն: Դուք հավանություն կստանաք, եթե հետևեք այս աշխարհի կարծիքին: Դուք հավանություն կստանաք, եթե ասեք, որ ճշմարտությունն անհատական է, և որ Աստվածաշունչը հնացած է: Դուք հավանություն կստանաք, եթե ասեք, որ Հիսուսը հասկանում է մարդկանց ցավը, սակայն կմերժվեք, եթե ասեք, որ Նա կարող է զորացնել ձեզ, որ հաղթահարեք մեղքը, ոչ թե հենվեք ձեր պատկերացումների վրա: Դուք ընդունված չեք լինի, եթե ասեք, որ Աստծո Խոսքը ձեր կյանքի բացարձակ հեղինակությունն է: Դուք ընդունված չեք լինի, եթե ասեք, որ Աստված չի փոխվում, նույնիսկ եթե դուք փոխում եք ձեր կարծիքը մեղքի վերաբերյալ:

> «Եթե Ես չգայի և չհայտնեի Ինձ անհավատ աշխարհին, նրանք չէին զգա, որ հանցավոր են՝ իրենց մեղքի պատճառով, բայց այժմ նրանց մեղքը բացահայտված է» (Հովհ. 15.22, ՏՊՏ):

Մեղքի զգացումը չի հեռացվում մեղքն ընդունված դարձնելու և արդարացնելու միջոցով: Մենք պետք է հասնենք խնդրի արմատին և հեռացնենք մեղքի զգացումի և ամոթի պատճառը, որը նվիրման բացակայությունն է:

Որպես Քրիստոսի հետևորդներ՝ մենք ոչ մի դեպքում չպետք է խրախուսենք գողերի ձեռքերը կտրելը կամ շնացողների, արյունապիղծների և բռնաբարողների սպանությունը: Մեր նպատակն է՝ ոչ թե գործադրել օրենքը, այլ ցույց տալ ճանապարհը դեպի Հիսուսը: Քրիստոսում բոլոր մեղքերը ներված են, և մենք ոչ մի դեպքում չենք վարվում դատավորի պես: Այնուամենայնիվ, մարդկանց սիրելը չի նշանակում, որ մենք հավանություն ենք տալիս նրանց անօրինություններին (ագահությանը, կռապաշտությանը, կախարդությանը կամ

անբարոյությանը): Դա նշանակում է, որ մենք գիտակցում ենք նրանց մարդկային արժեքը և լույս ենք սփռում նրանց ապագայի վրա:

Մեզնից ոչ ոք լիովին ազատ չէ մեղքից, բայց այս ճշմարտությունը չի նշանակում, որ սխալը պետք է ճիշտ անվանել: Կարդանք այն հատվածը, որում Հիսուսը հարցրեց շնության մեջ բռնված կնոջը, թե արդյո՞ք նրան մեղադրողներից ինչ-որ մեկը մնացել էր:

> «Նա էլ ասաց. «Ո՛չ, ո՛վ Տեր»: Եվ Հիսուսն էլ ասաց նրան. «Ես էլ քեզ չեմ դատապարտում: Գնա՛ և այսուհետև մեղք մի՛ գործիր»» (Հովհ. 8.11):

Փոխարենը թողնենք խավարը և գնանք դեպի լույսը, մենք հաճախ փոխում ենք մեր տեսանկյունը՝ խավարը լույս անվանելով:

Հիսուսը չսահմանափակվեց ողորմությամբ, այսինքն՝ ներում շնորհելով («Ես էլ քեզ չեմ դատապարտում»). Նա ավելացրեց ապաշխարությունը և շնորհքը («Գնա՛ և այսուհետև մեղք մի՛ գործիր»): Նա հավանություն չտվեց նրա շնությանը: Նա չասաց՝ մի՛ մտածիր այդ մասին, աղջի՛կս: Քո բոլոր ապագա մեղքերը ներված են (թեև այդպես էր): Նա չասաց՝ Ես հասկանում եմ, որ դու կարիքներ ունես: Նա ասաց՝ թո՛ղ քո խավար կյանքը և քայլի՛ր Իմ լույսի մեջ:

> «Հիսուսը դարձյալ խոսեց նրանց հետ և ասաց. «Ես եմ աշխարհի լույսը: Ով որ Իմ ետևից գա, նա խավարում չի գնա, այլ կյանքի լույսը կընդունի»» (Հովհ. 8.12):

Փոխարենը թողնենք խավարը և գնանք դեպի լույսը, մենք հաճախ փոխում ենք մեր տեսանկյունը՝ խավարը լույս անվանելով: Եկեք ցուցաբերենք այնպիսի գթասրտություն, որի

շնորհիվ մարդիկ կկարողանան ապրել ազատության մեջ: Եկեք կոչ անենք մարդկանց՝ թողնել իրենց անցյալի խավարը և հետևել Հիսուսին՝ քայլելով դեպի Նրա լույսը: Այնուամենայնիվ, սա այն թեմաներից է, որոնց շուրջ ավելի լավ է երես առ երես խոսել, ոչ թե տարածել դրանք սոցիալական ցանցերում, և հենց դա է պատճառը, որ ես առանձին եմ խոսում ձեզ հետ այս մասին:

> «Սուրբ բանը շներին մի՛ տվեք, ո՛չ էլ ձեր մարգարիտները գցեք խոզերի առջև, որ նրանց կոխ չտան իրենց ոտքերով և ետ դառնան ձեզ պատառեն» (Մատթ. 7.6):

Ես ոչ մի պատկերացում չէի ունենա սրբության մասին, եթե չուսումնասիրեի Աստծո Խոսքը: Աստծո Խոսքը՝ առանց սիրող Հոր, խիստ է թվում: Ես չեմ ուզում ասել ձեզ, թե ինչ պետք է մտածեք: Ձեր կյանքում արդեն իսկ շատերն են անում դա: Ես ուզում եմ, որ ինքներդ մտածեք և լսեք: Ահա թե ինչու եմ խնդրում ձեզ ուսումնասիրել իմ կողմից ներկայացված սուրբգրային հատվածները և ջանասիրաբար ընդօրինակել հետևյալ խոսքերին, որոնցով Հիսուսն աղոթեց մեզ համար.

> «Եվ Քո խոսքը նրանց տվեցի, և աշխարհը նրանց ատեց, որովհետև աշխարհից չեն, ինչպես Ես էլ աշխարհից չեմ: Ես չեմ աղաչում, որ աշխարհից վեր առնես նրանց, այլ որ նրանց պահես չարից: Այս աշխարհից չեն, ինչպես Ես էլ աշխարհից չեմ: Նրանց սուրբ արա Քո ճշմարտությամբ. Քո Խոսքը ճշմարտություն է: Ինչպես Դու Ինձ ուղարկեցիր աշխարհ, Ես էլ նրանց ուղարկեցի աշխարհ: Եվ Ես նրանց համար Իմ անձը սուրբ եմ անում, որ նրանք էլ ճշմարտությամբ սրբված լինեն» (Հովհ. 17.14-19):

Սիրելի երկնային Հա՛յր,

Սրբացրո՛ւ ինձ Քո Խոսքով և ճշմարտությամբ: Զորացրո՛ւ ինձ, որ հեռանամ ամեն տեսակի խավարից: Ես ուզում եմ ապրել և սիրել Քո առաջնորդության լույսի մեջ և լինել սուրբ իմ բոլոր գործերում, որպեսզի մարդիկ իմանան, որ ես պատկանում եմ Քեզ:

11

ԵՍ ԱՆԿՈՏՐՈՒՄ ԵՄ

«Նրա մարմինն՝ ադամանդից, Նրա անձը՝ կրակից,
Անվախ՝ ամեն վտանգից, Եվ անխոնջ՝ ամեն գործից»:

Սեմյուել Ջոնսոն

Որպեսզի պատմեմ, թե ինչպես սկսվեց իմ ճանապարհը դեպի անկոտրում կյանքը, ես պետք է ավելի քան մեկ տասնամյակ ետ գնամ:

Ամեն ինչ սկսվեց մի ծանր հեռախոսազրույցից արտահաստիքային խմբագրի հետ, որին իմ հրատարակիչը վարձել էր՝ իմ գրքերից մեկը խմբագրելու համար: Երկուսս էլ երկար ժամանակ քննարկում էինք իմ գրքի թե՛ բովանդակությունը, թե՛ ձևը: Ցավոք, ես այլևս չէի լսում իմ ձայնը այն գլուխներում, որոնք նա խմբագրել էր: Իմ անվստահության պատճառով ես թույլ էի տվել նրան անընդհատ զիջումների դրդել ինձ: Ի վերջո, ես հասկացա, որ այլևս չէի կարող տեղի տալ դրան և միաժամանակ հնազանդ լինել այն բանին, ինչ ինձ պատվիրված էր գրել:

Ես գիտեի, որ այդ գիրքն ուղերձ և առաքելություն էր, որն Աստված վստահել էր ինձ, և ի վերջո ես պետք է հաշիվ տայի

այն տնտեսելու համար: Գրքերը պարզապես բառեր և էջեր չեն: Դրանք իրենց մեջ կրում են հեղինակի հնչերանգը կամ ոճը, ինչպես նաև՝ դիրքորոշումը: Ես համոզված եմ, որ այն, թե ինչպես եք դուք կարդում կամ լսում որևէ գրքի ուղերձը, նույնքան կարևոր է, որքան այն, թե ինչ եք դուք կարդում: Եթե ճիշտ բանն ասվի սխալ ձևով, հնարավոր է, որ հեղինակի գաղափարը կորսվի ընթերցողի համար:

Ինչ պատճառով էլ լինի, այդ խմբագիրը փոփոխություններ էր կատարել՝ դարձնելով իմ ոճը բարկացկոտ, իսկ իմ դիրքորոշումը՝ հրամայական: Ես չէի ուզում նման վերաբերմունք ցուցաբերել: Գրեթե բոլոր թեմաների վերաբերյալ ես Աստծո Խոսքի աշակերտ եմ, որը ցանկանում է երկխոսություն սկսել: Ես գերադասում եմ խոսել՝ որպես քույր, մայր, իսկ իմ կյանքի ներկա փուլում՝ որպես տատիկ, թեև հույս եմ փայփայում, որ դուք կշնորհեք ինձ մեծագույն պատիվը այս գրքի էջերն ընթերցելիս՝ ինձ ընկեր անվանելով:

Իմ խմբագիրը համաձայն չէր նման մոտեցմանը: Նա հաստատակամ և տաղանդավոր կին էր և ուներ իր հստակ կարծիքը մի շարք հարցերում: Ես շարունակ ակնարկներ էի անում, սակայն նա չէր լսում ինձ: Այդ հեռախոսազրույցի ժամանակ ես վերջ տվեցի ակնարկներին: Զոնը լսեց իմ խոսակցությունը, որի ընթացքում ես միանշանակ կերպով ներկայացրի իմ դիրքորոշումը և ցույց տվեցի, թե ինչպես էր նա խմբագրում՝ բառ առ բառ և նախադասություն առ նախադասություն:

Դրեցի լսափողը և ծանր հոգոց հանեցի: Ես լիովին սպառված էի այդ խոսակցության պատճառով: Ես աշխատում էի իմ գրքի վրա մեր ճաշասենյակում, որը գտնվում է Զոնի աշխատասենյակի հարևանությամբ:

- Ծա՞նր հեռախոսազրույց էր, - ենթադրեց Զոնը:

- Այո՛, - խոստովանեցի ես:

- Այն արդյունք կտա՞, - հարցրեց նա:

- Չգիտեմ, - անկեղծորեն պատասխանեցի ես:

Զոնը գիտեր, որ այդ կնոջ հետ ունեցած նախորդ քննարկումների ժամանակ ես բավականին զիջումների էի գնացել նրա հետ:

- Այս անգամ դու անկոտրում էիր: - Զոնն օգտագործեց այդ բառը՝ ինձ վստահության քվե տալով:

Ես գլխով արեցի:

Հանկարծ ինձ թվաց, թե նրա ընտրած բառն արթնացրեց մի բան, որն իմ մեջ խորը քնած էր:

Ես ոտքի ելա և հաստատեցի նրա ասածը.

- Ես անկոտրո՛ւմ եմ:

Այս հռչակումը վերջնականորեն հաստատելու համար՝ ես գնացի Զոնի աշխատասենյակ և կրկնեցի այն.

- Ես անկոտրո՛ւմ եմ:

Զոնը գլխով արեց՝ որպես համաձայնության նշան:

- Ճի՛շտ է, իսկ հիմա վերադարձի՛ր քո աշխատանքին:

Ես լցվեցի կյանքով:

Վերադարձա իմ համակարգչի մոտ և վերանայեցի այն գլուխները, որոնցում տեղի էի տվել, և կրկին աշխատեցի դրանց վրա՝ վերականգնելով իմ ձայնն այդ գրքում: Ես զգացի, որ Աստծո տեսիլքն այդ գրքի համար կրկին բոցավառվեց: Աշխատանքի ընթացքում բառերն ասես թռչում էին մատնեռիս ծայրերից:

Ավելի ուշ՝ այդ օրը, իմ օգնականը մի փաթեթ բերեց ինձ:

- Դու անսովոր նվեր ես ստացել, - ասաց նա՝ դնելով այն սեղանին: Մի փոքր ետ կանգնելով՝ նա սկսեց հետևել իմ արձագանքին:

Այն սև ուղղանկյուն զարդատուփ էր՝ ոսկեգույն ոլորագծերով զարդարված անկյուններով: Երբ բացեցի, անմիջապես աչքի ընկավ կափարիչի ներսից կախված մի գեղազարդ թափանցիկ գունդ: Զարդատուփի ներսում, որը պատված էր ոսկեգույն թավիշով, թղթի մի թերթ էր դրված: Թույլ տվեք մեկ

ուղղում անել. այն, ինչ դրված էր այդտեղ, հասարակ թուղթ չէր: Դա մագաղաթանման թուղթ էր՝ պատված երփներանգ ծածկույթով: Դրա վրա գրված երկտողն այնպիսի տառատեսակ ուներ, որը սովորաբար օգտագործվում է վկայականների կամ հարսանեկան հրավիրատոմսերի համար: Դրա վրա կար ամսաթիվ՝ 2005 թվականի դեկտեմբերի 12: Երկտողի վերևում մի դրոշակ էր պատկերված, որի մեջ գրված էր *«ադամանդ»* բառը: Երկտողը հետևյալն էր. «Իմ անկոտրո՛ւմ: Իմ թանկագի՛ն Լիզա: Իմ անկոտրում ադամա՛նդ»:

Մարմնովս սարսուռ անցավ: Ես դեռ գտնվում էի այն բառի տպավորության ներքո, որը մի քանի ժամ առաջ հռչակում էի ինձ վրա: Ես ասես քարացա: Նստած իմ աթոռին՝ ես խորապես գիտակցում էի, որ այն, ինչ պահում էի իմ ձեռքում, սովորական նամակ չէր: Շունչս պահած՝ բացեցի և շարունակեցի կարդալ:

Դրանում գրված էր մի բանաստեղծություն այն մասին, թե որքան էր Աստված սիրում ինձ: Ամեն նախադասության մեջ կային «Ես եմ» բառերը: Այդ մեկ էջի վրա «անկոտրում» բառը հանդիպում էր հինգ անգամ: Այդ բանաստեղծության բառերը հպվեցին սրտիս, և ես զգացի, որ իմ Հայրը տեսնում է ինձ: Էջի ներքևում չկար ոչ մի անուն: Ես շրջեցի այն: Կրկին՝ ոչի՛նչ:

- Ումի՞ց է այն, - հարցրի ես:

- Մենք չգիտենք, - պատասխանեց իմ օգնականը: Մենք ստացել ենք այն մաքուր փաթեթավորմամբ՝ առանց ուղարկողի հասցեի:

Ես խոնարհվեցի՝ գիտակցելով, որ ինչ-որ մեկը լսել էր Աստծո ձայնը և ժամանակ էր հատկացրել, որ գրի առներ այդ բառերն ինձ համար: Այդ անձնավորությունը, հավանաբար, չգիտեր, որ ես գիրք գրելիս անվստահ էի իմ ուժերի մեջ և բախվել էի դժվարությունների: Աստված օրհնի այդ անձնավորությանը: Ես ընդունեցի այդ նվերը՝ որպես նշան և հաստատում, որ պետք է շարունակեի իմ ընթացքը՝ համաձայն այդ

բանաստեղծության ուղղորդման, որ ես առանց վախի պետք է գրեի և փոխանցեի իմ քույրերին. «Աստված ստեղծել է ձեզ, որ պատասխան լինեք այս խնդիրներով լի աշխարհում»:

Աստված ստեղծել է ձեզ, որ պատասխան լինեք այս խնդիրներով լի աշխարհում:

Այդպես էլ չիմացա, թե ով էր ուղարկել այդ փաթեթը: Չնայած դրան՝ ես պահում էի այդ զարդատուփը և դրանում եղող նամակն իմ սեղանի վերևի պահարանում: Այդ հիշարժան նվերը շրջադարձային դեր կատարեց իմ կյանքում: Այդ բառերը նշանավորեցին այն պահը, երբ ես որոշեցի լինել անկոտրում, անպարտելի և անսասան այն բանում, թե ինչ էր Աստված խոսում ինձ հետ, և թե ինչպես էր Նա խոսում: Այդ դեպքից հետո ես սկսեցի վարվել ինձ տրված իշխանությամբ և դադարեցի փոխզիջման գնալ:

Հաջորդ տարվա ընթացքում ես նամակներ էի դնում այդ զարդատուփի մեջ (հիշո՞ւմ եք, որ մենք նամակներ էինք գրում): Հիմնականում դրանք վկայություններ էին երիտասարդ աղջիկներից և կանանցից, որոնց հպվել էր իմ գիրքը: Այդ զարդատուփը մեծ չէր և արագորեն լցվեց: Դրանից հետո այն այլևս չբացվեց. հաջորդ տասնամյակի ընթացքում այն պատված էր փոշով:

Ադամանդներ

Վերջերս ամենուր ադամանդներ էի տեսնում: Այդ թեման թելի նման անցնում էր բազմաթիվ համաժողովներով, որտեղ ես քարոզում էի մի ամբողջ տարի: Անկեղծ ասած՝ ես մոռացել էի ադամանդի և անկոտրում բնավորության կապի մասին: Հաշվի առնելով այս աշխարհի համոզմունքները՝ ես հարում էի այն կարծիքին, որ հավաքույթների թեման ադամանդի շուրջ կառուցելը մարմնավոր էր և մի փոքր մակերեսային:

Սակայն ներկա գտնվեցի ևս մեկ «ադամանդե» համաժողովի: Մի թեթև բարկացած՝ ես իմ հյուրանոցի համարում ինքս ինձ բողոքում էի այդ թեմայի վերաբերյալ, երբ հանկարծ հոգումս լսեցի. «Մի ժամանակ դու ցնծում էիր, երբ անվանում էի քեզ Իմ ադամանդը՝ Իմ անկոտրումը:

Ցնցված՝ ես հիշեցի այդ բանաստեղծությունը: Նստեցի և բացեցի իմ նախընտրած աստվածաշնչյան հավելվածն իմ «iPad»-ով և սկսեցի հղումներ փնտրել ադամանդների կամ այլ քարերի մասին: Հասնելով Ա Պետրոս 2-րդ գլխին՝ հասկացա, որ գանձերի որոնում եմ սկսել. «Բարի գալո՛ւստ դեպի կենդանի Քարը՝ կյանքի աղբյուրը» (խս. 4, MSG):

Մեկ շաբաթվա ընթացքում ես հղումներ գտա հին աշխատություններում «ադամանդ» բառի մասին: Այդ ձեռագրերից մեկը, որը հատկապես հետաքրքրեց ինձ, գրվել էր 1600-ական թվականներին: Այն վերաբերում էր Եզեկիելի 3-րդ գլխին և պատմում էր, որ Աստված դարձրել էր մարդու Որդու երեսն ադամանդի պես՝ անելով նույնը, ինչ խոստացել էր անել Եզեկիելի համար:

Ես ժպտացի՝ կարդալով մեր Քրիստոսի մասին, որն ադամանդի պես պնդացրեց Իր երեսը՝ մահանալու համար, որպեսզի մենք ապրենք:

Հեղինակը շարունակում էր նկարագրել ադամանդը՝ հիմնականում նշելով այն, ինչին մենք արդեն ծանոթ ենք: Ադամանդն ամենապինդ քարն է. կրակը չի կարող այրել այն, ջերմությունը չի կարող թափանցել դեպի դրա միջուկը, մուրճը չի կարող կոտրել դրա կառուցվածքը, և բազում ջրերը չեն կարող հալեցնել այն: Ադամանդը չի սեղմվում, չի վախենում և չի փոխում իր երանգը: Ադամանդը հաստատուն է: Նա ավարտեց իր մտքերի շարքը հետևյալ ամփոփմամբ. «Բարի խիղճը կդարձնի քրիստոնյային ադամանդի պես. այն կդարձնի նրան անպարտելի և անփոփոխ»[1]:

Մենք արդեն պատրաստվում ենք բաժանվել, և ես զգում

եմ, որ ճիշտ կլինի կիսվել ձեզ հետ իմ ստացած բանաստեղծության մի հատվածով, քանի որ անկասկած՝ դրանում կան այնպիսի խոստումներ, որոնք պետք է փոխանցվեն: Դրա ամեն մի տողը մտերմիկ և անձնական կանչ է՝ ուղղված յուրաքանչյուրիս:

Դուք դաջված եք Նրա սրտի վրա:

«Իմ ադամա՛նդ,

Ես ժպտում եմ, երբ մտածում եմ Քո մասին:

Դու լսում ես Իմ ձայնը և լավ ճանաչում ես այն:

Դու ժպտում ես՝ մտածելով Իմ մեծության մասին:

Ես ասում եմ՝ դու ուժեղ ես:

Այո՛, Իմ ադամա՛նդ:

Թույլ կտա՞ս Ինձ գրավել քո սիրտը:

Ես այնպե՛ս եմ սիրահարված քեզ:

Ես խոսում եմ Իմ մեծ բարությամբ:

Ինչպիսին Ես Եմ, այնպիսին էլ դու ես: Ես տպավորված եմ քեզնով:

Դու դաջված ես Իմ սրտի վրա:

Պատվի՛ր Ինձ քո գեղեցիկ ժպիտով և ուժեղ սրտով:

Իմ ադամա՛նդ»:

Ժպտացե՛ք, սիրելի՛ ընկեր: Դուք դաջված եք Նրա սրտի վրա, և Նա բարությամբ է խոսում ձեզ հետ: Պատվե՛ք Նրան, խիզա՛խ ընկեր, ձեր սրտի ուժով և ձեր օրերի երկարությամբ: Պատմե՛ք մարդկանց Նրա անկոտրում սիրո մասին: Պատվե՛ք Նրա ձեռքը, որը ներկա է ձեր կյանքում՝ Նրա Խոսքի թագավորական իշխանությամբ և Նրա Սուրբ Հոգու օծությամբ:

Շարունակելով խոսել բանաստեղծական ոգով՝ թույլ տվեք ինձ շարադրել երկրորդ դեմքով և մի փոքր փոփոխել Սեմյուել Զոնսոնի այն տողերը, որոնք մեջբերեցի այս գլխի սկզբում:

Սիրելի՛ ընկեր՝ Քրիստոսում.

«Քո մարմինն ադամանդից է,
Եվ քո անձը՝ կրակից,
Դու չես վախենում ոչ մի վտանգից,
Քանի որ հակառակությունն է՛լ ավելի է բարձրացնում քեզ»:

Մեր ադամանդե կազմվածքը թափանցիկ, փայլուն և գրավիչ է. այն լուսեղեն է, բայց և՝ ալմաստի պես ամուր: Մենք պատված ենք Քրիստոսի անխորտակելի աշխատանքով: Քրիստոսի Հոգին բնակվում է մեր մեջ, ինչպես որ մենք ենք բնակվում Քրիստոսի՝ մեր Ադամանդի մեջ:

Այժմ խոսենք մեր կրակե անձի մասին.

«Հովհաննեսն ամենին պատասխանեց և ասաց. «Ես ջրով եմ մկրտում ձեզ, բայց ինձնից ավելի զորավորն է գալիս, որ ես արժանի չեմ Նրա կոշիկների կապերը լուծելու. Նա ձեզ Սուրբ Հոգով և կրակով կմկրտի»» (Ղուկ. 3.16):

Մենք մկրտվել ենք Սուրբ Հոգով և սուրբ կրակով: Հովհաննեսի մկրտությունը խորհրդանշում էր այն, ինչ Հիսուսը կատարելու էր մեր ներսում: Երբ մենք վերստին ծնվեցինք, մեր անկյանք սրտերը կենդանացան Նրա հավիտենական սիրո հրեղեն փայլով: Մեր սուրբ կրակի Աստված սպառում է խավարի հարդը, որը փորձում է թուլացնել Նրա սիրո դրսևորումը մեր հանդեպ և մեր միջոցով: Նրա կրակը շրջապատում է մեզ:

Զաքարիա 2.5-ում գրված է. «Եվ Ես պիտի Նրա համար հրեղեն պարիսպ լինեմ շուրջանակի,- ասում է Տերը,- և փառքի համար պիտի լինեմ նրանում»: «Մեսիջ» թարգմանությունն անվանում է այս կրակն Աստծո լուսավոր ներկայությունը մեր ներսում: Ես հավատում եմ, որ այս խոսքը և՛ Երուսաղեմի մասին է, և՛ Սիոնի, այսինքն՝ եկեղեցու: Ինչպես որ Աստված վարվում էր Իսրայելի հետ, այնպես էլ Նա վարվում է մեզ հետ: Մենք նույնպես շրջապատված ենք Աստծո հրեղեն պաշտպա-

նիչ ներկայությամբ: Դավիթը խոսում էր հրեշտակային բազմության մասին Սաղմոս 104.4-ում. «Իր հրեշտակներին քամիներ է շինում, Իր պաշտոնյաներին՝ այրող կրակ»:

Զաքարիա 13-րդ գլխում կրակը նկարագրվում է որպես մաքրման գործիք:

> «Եվ այն երրորդ մասը պիտի տանեմ կրակի մեջ և նրանց պիտի զտեմ՝ ինչպես արծաթն են զտում, և նրանց պիտի փորձեմ՝ ինչպես փորձում են ոսկին: Նա կկանչի Իմ անունը, և Ես կպատասխանեմ նրան: Ես կասեմ. «Նա Իմ ժողովո՛ւրդն է», և նա կասի. «Տերը իմ Աստվա՛ծն է»» (խս. 9):

Կրակի մեջ մենք կանչում ենք, և Նա պատասխանում է: Այնտեղ է, որ Նա անվանում է մեզ Իրենը, և մենք հասկանում ենք, որ Տերը մեր փրկությունն է:

Ծննդոց 15.17-ում մեր հավատքի հայր Աբրահամը տեսնում էր, թե ինչպես էին ծխի հնոցը և կրակի ջահն անցնում նրա զոհաբերության կտորների մեջտեղով: Մեր Աստված չի խնդրում մեզ հորթերի, այծերի, խոյերի և թռչունների մեջտեղից կիսած զոհեր մատուցել Իրեն: Նա խնդրում է, որ հանձնենք մեր սրտերն Իր սրբության կրակին:

Երբեք մի՛ անարգեք ձեր պարգևը:

Այն պարգևը, որն Աստված տալիս է մեզ, երկրորդ Տիմոթեոս 1.6-ը համեմատում է կրակի հետ, որը պետք է պահպանել: Բորբոքե՛ք այն, իմ ընկե՛ր: Երգե՛ք: Պարե՛ք: Կարդացե՛ք: Աղոթե՛ք: Մնացե՛ք շփման մեջ: Վկայե՛ք: Ընդգրկվե՛ք Աստվածաշնչի ուսումնասիրության խմբակում: Գտե՛ք հոգևոր ավագի: Հանգստացե՛ք, կա՛նգ առեք և մտորե՛ք: Բայց երբեք մի՛ անարգեք ձեր պարգևը: Այն ավելի թանկ է, քան ադամանդը: Հսկե՛ք այն ավելի ուշադրությամբ, քան այգեպանը հսկում է իր այգին: Ժամանակ հատկացրեք ձեր պարգևի համար և մի՛ անտեսեք այն:

Մեր քառատողի հաջորդ տողն է. «Դու չես վախենում ոչ մի վտանգից»: Մենք պաշտպանված ենք դրսից և մաքրված՝ ներսից: Եթե այդպես է, մի՞թե ինչ-որ բան կարող է իրապես վախեցնել մեզ: Այո՛, հնարավոր է, որ մենք հանկարծակիի գանք, բայց եթե ապրում ենք՝ գիտակցելով այս ճշմարտությունը, վախը մեր կյանքում կմնա ընդամենը կարճ ժամանակով. այն չի դառնա մեր կենսաոճը:

Եվ վերջին տողը. «Քանի որ հակառակությունն է՛լ ավելի է բարձրացնում քեզ»: Այն նկարագրելու համար, ուզում եմ պատմել ձեզ մի պատմություն, որը լսել եմ իմ նոր ընկերոջից:

Եթե դեռ չգիտեք, պետք է իմանաք. ես սիրում եմ սուրճ խմել, շա՛տ եմ սիրում: Եվ նախընտրում եմ էսպրեսոն: Ես հավատում եմ, որ դրա մուգ հրապույրը խորապես միախառնված է իմ իտալական գեներին:

Դուք գիտե՞ք, որ ձեզ հետ խոսելու համար Աստված կարող է օգտագործել այն, ինչ դուք սիրում եք: Եվ նույնիսկ եթե դուք ընդհանրապես աղացած սուրճի սիրահար չեք, կարծում եմ՝ այս պատմությունը սրճարանի մասին դուր կգա ձեզ:

Վերջերս մի քանի օր անցկացրի Տեխաս նահանգի Ամարիլո քաղաքի կենտրոնում: Ես եկել էի շաբաթավերջին, որպեսզի քարոզեի մի եկեղեցու կանանց համաժողովին: Ամեն անգամ, երբ ինչ-որ հյուրանոց եմ գնում, ես հարցնում եմ, թե որտեղ է մոտակա սրճարանը: Հուրախություն ինձ՝ ես իմացա, որ այդ քաղաքում կար մի բացառիկ սրճարան, որն ընդամենը մեկ թաղամաս հեռու էր իմ հյուրանոցից: Բազմաթիվ մրցանակների արժանացած «Փելես կոֆի» ընկերության սրճարաններից մեկն էր:

Ես ժամանել էի ուրբաթ ուշ երեկոյան, բայց այդ վայրի մասին հիացմունքով լի արձագանքներ լսելուց հետո ես կարգավորեցի զարթուցիչս մեկ ժամ ավելի շուտ, քան անհրաժեշտ էր շաբաթ առավոտյան: Հենց որ իմ «iPhone»-ը զնգաց, ես անմիջապես վեր կացա անկողնուցս, մաքրեցի ատամներս, հագա իմ նախապես պատրաստած հագուստը, դրեցի արևային

ակնոցներս և գնացի այդ զարմանալի վայրը:

Ասել, որ ես ոգեշնչվեցի այդ վայրով, նշանակում է ոչինչ չասել: Այնտեղ Տեխաս նահանգին բնորոշ հաճելի անմիջական մթնոլորտ էր: Ես սիրում եմ այն, քանի որ մեկ որդի եմ ծնել Միայնակ Աստղի նահանգում և մեկ հարս ունեմ այդտեղից: Մեկ հայացքն ըմպելիքների մենյուին՝ բավական էր, որ ինձ մոտ գլխապտույտ սկսվեր:

Երբ եկավ իմ հերթը, ես հենվեցի վաճառասեղանին, միգուցե նաև բռնեցի սիրունատես բարիստայի ձեռքերից և հարցրի.

- Պատմի՛ր ինձ ամեն ինչ ձեր հատուկ ըմպելիքների մասին:

- Մենք ունենք միկրոփրփուրով կապուչինո:

- Հրաշալի՛ է, - ես գաղափար չունեի, թե ինչ էր դա. այնպես որ, շարունակեցի: - Ուրիշ ի՞նչ:

- Իմ սիրելի ըմպելիքը՝ նարդոսով լատե, - առաջարկեց նա:

- Լա՛վ, - գլխով արեցի՝ հավանություն տալով նրա ճաշակին: - Ուրիշ ի՞նչ, - հարցրի ես՝ փորձելով զսպել իմ աճող ոգևորությունը:

- Մենք ունենք նաև թզով և մեղրով լատե:

- Գերազա՛նց է, - պատասխանեցի ես՝ զսպելով նրան գրկելու ուժգին ցանկությունս: - Ես ուզում եմ երեքն էլ: Ե՛կ սկսենք կապուչինոյից և անցնենք լատեներին, բայց ես կվճարեմ դրանց համար հիմա:

Ես ասացի նրան իմ անունը, վճարեցի և քայլեցի դեպի վաճառասեղանի վերջը:

Այն, ինչ կատարվեց դրանից հետո, հանկարծակիի բերեց ինձ: Չգիտեմ՝ արդյո՞ք այդ մարդը կանգնած էր այն կողմում, որ ես չէի տեսնում, թե՞ ես այնքան էի կլանված ըմպելիքներով, որ չէի նկատել նրան: Ես լսեցի մի տղամարդու ձայն.

- Դուք տեղացի՞ եք:

Ես շրջվեցի՝ տեսնելով ճերմակ մազերով և մորուքով, վայելչակազմ արտաքինով և ավելի շուտ՝ գիտական ոլորտի

մարդու տեսք ունեցող մի տղամարդու:

- Ո՛չ, ես պարզապես իմացա այս սրճարանի մասին, - մրթմրթացի ես: Որպես կանոն, փորձում եմ խուսափել խոսակցություններից՝ մինչև կաֆեին ընդունելը:

- Ես նոր եմ տեղափոխվել այստեղ, - շարունակեց նա:

Իմ միկրոփրփուրով սուրճն արդեն իմ ձեռքում էր, և ես գնում էի՝ վերցնելու դարչինը և չմշակված շաքարը:

- Որտեղի՞ց եք դուք, - հարցրեց նա:

- Ես Կոլորադոյից եմ, - պատասխանեցի՝ խառնելով իմ ըմպելիքը:

- Ի՞նչն է բերել ձեզ այստեղ:

- Ես քարոզելու եմ մի կանանց համաժողովում, որին ներկա է լինելու մի քանի հազար կին, - և սկսեցի պատմել այն մասին, թե ինչպես են կազմակերպիչները տեղեկացրել մարդկանց այդ միջոցառման մասին:

- Ինչո՞ւ մենք չենք լուսաբանում այդ իրադարձությունը:

Շփոթված լուսաբանելու առաջարկից՝ ես հարցրի.

- Չգիտեմ: Իսկ ո՞վ եք դուք:

- Ես տեղական թերթի նոր գլխավոր խմբագիրն եմ: Կմիանա՞ք ինձ: Խնդրում եմ, նստե՛ք:

Մի պահ ես խուճապի մատնվեցի: Մի՞թե ինձնից հարցազրույց էին վերցնելու մինչև կաֆեինը մուտք կգործեր արյանս մեջ: Ես խորը շունչ քաշեցի: Այդ մարդու աչքերը բարի էին երևում. այնպես որ, նստեցի: Ես դանդաղ խմում էի իմ սուրճը, մինչ նա ռմբակոծում էր ինձ հարցերով. «Ի՞նչ համաժողով է դա: Որտե՞ղ է անցկացվում»:

Այնպիսի տպավորություն էր, որ նա ինչ-որ բան էր փնտրում իմ խոսքերում:

Ես ասացի, որ համաժողովի թեման հիմնված էր իմ գրքերից մեկի («Երբ արթնանում են կին առյուծները») վրա, և ինձ հրավիրել էին՝ ծառայելու համար: Մենք իմացանք եկեղեցու

հասցեն ամեն ինչից տեղյակ բարիստայից:

- Դուք կարդացե՞լ եք վերջին հոդվածը կատակոմբներում կատարված պեղումների մասին:

Ես հավաստիացրի նրան, որ չէի կարդացել:

Իմ նոր ընկերը պատմեց, որ Հռոմի կատակոմբների նոր պեղումների արդյունքում գտնվել են որմնանկարներ, որոնցում պատկերված են դրվագներ Առաջին եկեղեցու կյանքից: Ես լսում էի և դանդաղ խմում էի սուրճս: Այդ որմնանկարներից մի քանիսի վրա հստակ պատկերված էին կանայք, որոնց թվում նաև Պրիսկիղան էր, որոնք ծառայում էին տղամարդկանց կողքին[2]: Ես գլխով արեցի. ինձ դուր էր գալիս այն, ինչ նա պատմում էր: Հանկարծ ինչ-որ բան փոխվեց: Նա ետ նստեց և նայեց ինձ, մինչ ես բռնել էի իմ լատեի բաժակը.

- Դուք այդ կանանցից մե՛կն եք, - հայտարարեց նա:

Ինչ-որ կերպով նրա բառերը հարվածեցին ուղիղ իմ քնած կրծքավանդակին և թափանցեցին մինչև էությանս խորքը: Ես լիովին արթնացա: Համոզված չեմ՝ նա տեղյա՞կ էր, թե ինչ ազդեցություն գործեց իր ասածն ինձ վրա: Մինչև ուշքի եկա, մենք արդեն փոխանակում էինք մեր կոնտակտային տվյալները, և նա փոխանցում էր ինձ այդ հոդվածը:

Նա ներողություն խնդրեց.

- Ես չեմ կարող գալ այսօր երեկոյան, բայց կուղարկեմ մեր թղթակիցներից մեկին՝ ձեր ծառայությունը լուսաբանելու համար, իսկ ես ներկա կլինեմ վաղն առավոտյան:

Վերցրի իմ հաջորդ լատեն և նստեցի: Ես լսում էի, մինչ նա պատմում էր իր և ընտանիքի մասին: Ես նույնպես մի փոքր պատմեցի իմ ընտանիքի մասին: Քիչ անց արդեն պետք է վերադառնայի հյուրանոց, որպեսզի պատրաստվեի համաժողովին: Քայլելով դեպի հյուրանոցը՝ ես մտածում էի. «Ի՞նչ կատարվեց քիչ առաջ»:

Ավելի ուշ ես հասկացա, որ այն, ինչ նա ասաց, չէր վերաբերում միայն ինձ: Աստված կամենում էր, որ այդ խոսքերն ազ-

Իմ ընկե՛ր, Աստված հեռացնում է այն քարերը, որոնք խոչընդոտում էին ձեր լիակատար հարությանը:

դարարվեին կանանց այն սերնդին, որը թաղված էր կյանքի ստորգետնյա սրահների լաբիրինթոսում:

Իմ ընկե՛ր, Աստված հեռացնում է այն քարերը, որոնք խոչընդոտում էին ձեր լիակատար հարությանը: Նա մաքրում է ամբողջ աղբը և բեկորները: Իսկ որտե՞ղ են ձեր կյանքի բոլոր կոտրված մասերը, որոնք, ձեր կարծիքով, վատնվել կամ կորսվել են: Բարձրացրե՛ք ձեր գլուխը, սիրելի՛ ընկեր, և նայե՛ք. Նա օգտագործել է դրանք՝ ձեր կյանքից խճանկար պատրաստելու համար: Դուք այնքա՛ն զբաղված էիք՝ նայելով ամբողջ այդ խառնաշփոթին, որ չեք նկատել այն դրոշը, որը Նա ծածանում է ձեր գլխավերևում: «Դուք այդ կանանցից մե՛կն եք»:

> «Ուրեմն, ո՞ւմ եք Ինձ նմանեցնում, որ Ես նման լինեմ,- ասում է Սուրբը: Վե՛ր բարձրացրեք ձեր աչքերը և նայե՛ք. ո՞վ է ստեղծել սրանց: Նրանց զորքերը թվով հանողը, որ նրանց ամենին կանչում է անունով՝ *մեծ իշխանությամբ և սաստիկ զորությամբ. մեկը չի կորչի»* (Եսայի 40.25,26):

Ոչինչ կորսված չէ, ոչինչ վատնված չէ, նույնիսկ մեկ մաս չի պակասում: Թաղված ավազի, ցեխի և քարակույտերի ներքո այդ ամենը, միևնույն է, մեր կյանքի էջերից մեկն է:

Երբ կարդացի այդ հոդվածը, տեսա մի խճանկար, որի վրա պատկերված էր թիկնոցով և վեր բարձրացրած ձեռքերով մի կին, որն օրհնում և ողջունում էր:

Մի պահ մոռացե՛ք գերեզմանափորներին: Մի կողմ դրեք ցանկացած միտք այն մարդկանց մասին, որոնք ցեխ, քարեր և աղբ էին շպրտում ձեզ վրա՝ փորձելով ողջ-ողջ թաղել: Շրջվե՛ք նրանցից և հարցրե՛ք. «Ի՞նչն էր թշնամին ուզում թաղել իմ կյանքում»:

Ձեր ունեցած սերմը կարող էր լինել հույսի, երազանքի, աղոթքի, խոստման կամ նույնիսկ արցունքների տեսքով: Միգուցե դուք այլևս չեք տեսնում այդ սերմը, բայց նույնիսկ մեկ պահ չմտածեք, որ Աստված մոռացել է այն:

Այն, ինչ մենք ցանում ենք, կյանք չի ստանա, քանի դեռ չի մահացել (տե՛ս Ա Կորնթ. 15.36): Դժվարությունները ծառայում են՝ որպես պատրաստություն:

Շատ առումներով և շատ վայրերում Աստծո դուստրերի պատմությունը թաղվել է՝ նման այն բանին, որ շատ կերպերով Քրիստոսի գեղեցիկ հարսնացուի պատմությունը ցեխոտվել է: Նույնիսկ այդ դեպքում հիշե՛ք, սիրելի՛ ընկեր, որ այն ամենը, ինչ թաքնված է եղել, մեկ օր հայտնվելու է: Նման կատակոմբների պեղումներին՝ հարսնացուի պատմության վրա կրկին լույս է սփռվում:

Մենք այդ կանայք ենք:

Մենք Նրա հարսնացուն ենք:

Նրա ադամանդներն ենք:

Նրա անգին գանձն ենք:

Նա մեր Ադամանդն է, մեր Խարիսխը և մեր Ճշմարտությունը:

Նա այն ժայռն է, որը մեզ հետ է մեր բոլոր անապատներում:

Ձեր ամբողջ կյանքով պատվե՛ք այն Քարին, որից դուք կտրվել եք: Մեծարե՛ք այն անսասան, անպարտելի, անթափանցելի և անկոտրում Անկյունաքարին, որը փափագում է ապշեցնել ձեզ Իր սիրով և հավատարմությամբ: Հավատարի՛մ եղեք Նրան այս կարծիքների աշխարհում, քանի որ դուք ընտրված եք հավիտենական թագավորության համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՎԵԼՅԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ ԳԼՈՒԽ 6-Ի ՀԱՄԱՐ

«Քեզ համար կուռք չշինես, և ոչ վերը՝ երկնքում, կամ ցածը՝ երկրի վրա, կամ երկրի տակի ջրերում եղած բաների մեկ նմանությունը: Նրանց երկրպագություն չանես և նրանց չպաշտես, որովհետև Ես՝ քո Տեր Աստվածը, նախանձոտ Աստված եմ, որ կհատուցեմ հայրերի անօրինությունը որդիների վրա՝ մինչև նրանց երրորդ ու չորրորդ ազգը, որ ատում են Ինձ: Եվ կողորմեմ նրանց մինչև հազար ազգ, որ սիրում են Ինձ և Իմ պատվիրանները պահում են» (Ելից 20.4-6):

«[Եթե] Իմ կանոններն անարգեք, և ձեր հոգին Իմ դատաստաններից զզվի, որ Իմ բոլոր պատվիրանները չանեք և Իմ ուխտը դրժեք, Ես էլ սա կանեմ ձեզ. ձեզ վրա կուղարկեմ տագնապ և ծյուրական ախտը և տենդը, որ աչք են փչացնում և հոգի մաշում, և ձեր սերմը դատարկ տեղը կսերմեք, որովհետև ձեր թշնամիները կուտեն նրան, և Իմ երեսը ձեզ վրա կդարձնեմ, և ձեր թշնամիների առջև կսպանվեք, և ձեզ ատողները կիշխեն ձեզ վրա, և կփախչեք՝ առանց մեկը ձեզ հալածելու» (Ղևտ. 26.15-17):

«Եվ Անանիի որդի Հեու տեսանողը դուրս եկավ նրա առջև և ասաց Հովսափատ թագավորին. «Պե՞տք էր չարին օգնեիր և Տիրոջն ատողներին սիրեիր: Եվ սրա համար քեզ վրա բարկութ-

յուն կա Տիրոջ երեսից: Բայց քեզ վրա բարի բաներ են գտնվում, որովհետև բնաջինջ արեցիր Աստարովթի կուռքերը երկրից և սիրտդ պատրաստեցիր Աստծուն խնդրելու» (Բ Մնաց. 19.2,3):

«Որովհետև Դու անօրինության հաճություն տվող Աստված չես. չարը չի բնակվի Քեզ մոտ:

Ամբարտավանները չեն կենա Քո աչքի առջև. Դու ատում ես բոլոր անօրինություն գործողներին:

Դու կկորցնես սուտ խոսողներին. Տերն արյուն թափող և նենգավոր մարդուց զզվում է:

Բայց ես Քո շատ ողորմությամբ կմտնեմ քո տունը և դեպի Քո սուրբ տաճարը երկրպագություն կանեմ

Քո երկյուղով» (Սաղմ. 5.4-7):

«Մեծ է նրա փառքը Քո փրկությամբ. պատիվ և փառք ես դնում նրա վրա:

Որովհետև Դու նրան օրհնություն ես շինում հավիտյան. Դու ուրախացնում ես նրան ուրախությամբ Քո երեսի առջև:

Որովհետև թագավորը Տիրոջն է հուսացած և Բարձրյալի ողորմությամբ չի սասանվի:

Քո ձեռքը կգտնի Քո բոլոր թշնամիներին, և Քո աջը կգտնի Քեզ ատողներին» (Սաղմ. 21.5-8):

«Ո՛վ Տիրոջը սիրողներ, ատե՛ք չարը. Նա պահում է Իր սրբերի անձերը ամբարիշտների ձեռքից կփրկի նրանց:

Լույս է ծագում արդարին, և ուրախություն՝ սրտով ուղիղներին:

Ուրախացե՛ք Տիրոջով, ո՛վ արդարներ, և օրհնե՛ք Նրա սուրբ հիշատակը (կամ՝ անունը)» (Սաղմ. 97.10-12):

«Ամեն չար ճանապարհից իմ ոտքերը ետ եմ քաշում, որ Քո Խոսքը պահեմ:

Քո իրավունքից չեմ հեռանում, որովհետև Դու սովորեցնում ես ինձ:

Որքա՜ն քաղցր է Քո Խոսքն իմ քիմքին. մեղրից էլ ավելի է իմ բերանին:

Քո պատվիրաններով ես իմաստուն եղա. Սրա համար ատում եմ ստության ամեն ճանապարհը» (Սաղմ. 119.101-104):

«Սրա համար ես սիրում եմ Քո պատվիրանները ոսկուց և ազնիվ ոսկուց ավելի:

Սրա համար բոլոր պատվիրանները բոլորովին ուղիղ պահում եմ. ստության ամեն ճանապարհն ատում եմ» (Սաղմ. 119.127,128):

«Ես ցնծում եմ Քո Խոսքով, ինչպես մեկ շատ ավար գտնող:

Ստությունն ատում եմ և գարշելի համարում, բայց Քո օրենքը սիրում եմ» (Սաղմ. 119.162,163):

«Նրանք Քեզ հակառակ են խոսում նենգությամբ, և Քո թշնամիները սուտ երդում են անում:

Ես չե՞մ ատում քեզ ատողներին, ո՛վ Տեր, և Քեզ դեմ ապստամբողներից չե՞մ զզվում:

Կատարյալ ատելությամբ ատում եմ նրանց. նրանք ինձ թշնամի են դարձել» (Սաղմ. 139.20-22):

«Արդարությունը կպահի կատարյալ վարքը, բայց անզգամությունը (կամ՝ մեղքը) կկործանի մեղավորին» (Առակ. 13.6):

«Ով որ Ինձ հետ չէ, Ինձ հակառակ է, և ով որ Ինձ հետ չի ժողովում, ցրվում է» (Մատթ. 12.30):

«Բայց ձեզ, որ լսում եք, ասում եմ՝ սիրե՛ք ձեր թշնամիներին,

բարի՛ արեք ձեզ ատողներին» (Ղուկ. 6.27):

«Եվ շատ ժողովուրդներ գնում էին Նրա հետ: Եվ դարձյալ նրանց ասաց. «Եթե մեկն Ինձ մոտ գա և չատի իր հորը և մորը, կնոջը և որդիներին, և եղբայրներին և քույրերին, և հենց իր անձն էլ, նա չի կարող Իմ աշակերտը լինել» (Ղուկ. 14.25,26):

«Արդ այսպես էլ ձեզնից ամեն մեկը, որ իր ամբողջ ինչքից չհրաժարվի, չի կարող Ինձ աշակերտ լինել» (Ղուկ. 14.33):

«Այս բոլոր բաները լսում էին փարիսեցիները, որ արծաթասեր էին, և ծիծաղում էին Նրա վրա: Եվ նրանց ասաց. «Դուք եք, որ մարդկանց առջև ձեր անձերը արդարացնում եք, բայց Աստված գիտի ձեր սրտերը, որովհետև մարդկանց առջև բարձրը պիղծ է Աստծո առջև: Օրենքը և մարգարեները մինչև Հովհաննեսն են. նրանից հետո Աստծո արքայությունն է ավետարանվում, և ամեն մարդ ջանք է անում ուժով մտնել նրա մեջ: Եվ ավելի հեշտ է, որ երկինքն ու երկիրն անցնեն, քան թե օրենքի մեկ պստիկ նշանագիր վայր ընկնի» (Ղուկ. 16.14-17):

«Հիսուսն էլ ասաց նրանց. «Իմ ժամանակը դեռ հասած չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ է: Աշխարհը չի կարող ձեզ ատել, բայց Ինձ ատում է, որ Ես նրա համար վկայում եմ, թե նրա գործերը չար են»» (Հովհ. 7.6,7):

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԴԱՍԵՐ ԱՌԱԿԱՑ ԵՎ ԺՈՂՈՎՈՂ ԳՐՔԵՐԻՑ

Ուսանելի՛ եղեք և մի՛ շաղակրատեք

«Իմաստուն սիրտ ունեցողը կընդունի պատվերը, բայց հիմար շրթունք ունեցողը կկործանվի» (Առակ. 10.8):

Բառերը կարող են թարմություն և վերականգնում բերել կյանքում, կամ թաքցնել այն, ինչ անհրաժեշտ է դրա համար

«Կյանքի աղբյուր է արդարի բերանը, բայց բռնությունը կխցկի ամբարիշտների բերանը» (Առակ. 10.11):

«Դու բերանդ բացի՛ր համրի համար և բոլոր անխնամների դատի համար» (Առակ. 31.8):

«Բացի՛ր բերանդ, դատի՛ր արդարությամբ և տե՛ս աղքատի և տնանկի դատը» (Առակ. 31.9):

«Նա իր բերանը բանում է իմաստությամբ, և նրա լեզվի վրա շնորհալի օրենք կա» (Առակ. 31.26):

Ատելությունը բորբոքում է, իսկ սերը՝ հանդարտեցնում

«Ատելությունը կռիվներ կքրքրի, բայց սերը բոլոր հանցանքները կծածկի» (Առակ. 10.12):

«Ծաղր անող մարդիկ քաղաքը տակն ու վրա կանեն, բայց իմաստունները բարկությունը կհանգստացնեն» (Առակ. 29.8):

«Ազգ կա, որի ատամները սրեր են, որի ժանիքները դանակներ են, որ աղքատներին ուտի երկրիս վրայից, և տնանկներին՝ մարդկանց միջից» (Առակ. 30.14):

Հիմարի բերանը փորձանք է բերում նրա վրա

«Հանճարեղի շրթունքի վրա իմաստություն կգտնվի, և գավազան կա անմիտի մեջքի համար» (Առակ. 10.13):

«Իմաստունները գանձում են գիտությունը, բայց հիմարի բերանը մոտ է կործանման» (Առակ. 10.14):

«Ատելություն ծածկողը ստախոս է, և բամբասանք հնարողն անմիտ է» (Առակ. 10.18):

«Իմաստունի բերանի խոսքերը շնորհք են, բայց անմիտի շրթունքներն իրեն կուլ կտան» (Ժողով. 10.12):

«Նրա բերանի խոսքերի սկիզբը հիմարություն է, և նրա բերանի վերջը՝ չար խենթություն» (Ժողով. 10.13):

«Եվ հիմարը կշատացնի խոսքերը: Մարդը չգիտի, թե ինչ է լինելու, և թե նրանից հետո ինչ է լինելու, ո՞վ կարող է իմացնել նրան» (Ժողով. 10.14):

Թույլ մի՛ տվեք, որ դա մոտենա ձեզ

«Հիմարի բարկությունը նույն օրը կիմացվի, բայց խորագետը անարգանքը ծածկող է» (Առակ. 12.16):

«Ճշմարտություն խոսողը արդարություն կհայտնի, բայց սուտ վկան՝ խաբեբայություն» (Առակ. 12.17):

«Շատախոս է լինում, որ սրի պես խոցոտում է, բայց իմաստունների լեզուն բժշկություն է» (Առակ. 12.18):

Ճշմարտությունը միշտ ստից երկար է ապրում

«Շատախոս է լինում, որ սրի պես խոցոտում է, բայց իմաստունների լեզուն բժշկություն է» (Առակ. 12.18):

«Ճշմարտախոս շրթունքը հավիտյան կմնա, բայց վայրկենական է ստախոս շրթունքը» (Առակ. 12.19):

«Անզգամ պատգամավորը չարիքի մեջ կընկնի, բայց մի հավատարիմ դեսպան բժշկություն է» (Առակ. 13.17):

«Պարզամիտը հավատում է ամեն խոսքի, բայց խորագետը քննում է իր քայլերը: Իմաստունը վախենում է և հեռանում չարից, բայց հիմարը վրդովվում է և անձնապաստան լինում:

Բարկասիրտը հիմարություն կգործի, և նենգամիտը կատվի» (Առակ. 14.15-17):

«Մեղմ պատասխանը կհանգստացնի բարկությունը, բայց վիրավորիչ խոսքը բարկություն կգրգռի» (Առակ. 15.1):

«Իմաստունների լեզուն գիտություն է ճարտարախոսում, բայց հիմարների բերանը տխմարություն է բխեցնում» (Առակ. 15.2):

«Բուժող լեզուն կենաց ծառ է, բայց լեզվի վրայի նենգությունը հոգու վերք է» (Առակ. 15.4):

«Տխմարին չի վայելի բարձրախոս շրթունքները, ո՞ւր մնաց, որ ազնվականին՝ ստախոս շրթունքը» (Առակ. 17.7):

«Հանցանքը ծածկողը բարեկամություն ուզող է, բայց խոսքը կրկնողը մտերիմ բարեկամներին կբաժանի» (Առակ. 17.9):

«Հիմարն էլ լռելով իմաստուն կհամարվի, և իր շրթունքը խփողը՝ հանճարեղ» (Առակ. 17.28):

«Հիմարը չի ախորժի խոհեմությունից, այլ իր սրտինը կհայտնի» (Առակ. 18.2):

«Խորը ջրեր են մարդու բերանի խոսքերը, բխող գետ է իմաստության աղբյուրը» (Առակ. 18.4):

«Հիմարի շրթունքը կռվի մեջ կմտնի, և նրա բերանը ծեծ է կանչում» (Առակ. 18.6):

«Հիմարի բերանը կործանում է իր համար, և նրա շրթունքները՝ որոգայթ իր անձի համար» (Առակ. 18.7):

«Քսու մարդկանց խոսքերը քաղցր պատառների պես են, նրանք էլ են իջնում փորի ներսերը» (Առակ. 18.8):

«Ով որ բանը չլսած պատասխան տա, սա նրա համար հիմարություն է և ամոթ» (Առակ. 18.13):

«Պատիվ է մարդու համար կռվից քաշվելը, բայց ամեն հիմար կռվասեր է» (Առակ. 20.3):

«Գաղտնիքը հայտնում է բանսարկությամբ ման եկողը. ուրեմն, շրթունքը լայն բացողի հետ մի՛ հաղորդակցվիր» (Առակ. 20.19):

«Ով որ իր հորն ու մորն անիծի, նրա ճրագը կհանգչի մթին խավարի մեջ» (Առակ. 20.20):

«Մի՛ ասա. «Չարության փոխարեն հատուցեմ. Տիրո՛ջը հուսա, և Նա քեզ կազատի»» (Առակ. 20.22):

«Ով որ զսպի իր բերանն ու լեզուն, իր հոգին նեղություններից կպահի» (Առակ. 21.23):

«Դո՛ւրս արա ծաղրողին, և կռիվը դուրս կգնա, և վեճն ու անարգանքը կդադարեն» (Առակ. 22.10):

«Մի՛ ասա. «Ինչպես որ ինձ արեց, ես էլ իրեն այնպես եմ անելու, այն մարդուն հատուցելու եմ նրա գործերի համեմատ»» (Առակ. 24.29):

Ճանաչե՛ք ձեր լսարանը

«Հիմարի ականջներին բան մի՛ ասա, որովհետև նա կանարգի քո խոսքերի իմաստությունը» (Առակ. 23.9):

Հիմարները չարժեն ձեր ժամանակին և ուշադրությանը

«Մի՛ պատասխանիր հիմարին նրա տխմարության համեմատ, միգուցե դու էլ նրան նմանվես:

Պատասխանի՛ր հիմարին նրա տխմարության համեմատ, միգուցե իր աչքին իմաստուն երևա» (Առակ. 26.4,5):

«Իմաստուն մարդը հիմարի հետ վիճելիս թե՛ բարկանա, թե՛ ծիծաղի՝ հանգիստ չի լինի» (Առակ. 29.9):

Եթե որևէ իրավիճակ չի վերաբերում ձեզ, մի՛ միջամտեք

«Շունը ականջներից բռնում է այն անցավորը, որ գրգռվում է իրենը չեղած դատի համար» (Առակ. 26.17):

Բամբասանքը կրակը կգցի և անմարսություն կառաջացնի

«Փայտ չլինելիս կրակը կհանգչի, և քսու չլինելիս կռիվը կդադարի: Ինչպես ածուխը՝ կայծերին, և փայտը՝ կրա-

կին, նույնպես է կռվարար մարդը՝ վեճ վառելու: Քսու մարդու խոսքերը քաղցր պատառների պես են, նրանք էլ են իջնում փորի ներսերը: Կղկղանքի արծաթով պատած հողի ամանի պես են սիրաբորբոք շրթունքը ու չար սիրտը միասին» (Առակ. 26.20-23):

«Ստախոս լեզուն ատում է իր ծեծածներին, և շողոքորթող բերանը կորուստ է պատճառում» (Առակ. 26.28):

Մի՛ պարծեցեք

«Թող քեզ ուրիշը գովի, և ոչ թե քո բերանը, օտարը, և ոչ թե քո շրթունքները» (Առակ. 27.2):

«Հալոցը արծաթն է փորձում, և քուրան՝ ոսկին, նույնպես էլ մարդը իրեն գովասանող բերանը թող փորձի» (Առակ. 27.21):

«Հիմարն իր սրտինը բոլորը դուրս կտա, բայց իմաստունը նրան ետ է պահում» (Առակ. 29.11):

«Եթե հիմարություն արեցիր հպարտանալովդ, կամ եթե մի չար բան մտածեցիր, ձեռքդ դի՛ր բերանիդ» (Առակ. 30.32):

ՆՇՈՒՄՆԵՐ

Գլուխ 1. Անկոտրում՝ ինչպես ադամանդը

1. Ն. Տ. Ռայթ. *«Մատթեոսի Ավետարանը՝ բոլորի համար»,* Մաս 2, գլուխներ 16-28 (Լոնդոն. «Society for Promoting Christian Knowledge», 2004թ.), էջ 80:

2. Էնտոնի Ս. Թիսելտոն. *«Առաջին նամակը Կորնթացիներին. հունարեն տեքստի մեկնություն»,* «Հունարեն Կտակարանի Նոր Միջազգային մեկնություն» (Գրանդ Ռեփիդս, «Eerdmans», 2000թ.):

3. Մեթյու Գ. Իսթոն. *«Իսթոնի աստվածաշնչյան բառարան»,* 1893թ.:

4. Ջոն Մյուր. *«Իմ առաջին ամառը Սիեռայում»* (Նյու Յորք, «Houghton Mifflin», 1911թ.), էջ 20:

Գլուխ 2. Անկոտրում՝ մտերմության մեջ

1. Ամերիկացի կին գրող, մանկական գրաշարերի հեղինակ 1867-1957թթ.:

2. Բաբելոնյան Թալմուդ, Հագիգա 15.1. «Եվ Աստծո Հոգին սավառնում էր [«մերախեֆեթ». եբրայերեն «ռախաֆ» արմատից (իգական սեռով)] ջրի երեսի վրա՝ ինչպես աղավնի, որը սավառնում է իր ճագերի վրայով՝ առանց դիպչելու»:

3. Կ. Ս. Լյուիս. «Արքայազն Կասպիանը», (Նյու Յորք, «HarperCollins», 1951թ.), էջ 233:

Գլուխ 4. Անկոտրում՝ սիրո մեջ

1. Բ Կորնթացիների, «Ավյուն» թարգմանություն, (Ռասին, Վիսկոնսին, «BroadStreet Publishing», 2017թ.):

2. Հորինվածքի/երգի վերնագիրը. «Անխոհեմ սեր»: Հեղինակներ. Կորի Օսբորի, Քեյլեբ Կալվեր և Ռեն Զեքսոն, © 2017 «Bethel Music Publishing» (ASCAP) / «Watershed

Publishing Group» (ASCAP) (պատկանում է «Watershed Music Group»-ին) / «Richmond Park

Publishing» (BMI): Բոլոր իրավունքները պաշտպանված են: Օգտագործվում է՝ ըստ թույլտվության:

Գլուխ 5. Անկոտրում սեր

1. Կ. Ս. Լյուիս. *«Հասարակ քրիստոնեություն»,* (Նյու Յորք, «HarperCollins», 1952թ.), էջ 132:

Գլուխ 6. Անկոտրում՝ ատելության մեջ

1. Կ. Ս. Լյուիս. *«Հասարակ քրիստոնեություն»,* էջ 112:

2. Ձին Վեյթ. «Սեռական կյանքը՝ սուրբ խորհուրդ, արհեստական վիժեցումը՝ կրոնական ծես», «*Cranach: The Blog of Veith*», հունիսի 24, 2016թ., http://www.patheos.com/blogs/geneveith/2016/06/sex-as-sacrament-abortion-as-religious-ritual/.

3. Չարլզ Սփերջեն. *«Չ.Հ. Սփերջենի ամբողջական աշխատությունները, հտ. 44. Քարոզներ 2459-2602»,* («Delmarva Publications», 2013թ.):

4. «Հետազոտությունը ցույց է տալիս, որ երեք կանանցից մեկը պոռնոգրաֆիա է դիտում առնվազն շաբաթը մեկ անգամ», *«New York Times»,* հոկտեմբերի 22, 2015թ.:

5. Ալեքսիս Կլեյնման. «Պոռնոգրաֆիկ էջերն ամեն ամիս

ավելի շատ այցելուներ ունեն, քան Նետֆլիքսը, Ամազոնը և Թվիթերը միասին», *«Huffington Post»,* մայիսի 3, 2013թ., http://www.huffingtonpost.com/2013/05/03/internet-porn-stats_n_3187682.html:

6. «Քանի՞ հոգի է պոռնոգրաֆիա դիտում հենց հիմա (ակնարկ՝ շատերը)», *«Fight the New Drug»,* սեպտեմբերի 11, 2017թ., https://fightthenewdrug.org/by-the-numbers-see-how-many-people-are-watching-porn-today/:

7. Չարլզ Սփերջեն. *«Չ.Հ. Սփերջենի ամբողջական աշխատությունները, հտ. 60. Քարոզներ 3387-3349»,* («Delmarva Publications», 2013թ.):

8. https://www.leadershipresources.org/blog/the-best-charles-spurgeon-quotes/:

9. «Չարլզ Հ. Սփերջենը՝ զանազանության մասին», *«Apologetics 315»,* www.apologetics315.com, փետրվարի 3, 2013թ.:

Գլուխ 8. Անկոտրում՝ խոսքի մեջ

1. Շենա Մոնտարինի. «Պլաստիկ աղբի կուտակում՝ ավելի մեծ, քան Մեքսիկան, գտնվել է Խաղաղ օվկիանոսում», *«National Geographic»,* հուլիսի 25, 2017թ., http://news.nationalgeographic.com/2017/07/ocean-plastic-patch-south-pacific-spd:

2. Լեոնարդո դա Վինչի. *«Նոթատետրեր»,* (Օքսֆորդ, *«Oxford University Press»,* 1952թ.), էջ 23:

Գլուխ 9. Անկոտրում վերափոխում

1. Պրեստոն Սփրինքլ. *«Մարդիկ, որոնց պետք է սիրել»,* (Գրանդ Ռեփիդս, «Zondervan», 2015թ.), էջ 88:

2. Կ. Ս. Լյուիս. *«Զարմացած՝ ուրախությամբ. Իմ վաղ տարիները»,* (Օռլանդո, «Harcourt Brace & Company», 1955թ.), էջ 221:

3. Թոմ Կարտեր, համադրող. *«Լավագույնը Սփերջենից. ավելի քան 2200 ապշեցուցիչ մեջբերումներ աշխարհի ամենասպառիչ և լայնորեն ընթերցվող քարոզների շարքից»,* (Գրանդ Ռեփիդս, «Baker Books», 1988թ.), էջ 160:

Գլուխ 10. Անկոտրում՝ սրբության մեջ

1. Սինքլեր Ֆերգյուսոն. *«Սրտանց նվիրված Աստծուն»,* (Կառլայլ, Փենսիլվանիա, «Banner of Truth», 1987թ.), էջ 82:

2. Ն. Տ. Ռայթ. *«Պողոսը՝ բոլորի համար. Գաղատացիների և Թեսաղոնիկեցիների»,* (Լոնդոն. «Society for Promoting Christian Knowledge», 2004թ.), էջեր 117-118:

3. Կարտեր, համադրող. *«Լավագույնը Սփերջենից»,* էջ 100:

4. Կեվին Մ. Վաթսոն. «Ներում և (ոչ թե՝ կամ) սրբություն», *«Vital Piety»* (բլոգ), օգոստոսի 26, 2013թ., https://vitalpiety.com/2013/08/26/forgiveness-and-notor-holiness/:

5. Ն. Տ. Ռայթ. *«Պողոսը՝ բոլորի համար. Եփեսացիների, Փիլիպեցիների, Կողոսացիների և Փիլիմոն»,* (Լոնդոն. «Society for Promoting Christian Knowledge», 2004թ.), էջ 53:

6. Ռայթ. *«Պողոսը՝ բոլորի համար. Գաղատացիների և Թեսաղոնիկեցիների»,* էջեր 118-119:

Գլուխ 11. Ես անկոտրում եմ

1. Չարլզ Հ. Սփերջեն. *«Դավթի գանձարանը, հտ. 3»* (Նյու Յորք, «Funk & Wagnalls», 1886թ.), էջեր 118-119:

2. Էլլի Զոլֆագիարիֆարդ. «Վատիկանը բացահայտում է որմնանկարներ, որոնք ակնարկում են, որ կանայք ազդեցիկ դիրքեր էին զբաղեցնում Առաջին եկեղեցում», *«Daily Mail»,* նոյեմբերի 20, 2013թ.:

Լիզա Բիվերը գրեթե երեք տասնամյակ օգնում է բոլոր տարիքի կանանց՝ գտնել իրենց ինքնությունը և կյանքի նպատակը: Նա հանրաճանաչ գրքերի հեղինակ է՝ ըստ *«Նյու Յորք Թայմս»* ամսագրի, և միջազգային համբավ ունեցող քարոզիչ է: Նրա նախորդ գրքերը, որոնց թվում են *«Պայքարի՛ր կնոջ նման», «Երբ արթնանում են կին առյուծները», «Թրեր կրող կանայք»,* և *«Կյանք՝ առանց մրցակցության»* գրքերը հասել են միլիոնավոր մարդկանց ամբողջ աշխարհում: Լիզան և ամուսինը՝ Զոնը, հիմնադրել են «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայությունը, որի նպատակն է պատրաստել Քրիստոսի փոխզիջման չգնացող հետևորդների, որոնք փոխում են իրենց շրջապատող մարդկանց:

ԿՅԱՆՔ՝ ԱՌԱՆՑ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ

Ընդունե՛ք ձեր ինքնությունը և իրականացրե՛ք ձեր կյանքի նպատակը՝ շփոթությամբ և մրցակցությամբ լի այս աշխարհում:

Մենք դիտարկում ենք մարդկանց որպես մրցակիցների և սահմանափակում ենք մեր կյանքը՝ շարունակ համեմատվելով և մրցակցելով նրանց հետ: Նման վերաբերմունքը խորը հիմքեր ունի: Մենք թշնամի ունենք, ով հարձակում է գործում մեր մտքի, կամքի և զգացմունքների վրա: Նրա նպատակն է՝ թշնամացնել թե՛ ինքներս մեզ, թե՛ մեկս մյուսի հետ: Մենք ասես փակ շրջանում ենք, որը մեկուսացնում է մեզ մարդկանցից, կասկածի է ենթարկում մեր ինքնությունը և սահմանափակում է մեր արդյունավետությունը:

«Կյանք՝ առանց մրցակցության» գրքում հանրաճանաչ հեղինակ Լիզա Բիվերը ցույց է տալիս, թե ինչպես է Աստծո սիրո մասին հայտնությունը քանդում այս սահմանափակումները: Դուք կսովորեք այլևս չդիտարկել մարդկանց որպես մրցակիցների և սերտ հարաբերություններ կառուցել ձեր փափագելի Ստեղծողի հետ, ինչի շնորհիվ կբացահայտեք ինքներդ ձեզ և մտերմորեն կճանաչեք Նրան: Լիզայի առողջ աստվածաշնչյան ուսմունքը՝ հագեցած մեր օրերի վերաբերյալ մարգարեական խորաթափանցությամբ և համեմված հումորով ու ավյունով, կո՛չ է ձեզ:

Ժամանակն է, որ քայլ անեք դեպի կյանք՝ առանց մրցակցության:

Դուք կարող եք գտնել հավելյալ ուսումնական նյութեր բազմաթիվ լեզուներով հետևյալ կայքում.

CloudLibrary.org CLOUD LIBRARY

ԹՐԵՐ ԿՐՈՂ ԿԱՆԱՅՔ

Ինչպես հերոսաբար կրեք ձեր խաչը

Եթե երբևէ եղել է ժամանակ, որ կանայք պետք է զինված լինեն, ապա այն հիմա է: Աշխարհով մեկ նրանք նախապաշարմունքների, թրաֆիքինգի, բռնության և նույնիսկ սեռասպանության թիրախներ են: Լիզա Բիվերը գրում է, որ այս հարձակումներն ավելի շատ ցույց են տալիս, թե ինչպիսին կարող են կանայք լինել ապագայում, քան՝ թե ինչպիսին են նրանք եղել անցյալում: *«Թրեր կրող կանայք»* գրքում նա ցույց է տալիս, որ մեր հոգևոր թշնամին ձգտում է զինաթափել կանանց՝ բոլոր կողմերից: Ժամանակն է, որ կանայք դառնան այնպիսի հերոսուհիներ, ինչպիսին Աստված ստեղծել է նրանց, և զբաղեցնեն իրենց դիրքը՝ լինելով խիզախ, զանազանող, ներող և իմաստուն:

Դուք կարող եք գտնել հավելյալ ուսումնական նյութեր բազմաթիվ լեզուներով հետևյալ կայքում.

CloudLibrary.org CLOUD LIBRARY



«Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայության նպատակն է՝ օգնել անհատներին, ընտանիքներին, եկեղեցիներին և ազգերին գիտակցել և վերապրել Աստծո Խոսքի վերափոխող զորությունը:

Շնորհիվ այս գիտակցման՝ կփոխվեն թե՛ մարդիկ, թե՛ ամբողջ բնակավայրեր, և հասարակությունը գործուն կերպով կպայքարի այս աշխարհը կեղեքող անարդարության դեմ:

CloudLibrary.org կայքը առցանց հարթակ է, որը թույլ է տալիս ամբողջ աշխարհի հովիվներին և առաջնորդներին ստանալ անվճար թվայնացված ուսումնական նյութեր՝ իրենց լեզուներով:

Այցելե՛ք **CloudLibrary.org** կայքը և օգտվե՛ք Ջոն և Լիզա Բիվերների մի շարք այլ նյութերից՝ ավելի քան 90 լեզուներով:

էլեկտրոնային գրքեր, աուդիո և վիդեո ուսուցումներ, աուդիո գրքեր, Աստվածաշնչեր...

Ցանկանում եք ավելի՞ն: Տեսածրե՛ք պատկերակը.

CLOUD LIBRARY

ԵՐԲ ԱՐԹՆԱՆՈՒՄ ԵՆ ԿԻՆ ԱՌՅՈՒԾՆԵՐԸ

Արթնացի՛ր եվ փոխի՛ր քո աշխարհը

«Երբ արթնանում են կին առյուծները» գրքում Լիզան ներկայացնում է էգ առյուծի կյանքն ու սուրբգրային նկարագիրը՝ որպես կնոջ վայրագության և քնքշության օրինակ: Այս գիրքը կդրդի նորոգել ձեր եռանդը, խիզախությունը և նպատակաուղղվածությունը:

- Դարձե՛ք զորավոր անձնավորության ապշեցուցիչ օրինակ:
- Պաշտպանե՛ք ձեր զավակներին և ձայն բարձրացրեք նրանց համար, որոնց լռեցրել են:
- Բարձրացրե՛ք միացյալ մռնչյուն, որը փոխում է ամեն ինչ:

Դուք կարող եք ներբեռնել Ջոն և Լիզա Բիվերների այլ հեղինակային նյութեր հետևյալ կայքից.

www.CloudLibrary.org

Դուք կարող եք դիտել և ներբեռնել լրացուցիչ նյութեր բազմաթիվ լեզուներով YouTube.com, Youku.com և նյութեր տարածող այլ կայքերից:

«Կարևոր: Ծանրակշիռ: Համոզիչ: Լիզա Բիվերն անսասան կերպով ապավինում է ճշմարտությանը և կանգնած է հանուն ճշմարտությանե:

— Լուի և Շելլի Գիգլիո, «Փեշն» համաժողովների հիմնադիրներ

Ի՞ՆՉ Է ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Սա դարձել է մեր ժամանակի վճռական հարցը: Թեև յուրաքանչյուրն ունի իր կարծիքը, թվում է՝ ճշմարտությունն ավելի ու ավելի դժվար է գտնել: Միգուցե պատճառն այն է, որ մենք փնտրում ենք ինչ-որ բան, այնինչ պետք է փնտրենք ինչ-որ մեկի:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՈՒՆ ՈՒՆԻ

Ավելի հինավուրց, քան ժամանակը, և ավելի արդիական, քան այս պահը, ճշմարտությունը գետ չէ, որը փոխվում է մշակութային հոսանքներից. այն ժայռ է՝ անշարժ, անպարտելի, անսասան, և այն ամենի անկյունաքարն է, թե ինչպիսին ենք մենք այսօր, և ինչպիսին երբևէ կերազենք լինել:

Աստվածաբանորեն խորը, սակայն հեշտորեն ընկալելի «Անկոտրում՝ ինչպես ադամանդը» գիրքը կդառնա խարիսխ ձեր անձի համար՝ կարծիքների ալեկոծվող ծովում, և կառաջնորդի ձեզ այս շփոթված աշխարհում:

ԼԻԶԱ ԲԻՎԵՐԸ գրեթե երեսուն տարի զորացնում է բոլոր տարիքի կանանց՝ օգնելով գտնել իրենց ինքնությունը և կյանքի նպատակը: Նա հանրաճանաչ հեղինակ է՝ ըստ «Նյու Յորք Թայմս» ամսագրի, և միջազգային ճանաչում ունեցող քարոզիչ է: Նրա գրքերը, որոնց թվում են «Պայքարի՛ր կնոջ նման», «Երբ արթնանում են կին առյուծները», «Թրեր կրող կանայք» և «Կյանք՝ առանց մրցակցության», ընթերցվում են միլիոնավոր մարդկանց կողմից ամբողջ աշխարհում: Լիզան և ամուսինը՝ Ջոնը, «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության հիմնադիրներն են, որի նպատակն է կրթել փոխզիջման չգնացող Քրիստոսի հետևորդների, որոնք փոխում են իրենց շրջապատող մարդկանց:

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է հեղինակի կողմից և վաճառքի ենթակա չէ:

Ներբեռնեք ձեր էլեկտրոնային գրքերը՝ օգտվելով հետևյալ հասցեներից:
CLOUD LIBRARY